

ՀՀ ԳԱԱ ԱՐՎԵՍՏԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ
ИНСТИТУТ ИСКУССТВ НАН РА
INSTITUTE OF ARTS NAS RA

ԿԱՆԹԵՂ

ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴԿԱԾՆԵՐ

KANTEKX
НАУЧНЫЕ ТРУДЫ

KANTEGH
ARTICLES

1 (66)



«ԱՍՈՂԻԿ» ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 2016

ՀՏԴ 001

ԳՄԴ 72

Կ 217

Կ 217 Կանթեղ: Գիտական հոդվածներ /Գլխ. խմբ.՝ Ա.Ասատրյան. - Եր.: Աստղիկ, 276 էջ:

Գլխավոր խմբագիր՝ Աննա Գ. ԱՍԱՏՐՅԱՆ

Խմբագրական խորհուրդ

**ԱՂԱՍՅԱՆ Արարատ, ԱՎԵՏԻՍՅԱՆ Պավել, ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ Լիլիթ,
ԳԱՍՊԱՐՅԱՆ Սեդա, ԶԱՔԱՐՅԱՆ Անուշական, ԽԱՌԱՏՅԱՆ Ալբերտ,
ՀԱՍՐԱԹՅԱՆ Մուրադ, ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Հենրիկ, ՂԱԶԱՐՅԱՆ Վիգեն,
ՄԵԼԲՈՆՅԱՆ Աշոտ, ՄԿՐՏՉՅԱՆ Մանե (գլխավոր խմբագրի տեղակալ),
ՅՈՒՐԵՎԱ Տադյանա, ՆԵՐՍԻՍՅԱՆ Աշոտ, ՊՈԿՐՈՎՍԿԱՅԱ Նադեժդա,
ՍԱՀԱԿՅԱՆ Արմեն, ՍԱՐԳՍՅԱՆ Լևոն, ՕՀԱՆՅԱՆ Քաջիկ**

Главный редактор Анна Г. АСАТРЯН

Редакционная коллегия

**ԱԳԱՏՅԱՆ Արարատ, ԱՎԵՏԻՍՅԱՆ Պավել, ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ Լիլիթ, ԱՍՏՐՅԱՆ Մուրադ,
ԳԱՍՊԱՐՅԱՆ Սեդա, ԶԱԿԱՐՅԱՆ Անուշական, ԿԱԶԱՐՅԱՆ Վիգեն, ՄԵԼԿՈՆՅԱՆ Աշոտ,
ՄԿՐՏՉՅԱՆ Մանե (заместитель главного редактора), ՆԵՐՍԻՍՅԱՆ Աշոտ,
ՕԳԱՆԵՏՅԱՆ Գենրիկ, ՕԳԱՆՅԱՆ Կադժիկ, ՍԱՀԱԿՅԱՆ Արմեն, ՍԱՐԳՍՅԱՆ Լևոն,
ՍԱՀԱԿՅԱՆ Արմեն, ՍԱՐԳՍՅԱՆ Լևոն, ՕՀԱՆՅԱՆ Քաջիկ**

Editor-in-Chief Anna G. ASATRYAN

International Editorial Council

**AGHASYAN Ararat, ARZUMANYAN Lilit, AVETISYAN Pavel, GASPARYAN Seda,
GHAZARYAN Vigen, HASRATYAN Murad, HOVHANNISYAN Henrik, KHARATYAN Albert,
MELKONYAN Ashot, MKRTCHYAN Mane (Deputy Editor-in-Chief), NERSISYAN Ashot,
OHANYAN Kadjik, POKROVSKAYA Nadejda, SAHAKYAN Armen, SARGSYAN Levon,
YURIEVA Tatiana, ZAKARYAN Anoushavan**

ՀՏԴ 001

ԳՄԴ 72

ISBN 978-9939-50-309-7

© ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտ, 2016

ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՊՈՍՏՄՈԴԵՐՆԻԶՄԻ ՄԱՍՆԱԿԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ԼԵՎՈՆ ԽԵԶՈՅԱՆԻ ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐՈՒՄ

ԴԻԱՆԱ ՄՆԱՅԱԿԱՆՅԱՆ

XX դարի սկզբին մոդեռնիստական մտածողության ձևն արդեն սպառել էր իրեն, և նրան փոխարինելու էր գալիս գաղափարագեղարվեստական աշխարհընկալման մի նոր համակարգ, որն ընդունված է անվանել պոստ-մոդեռնիզմ: Պոստմոդեռնիզմը XX դարի համաշխարհային արվեստի և գրականության եթե ոչ գլխավոր, ապա առաջնային ուղղություններից մեկն է, որը դրսևորվեց նաև կրոնի, փիլիսոփայության և գեղագիտության բնագավառներում և առաջ բերեց բազմաթիվ նշանավոր անուններ ու ստեղծագործություններ: Գրականագետ Ֆաթիմա Բեշուկովան նշում է. «Արվեստի պատմությունը հաստատում է, որ չնայած արվեստի նոր ձևերի հանդեպ եղած բացասական վերաբերմունքին, լինելով էպատաժային, դրանք արդյունքում առաջնային դեր են խաղում գեղարվեստական և գեղագիտական նոր արժեքների ձևավորման հարցում և ստեղծում են այնպիսի նմուշներ, որոնք հետագայում դասական են դառնում»¹: Այդպես, եթե 1970-ական թվականներին պոստմոդեռնիզմը տարածված էր միայն հասարակության փոքր շրջանակներում, ապա մեր օրերում յուրաքանչյուրը կարող է ասել, որ ինքն ինչ-որ չափով պոստմոդեռնիստ է: Տեսաբան Մարինա Կուչմենկոն նշում է. «Այսօր պոստմոդեռնիզմն արդեն ընկալվում է ոչ թե որպես դասական արվեստի հակապատկեր, այլ որպես ինքնուրույն վարվելաձև»²: Լայն առումով պոստմոդեռնիզմը դիտվում է որպես ինքնուրույն ուղղություն, որին բնորոշ է մոդեռնիզմի հետ կապի խզումը, ինչն առավել ցայտուն դրսևորվեց հատկապես գրականության ասպարեզում:

¹ **Бешукова Ф.** Медиакурс постмодернистского литературного пространства, М., 2008, с. 122.

² **Кучменко М.** Постмодернизм в современном литературном пространстве // Вестник Адыгейского государственного университета. Серия 2: Филология и искусствоведение. Выпуск № 2 (121), 2013, с. 14.

Ուսումնասիրողներն ու քննադատները համակարծիք չեն և անգամ իրար հակասող տեսակետներ են առաջադրում գրականության մեջ պոստ-մոդեռնիզմի զարգացման շուրջ, և պոստմոդեռնիստական գրականության գոյությունն անգամ մինչ այժմ որոշ գրականագետների կողմից հարցականի տակ է դրված: Սրան հակառակ որոշ տեսաբաններ էլ նշում են, որ փիլիսոփայական միտքը հիմք է հանդիսացել նոր գեղարվեստագեղագիտական համակարգի ձևավորման համար, և պոստմոդեռնիստական գրականությունը նկարագրում են այն նախորդող ուղղության հետ համեմատության մեջ:

Չնայած մի շարք տարակարծություններին՝ 1970-ական թվականներին պոստմոդեռնիզմը սկսեց իր հաղթարշավը մոդեռն գրականության հիմնական սկզբունքների դեմ կանգնած փիլիսոփաների ու գրողների շնորհիվ: Վադիմ Ռուդենկը սահմանում է. «Պոստմոդեռնիզմը, այդպիսով, վիուվի կոտրված հայելու բեկորների նման մի բան է, որը կոտրվելով ընկավ ամբողջ արվեստի աչքերը և միայն այն տարբերությամբ, որ այդ բեկորները ոչ ոքի չվնասեցին, բայց շատերին շեղեցին ճիշտ ուղուց»³:

Պոստմոդեռնիզմ եզրույթը գրականության վերաբերյալ առաջին անգամ գործածել է գիտնական Իհաբ Հասսանը 1971 թվականին: Պոստմոդեռնիզմի տեսաբանը գրում է. «Պոստմոդեռնիստական գրականությունն իր էությանմբ հակագրական երևույթ է, քանի որ կատարելագործում է գրոտեսկն ու անիրականը, ինչպես նաև գրական տարբեր ձևեր և ժանրեր, որոնք իրենց մեջ կրում են խելահեղություն և աշխարհակործանիչ միտումներ, այդ ամենով հանդերձ կոսմոսը փոխակերպվում է քաոսի: Ըստ այդմ՝ պոստմոդեռնիզմը քաոսի հաստատումն է, և քաոսը պետք է փոխարինի կարգունկանոնին ոչ միայն գրական ստեղծագործության լեզվում, այլ նաև կառուցվածքի և բովանդակության մեջ»⁴: Այս ամենից ելնելով՝ պոստմոդեռնիստական գրականությունը հենվում է առանցքային, էական նշանակություն ունեցող հետևյալ գործոնների վրա.

1. իրոնիա, սև հումոր, խաղային բնույթ,
2. ինտերտեքստայնություն, քաղվածքային գրականություն,
3. տարածաժամանակային խախտում,
4. ներտեքստային տարրերի, ինչպես նաև ժանրային միահյուսում,

³ Руднев В. Словарь культуры XX века. Ключевые понятия и тексты, М., 1998, с. 35.

⁴ Hassan I. The postmodern turn: Essays in Postmodern Theory and Culture», Ohio State University Press, 1987, p. 48.

5. հեղինակի մահվան գաղափար,
6. միջեր և հեքիաթներ,
7. իրականության և երևակայականի անտարանջատվածություն:

Այս և նման այլ հատկանիշների առկայությունն էլ գրական ստեղծագործության մեջ ընդունված է համարել պոստմոդեռնիզմի դրսևորում: Պոստմոդեռնիզմի տեսաբանների կողմից մշակված այս որոշակի առանձնահատկություններն արտացոլում են գտել նաև հայ գրականության մեջ: Անցյալ դարի 90-ական թվականներին՝ Հայաստանի անկախացումից հետո, հայ իրականության մեջ ասպարեզ եկավ գրական նոր սերունդ, որն իր հեղափոխական տրամադրություններով ու գեղագիտական դավանանքով գրական նոր շրջափուլ ձևավորեց, և պատահական չէ, որ բազմաթիվ ստեղծագործողների երկերում նկատվեցին պոստմոդեռնիստական տարրեր: Պետք է նշել, որ այս հարցի շուրջ մի շարք տարակարծություններ կան: Օրինակ՝ Արմեն Շեկոյանը գրում է. «Ես պոստմոդեռնիզմ երևույթը չեմ հասկանում մանավանդ գրականության մեջ և մանավանդ Հայաստանում, որովհետև պոստմոդեռնիզմին պարտադիր պիտի մոդեռնիզմը նախորդած լիներ: Այն, ինչ եղել է մեր սովետական գրականության մեջ, ոչ թե մոդեռնիզմ էր, այլ՝ ընդունված ավանդույթից մի փոքր շեղում»⁵: Այնուամենայնիվ, ակնհայտ է, որ վերանայվեցին համամարդկային արժեքները, և գրական դաշտի առաջատար ներկայացուցիչները, ինտեգրվելով համաշխարհային մտքի առաջընթացին, ինքնաբերաբար «հայտնվեցին» պոստմոդեռնիստական մշակույթի սահմաններում: Այդպիսի հեղինակների շարքում կարող ենք դասել նաև Լևոն Խեչոյանին, ում ստեղծագործություններով, ըստ էության, սկզբնավորվեց անկախության շրջանի հայ գրականությունը:

Խեչոյանի ստեղծագործություններում այս կամ այն չափով հանդիպում են պոստմոդեռնիստական աշխարհընկալմանը բնորոշ որոշ հատկանիշներ, օրինակ՝ տարածաժամանակային խախտում, իրոնիա, սև հումոր, կյանքի հանդեպ հեգնական և խաղային վերաբերմունք, միջերի և հեքիաթային այլ տարրերի գործածում, իրականի և անիրականի անտարանջատվածություն և այլն:

Անդրադառնալով տարածաժամանակային գործոնին՝ նշենք, որ պոստմոդեռնիստական մտածողության մեջ մեծ դեր ունի հայդեգերյան ժամանակային տեսությունը, որում ժամանակը դիտարկվում է որպես մեկ ամբող-

⁵ <http://granish.org/mi-datir/>

ջություն: Ըստ այդմ՝ պոստմոդերնիզմը հրաժարվում է ժամանակի ուղղագիծ ընկալումից, որտեղ անցյալը, ներկան և ապագան հաջորդում են միմյանց, և նախապատվությունը տրվում է ժամանակի շրջանաձև շարժմանը, երբ անցյալը ներկայի միջոցով փոխակերպվում է ապագայի, և ապագան էլ, իր հերթին, անցյալի: Ժամանակային այս շրջապտույտը ստեղծում է մի փակ շրջան, որտեղ ամեն ինչ վերադառնում է սկզբին: Նույն այս երևույթն առկա է նաև Լ. Խեչոյանի «Պատը» պատմվածքում: Հերոսները խմբով որոնում են ոմն Դիլաքյանի, սակայն ինչու՞ են որոնում և սենյակից սենյակ, դահլիճից դահլիճ ու խցից խուց անցնում, իրենք էլ չգիտեն ու միայն գիտեն, որ պետք է շարունակել որոնել. «Չգիտեինք՝ մեզանից առաջինը ով էր, որ մյուսներին տարավ Դիլաքյանին որոնելու, բայց ամեն մեկս հավատում էինք, որ նա գոռաց. «Դեպի արևը գնալ...»⁶: Այս անորոշ շարժումը շարունակվում է ամբողջ պատմվածքի ընթացքում, և խումբը չի դադարում որոնել, սակայն անարդյունք. «Ետիններս դարձանք առաջին, առաջինները՝ ետին»⁷: Միևնույն ժամանակ առկա է պարադոքս, քանի որ շարժումը թվացյալ է, որովհետև այն ոչինչ չի փոխում: Այդպես, օրինակ՝ թվում է, թե հերոսները գնում են առաջ՝ ոչ մի սանտիմետր չնահանջելով, սակայն ինչ-որ պահի հասնում են այնտեղ, որտեղից որ սկսել են՝ այդպես էլ չհասկանալով՝ երբ սկսեցին նահանջել: Ժամանակի շրջանաձև շարժման սկզբունքն առկա է նաև «Դատախազի թաղումը» պատմվածքում: Ազվոր թափորը հայտնվում է փակ շրջանում, որտեղից ելք չկա և հարկավոր է միայն շարժվել առաջ՝ միևնույն ժամանակ հետ ընթանալով: Խեչոյանը գրում է. «Քահանան երգում էր, դատախազին տանում էին, մենք գնում էինք Ազատության փողոցով: Առջևից գնացողներին կանգնեցրին, ասացին. «Այլևս չի կարելի առաջ գնալ, ետ դարձեք, մյուս փողոցով գնացեք»: Ասինք. «Քաղաքի դատախազին պիտի թաղենք»: Ասին. «Պարետային ժամ է»: Դազաղը փոխանցեցին ետ, ու ետինները դարձան առաջին, առաջինները՝ ետին»⁸: Հերոսները ևս գիտակցում են, որ իրենք փակուղում են հայտնվել, սակայն թվացյալ շարժումը շարունակվում է. «Թմբկահարը ասաց. «Ես վերջնականապես հասկացա, ինչքան էլ քայլենք, ուր էլ գնանք, տեղ չենք հասնի: Շրջապտույտ է, կրկին գալու ենք միևնույն տեղը»⁹: Գալիս է մի պահ, որ արդեն պարզ չէ՝ շրջանի որ հատվածում են,

⁶ Խեչոյան Լ. Ինկի ծառեր, Երևան, 1991, էջ 19:

⁷ Նույն տեղում, էջ 20:

⁸ Նույն տեղում, էջ 38:

⁹ Նույն տեղում, էջ 40:

հե՛տ են գնում, թե՛ առաջ և կամ առհասարակ որտեղի՞ց են սկսել: Վերը նշված երկու պատմվածքներում էլ հանդիպում ենք անորոշ ժամանակամիջոցում գտնվող, միմյանց չհասկացող և անելանելի վիճակում մնացած կերպարների, ովքեր փորձում են լաբիրինթոսից ելք գտնել, սակայն փորձելով ճամփա ընկնել՝ միայն դուրս գալու են նույն տեղում: Հաճախ անգամ դժվար է որոշել պատմվածքներում գիշե՞ր է տիրում, թե՛ ցերեկ: «Երկու հրեշտակ» պատմվածքում Խեչոյանը գրում է. «Մանուկը միայն հեղեղատի եզրին, կանգառի ժամանակ, գլխի ընկավ, որ հինգ օր անընդհատ գիշեր է և չի լուսանում»¹⁰: Մեկ այլ՝ «Տենդ» պատմվածքի մեջ գիշերվան անընդմեջ վերագրվում են «հարատև», «չլուսացող», «հավերժական» բառերը, և հերոսներն անդադար փնտրում են իրենց լուսավոր ապագան, սակայն անցյալը, ներկան և ապագան միաձուլված են, և այդ շրջանից ելք չկա: Ժամանակի շրջանաձև շարժման սկզբունքը մեծ դեր ունի պոստմոդեռնիզմի համար, քանի որ պոստմոդեռնիստն ասես միաժամանակ գտնվում է մի քանի հարթությունների վրա և չունի հենակետ, չունի իր սեփական տեսակետը, և նրա գիտակցությունը ևս ճամփորդում է մի քանի իրականությունների միջև: Այս առումով հարկ է նշել, որ խեչոյանական պատմվածքների հերոսները ևս երբեմն գտնվում են իրականի և երևակայականի սահմանում: Ըստ այդմ՝ բնութագրական է հատկապես «Շաբաթ-կիրակի» պատմվածքը: Մահվան շեմին գտնվող հերոսն անցնում է իրականի սահմանը և հայտնվում իր սեփական երևակայության գաղտնարաններում. «...Պոմպակայանի ամբողջ ցանկապատի անվերջանալի երկայնքով ծաղկած դդումի դեղին ծաղիկներով խիտ ծածկված լինելը տեսնելու հետ միաժամանակ՝ առաջին անգամ այլմոլորակայինին տեսավ. փոխնփոխ, վազքից ուժասպառ տղաներին էր օգնում»¹¹: Սյուժեի զարգացմանը զուգընթաց հերոսը թափառում է իր կերտած իրականության սահմաններում՝ զրուցելով այլմոլորակայինի հետ և մերթընդմերթ վերադառնալով իրականի ժամանակահատված, որտեղ տղաները, թղթախաղով զբաղված, մոռացել են իրեն: Այսինքն՝ հերոսը միաժամանակ գտնվում է մի քանի իրականությունների միջև, ինչը բնորոշ է պոստմոդեռնիստական գրականությանը: Իլյա Իլյին իր «Պոստստրուկտուրալիզմ, դեկոնստրուկտիվիզմ, պոստմոդեռնիզմ» աշխատության մեջ գրում է. «...Պոստմոդեռնիստական միտքը հանգել է այն եզրակացության, որ այն ամենը, ինչ ընկալվում է որպես

¹⁰ Խեչոյան Լ., Ձայներ և տեսիլքներ, Երևան, 2006, էջ 225:

¹¹ Նույն տեղում, էջ 211:

իրականություն, իրականում ոչ այլ ինչ է, քան դրա մասին պատկերացումը, որը նաև կախման մեջ է դիտորդի ընտրած տեսակետից, և որի փոփոխությունը հանգեցնում է պատկերացման լիովին փոփոխության: Այսպիսով, մարդու աշխարհընկալումը համարվում է դատապարտված «մուտիպերսպեկտիվիզմի», այսինքն՝ խճանկարի նմանությամբ և անընդմեջ փոփոխվող՝ իրականության տեսադաշտերի շարքի, որոնք էլ, իրենց հերթին, սակայն արգելակում են էությունն ընկալելու հնարավորությունը»¹²:

Իրականի և երևակայականի միջև սահմանը խախտելով՝ Խեչոյանը հաճախ օգտագործում է նաև միջական և հեքիաթային տարրեր: Օրինակ՝ «Ամբոխը» պատմվածքում հանդիպում ենք ջրահարսերի. «Շրջկենտրոնից ոտքով գյուղ եկողները գիշերով, եթե «Քոռ կամրջի» մոտ երգող ջրահարսների էին հանդիպում ու ընկնում նրանց հմայքի տակ, Մորիկը մի ականթարթում գյուղից հասնում էր, ջրահարսներին քշում ճահճուտների խորքերը, ազատում «Կորած Ժամի» մոտ սատանաների շուրջկայի մեջ ընկած որսորդներին»¹³: Առեղծվածայինը թափանցում է առաջին հայացքից առօրեական թվացող դեպքերի մեջ, և հաջորդ պահին սովորական կերպարներն ասես վերածվում են անտիկ աշխարհի միջական հերոսների: Ընդ որում՝ Խեչոյանն այնպիսի վստահությամբ է կերտում հեքիաթային այդ պատկերները, որ ականայից ընթերցողը ևս սկսում է հավատալ հերոսների՝ ոչնչով աչքի չընկնող և անգամ մոայլ իրականության մեջ հեքիաթային և միջական տարրերի գոյությանը:

Փորձելով անտեսել գորշ իրականությունը՝ Խեչոյանը դիմում է նաև մեկ այլ հնարի, և պատմվածքներում աչքի են ընկնում կյանքի հանդեպ հերոսների հեզնական վերաբերմունքը և հատկապես, ինչն առավել բնորոշ է պոստմոդեռնիստական աշխարհընկալմանը, իրոնիան և սև հումորը: Վասիլի Ռոզանովն իր «Ակնթարթայինը, 1915 թվական» գրքում գրում է. «Կարևոր է հեզնական վերաբերմունք ունենալ երևույթների նկատմամբ: Հեզնանք... Հեզնանք... Դուք ունե՞ք այն?, օ՛, ուրեմն դուք հեռուն կզնաք»¹⁴: Այս տողերը որպես նշանաբան ընդունելով՝ պոստմոդեռնիզմը ձգտում է հեզնանքի միջոցով ցույց տալ իրականության իրական պատկերը, և մոդեռնիստական դասական հեզնանքին փոխարինելու են գալիս իրոնիան և սև հումորը: Այսինքն՝ եթե դասական ստեղծագործության մեջ ակնհայտ է հեզնականի և լրջության միջև

¹² Ильин И. Постструктурализм, Деконструктивизм, Постмодернизм, М., 1996, с. 89.

¹³ Խեչոյան Լ., նույն տեղում, էջ 78:

¹⁴ Розанов В. Мимолетное. 1915 год, М., 2011, с. 61.

սահմանը, ապա պոստմոդեռնիստական ստեղծագործություններում այդ սահմանը բացակայում է, և ընթերցողը որպես կանոն դժվարանում է ընկալել՝ ինչն է ասված հեգնանքով և ինչը՝ անկեղծ։ Այդպես, օրինակ՝ պոստմոդեռնիստական գրականությանը բնորոշ է սև հումորի և կամ խաղի գործածումը կարևորություն ներկայացնող թեմաների վերաբերյալ, և Խեչոյանի պատմվածքներում ևս ակնհայտ է հեգնական վերաբերմունքը, օրինակ՝ մահվան նկատմամբ։ Հերոսներն այնքան անտարբերությամբ են խոսում մահվան մասին, որ թվում է՝ այն սովորական երևույթ է, և ոչ մի զգացում չպետք է առաջացնի մեր սրտերում։ Օրինակ՝ «Փոխանակություն» պատմվածքում Խեչոյանը գրում է. «Նրանք իրենց «Ուազից» երկու դագաղ հանեցին, մենք էլ՝ մեր, ու գետին չէ, դագաղներին էլ չէ, իրար էինք նայում», ու շարունակում է համր անտարբերությամբ. «Վերադառնում էինք, խաղողի վազերի մեջ հավքը դեռ կանչում էր ժամացույցի պարբերական ճշգրտությամբ։ ...Դեռ ձմեռ էր, բայց տաք, պայծառ ու արևոտ օր էր»¹⁵։ Սակայն կարևոր է ասել, որ հերոսների անտարբերությունը գուցե արտաքին և թվացյալ անտարբերություն է, որը հոգեբանական տեսանկյունից ինքնապաշտպանական նշանակություն ունի։ Գտնվելով մահվան ճիրաններում՝ հերոսները փորձում են ուղղակիորեն անտեսել այն և կամ հեգնանքով քողարկել իրենց առջև ծառացած մահվան սարսափը։

«Սպասում» պատմվածքում ևս Խեչոյանական կերպարները ծաղրում են պատերազմի զոհը դարձած Աղաբեկին և հենց «պատերազմ» ասվածին ամենևին կարևորություն չեն տալիս. «Դատավորն ասաց. «Ուրեմն այսպես... մեղադրյալը գյուղում հայտարարել էր, թե ոտքը կորցրել է Ստալինգրադի պաշտպանության համար, մի ուրիշ անգամ, թե Մոսկվայի պաշտպանության ժամանակ, թե գերմանացին կողքանց ավտոմատի համազարկ է տվել ոտքին, որ ինքը հերոս է... Ուրեմն այսպես, մեր հարցումին և մեր գործին նոր լույս սփռող փաստաթղթերն ասում են. Բեռլինի այսինչ հոսպիտալի բակում թաղված է մեղադրյալի ոտքը, և գիտե՞ք՝ ինչու. սապոզն է հարել ոտքը...»։ Դահլիճը ծիծաղում էր... Աղաբեկ տացուս մեր գյուղից քայլելով հասել էր Բեռլին, ոտքը թողել էր այնտեղ։ Մի ոտքով եկել էր գյուղ ու հայտարարել, թե հերոս եմ։ Դահլիճը ծիծաղում էր...»¹⁶։

Խաղը շարունակվում է, և «Տոթ օրը» պատմվածքում հեգնանքով նշվում է. «Սիրելիս, ես քեզ կսպասեմ, մինչև տիրոջ երկրորդ գալուստը, եթե, իհարկե,

¹⁵ Խեչոյան Լ., նույն տեղում, էջ 204։

¹⁶ Խեչոյան Լ., Խնկի ծառեր, Երևան, 1991, էջ 3-4։

մինչև այդ չսատկես...»¹⁷: Խեչոյանն ազատորեն խաղում է մահվան, պատերազմի և անգամ սիրո հետ, ինչը բնորոշ է պոստմոդեռնիստական ուղղությանը: Ումբերտո Էկոն նշում է. «Պոստմոդեռնիզմի՝ որպես «հոգեվիճակի» առավելությունն այն է, որ պոստմոդեռնիստական ընկալման համակարգում կարող ես մասնակցություն ունենալ խաղին, եթե անգամ չես ըմբռնում այն և կամ լիովին լուրջ վերաբերմունք ունես տվյալ խաղի նկատմամբ»¹⁸:

Այսպիսով, կարող ենք նշել, որ Լևոն Խեչոյանի որոշ պատմվածքներում ակնառու են պոստմոդեռնիստական գաղափարախոսությանը բնորոշ հատկանիշներ և, սակայն, մնում է միայն ենթադրել՝ արդյո՞ք հեղինակը միտումնավոր է գնացել այդ քայլին և հայ գրականության ներմուծել պոստմոդեռնիստական տարրեր, թե՞ պարզապես առեղծվածայնության և իրական կյանքի համատեքստում պոստմոդեռնիզմն ինքն է ներխուժել խեչոյանական արձակ: Այնուամենայնիվ, անկախ նրանից, պոստմոդեռնիստակա՞ն են Խեչոյանի ստեղծագործությունները, թե՞ ոչ, անհերքելի է, որ գրողի արվեստը թողնում է հուզական ուժեղ տպավորություն՝ միաժամանակ դրդելով ընթերցողին անվերջ խորհելու:

ԱՄՓՈՓՈՒՄ

Հոդվածում դիտարկվում է պոստմոդեռնիստական գրականությանը բնորոշ որոշ հատկանիշների, այն է՝ տարածաժամանակային խախտում, սև հումոր, միֆական տարրերի գործածում, իրականի և անիրականի միջև սահմանի բացակայություն և այլ գործոնների մասնակի դրսևորումն անկախության շրջանի հայ գրականության ներկայացուցիչներից մեկի՝ Լևոն Խեչոյանի պատմվածքներում: Վերջինիս ստեղծագործության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Խեչոյանի կերտած առեղծվածայնության և իրական կյանքի համատեքստում պոստմոդեռնիստական աշխարհընկալմանը բնորոշ հատկանիշների շնորհիվ գրողի արվեստը թողնում է հուզական ուժեղ տպավորություն՝ միաժամանակ դրդելով ընթերցողին անվերջ մտորումների:

Քանալի քաներ – պոստմոդեռնիստական աշխարհընկալում, տարածաժամանակային խախտում, սև հումոր, խաղ, միֆ, իրականության և երևակայականի անտարանջատվածություն

¹⁷ Նույն տեղում, էջ 10:

¹⁸ **Эко У.** Заметки на полях «Имени Розы», СПб., 2007, с. 51.

ЧАСТИЧНОЕ ПРОЯВЛЕНИЕ ПОСТМОДЕРНИЗМА В РАССКАЗАХ ЛЕВОНА ХЕЧОЯНА

ДИАНА МНАЦАКАНЯН

В приведенной выше статье рассматриваются некоторые характерные черты постмодернистической литературы, такие как нарушение пространственно-временного континуума, черный юмор, использование мифических элементов, отсутствие границ между реальным и воображаемым, а также частичное проявление других особенностей постмодернизма в рассказах одного из представителей независимого периода армянской литературы Левона Хечояна. Исследование творчества вышеназванного автора показывает, что в хечояновском контексте загадочности и реальности, благодаря особенности постмодернистического мировоззрения, искусство автора производит сильное эмоциональное впечатление, в то же время приводит читателя к бесконечному обдумыванию прочитанного.

Ключевые слова – постмодернистическое мировоззрение, нарушение пространственно-временного континуума, черный юмор, игра, миф, отсутствие границ между реальным и воображаемым.

PARTIAL MANIFESTATIONS OF POSTMODERNISM IN LEVON KHECHOYAN'S LITERARY WORKS

DIANA MNATSAKANYAN

This article considers some postmodern characteristics such as temporal distortion, black humor, mythical elements, indistinct border between fact and fiction and others featured partially in the works of Levon Khechoyan, a representative of Armenian literature of the independence period. The study of Khechoyan's works show that due to the created mythical elements, which make the difference between fact and fiction impossible and other parameters typical of postmodern world perception strong emotional response is provoked making the readers contemplate ever after.

Key words – postmodern life-perception, spatial-temporal distortion, black humour, game, myth, non-differentiation of reality from imagination.

ԼԵՁՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՔԵՐԵՆՈՒՄ ԲԱՅԻ ՆԵՐԿԱ ԺԱՄԱՆԱԿԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆ ԸՍՏ ԱԼ-ՖԱՐԱԲԻԻ

ԱՐՈՒՍՅԱԿ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

Արաքերենի բայական համակարգի Սիբաուեյիի¹ վերլուծությունն առաջ է բերում կատարյալ և անկատար կերպի երկու բայաձևեր, որոնք նա նկարագրում է հետևյալ կերպ. «*Ինչ վերաբերում է բայերին, ապա դրանք իրենց օրինակները վերցնում են անվան իրադարձությունների արտահայտումից և կազմվում են՝ նշելու համար անցյալը, այն, ինչ լինելու է, և այն, ինչ լինում է առանց ընդհատման*»²: Այս բաժանման մեջ ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ թեև նշվում են միայն երկու բայական ձևեր, որոնք ցույց են տալիս ոչ թե գործողության կատարման ժամանակը, այլ դրա կերպը, այնուամենայնիվ, Սիբաուեյիին կազմում է երեք ժամանակների համակարգ: Բայց նա յուրաքանչյուրին իր անունը չի տալիս և մեկ անվան մեջ է միավորում ներկա և ապառնի ժամանակները³: Կատարյալ «ժամանակը» նա անվանում է *māḍī*, որը ցույց է տալիս արդեն իսկ ավարտված, կատարված գործողություն, իսկ անկատար «ժամանակը»՝ *muḍāri*, որը ցույց է տալիս գործողություն, որը կատարվում է ներկայում կամ կատարվելու է ապագայում:

Այսպիսով, արաքերենը չունի բայաձև, որն արտահայտում է ներկա ժամանակը՝ առանց ապառնիի հավելյալ իմաստի: Եվ եթե ցանկանանք արտահայտել այն միտքը, որ «ինչ-որ մեկը տվյալ պահին քայլում է», արաքերենում պետք է դիմել ոչ բայական ձևի (այն է՝ ժամանակի մակբայ) օգնությանը, որը կշեշտի գործողության կատարման ժամանակը, օրինակ՝ «*al-āna*» (الآن):

Ֆիզիկական ժամանակը չի համընկնում քերականական ժամանակ-

¹ Արաբական քերականության առաջին պահպանված տրակտատի՝ *al-Kitāb*-ի («Գիրքը») հեղինակը:

² Sibawayhi. *Al-Kitāb. Būlāq. Miṣr*, 1988, էջ 1:1-3

³ Versteegh C. *Greek Elements in Arabic Linguistic Thinking*. Leiden: E.J. Brill, 1977, էջ 77:

ների հետ, բայց դրանք, իհարկե, սերտորեն հարաբերակցվում են⁴: X դարի արաբ նշանավոր փիլիսոփա Աբու Նասր ալ-Ֆարաբին (մահ. 339/950), ով իր ժամանակակիցների կողմից վայելում էր «Երկրորդ Արիստոտելի» պատվավոր կոչումը, փորձում է ցույց տալ, որ քերականագետների ժամանակի ըմբռնումը խիստ նեղ է՝ օբյեկտիվ իրականությանը իրապես հակադրվելու տեսանկյունից: Նրա բացատրությունն «այժմ» հասկացության համար հիմնվում է արիստոտելյան երկու սահմանումների վրա: Դրանցից մեկը մոտավորապես զուգահեռ է քերականագետների ընկալմանը, իսկ երկրորդը դուրս է գալիս դրա սահմաններից՝ ձևավորելով այլընտրանքային մոտեցում, որն անհրաժեշտ է տրամաբանության սկզբունքների վերլուծության և նկարագրության համար:

«Այժմ» հասկացության առաջին մոտեցումը կարելի է տեսնել Արիստոտելի «Ֆիզիկա» աշխատության մեջ, որտեղ անտիկ փիլիսոփան պնդում է, որ «այժմ»-ը որոշակի սահման է: Այն ժամանակ չէ, այլ նրա հատկանիշն է և նույն դերն է խաղում, ինչ «կետերը գծի համար»⁵: «Այժմ»-ը ժամանակի մեջ տարբերակում է «առաջ»-ը և «հետո»-ն և հանդես է գալիս որպես անցյալի ավարտ և ապագայի սկիզբ⁶: Սա նշանակում է, որ ներկա ժամանակը ֆիզիկական իմաստով չի կարող գոյություն ունենալ, ինչը ենթադրում է, որ գործողությունները ներկա ժամանակում ևս չեն կարող գոյություն ունենալ, և որ բայերը չեն կարող ունենալ ներկայի ժամանակաձև⁷: Ակնհայտորեն սա քերականագետների կողմից առաջ քաշվող տեսանկյունն է (կա՛մ տեղյակ լինելով արիստոտելյան սահմանմանը, կա՛մ՝ ո՛չ)՝ արաբերենում ներկա ժամանակը հստակ կերպով մատնանշող բայաձևի բացակայության «արդարացման» համար: Ահա ալ-Ֆարաբիի ժամանակակից քերականագետներից մեկի՝ ալ-Ջաջաջիի (մահ. 337/949) նկարագրությունը. «Ինչ վերաբերում է ներկա ժամանակին [fi' al-hāl], ապա այն տեղի է ունենում, երբ խոսողը խոսում է, և [հետևաբար- Ա.Ա.] այն ո՛չ անցած և ընդհատված [գործողության-Ա.Ա.] տիրույթում է, ո՛չ էլ սպասվող [ապառնի- Ա.Ա.] ժամանակի տիրույթում: [Ներկա ժամանակը- Ա.Ա.] կատարվում է անցյալ [māḍī] ժամանակում և ապառնի

⁴ Նշվ. աշխ., էջ 75:

⁵ Aristotle. Physics. With commentary by Aquinas Th. Trans. by Pierre H. Conway, O.P. College of St. Mary of the Springs, Columbus, Ohio, 1958-1962, chapter 11, no.581 eBook: <http://www.dhspriory.org/thomas/Physics4.htm#18>

⁶ Նույն տեղում, no. 583

⁷ Versteegh C. Greek Elements in Arabic Linguistic Thinking, էջ 75-76:

[mustaqbal] ժամանակի սկզբում: Այդ իսկ պատճառով ներկա ժամանակը, ըստ էության, ապառնի ժամանակն է»⁸:

Ալ-Ֆարաբին, այնուամենայնիվ, այն համոզման է, որ այս «այժմ»-ի գաղափարը, որը, ըստ էության, «ազատում է» ներկա ժամանակից, այն չէ, որ կիրառել են Արիստոտելը և մնացած փիլիսոփաները քերականական ժամանակների հետ գործ ունենալիս: Կա նաև «այժմ»-ի այլընտրանքային սահմանում, համաձայն որի ներկան սկզբնաղբյուրն է, իսկ մնացյալ երկու ժամանակները (անցյալը և ապառնին) պարզապես նրա ածանցյալներն են, ինչպես որ Արիստոտելը նշում է «Մեկնության մասին»-ում. «Նմանապես և՛ «առողջացավ», և՛ «կառողջանա»-ն բայեր չեն, այլ բայերի թեքումներ: Նրանք տարբերվում են բայից այնքանով, որ վերջինս լրացուցիչ կերպով նշանակում է ներկա ժամանակ. նրանք այն ժամանակն են, որը դուրս է ներկայից»⁹:

«Այժմ»-ի այս ընկալումը որպես «համաժամանակային ներկա ժամանակ»¹⁰ կազմված անցյալից և ապառնիից, խիստ կարևոր է տրամաբանական կապերի արտահայտման համար, որոնք անժամանակ են¹¹:

Ահա ժամանակի այս «համաժամանակային» արիստոտելյան գաղափարի հիմքի վրա էր, որ ալ-Ֆարաբին հակառակվեց քերականագետներին: Նա հավատում էր, որ ժամանակի այս գիտական մոտեցումն առաջարկում է շատ ավելի լավ հիմք «բայ» գաղափարի ընկալման համար՝ ունենալով բայի և լեզվաբանական ու տրամաբանական հարաբերությունների արտահայտման շատ ավելի լայն ընդգրկում, քան «այժմ» -ի քերականական ընկալումը:

Քերականագետները կարող էին հակառակվել ներկա ժամանակի գոյությանը՝ հիմնվելով ֆիզիկական չափանիշների փաստարկների վրա¹², բայց նրանք միանշանակ ընդունում էին քերականական երեք ժամանակների ստորակարգության համակարգի գոյությունը¹³: Պետք է նշել նաև, որ արդեն իսկ X դարի քերականագետների մոտ կարելի է նկատել սիբաուեյիյան *māḍī-muḍārī*՝ տերմինաբանության անցում *māḍī-ḥal-mustaqbal* տերմինաբանու-

⁸ Al-Zajjājī, Abū al-Qāsim. Al-Idāh fi 'ilal al-naḥw. Al-Qāhirah, 1959, էջ 87: 3-5

⁹ Aristotle. De Interpretatione, 16^b16-19

¹⁰ Եզրույթի թարգմանությունը մերն է. "Omnitemporal present tense" տե՛ս Abed Sh. Aristotelian Logic and The Arabic Language in Alfarabi. New York: State University of New York Press, 1991, էջ 119:

¹¹ Նույն տեղում:

¹² Տե՛ս ալ-Չաջջաջիի վերոնշյալ սահմանումը, ինչպես նաև՝ Zajjājī, Idāh, էջ 86:

¹³ Versteegh C. Greek Elements in Arabic Linguistic Thinking, էջ 80:

թյան¹⁴: Խոսքն իրականության արտացոլումն է, և հետևաբար կան ինչպես ֆիզիկական, այնպես էլ քերականական երեք ժամանակներ: Վերջիններիս ստորակարգությունը սահմանվում է ֆիզիկական ժամանակների ստորակարգությամբ¹⁵:

Ալ-Ջաջաջին, օրինակ, ընդունում է «դեռևս գոյություն չունեցածի, գոյության և անցյալում գոյություն ունեցածի» ժամանակագրական հերթականությունը, որից բխում է «ապառնի-ներկա-անցյալ» բայական ժամանակների ստորակարգությունը¹⁶: Ինչպես նշում է Ք.Վերստեդը, սա համընկնում է արաբ քերականագետների մեծամասնության տեսակետի հետ¹⁷: Բայց քերականագետ ալ-Սառոաջը, օրինակ, այլ կարծիքի էր. նա ներկա ժամանակն էր համարում առաջին բայական ժամանակ, որին անմիջականորեն հետևում են անցյալ և ապառնի ժամանակները¹⁸: Հավանաբար, սա կարելի է կապել տրամաբանության ազդեցության հետ, որն ալ-Սառոաջը սովորել էր ալ-Ֆարաբիից՝ միաժամանակ լինելով նրա քերականության ուսուցիչը¹⁹:

Ալ-Ֆարաբին նշում է, որ Արիստոտելի և փիլիսոփաների «այժմ»-ի գաղափարը (այն է՝ ներկա ժամանակը) մատնանշում է անցյալի ավարտը և ապառնիի սկիզբը, ինչն անբաժանելի է²⁰: Այսինքն՝ ներկա ժամանակի համար միավորվում են անցյալ և ապառնի ժամանակները, որը, ինչպես ցույց է տալիս Ք.Վերստեդը, համընկնում է ստոիկ հայտնի փիլիսոփա Քրիսպոս Սոլացոյ²¹

¹⁴ Նույն տեղում:

¹⁵ Նշվ. աշխ., էջ 81:

¹⁶ Zajjājī, Idāh, էջ 86:

¹⁷ Versteegh C., նույն տեղում:

¹⁸ Նույն տեղում:

¹⁹ Ալ-Ֆարաբին շատ արաբ քերականագետների համար ծառայել է որպես տրամաբանությանը ծանոթացման աղբյուր (ներառյալ նաև վերոնշյալ ալ-Ջաջաջին): Տե՛ս Versteegh C., նշվ. աշխ., էջ 140:

²⁰ Al-Fārābī, Abū Naṣr. *Sharḥ al-Fārābī li-kitāb Aristūṭalis fi al-ʿIlbārāh*. Edited by W. Kutsch and S. Marrow. Beirut: Al-maṭbaʿah al-Kaṭūlikīyyah, 1960, էջ 41:2-4:

²¹ Ա.Շմիդհաուզերը, օրինակ, ստոիկ հայտնի փիլիսոփա Քրիսպոս Սոլացոյն (Ք.ա. 281/277-208/205) է համարում հունական քերականության հիմնադիրը, ով նաև մշակել է ստոիկյան տրամաբանությունը: Մանրամասն տե՛ս Schmidhauser, A. U. (2010) *The Birth of Grammar in Greece*, in *A Companion to the Ancient Greek Language* (ed. E. J. Bakker), Wiley-Blackwell, Oxford, UK. doi: 10.1002/9781444317398.ch33, էջ 1: Ռ.Ռոբինսը նշում է, որ փիլիսոփայության սահմաններում քերականության գիտակարգի առանձնացումը տեղի է ունեցել ստոիկների շնորհիվ: Տե՛ս Robins R. "The Development of the Word Class

մոտեցման հետ²²: Ալ-Ֆարաբին բացատրում է, որ «Ես արեցի այժմ» կամ «Ես կանեմ այժմ» ասելով մարդկանց մեծամասնությունը նկատի ունեն *«ոչ թե անցյալ ժամանակի ավարտը և ապառնի ժամանակի սկիզբը, այլ, ավելի շուտ, այն ժամանակը, որը մոտ է անցյալ ժամանակի վերջին և ապառնի ժամանակի սկզբին»*²³:

Ալ-Ֆարաբին պնդում է, որ նրանք, ովքեր չեն զբաղվում փիլիսոփայությամբ, տեղյակ չեն ժամանակի գիտական սահմանմանը, մինչդեռ փիլիսոփաները կիրառում են «այժմ»-ի գիտական և ոչ գիտական սահմանումները²⁴:

Ըստ ալ-Ֆարաբիի՝ ներկա ժամանակը, ինչպես որ այն սահմանվում է գիտական ձևով, կարող է լինել կա՛մ երկար, կա՛մ կարճ. հնարավոր է ասել և՛ «ընթացիկ (ներկա) տարի», և՛ «ընթացիկ (ներկա) օր», և՛ «ընթացիկ (ներկա) պահ»²⁵: Սա հնարավորություն է տալիս արտահայտելու ոչ միայն անցյալի և ապագայի գործողությունները, այլև այս պահին կատարվող և շարունակական գործողությունները²⁶: Եվ երբ ասում ենք «նա այժմ ապրում է», նկատի ենք ունենում որպես կենդանի էակ տվյալ անհատի գոյությունը ներկայում, որը միաժամանակ ներկայացնում է անցյալի ավարտը և ապագայի սկիզբը²⁷:

Այսպիսով, ալ-Ֆարաբին առաջարկում է արաբերենի բայական համակարգի «բարեփոխում» տրամաբանության միջոցով: Առաջարկելով ընդունել ներկայի «համաժամանակային» տեսանկյունը՝ նա, ըստ էության, առաջարկում է արաբերենի համար նոր հիմքերի հաստատում: Այն խիստ տարբեր էր արաբերենի բայական համակարգի բնականորեն զարգացած ուղղվածությունից, որը, ինչպես կարելի է նկատել ալ-Ջաջջաջի վերոնշյալ օրինակում, ենթադրում է, որ գործողությունները տեղի են ունենում կա՛մ անցյալում, կա՛մ ապագայում, և որ *«բայի ներկա ժամանակ, ըստ էության, գոյություն չունի»*²⁸: Ինչպես նշում է Շ.Աբեդը, ալ-Ջաջջաջին ինչ-որ իմաստով այն համոզման էր, որ ներկա ժամանակն ավելի շուտ կլանվում է անցյալի և ապառնի կողմից, որը

System of the European Grammatical Tradition.” Foundations of Language 2.1966. pp. 3-19, էջ 8:

²² Versteegh C. Greek Elements in Arabic Linguistic Thinking, էջ 75-76:

²³ Al-Fārābī, Ṣarḥ, էջ 40; մեքսերումն ըստ՝ Abed Sh. Aristotelian Logic and The Arabic Language in Alfarabi, էջ 128:

²⁴ Abed Sh., նույն տեղում:

²⁵ Al-Fārābī, Ṣarḥ, էջ 41:8-9:

²⁶ Abed, Sh., նույն տեղում:

²⁷ Նույն տեղում:

²⁸ Al-Fārābī, Ṣarḥ, էջ 40:17-18 :

սկզբունքորեն տարբերվում է ներկա ժամանակի վերաբերյալ ալ-Ֆարաբիի փիլիսոփայական մոտեցումից²⁹: Ալ-Ֆարաբիի հայեցակարգում անցյալը և ապառնին միավորվում են «համաժամանակային» ներկայի մեջ, որը, ըստ նրա, ավելի համապատասխան հիմք է՝ իրականությունն արտահայտելու համար:

Ինչպես երևում է, ալ-Ֆարաբին անտեսում է այն խիստ հարաբերակցությունը, որ գոյություն ունի լեզվի բնական զարգացման և այն զգայական ընկալման միջև, որ ունեն լեզվակիրները: Օրինակ՝ նա հաշվի չի առնում այն հանգամանքը, որ լեզվի բնական զարգացումը կարող է միջոց լինել՝ հասկանալու և սահմանելու տվյալ լեզվով խոսող մարդկանց ժամանակի ընկալումը: Նա անտեսում է այն հանգամանքը, որ լեզվի բնական զարգացումը և ներքին կառուցվածքը, հնարավոր է, ավելի լավ կարող են սահմանել ժամանակային ձևերը տվյալ լեզվում: Փիլիսոփայական մոտեցումը, որն անտեսում է այս փաստը, կարող է բնական լեզվին հարկադրել արհեստական կառուցվածք:

Կարելի է եզրակացնել, որ ալ-Ֆարաբիի նման մոտեցումը գալիս է նրա այն համոզմունքից, որ լեզուն իր բնույթով արհեստական է, և որ տրամաբանության օրենքները ընդհանուր են բոլոր լեզուների համար³⁰: Այստեղից էլ հետևում է ալ-Ֆարաբիի գլխավոր նպատակը, այն է՝ արաբական քերականությունը համապատասխանեցնել տրամաբանության այդ «համընդհանուր կանոններին»:

ԱՄՓՈՓՈՒՄ

Հոդվածում ներկայացվում է արաբերենում բայի ներկա ժամանակի բնույթի վերլուծությունը՝ ըստ X դարի արաբ հայտնի փիլիսոփա ալ-Ֆարաբիի (մահ. 339/950): Արաբերենը չունի բայաձև, որն արտահայտում է ներկա ժամանակը՝ առանց ապառնիի հավելյալ իմաստի: Ալ-Ֆարաբին, հետևելով արիստոտելյան տրամաբանությանը, առաջարկում է արաբերենի բայական համակարգի «բարեփոխում» տրամաբանության միջոցով: Նրա հայեցակարգում անցյալը և ապառնին միավորվում են «համաժամանակային» ներկայի մեջ, որը խիստ տարբեր էր արաբերենի բայական համակարգի բնականորեն

²⁹ Abed Sh. Aristotelian Logic and The Arabic Language in Alfarabi, էջ 129

³⁰ Տրամաբանության և քերականության հարաբերակցության շուրջ ալ-Ֆարաբիի մոտեցման մասին տե՛ս **Անդրեասյան Ա.**, Արաբական քերականությունը և նրա կապը տրամաբանության հետ ըստ ալ-Ֆարաբիի, «Արաբագիտական ուսումնասիրություններ», հ. 6, Երևան, 2013, էջ 8-22:

զարգացած ուղղվածությունից: Նման տեսակետը կարող էր բնական լեզվին հարկադրել արհեստական կառուցվածք: Ալ-Ֆարաբիի այս մոտեցումը գալիս է նրա այն համոզմունքից, որ լեզուն իր բնույթով արհեստական է, և որ տրամաբանության օրենքներն ընդհանուր են բոլոր լեզուների համար: Դրանից ելնելով՝ ալ-Ֆարաբիի գլխավոր նպատակն էր արաբական քերականությունը համապատասխանեցնել տրամաբանության այդ «համընդհանուր կանոններին»:

Բանալի բաներ – արաբական քերականություն, արիստոտելյան տրամաբանություն, բայ, ներկա ժամանակ, «համաժամանակային» ներկա ժամանակ:

ПРОБЛЕМА НАСТОЯЩЕГО ВРЕМЕНИ ГЛАГОЛА В АРАБСКОМ ЯЗЫКЕ ПО АЛЬ-ФАРАБИ

АРУСЯК АНДРЕАСЯН

В статье представлен характер арабского глагола настоящего времени по анализу арабского философа X века аль-Фараби (ум. 339/950). Арабский язык не имеет форму глагола настоящего времени, которая выражала бы его без дополнительного смысла будущего времени. Аль-Фараби, следуя логике Аристотеля, предлагает "реформу" в арабской грамматической системе с помощью логики. В его концепции прошедшее и будущее сливаются в "одно-временное" настоящее. Эта концепция сильно отличается от естественно разработанной схемы арабской грамматической системы. И такой подход может навязать естественному языку искусственную структуру. Такая точка зрения аль-Фараби исходит из его убеждения, что язык в природе является искусственным, а законы логики общие для всех языков. Исходя из этого, главной целью аль-Фараби является попытка представить арабскую грамматику в соответствии с этой "универсальной логикой".

Ключевые слова - арабская грамматика, логика Аристотеля, глагол, настоящее время, "одновременное", настоящее время.

AL- FĀRĀBĪ'S SUGGESTIONS CONCERNING THE PRESENT TENSE OF ARABIC VERBS

ARUSYAK ANDREASYAN

The paper analyses the essence of the present tense of Arabic verbs, based on al-Fārābī (d. 339/950), a 10th century Arab philosopher's suggestions. The Arabic language does not have any verb-form for the present tense without an attached additional meaning of future. Following the Aristotelian Logic, al-Fārābī suggests a "reform" in the Arabic verb system by means of logic. In his concept the past and future come together in the "omnitemporal" present, which is very different from the Arabic verb system developed naturally with time. This approach might consequently impose an artificial structure on the natural language. Al-Fārābī's strategy derives from his conviction that language by nature in itself is artificial and that the laws of Logic are common to all languages. Therefore, the main purpose of al-Fārābī was to correlate the Arabic Grammar with the "universal rules" of logic.

Key words – Arabic Grammar – Aristotelian Logic – verb – the present tense – the "omnitemporal" present tense.

ԱՆՎԱՆԱԿԱՆ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԿԱՐԳԵՐԸ՝ ՈՐՊԵՍ ՋՈՒԳԱԴՐԱԿԱՆ ԼԵՃՎԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱ

ԳԱՐԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Ձուգադրական լեզվաբանությունը երկու կամ ավելի լեզուների տիպաբանական ուսումնասիրությունն է, որի նպատակն է բացահայտել համեմատվող լեզուների քերականական կառուցվածքի ընդհանրություններն ու տարբերությունները:

Թեև զուգադրական լեզվաբանությունը՝ որպես այդ գիտության առանձին ճյուղ, ձևավորվել է քսաներորդ դարի երկրորդ կեսին և համարվում է ամենաերիտասարդ լեզվաբանական ուղղություններից մեկը, լեզուների զուգադրումը, որն ընկած է դրա հիմքում, լեզվաբանների կողմից կիրառվել է դեռևս հնագույն ժամանակներից:

Տարբեր հեղինակների կողմից այս կամ այն լեզվի համար մշակվող քերականություններն իրենց մեջ զգալի չափով կրում էին զուգադրության տարրեր, որը կարող էր լինել հեղինակի մայրենի լեզվի հետ, եթե գրված աշխատությունը վերջինիս մայրենի լեզվին չէր վերաբերում, կամ, ինչպես պատահում էր ավելի հաճախ, որպես զուգադրության առարկա ծառայում էին լատիներենը կամ հունարենը, որոնք համարվում էին գիտության հիմնական լեզուները: Ռուս լեզվաբան Վ. Գակը այս կապակցությամբ եզրակացնում է, որ զուգադրական լեզվաբանությունը՝ որպես ձևավորված առանձին ուղղություն, պարզապես ներկայացնում է «լեզվի նկարագրության բնագավառում մարդկության փորձի տեսական ընդհանրացումն ու բյուրեղացումը»¹:

Ինչ վերաբերում է զուգադրական լեզվաբանության և լեզվաբանական տիպաբանության նույնացման կամ տարբերակման խնդրին, ապա այստեղ լեզվաբանների տեսակետները բաժանվում են: Օրինակ՝ չեխ լեզվաբան Վ. Սկալիչկան գտնում է, որ տիպաբանությունն ուսումնասիրում է լեզվի առանձին տարրերը՝ հնարավորինս մեծ քանակությամբ լեզուների օրինակով, մինչդեռ

¹ Гак В. Г. О контрастивной лингвистике // Новое в зарубежной лингвистике, вып. XXV, М., 1989, с. 5-6.

զուգադրական քննության են ենթարկվում երկու լեզուներ, և փորձ է արվում վեր հանելու դրանց ընդհանրություններն ու տարբերությունները²:

Լեզվաբան Վ. Գակը, վիճարկելով այս տեսակետը, նշում է, որ զուգադրական քննության կարող են ենթարկվել նաև երկուսից ավելի լեզուներ: Միևնույն ժամանակ զուգադրական քննության առարկա կարող են լինել նաև լեզվական համակարգի առանձին տարրեր և ոչ միայն լեզուն ամբողջությամբ: Գակի բնորոշմամբ լեզվաբանական տիպաբանության և զուգադրական լեզվաբանության տարբերությունը հիմնականում այն է, որ առաջինի հիմնական խնդիրը լեզվատիպի որոշումն է, իսկ զուգադրական լեզվաբանությունն իր առջև դնում է ավելի համեմատ նպատակներ, այն է՝ քննել համեմատվող լեզուների քերականական առանձնահատկությունները և նմանությունները:

Է. Աղայանը նշում է, որ զուգադրական լեզվաբանության ուսումնասիրությունները. «ըստ իրենց մեթոդի և հայեցակետի նույնանում են լեզվաբանական տիպաբանության հետ և ըստ էության տիպաբանական հետազոտություն են երկու կամ ավելի լեզուների»³:

Հուզաբացի լեզվաբան Լ. Դեժյոն նշում է, որ տիպաբանության շնորհիվ հնարավոր է համակարգված ձևով քննության ենթարկել աշխարհի լեզուների քերականական կառուցվածքը, սահմանել ընդհանուր օրինաչափությունները, ըստ այդ օրինաչափությունների դասակարգել լեզուները⁴:

Զուգադրական լեզվաբանությունն իր հերթին տիպաբանության համար ապահովում է գիտական նյութ՝ հետագա տեսական վերլուծության ենթարկելու նպատակով: Այլ կերպ ասած՝ լեզվաբանական տիպաբանությունը և զուգադրական լեզվաբանությունը կազմում են անքակտելի միասնություն և փոխլրացնում են միմյանց:

Լեհ լեզվաբան Յ. Ֆիզիակն առանձնացնում է զուգադրական լեզվաբանության երկու ուղղություն՝ տեսական և գործնական-կիրառական: Առաջինը սերտորեն կապված է ընդհանրությունների (ունիվերսալիաների) գաղափարի հետ և ցույց է տալիս, թե դրանք ինչպիսի արտահայտություն են գտնում այս կամ այն լեզվի քերականական համակարգում⁵:

² Скаличка В. Типология и сопоставительная лингвистика // Новое в зарубежной лингвистике, вып. XXV, М., 1989, стр. 27-32.

³ Աղայան Է. Բ., Լեզվաբանության հիմունքներ, Երևան, 1987, էջ 134-135:

⁴ Деже Л. Некоторые замечания о роли приложения типологии к контрастивной лингвистике // Новое в зарубежной лингвистике, вып. XXV, М., 1989, с. 179-187.

⁵ Fisiak J. Contrastive linguistics and language teaching, Pergamon Press, 1981, pp. 4-6.

Կիրառական զուգադրական լեզվաբանությունն իր հերթին, հենվելով տեսական ճյուղի տվյալների վրա, դրանք հարմարեցնում է մի շարք գործնական նպատակների, ինչպիսիք են՝ օտար լեզվի ուսուցումը, թարգմանության տեսությունը և այլն:

Զուգադրական լեզվաբանությանը վերաբերող ուսումնասիրություններ ի հայտ եկել են դեռևս 19-րդ դարի վերջին տասնամյակներում՝ մի շարք հայտնի լեզվաբանների աշխատանքներում, որոնցից կարելի է հիշատակել Բոդուեն դե Կուրտենենին և Բոգորոդիցկին: Այդ աշխատությունները հիմնականում տեսական բնույթի էին և կիրառական խնդիրները շոշափում էին միայն հպանցիկ: Տեսական ուղղությունն իր հետագա զարգացումը գտավ Պրահայի լեզվաբանական դպրոցի ներկայացուցիչների, մասնավորապես Մատեզիուսի, Տրնկայի, Վաչեկի, Իսաչենկոյի, Ֆիրբասի աշխատություններում:

Երկրորդ համաշխարհային պատերազմին հաջորդող շրջանում զուգադրական լեզվաբանության նկատմամբ զգալի հետաքրքրություն առաջ եկավ Ամերիկայի Միացյալ Նահանգներում: Սկսած նախորդ դարի 50-ական թվականներից՝ ավելի ու ավելի էին մեծանում օտար լեզուների ուսուցման կարևորությունը և նշանակությունը, որ մասնագետներին դրդում էին փնտրել դասավանդման նոր և ավելի արդյունավետ մեթոդներ: Այս համատեքստում առաջ եկավ այն տեսակետը, որ երկու տարբեր լեզուների քերականական կառուցվածքի համեմատական քննությունը կարող է նպաստել օտար լեզվի յուրացմանը, մասնավորապես կանխել այն սխալները, որոնք սովորողները թույլ են տալիս օտար լեզու սովորելիս իրենց հարազատ լեզվի քերականական կառուցվածքի ազդեցության տակ:

Խորհրդային Միությունում ևս լեզվաբանության այս ուղղությունը գտնվում էր լեզվաբանների ուշադրության կենտրոնում: Տարբեր լեզուների և ռուսերենի զուգադրական քերականությանը վերաբերող աշխատություններ են հրատարակել Արակինը, Յարցևան, Սմիռնիցկին, Գակը և այլք: Իրենց աշխատություններում զուգադրական լեզվաբանության հարցերին են անդրադարձել նշանավոր լեզվաբաններ Ռեֆորմատսկին, Շչերբան, Պոլիվանով:

Տվյալ հոդվածում որպես զուգադրական լեզվաբանության ուսումնասիրության առարկա դիտարկվում են անվանական քերականական կարգերը:

Քերականական կարգերը քերականական իմաստի և դրա արտահայտման միջոցների միասնությունն են: Նախևառաջ լինում են *շարահյուսական* և *ձևաբանական* կարգեր: Ձևաբանականներն իրենց հերթին բաժանվում են երկու խմբի՝ *անվանական* և *բայական*: Ամենակիրառելի անվանական կարգե-

րը, որոնք առկա են բազմաթիվ լեզուներում, դրանք առկայացման, թվի, հոլովի, ածականի համեմատության աստիճանների, որոշ լեզուներում նաև անձի և իրի, շնչավորի և անշունչի քերականական կարգերն են: Բայական կարգերից կարելի է նշել եղանակը, ժամանակը, կերպը, դեմքը, բայասեռը, հաստատում-ժխտումը⁶:

Վ. Գակը նշում է, որ զուգադրական լեզվաբանության առարկա կարող են լինել լեզվաբանական բոլոր մակարդակների տարրերը՝ հնչյունները, բառերը, քերականական կառույցները և երևույթները⁷:

Խոսելով քերականական կարգերի նկարագրության մեթոդների մասին՝ ռուս լեզվաբան Ջելենեցկին նշում է, որ այդ նպատակի համար կարող է հաջողությամբ կիրառվել *իմաստային դաշտերի* տեսությունը: Իր հիմնական նշանակությամբ իմաստային դաշտն արտահայտում է իմաստաբանորեն միմյանց հետ որոշակի կերպով հարաբերվող բառային միավորների ամբողջությունը: Սակայն լեզվաբանական տիպաբանության մեջ այն այլ կիրառություն է ձեռք բերել. այն միավորում է տվյալ քերականական կարգին առավել բնորոշ արտահայտության միջոցները և իմաստային առումները մեկ համակարգի մեջ⁸:

Քերականական կարգերի արտապատկերումը իմաստային դաշտերի վրա հստակ պատկերացնելու համար պետք է տարբերակում մտցնել արտահայտության և բովանդակության պլանների միջև: Արտահայտության պլանը ներկայանում է որպես տվյալ քերականական կարգի արտահայտման միջոցների միանություն: Այդ քերականական արտահայտության միջոցները պայմանականորեն կարելի է բաժանել երկու խմբի. առաջին խմբին են պատկանում քերականական ձևայինները, նախնառաջ՝ ածանցները:

Երկրորդ խումբն են կազմում շարահյուսական միջոցները (շարադասություն), կապեր, նախդիրներ և այլն:

Քերականական կարգերի նման վերլուծությունը իմաստաբանության և ձևաբանության տեսանկյունից հնարավորություն է տալիս դիտարկելու այդ կարգերն իրենց ամբողջության մեջ՝ միաժամանակ համեմատության ենթարկելով դրա բաղկացուցիչ տարրերը:

Անվանական քերականական կարգերից առավել բարդ երևույթ է հոլովի կարգը: Հոլովի քերականական կարգի տիպաբանական նկարագրությունը

⁶ Պետրոսյան Հ. Զ., Հայերենագիտական բառարան, Երևան, 1987, էջ 621:

⁷ Гак В. Г. О контрастивной лингвистике, с. 7-8:

⁸ Зеленецкий А. Л. Сравнительная типология основных европейских языков, М., 2004, с. 105-109.

նախևառաջ ենթադրում է հոլովական քերականական արտահայտության միջոցների համակարգումը, որոնք ներկայացնում են մեծ բազմազանություն:

Իմաստային տեսանկյունից հոլովի կարգի համար հստակ և համապարփակ սահմանում տալը նույնպես չափազանց դժվար է, քանի որ հոլովական կապակցության իմաստը նախևառաջ բխում է նրա բաղկացուցիչ բառերի բառային իմաստից: Ռուս լեզվաբան Վինոգրադովն այս կապակցությամբ նշում է, որ «գոյականի հոլովական ձևերում արտահայտվում է առարկաների, երևույթների, գործողությունների և որակների միջև հարաբերությունների ընկալումը՝ նյութական իրականության մեջ»⁹:

Ընդհանրապես հոլովի կարգի ուսումնասիրությունը բարդանում է այն հանգամանքով, որ լեզուների մի մասում այն առկա է, իսկ մյուսներում՝ ոչ: Առաջիններում հոլովական իմաստներն ստանում են քերականական արտահայտություն՝ մասնիկների միջոցով, երկրորդների դեպքում՝ բառային: Հենց այս պատճառով լեզվաբանության մեջ առաջ է եկել խորքային հոլովների մասին տեսությունը, որը հայտնի է նաև «հոլովական քերականություն» անվամբ: Այս ուղղության հիմնադիրներն են համարվում ամերիկացի լեզվաբաններ Չ. Ֆիլմորը և Ու. Չեյֆը:

Անվանական քերականական կարգերից մյուսը՝ թիվը, առավել մեծ կիրառություն ունի աշխարհի լեզուներում և այս կամ այն կերպ արտահայտվում է դրանցից յուրաքանչյուրում: Թվի կարգը դիտարկելիս անհրաժեշտ է հաշվի առնել երկու տարբեր տեսակի հակադրություններ դրա ներսում: Առաջինը, բնականաբար, եզակիության և հոգնակիության հակադրությունն է, որ առկա է հաշվելի առարկաների դեպքում:

Երկրորդ տիպի հակադրության մի կողմում այն գոյականներն են, որոնք ենթակա են թվային առկայացման, այսինքն՝ հաշվելի են, իսկ մյուս կողմում՝ այն գոյականները, որոնք ենթակա չեն թվային առկայացման և անհաշվելի են: Դրանց շարքում կարելի է դասել հավաքական, անհոգնական, անեզական գոյականները: Այս հակադրությունը պայմանավորված է նրանով, որ մի խումբ բառերի բառային իմաստը հնարավորություն չի տալիս արտահայտելու թվային հակադրության երկու կողմերը, և նրանք ներկայանում են կամ միայն եզակի, կամ միայն հոգնակի ձևով:

Հաջորդ անվանական կարգն է առկայացումը: Քերականական իմաստի տեսանկյունից առկայացման կարգը որոշակիացնում է առարկաների հարա-

⁹ Виноградов В. В. Русский язык, М., 1972, с. 139.

բերությունները հաղորդակցական իրադրության և հաղորդակցման մասնակիցների նկատմամբ, այսինքն՝ ըստ հաղորդակցվողներին հայտնի կամ անհայտ լինելու կամ հաղորդակցվողների հետ առնչության:

Գ. Զահուկյանը նշում է, որ հայերենում առկայացման քերականական կարգն ունի երկու ենթակարգ՝ որոշյալություն և ցուցաստացականություն: Ձևաբանական տեսանկյունից առկայացումը դրսևորվում է հիմնականում հոդերի՝ որպես յուրահատուկ քերականական ձևային միջոցով: Այս համատեքստում առկայացման քերականական կարգի ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս բացահայտելու հոդերի (*անորոշ, որոշյալ, դիմաստացական*) ծագումը և զարգացումը, նրանց գործառնության մանրամասնություններն ու նրբերանգները¹⁰:

Հոդերի գործառնությամբ գոյականի իմաստային առանձնակիության ընդգծումն է խոսքային իրադրության մեջ: Ինչպես նշում է Մ. Ասատրյանը, տվյալ հաղորդակցության ենթատեքստից պետք է պարզ և հասկանալի լինի, թե խոսքն ինչի մասին է՝ տվյալ տեսակի մասի՞ն ընդհանրապես, թե՞ այդ տեսակի մեջ մտնող մի որևէ առանձին առարկայի մասին, որի համար լեզուներում կան բառիմաստի որոշակիացման ինչպես բառային, այնպես էլ քերականական միջոցներ, նախևառաջ՝ հոդերը: Դրանց միջոցով վերացական գաղափարները ավելի որոշակիացնում են իրենց նշանակությունը՝ «ստանում են թանձրացական բովանդակություն»¹¹:

Հ. Պետրոսյանը նշում է, որ որոշյալի և անորոշի քերականական կարգի մասին խոսելիս նախևառաջ նկատի է առնվում առարկայի հայտնի կամ անհայտ լինելը, վերացական կամ որոշակի, ընդհանուր կամ մասնավոր իմաստների առկայությունը¹²:

Մեկ այլ անվանական քերականական կարգ է ածականի համեմատության աստիճանների կարգը: Այն իմաստաբանության տեսանկյունից գրեթե նույն արժեքային հարաբերությունն է արտահայտում բոլոր լեզուներում: Ա. Զելենեցկին այս կարգի իմաստային կառուցվածքում առանձնացնում է երկու հիմնական բևեռ՝ հավասարության, որն արտացոլվում է ածականի

¹⁰ Զահուկյան Գ., Ժամանակակից հայերենի տեսության հիմունքներ, Երևան, 1974, էջ 208-209:

¹¹ Ասատրյան Մ. Ե., Ժամանակակից հայոց լեզու: Ձևաբանություն, Երևան, 2004, էջ 89:

¹² Պետրոսյան Հ. Զ., Որոշյալի և անորոշի, անձի և իրի առումները հայերենում, Երևան, 1960, էջ 19-21:

համեմատության դրական աստիճանի մեջ, և անհավասարության, որոնք արտացոլվում են բաղդատական և գերադրական աստիճանների մեջ¹³:

Դրական աստիճանն արտահայտում է առարկայի հատկանիշն առանց որևէ համեմատության և ածականի ելակետային ձևն է: Բաղդատական աստիճանն արտահայտում է առարկայի համեմատվող հատկանիշի հավասարական, առավել կամ նվազ լինելը այլ առարկաների միևնույն հատկանիշի նկատմամբ: Գերադրական աստիճանն արտահայտում է առարկայի համեմատվող հատկանիշի գերազանցություն այլ առարկաների միևնույն հատկանիշի նկատմամբ, կամ առանց անմիջական համեմատության:

Արտահայտության պլանում ածականների համեմատության աստիճանների տարբերությունները տարբեր լեզուներում հիմնականում հանգում են համադրական և վերլուծական քերականական ձևերին: Տարբեր լեզուների համեմատության աստիճանների քերականական ձևերը զուգադրելիս անհրաժեշտ է հաշվի առնել՝ արդյոք դրանցով արտահայտված իմաստներն ունեն արժեքային տարբերություններ, թե՞ ոչ, առկա են զուգաձևություններ, թե՞ ոչ:

Այսպիսով, կարող ենք նշել, որ հոդվածում ուրվագծել ենք անվանական քերականական կարգերի՝ բովանդակության և արտահայտության պլանների փոխհարաբերությունները, ինչպես նաև նախանշել տարբեր լեզուների անվանական կարգերի զուգադրական-տիպաբանական քննության նպատակներն ու հեռանկարները:

ԱՄՓՈՓՈՒՄ

Զուգադրական լեզվաբանությունը սկսել է զարգանալ քսաներորդ դարի 50-ական թվականներից և ներկայանում է որպես ընդհանուր լեզվաբանության առանձին մի ճյուղ, որն զբաղվում է զուգադրման միջոցով լեզուների քերականական կառուցվածքի ուսումնասիրությամբ՝ նպատակ ունենալով բացահայտելու դրանց առանձնահատկություններն ու նմանությունները:

Հոդվածում քննության են ենթարկվում հոլովի, թվի, առկայացման և ածականի համեմատության աստիճանների քերականական կարգերը, թեև երբեմն անվանական քերականական կարգերի շարքում են դասվում նաև անձի և իրի, շնչավորի և անշունչի կարգերը: Նման ընտրությունը պայմանավորված է նրանով, որ վերոհիշյալ չորս քերականական կարգերն առավել մեծ կիրառություն ունեն աշխարհի լեզուներում և ներկայացնում են քերա-

¹³ Зеленецкий А. Л. Сравнительная типология основных европейских языков, с. 108.

կանական իմաստների և համապատասխան արտահայտության միջոցների մեծ բազմազանություն:

Բանալի բաներ- քերականական կարգ, զուգադրական լեզվաբանություն, անվանական, հոլով, թիվ, առկայացում, համեմատության աստիճաններ:

ИМЕННЫЕ ГРАММАТИЧЕСКИЕ КАТЕГОРИИ КАК ОБЪЕКТ КОНТРАСТИВНОЙ ЛИНГВИСТИКИ

ГАРИК ГРИГОРЯН

Контрастивная лингвистика как самостоятельная дисциплина начала развиваться с 50-ых годов XX века и занимается сопоставительным изучением грамматической структуры языков для выявления их различий и общих черт. В статье рассматриваются именные грамматические категории, принципы их сопоставления, а также планы содержания и выражения. В статье анализируются грамматические категории падежа, числа, актуализации и степени сравнения прилагательных, иногда к именным категориям относят еще и категории одушевленности. Такой выбор обусловлен тем, что вышеупомянутые четыре грамматические категории имеют широкое применение во многих языках мира и представляют большое многообразие грамматических значений и соответствующих форм выражения.

Ключевые слова – контрастивная лингвистика, именные категории, падеж, число, актуализация, степени сравнения прилагательного.

GRAMMATICAL CATEGORIES FOR CONTRASTIVE LINGUISTIC STUDIES

GARIG GRIGORYAN

Contrastive linguistics started to develop as a separate discipline in the 1950s. It is a branch of general linguistics that studies the grammatical structures of languages to specify the singularities (differences) and relatedness (similarities) that exist between these languages. In the article the categories of case, number, actualization and degree of comparison of adjectives are considered. These

categories are chosen for the study as they are the basic categories widely used in a great number of languages and because they stand for a great variety of grammatical meanings and relevant means of expression.

Key words – grammatical category, contrastive linguistics, nominal, case, number, actualization, degree of comparison.

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐՈՂԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

ԼՈՒՍԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ճանաչողական լեզվաբանության շրջանակներում տնտեսական իրադարձությունն ընկալվում է որպես հարաշարժ էություն, որն ընթանում է որոշակի հանգամանքների ներքո, համաձայն որոշակի սցենարի և, հետևաբար, ընկալվում է ֆրեյմ-սցենարի միջոցով: Տնտեսական իրադարձության ֆրեյմ-սցենարը պարունակում է սլոթեր, որոնք իրենց էությամբ երկու տեսակի են՝ միջուկային և պայմանական/տարափոփոխ: Միջուկային, այսինքն՝ իրադարձության գոյության համար անհրաժեշտ սլոթերն են՝ փոփոխությունը, սուբյեկտը /գործողություն կատարողը/, օբյեկտը /գործողությունն իր վրա կրողը/, վայրը, ժամանակը: Պայմանական սլոթեր, այսինքն՝ տեղեկույթ, որի բացակայությունը չի խափանում տվյալ իրադարձության հիմնական ընկալումը, կարող են լինել տնտեսական իրադարձության պատճառը, հետևանքը, արժևորումը, նրա կանխատեսումը և այլն:

Սցենարի անքակտելի մասն է կազմում գործողություն կատարողը՝ սուբյեկտը, այսինքն՝ տնտեսական փոփոխությունները ենթադրում են առաջին հերթին մարդու կամ մարդկանց մասնակցություն: Դրա հետ մեկտեղ, անհատը միշտ չէ, որ կարող է վերահսկել իրադարձության զարգացումը և փոխել այն՝ հասնելով իր համար ցանկալի արդյունքի: Դա է նշում Վ.Զ. Դեմյանկովը, որը, ուսումնասիրելով իրադարձությանը հատուկ բնութագրերը, առանձնացնում է վերահսկողության չափանիշը՝ շեշտելով, որ իրադարձությանը հատուկ է վերահսկողության ամբողջական կամ մասնակի բացակայություն. գործողություն կատարող անձի առկայության դեպքում, որի կամքով իրադարձությունը վերահսկվում է, կարելի է խոսել մասնակի վերահսկողության մասին, մինչդեռ վերջինիս բացակայության դեպքում իրադարձությունը վերահսկելի չէ: Որոշ դեպքերում մարդը կարող է լինել իրադարձության պատճառ՝ այրուհանդերձ չունենալով դրա վրա ամբողջական վերահսկողություն¹:

¹ **Демьянков В.З.** Семиотика событийности в СМИ // Язык СМИ как объект междисциплинарного исследования: Учебное пособие. Часть 2 (Отв. редактор М.Н. Володина). М., Изд-во Московского университета, 2004, с. 78-80.

Այսպիսով, տնտեսական իրադարձությունները շատ անգամ ինքնաբերական, և վերջիններիս իրականացումը և արդյունքները պայմանավորված չեն անհատների ամբողջական վերահսկմամբ: Նույնիսկ այն դեպքում, եթե իրադարձությունը մտադրված և ծրագրված է, մարդն ի զորու չէ լիարժեքորեն այն վերահսկելու:

Դրա հետ մեկտեղ, սուբյեկտը՝ որպես տնտեսական իրադարձության սցենարի հիմնական տարր, սերտորեն փոխկապակցված է մեկ այլ միջուկային բաղադրիչի փոփոխության հետ, քանզի յուրաքանչյուր իրադարձություն ինքնին ենթադրում է փոփոխություն, որն էլ իրականացվում է գործողություն կատարողի կողմից:

Վերլուծենք, թե ինչպես է տնտեսական իրադարձության սուբյեկտն իր արտահայտությունը գտնում լեզվի մեջ:

Առաջին հերթին, տնտեսական իրադարձության սուբյեկտ է անհատը, որի անվան հետ մեկտեղ նշվում է նաև նրա ինքնությունը, մասնավորապես պաշտոնը, հատկապես հոդվածի մեկնարկային մասում: Օրինակ՝

Russian President Vladimir Putin signed a decree completing an array of sanctions against Turkey in response to the downing of a Russian bomber on the Syrian border, as Turkish leaders sought to calm tensions with gestures of goodwill. (www.wsj.com)²

International Monetary Fund chief Christine Lagarde called on Monday for tax reforms to be included in a global climate deal to raise incentives for consumers to reduce their energy consumption and to boost demand for cleaner fuels. (www.reuters.com)

The executive chairman, founder and main shareholder of interdealer broker GFI Group has made a last-ditch effort to muster support for a takeover by CME Group by disclosing that he

and his ex-wife will take a reduced price for their shares. (The Financial Times, January 28, 2015)

Sara Murray, 46, developed Buddi, initially a tracking device to locate lost children, but now used by local councils and UK police forces. **The entrepreneur** came up with the idea when her four-year-old daughter temporarily disappeared at a supermarket; her company employs

50 staff and is poised to launch in the US. (The Financial Times, January 31, 2015)

2 Այստեղ և հաջորդիվ վերլուծվել են հոդվածներ հետևյալ աղբյուրներից՝ www.adage.com; www.economist.com; www.ft.com; www.reuters.com; www.wsj.com:

Նշված շրջանակներում տնտեսական իրադարձության սուբյեկտը կարող է ներկայացվել նաև մի խումբ անհատների կողմից, որոնք կրում են տարբեր պաշտոններ և կարգավիճակներ: Այս դեպքում չեն նշվում որոշակի անձանց անուններ, որի հետևանքով սուբյեկտը ստանում է ընդհանրական բնույթ՝

Early in the coalition government, **ministers** committed themselves to retaining the £4.6bn science budget in cash terms, resulting in a real-terms cut of more than 8 per cent. (The Financial Times, January 7, 2015)

Discretionary fund managers are failing to disclose details of their fees and holdings which

ought to be crucial to financial advisers' decision-making, according to a new report. (The Financial Times, January 31, 2015)

Շատ անգամ սուբյեկտի սլոքը լրացվում է ընկերության կամ ընկերությունների անվանումներով, ինչպես հետևյալ օրինակներում՝

Deutsche Bank has launched a computerized investment advisory service, seeking to keep up with other asset managers who have started introducing "robo advisers" to help certain clients create portfolios inexpensively. (www.reuters.com)

Qatar Airways has bought a 9.99 per cent stake in British Airways' owner International Airlines Group, in a move that underlines the state-controlled Gulf carrier's determination to be a leading force in global aviation. (The Financial Times, January 31, 2015)

Hitachi, a Japanese conglomerate, will pay €773m for Finmeccanica's 40% stake in Ansaldo STS, a railway-signalling company listed on Milan's stock exchange, and €36m for Ansaldo-Breda, a trainmaker (and lossmaker) fully owned by Finmeccanica. (The Economist, February 28, 2015)

Chinese e-commerce giant Alibaba just logged \$14.3 billion of merchandise sold via its platforms in 24 hours, breaking its own record for the world's biggest one-day sale online. (www.adage.com)

American International Group (AIG) is selling a stake in PICC Property and Casualty Co Ltd worth up to \$1 billion to institutional investors through a block deal, cutting its shareholding in the Chinese state-owned insurer for the second time this year. (www.reuters.com)

Մասնավոր ընկերությունների հետ մեկտեղ սուբյեկտ կարող է հանդիսանալ պետական կազմակերպությունը, ինչպես հետևյալ օրինակներում՝

Leading universities have warned Labour of the financial risks in cutting tuition fees by a third to £6,000 a year, as the party deliberates whether to go

ahead with a costly pre-election pledge intended to woo the middle class. (The Financial Times, January 7, 2015)

The British Army will revive one of the most controversial special forces units of the second world war, the Chindits, as a new generation of “Facebook warriors” who will wage complex and covert information and subversion campaigns. (The Financial Times, January 31, 2015)

The Bank of England paid nearly £3m of taxpayers’ money for a report on whether any of its staff knew about or were involved in alleged manipulation of one of the world’s biggest financial markets. (The Financial Times, January 31, 2015)

Գործողություն կատարողի ինքնությունը շատ անգամ քողարկվում է որոշակի երկրի անվան ներքո, որը լրագրողի կողմից մշակված ռազմավարական հնար է՝ թաքցնելու, չմատնանշելու տվյալ տնտեսական, քաղաքական և այլ գործունեության համար պատասխանատու անձի/անձանց ինքնությունը: Օրինակ՝

Russia has already banned some Turkish food imports, including selected fruit and vegetables, as part of a wider retaliatory sanctions package. (www.reuters.com)

Greece will no longer co-operate with the “troika” of international lenders that has overseen its four-year bailout programme, the country’s finance minister said, as the new Greek government adopted a defiant posture toward its creditors. (The Financial Times, January 31, 2015)

Առանձին քաղաքներ նույնպես կարող են հանդիսանալ տնտեսական իրադարձության սուբյեկտ, ինչպես հետևյալ օրինակում՝

The **City of London** would cease to be a leading global financial centre and growth would no longer be an economic target under Green party plans for the economy. (The Financial Times, January 7, 2015)

Տնտեսական իրադարձության սուբյեկտ կարող են հանդիսանալ նաև իրույթներ, որոնք իրենց արտացոլումն են գտել տնտեսական աշխարհում՝ կապված տնտեսական աճի, անկման, տնտեսության զարգացման դանդաղեցման կամ խթանման, շահույթների, գործարքների հետ և այլն: Օրինակ՝

Profits at Santander rose almost 70 per cent in the first full quarter under Ana Botín as the Spanish bank benefited from increased revenues and reduced provisions for bad loans. (The Financial Times, February 4, 2015)

A slowdown in the services sector pushed sterling to a 17-month low yesterday, and provided a further sign that the economic recovery could be flagging. (The Financial Times, January 7, 2015)

The deal will make Hitachi the fourth biggest company in the rail-

equipment business worldwide, behind Bombardier of Canada, Siemens of Germany and Alstom of France. (The Economist, February 28, 2015)

Shares in its \$18bn Hong Kong listed subsidiary, Hanergy Thin Film Power Group, have risen more than 300 per cent since the start of 2014. (The Financial Times, January 28, 2015)

Japan's economy grew in the first quarter at a much faster rate than had been thought. (The Financial Times, January 28, 2015)

The collapse in oil prices has helped push the eurozone deeper into deflation, strengthening the case for the European Central Bank's landmark decision to begin buying government bonds later this year to stave off a serious bout of falling prices in the region. (The Financial Times, January 31, 2015)

Gross domestic product rose an annualized 2.6 per cent in the fourth quarter, a marked slowdown from the 5 per cent pace set in the third quarter. (The Financial Times, January 31, 2015)

Switzerland's franc fell again yesterday as speculation lingered that the country's central bank could intervene to weaken the currency. (The Financial Times, January 31, 2015)

Շարահյուսական տեսանկյունից գործողության սուբյեկտը կարող է նաև ներկայանալ կրավորական սեռով՝ իր վրա կրելով մեկ ուրիշ առարկայի, անձի կողմից կատարված գործողությունը, ինչպես հետևյալ օրինակներում՝

David Cameron has been accused of caving in to the Treasury and to big business over proposals to fine retailers for squeezing suppliers. (The Financial Times, January 31, 2015)

The government has been under pressure to respond to concerns about supermarkets' treatment of their suppliers in the course of a fierce price war between chains. (The Financial Times, January 7, 2015)

Այսպիսով, այս ուսումնասիրությունը հնարավորություն ընձեռեց բացահայտելու տնտեսական իրադարձության սուբյեկտի էությունը տնտեսական իրականության մեջ և նրա արտացոլումը լեզվում: Գործողություն կատարողն ամենից հաճախ անհատը/անհատները, մասնավոր ընկերությունները և պետական կազմակերպություններն են, տնտեսական աշխարհին վերաբերող իրույթները, ինչպես նաև երկրների և քաղաքների անվանումները:

ԱՄՓՈՓՈՒՄ

Հոդվածում փորձ է արվել ուսումնասիրելու տնտեսական իրադարձության սուբյեկտի դերը և արտահայտման միջոցները լեզվում: Տնտեսական իրադարձությունը հարաշարժ էություն է, որն ընթանում է համաձայն որոշակի

սցենարի, և որի միջուկային սլոթ է համարվում գործողություն կատարողը՝ սուբյեկտը: Վերջինս հիմնականում արտահայտվում է անհատի/անհատների, մասնավոր ընկերությունների և պետական կազմակերպությունների, տնտեսական աշխարհին վերաբերող իրույթների, ինչպես նաև երկրների և քաղաքների միջոցով:

Բանալի բառեր - տնտեսական իրադարձություն, տնտեսական իրադարձության սուբյեկտ, ֆրեյմ, սցենար, միջուկային մաս:

ОСОБЕННОСТИ СУБЪЕКТА ДЕЙСТВИЯ В ЭКОНОМИЧЕСКИХ СОБЫТИЯХ

ЛУСИНЕ АРУТЮНЯН

Данная статья является попыткой определить статус субъекта и его языковое проявление в экономических событиях. Экономическое событие динамично и развивается согласно определенному сценарию, важнейшим слотом которого является субъект действия. Как показал материал исследования, в информационных статьях субъект, в частности, представлен в роли индивиду/индивидов, частных компаний и государственных организаций, разных экономических реалий, а также стран и городов.

Ключевые слова - экономическое событие, субъект экономического события, фрейм, сценарий, ядерная часть.

CHARACTERISTIC FEATURES OF AN AGENT IN ECONOMIC EVENTS

LUSINE HARUTYUNYAN

This paper considers an agent's role and the linguistic means of its manifestation in economic events. Economic events are dynamic and develop according to a definite scenario, whose nuclear slot is considered to be the agent. The investigation has shown that the latter is particularly represented via an individual or individuals, private companies and state organizations and in different business news via various economic phenomena as well as cities and countries.

Key words - economic events, the agent of economic events, frame, scenario, nuclear component.

**«ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ» ՀԱՍԿԱՑՈՒՅԹԻ ԱՌԿԱՅԱՑՄԱՆ ԼԵԶՎԱՌՃԱԿԱՆ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ (Ջ. ԱՓԴԱՅՔԻ «ՃԱԳԱՐ, ՎԱԶԻ՛Ր»
ՎԵՊԻ ՀԻՄՆԱՆ ՎՐԱ)**

ԱՆԱՀԻՏ ՄԱԿԱՐՅԱՆ

Հոդվածում փորձ է արվում անդրադառնալու «ազատություն» հասկացության հեղինակային ընկալմանը: Ինչպես հայտնի է, աշխարհի պատկերը ոչ թե աշխարհի հայելային արտացոլումն է, այլ յուրաքանչյուր անհատի գիտակցության մեջ ձևավորված աշխարհի ճանաչողության յուրովի մեկնաբանությունը: Ըստ Բոլտոնովայի՝ ինչպես հեղինակի անհատականությունը, այնպես էլ գեղարվեստական ստեղծագործության միջոցով արտացոլված աշխարհն է յուրահատուկ: Ցանկացած գեղարվեստական ստեղծագործություն պատկերում է հեղինակի աշխարհի պատկերը կերպարների, զգացմունքների, գնահատականների, արժեքների միջոցով: Մեծ հետաքրքրություն է ներկայացնում հեղինակի ոճը, որն արտահայտվում է ստեղծագործության թեմայի ընտրությամբ, խնդրի ձևակերպմամբ, կերպարների ստեղծմամբ, ժանրով, ինչպես նաև լեզվական միավորների ընտրությամբ¹: Բուդագովը նշում է, որ հեղինակի ոճը ոչ թե լեզվական նորմից շեղումն է, այլ հեղինակի կողմից գեղարվեստական տեքստում լեզվական բազմակի հնարավորությունների իմաստավորումը²: Այսպիսով, տեքստում առկա ցանկացած լեզվական միջոց ուղղակի կամ անուղղակի, ներակա կամ արտակա ներկայացնում է հեղինակի աշխարհընկալումը՝ աշխարհի հեղինակային պատկերը³:

Փաստորեն գեղարվեստական ստեղծագործության միջոցով հեղինակն արտացոլում է ոչ թե օբյեկտիվ իրականությունը, այլ աշխարհի իր ընկալումը զանազան լեզվական միջոցների օգտագործմամբ: Գեղարվեստական ոճի կարևորագույն հատկանիշը պատկերավոր մտածողությունն է, խոսքի հուզականությունն ու արտահայտչականությունը, որոնք ստեղծվում են լեզվի պատ-

¹ **Болотнова Н. С.** Когнитивное направление в исследовании художественного текста, Томск, 2004, с. 63.

² **Будагов Р. А.** Писатели о языке и язык писателей, 2-е изд. доп. М.: Добросвет, 2001, с. 286.

³ **Щирова И. А., Гончарова Е. А.** Многомерность текста: понимание и интерпретация, СПб., 2007, с. 157.

կերավորության ու արտահայտչական բազմաթիվ միջոցներով ու ոճական հնարանքներով⁴:

Ափղայքի ստեղծագործություններին բնորոշ է այլաբերությունների և դարձույթների լայն կիրառությունը, որի վառ ապացույցն է «Ճագար, վագի՛ր» վեպը: Ափղայքի անհատական ոճի առանցքը ոճական հնարներն են, որոնց վրա հենվելով՝ Ափղայքը ընթերցողին փոխանցում է աշխարհի ընկալման իր կերպը:

Ինչպես արդարացիորեն նշում է Ս. Գասպարյանը, գեղարվեստական խոսքի բնութագրական հատկանիշներից է պատկերավորությունը, որն ապահովվում է խոսքի փոխաբերականացման ու շարակարգման գործընթացով: Դրանց արդյունքում ի հայտ են գալիս տարբեր տիպի ոճական արտահայտչամիջոցներ, որոնք խոսքին հաղորդում են նոր, մետա-բովանդակություն ու պատկերավորություն⁵:

Ինչպես վկայում են ուսումնասիրությունները, ստեղծագործության մեջ առանցքային տեղ են զբաղեցնում հերոսի հոգեկան տառապանքները, փախուստն իրականությունից և ազատության ձգտումը: Հեղինակը ստեղծագործությանը հավելյալ արտահայտչականություն հաղորդելու նպատակով կիրառել է մի շարք խորհրդանիշներ, ինչպիսիք են՝ *ցանց*, *քարտեզ*, *թակարդ*, *դուռ*, *սար* և *անդունդ*, որոնք պատկերում են այն սահմանափակումները, խոչընդոտները, արգելքները, որոնք պատնեշ են ազատության ճանապարհին: Այսպես՝

*He feels the faded night he left behind in this place as a **net** of telephone calls and hasty trips, trails of tears and strings of words, white worried threads shuttled through the night and now faded but still existent, an invisible **net** overlaying the steep streets and **in whose center he lies secure in his locked hollow hutch**⁶.*

Վեպի գլխավոր խորհրդանիշներից է **net «ցանց»**: Ափղայքն իր «Ճագար, վագի՛ր» վեպում զուգորդում է «ազատության բացակայությունը» «ցանցի» հետ: Ինչպես գիտենք, ցանցն ինքնին խորհրդանշում է «կապանք, սահմանափակում», ինչը և արտացոլված է նաև վերոնշյալ ստեղծագործության մեջ: Վեպի գլխավոր հերոսի՝ Հարի Անգստրոմի համար շրջապատող իրակա-

⁴ Եզեկյան Լ. Ոճագիտության ուղեցույց, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2007, էջ 41.

⁵ Գասպարյան Ս. Գործառական ոճագիտություն, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2011, էջ 85:

⁶ Updike Rabbit, Run. New York, Random House, John 1965, p. 186.

նությունն ասես ցանց լինի, որը ընկճում, ճնշում և կաշկանդում է նրան: Փախչելով տանից, այսինքն՝ իրականությունից, Հարին ձգտում է ձեռք բերել ազատություն, որը, սակայն, երևակայական է: Չկողմնորոշվելով սեփական ցանկությունների մեջ՝ Հարին ընկնում է երկմտանքի մեջ՝ վազել ազատությա՞ն, թե՞ ապահովության հետևից: Այսպիսով, հեղինակը վերոնշյալ օրինակում ընդգծում է «ազատության» երկակի բնույթը՝ ներակա լեզվական միջոցներով նկարագրելով Հարիի *ազատության ձգտումը* և միևնույն ժամանակ *փախուստն* այդ *ազատությունից*:

Առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում (*he lies secure in his locked hollow hutch*) փոխաբերությունը, որով հեղինակը ցույց է տալիս հերոսի թուլականությունը, ինչպես նաև վճռականության բացակայությունը: Պատահական չէ հեղինակի կողմից *hutch* բառի կիրառությունը տվյալ համատեքստում, քանի որ վերջինիս բառարանային իմաստը, այն է՝ *“a pen or coop for small animals, especially rabbits”*, կապված է ստեղծագործության գլխավոր հերոսի մականվան հետ: Փաստորեն *hutch* բառի կիրառությամբ Ափոյաքը կենդանու՝ ճագարի հատկանիշները, այն է՝ վախկոտություն, երկչոտություն, անվստահություն, անհամարձակություն, վերագրում է Հարիին:

Հարին, ստեղծելով իր երևակայական աշխարհը, կարծես թե իրեն զգում է պաշտպանված և փախչելով տանից՝ գնում է դեպի այդ «երևակայական իրականությունը», որտեղ, ըստ նրա, նա կգտնի իր ներքին աշխարհին համահունչ ազատությունը: Բայց փախչելով մի ցանցից՝ նա հայտնվում է մեկ այլ ցանցի մեջ, քանի որ ինչպես «ճագարը», այնպես էլ Հարին վախենում են շրջապատող աշխարհից և իրենց ապահով ու պաշտպանված են զգում միայն իրենց կողպված, դատարկ վանդակում:

Պատահական չէ Ափոյաքի կողմից *«կողպված»* և *«դատարկ»* բառերի կիրառությունը, որոնք տվյալ համատեքստում ձեռք են բերում փոխաբերական իմաստ: *«Կողպված»* բառն այստեղ միտված է արտահայտելու այն միտքը, որ վանդակը, որտեղ փորձում է ապաստան գտնել Հարին, նույնպես սահմանափակում և կաշկանդում է նրա ազատությունը: Մինչդեռ *«դատարկ»* բառը զուգորդվում է Հարիի հոգևոր միայնության և հասարակությունից մեկուսացման հետ: Փաստորեն Հարիի թուլականությունը, վախկոտությունը, անվստահությունը խոչընդոտում են նրան պայքարել հասարակության մարտահրավերներին, և այդ պատճառով նա իրեն ազատ և անվտանգ է զգում միայն իր երևակայական աշխարհում, որտեղ նա միայնակ է և հեռու իրականությունից:

«Ճագար, վագի՛ր» ստեղծագործության մեջ մեկ այլ խորհրդանիշ է **map «քարտեզը»**, որը վեպի գլխավոր հերոսը զուգորդում է ցանցի հետ:

*The names melt away and **he sees the map whole, a net**, all those red lines and blue lines and stars, **a net he is somewhere caught in**. He claws at it and tears it; with a gasp of exasperation he rips away a great triangular piece and tears the large remnant in half and, more calmly, lays these three pieces on top of each other and tears them in half, and then those six pieces and so on until he has a wad he can squeeze in his hand like a ball⁷.*

Վերոբերյալ հատվածում քարտեզի վրայի գծերը, նշանները Հարիին ցանց են հիշեցնում (*he sees the map whole, a net, all those red lines and blue lines and stars*), որը կարծես գցել է նրան իր կապանքների մեջ (*a net he is somewhere caught in*): Քարտեզն այստեղ խորհրդանշում է այն հասարակական համակարգը, որից Ճագարը փախչում է, քանի որ այն ցանցի նման առել է նրան իր ճիրանների մեջ և խեղդում է: Դժվար չէ նկատել, որ առաջին նախադասության մեջ հեղինակն օգտագործում է կրկնություն պատկերավորման միջոցը՝ *net* բառի կրկնակի կիրառմամբ, որն ասույթին լրացուցիչ ոճական երանգ է հաղորդում՝ շեշտելով հերոսի կաշկանդվածությունը, սահմանափակումները, ինչպես նաև ազատ գործելու ունակությունից զուրկ լինելը:

Հետաքրքրություն է ներկայացնում նաև *trap «թակարդ»* խորհրդանիշը, որով Ափդայքը ևս մեկ անգամ շեշտում է Ճագարի ընկճված, լքված, հոգեպես կապանքների մեջ լինելը, ինչի արդյունքում էլ նա իրեն զգում է ընկճված և լքված:

*Rabbit freezes, standing looking at his faint yellow shadow on the white door that leads to the hall, and senses **he is in a trap**. It seems certain. He goes out⁸.*

Կարելի է նկատել, որ առաջին օրինակում հոգեպես ազատ լինելու ձգտումը հերոսին ստիպում է փախչել տնից, ընտանիքից, հասարակությունից, ընկերներից՝ համարելով այդ ամենը թակարդ, որը մշտապես պահում է նրան հոգեպես ճնշված, ընկճված և կաշկանդված վիճակում: Այնուամենայնիվ, այդ թակարդը կուղեկցի նրան, որտեղ էլ որ նա գնա, քանի որ Ճագարն ինքնին գտնվում է հոգեպես անկայուն վիճակում, և տանից փախուստն ամենևին էլ ազատության հասնելու ուղի չէ:

⁷ Նույն տեղում, էջ 182:

⁸ Նույն տեղում, էջ 162:

*He doesn't drive five miles before **this road** begins to feel like a part of the same trap⁹.*

Հեղինակը շարունակում է միևնույն միտքը վերոնշյալ օրինակում, որտեղ նույնիսկ *road* «ճանապարհը» դառնում է Հարիի համար այդ թակարդի մի մասը: Փաստորեն ճագարի համար ամեն ինչ թակարդ է թվում՝ թե՛ ընտանիքը, թե՛ տունը, թե՛ հասարակությունը և թե՛ անգամ ճանապարհը:

Ներքոնշյալ օրինակում **door** «դուռը» խորհրդանշում է պատնեշ, խոչընդոտ Հարիի և արտաքին աշխարհի միջև:

He presses the door shut and it clicks but then swings open again an inch or two. **Locked doors**. It rankles: his hand trembling in the lock like some old wreck and her sitting in here listening to the scratching¹⁰.

Պատահական չէ *Locked doors* «կողպված դռներ» բառակապակցության կիրառությունը վերոնշյալ օրինակում, քանի որ Ափոլայքը միտված է արտահայտելու այն միտքը, որ Հարիի առջև փակ են դեպի հասարակություն տանող բոլոր դռներն ու ուղիները:

Ստեղծագործության մեջ հետաքրքրություն են ներկայացնում նաև հակադրությունները և համեմատությունները: Ափոլայքը հակադրում է **cliff** «սարը» և **abyss** «անդունդը»՝ դրանք զուգադրելով *ազատության ձգտման* և *ազատության կորստի* հետ:

*He tries to think of something pleasant. He imagines himself about to shoot a long one-hander; but he feels he's on **a cliff**, there is **an abyss** he will fall into when the ball leaves his hands¹¹.*

Հեղինակը ճագարի սար բարձրանալը համեմատում է նրա ազատության ձգտման հետ: Հարիի համար սարի գագաթը վերելքի, ինչպես նաև միապաղաղ կյանքից ազատվելու հնարավորություն է: Գերազնահատելով իր ուժերը և ձգտելով փառքի՝ Հարին չի գիտակցում, որ սար բարձրանալու, այսինքն՝ ազատության հասնելու համար անհրաժեշտ է խիզախություն, նախաձեռնություն, վճռականություն, որից զուրկ է ճագարը: Արդյունքում նրա թուլակամությունն ու երկչոտությունը նպաստում են նրա՝ անդունդում հայտնվելուն:

⁹ Նույն տեղում, էջ 172:

¹⁰ Նույն տեղում, էջ 155:

¹¹ Նույն տեղում, էջ 171:

Տվյալ ստեղծագործության մեջ «ազատություն» հասկացույթն առկայացվում է նաև այլ ոճական հնարներով, ինչպիսիք են՝ փոխաբերությունը, համեմատությունը և հակադրությունը, ինչպես նաև պատկերավոր համեմատությունը: Այսպես՝

He (Harry) feels freedom like oxygen everywhere around him; Tothero is an **eddy of air**, and the building he is in, the streets of the town, are mere stairways and alleyways in space. So perfect, so consistent is the **freedom** into which the clutter of the world has been vaporized by the simple trigger of his decision...¹²

Ստեղծագործության մեջ պատկերված երկու կերպարների՝ Հարիի և Տոտերոյի միջոցով Ափղայքը ներկայացնում է «ազատության» գաղափարի ընկալումը: Հեղինակը (*Tothero is an eddy of air*) փոխաբերական համեմատության միջոցով բնութագրում է Տոտերոյին որպես ազատության մարմնավորում: Հատկանշական է հատկապես eddy of air փոխաբերության կիրառությունը, քանի որ *air* (*օդ*) բառը խորհրդանշում է ազատություն, անկախություն: Ի հակադրություն Հարիի, ում համար ամեն ինչ այդ իրականության մեջ՝ թե՛ ընտանիքը, թե՛ տունը, թե՛ ճանապարհը և թե՛ նույնիսկ քարտեզը, ցանց, թակարդ և կապանք են թվում, Տոտերոյի համար շենքերը, քաղաքի փողոցները տանում են դեպի ազատություն, ինչն արտացոլվում է հետևյալ փոխաբերության մեջ (*the building he is in, the streets of the town, are mere stairways and alleyways in space*): Հետաքրքրական է space բառի կիրառությունը, որը տվյալ համատեքստում կորցրել է իր հիմնանշանակային իմաստը և ձեռք է բերել *ազատության* իմաստը:

Տվյալ հատվածում օգտագործված է նաև պատկերավոր համեմատություն ոճական հնարը (*He feels freedom like oxygen everywhere around him*), որով հեղինակը պատկերում է Հարիի երազած ազատությանը հասնելու տենչը, ձգտումը: Եվ, վերջապես, վերոնշյալ հատվածի վերջին նախադասության քննությունը հնարավորություն է տալիս բացահայտելու հերոսի անչափ երջանիկ, ուրախ լինելը, քանի որ նա ի վերջո կարողանում է հասնել իր պատկերացրած ազատությանը: Հեղինակի միտումն այստեղ իրագործվում է (*So perfect, so consistent is the freedom into which the clutter of the world has been vaporized by the simple trigger of his decision*) ծավալուն փոխաբերության միջոցով:

¹² Նույն տեղում, էջ 195:

Ամփոփելով կարող ենք եզրակացնել, որ տարբեր պատկերավորման միջոցները, ինչպիսիք են խորհրդանիշները, փոխաբերությունը, պատկերավոր համեմատությունը, հակադրությունը, գեղարվեստական պատկերավորություն են հաղորդում հեղինակի խոսքին: Այսպիսով, «Ճագար, վագի՛ր» ստեղծագործության լեզվաոճական քննությամբ բացահայտում ենք հեղինակի «ազատության» ընկալումը, ըստ որի՝ հասարակությունից մեկուսացված լինելը, փախուստը ընտանիքից, դժվարություններից հանգեցնում է կործանման: Ըստ Ափղայքի՝ մարդը, փախչելով իրականությունից, կարող է հասնել միայն երևակայական, թվացյալ ազատության, մինչդեռ իրական ազատություն ձեռք բերելու համար անհրաժեշտ են ներուժ, նախաձեռնություն, հավակնություն, վճռականություն, կորով և մղում: Ներքին ազատություն ձեռք բերելու համար մարդ պետք է լինի արարող, ստեղծող, այլ ոչ թե քայքայող, քանդող, ինչպիսին Հարին է:

ԱՄՓՈՓՈՒՄ

Հոդվածի նպատակն է Զ. Ափղայքի «Ճագար, վագի՛ր» ստեղծագործության մեջ առկա լեզվական միավորների լեզվաոճական քննությամբ բացահայտել հեղինակի աշխարհընկալումը: Հեղինակի անհատականության բացահայտումը հնարավոր է նրա լեզվի առանձնահատկությունների ուսումնասիրության միջոցով: Տվյալ հոդվածում «ազատություն» հասկացույթն առկայացվում է «Ճագար, վագի՛ր» վեպում մի շարք պատկերավորման միջոցներով, որոնք հեղինակի խոսքին լրացուցիչ հուզականություն և արտահայտչականություն են հաղորդում:

Բանալի բաներ – «ազատություն» հասկացույթ, ազատության բացակայություն, աշխարհի հեղինակային պատկեր, ոճական հնարներ, հեղինակի ոճ:

ЛИНГВОСТИЛИСТИЧЕСКИЕ ОСОБЕННОСТИ ВЕРБАЛИЗАЦИИ КОНЦЕПТА “СВОБОДА” В РОМАНЕ ДЖОНА АПДАЙКА “КРОЛИК, БЕГИ”

АНАИТ МАКАРЯН

Целью данной работы является выявление индивидуально-авторского восприятия концепта “свобода” и его конкретного языкового выражения в романе Джона Апдайка “Кролик, беги”. Концепт “свобода” вербализуется в романе с помощью стилистических приемов, анализ которых позволяет выявить авторскую концепцию понятия “свобода”. Особую роль в выявлении

авторской концепции концепта “свобода” играют символы, реализующие базовую смысловую оппозицию “свобода” и “отсутствие свободы”.

Ключевые слова - концепт “свобода”, отсутствие свободы, авторская картина мира, стилистические приемы, стиль автора.

THE LINGUO-STYLISTIC FEATURES OF THE “FREEDOM” CONCEPT (BASED ON JOHN UPDIKE’S NOVEL “RABBIT, RUN”)

ANAHIT MAKARYAN

This article aims for the revelation of John Updike’s world perception through analysis of the linguo-stylistic features of his novel, “Rabbit, Run”. The disclosure of Updike’s personality has become possible by studying the stylistic devices employed in the novel. The concept of “freedom”, for example is set out in the novel by the help of stylistic devices, the study of which gives possibilities to reveal the author’s perception of “freedom”. Updike’s symbols help to come out with the fundamental understanding lying under the binary opposition “freedom” and lack of “freedom”. Furthermore, the pictorial representation of the concept of “freedom” makes the author’s narration more expressive and colorful.

Key words – the concept of “freedom”, lack of freedom, world picture of the author, stylistic devices, individual style

ՆԵՐՀԱԿԱՆԻՇՈՒԹՅԱՆ ԽՆԴՐԻ ՇՈՒՐՋ

ՀԱՍՄԻԿ ՔԱՋԲԵՐՈՒՆԻ, ԹԱՄԱՐԱ ՀԱԿՈԲՅԱՆ

XIX դարի երկրորդ կեսին և XX դարի սկզբին լեզվաբանների շրջանում հետաքրքրություն է առաջանում այնպիսի մի զարմանալի երևույթի հանդեպ, ինչպիսին է ներհականիշությունը: Այս երևույթը բնորոշվում է որպես միևնույն բառի՝ հակադիր, բևեռային իմաստներ արտահայտելու կարողություն¹:

Ներհականիշության մասին առաջին անգամ խոսել է գերմանացի լեզվաբան Կառլ Աբելն իր «Նախաբառերի հակադիր իմաստները» գրքում (1884թ.): Լեզվում ներհականիշության առկայությունը Կ. Աբելը հիմնավորում է հին եգիպտերենի հակադիր նշանակություններ ունեցող բառերի օրինակով. «ken» բառը միևնույն ժամանակ ունեցել է «ուժեղ» և «թույլ» բևեռային իմաստները: Կ. Աբելը նշում է, որ «ken» բառը, որը միավորում էր «ուժեղ» և «թույլ» հասկացությունները, վերջիններիս փոխհարաբերության արդյունքն է: Ըստ Կ. Աբելի՝ սուբյեկտի ուժեղ կամ թույլ լինելը եգիպտացիները բացատրում էին ժեստերի միջոցով: Պետք է նշել նաև, որ ժեստերը մեծ կարևորություն ունեին եգիպտերենում, քանի որ վերջինիս հատուկ էր համանունների բազմազանությունը: Միևնույն բառը միաժամանակ նշանակում էր «պարել», «սիրտ», «ջուր», «ծախ ձեռք» և այլն²: Հետևաբար, կարելի է ենթադրել, որ հին եգիպտերենում ներհականիշ բառերի առաջացման սկզբնաղբյուրներից է եղել համանունությունը:

Կ. Աբելը, փորձելով հիմնավորել ներհականիշության առաջացման պատճառները, նշում է, որ մարդիկ նոր հասկացություններ ստեղծում էին համեմատության արդյունքում: Այսինքն, եթե բնության մեջ չլիներ լույսի և խավարի, բարու և չարի, ջերմության և ցրտի միջև տարբերությունը, ապա չէին լինի նաև այդ հասկացությունները:

Ուսումնասիրելով Կ. Աբելի աշխատությունները ներհականիշության մասին՝ հոգեվերլուծության հիմնադիր Զ. Ֆրոյդը 1910թ. հրատարակեց մի

¹ Նազարյան Ա. Հ., Լեզվաբանական տերմինների ֆրանսերեն-հայերեն-ռուսերեն ուսումնական բառարան, Եր., «Ապոլլոն» հրատ., 1993:

² Abel, Carl. Über den Gegensinn der Urworte. Leipzig: Verlag von Wilhelm Friedrich 1884. 65 S.

հողված՝ «Սկզբնաստեղծ բառերի հակադիր նշանակությունների մասին» վերնագրով: Ֆրոյդը ներհականիշության առաջացման երևույթի և երազների միջև ուղղակի կապ էր տեսնում և բացատրում էր այս երևույթը որպես մարդու հոգեբանական առանձնահատկություն: Նա նշում էր, որ երազները միավորում են հակադիր երևույթները և դրանք ներկայացնում միևնույն օբյեկտով: Երազներում այս կամ այն հասկացությունը շատ հաճախ հանդես է գալիս իր հակադրության միջոցով: Օրինակ, երազներում մահը բացատրվում է որպես կյանքի սկիզբ, ծնունդ³:

Ֆրոյդի տեսակետները խիստ քննադատության են արժանանում լեզվաբան Է. Բենվենիստի կողմից «Լեզվի դերը Ֆրոյդի ուսմունքում» աշխատության մեջ: Բենվենիստն այն կարծիքին էր, որ յուրաքանչյուր լեզու ինքնատիպ է և իրականությունը տարրալուծում է յուրովի՝ իր ժողովրդի մտածողության առանձնահատկություններից ելնելով: Ներհականիշությունն ի հայտ է գալիս լեզվի զարգացման որոշակի փուլում: Ի սկզբանե գոյություն ունեցող բազմիմաստ բառը, հետզհետե կորցնելով որոշ բառիմաստներ, դառնում է ներհականիշ: Է. Բենվենիստը հետաքրքիր վերլուծություն է կատարում՝ ուսումնասիրելով հունարենի «kratos» գոյականը և «krateros» ածականը: «Kratos» գոյականն ունի «աստվածային ուժ» իմաստը, մինչդեռ «krateros» ածականը ձեռք է բերում բացասական իմաստ: Մի դեպքում «krateros» ածականը ցույց է տալիս «աստվածային ուժ ունեցող, հզոր», մյուս դեպքում՝ «դաժան, բիրտ, վայրագ, անգութ, անողորմ, սաստիկ»: Բենվենիստը ցույց է տալիս նաև, որ «kratos» գոյականն օգտագործվում է՝ բացառապես աստվածներին և մարդկանց որակելու համար, մինչդեռ «krateros» ածականը քնութագրում է նաև կենդանիները և իրերը՝ բացասական իմաստով: Բենվենիստը գրում է. «Հին հույն նշանավոր գրող Հեսիոդոսի (մ.թ.ա. VIII-VII դդ.) աշխատություններում մենք կարող ենք գտնել «krateros» բառի կիրառության երկու ձևերը՝ Հոմերոսին իր հզորությամբ և ուժով, իսկ Արեսին՝ որպես մարդասպանի նկարագրելիս»: Բենվենիստը հանգում է այն եզրակացության, որ «krateros» ածականի երկու հակասական իմաստները ներկայանում են մեկ միասնության ներքո, մինչդեռ դրանք միանգամայն տարբեր պրոտո-հնդեվրոպական արմատներ են⁴:

³ Бенвенист Э. Общая лингвистика, М., 1974, с. 115-126.

⁴ /Girard, Violence and the sacred/ available online at: [http://books.google.am/books?id=RGVKsW5rQ1kC&pg=PA278&lpg=PA278&dq=benveniste+on+words+having+opposite+mean

Այսպիսով, Կ. Աբելի, Զ.Ֆրոյդի և Է. Բենվենիստի տեսություններն իրենց մեծ ազդեցությունն են ունեցել ներհականիշության ուսումնասիրության գործում և մինչ այժմ գտնվում են բազմաթիվ հետազոտողների ուշադրության կենտրոնում:

Ներհականիշություն երևույթն ուսումնասիրվում է շատ տարբեր լեզուներում՝ ֆրանսերենում, գերմաներենում, ռուսերենում, ինչպես նաև մի շարք սլավոնական լեզուներում: Այս երևույթը հատուկ է նաև անգլերենին: Սակայն, ի տարբերություն ֆրանսերենի և ռուսերենի, որտեղ վերջինս քիչ թե շատ ուսումնասիրված է, և որի վերաբերյալ կան որոշակի գիտական աշխատություններ, անգլերենում ներհականիշություն երևույթին նվիրված հետազոտությունները սակավաթիվ են:

Որքան բազմաթիվ են ներհականիշության մասին տեսակետները, այնքան շատ են այն բնորոշող եզրերը: Ներհականիշությունն անվանել են «անտիֆրազ» և «էնանտիոսեմիա» ֆրանսիական և ռուսական գիտական գրականության մեջ, «կոնտրոնիմներ», «օպոնիմներ», «ավտո-անտոնիմներ», «Յանուս⁵ բառեր»՝ անգլալեզու գրականության մեջ:

Գիտական գրականության մեջ առավել ուսումնասիրված, տարածված և ընդունված է համարվում «էնանտիոսեմիա» եզրույթը (հուն. en – ներսում, antios – հակադիր, sēma–նշան), որը հայերենում ստացել է «ներհականիշություն» անվանումը:

Զեխ լեզվաբան Վ. Շերցլը, ով համարվում է ներհականիշության վերաբերյալ ուսումնասիրություններ կատարած առաջին լեզվաբաններից մեկը, ռուսական գիտական գրականություն ներմուծեց «էնանտիոսեմիա» եզրույթը: Իր «Հակադիր իմաստներ ունեցող բառերի մասին» /1883-1884/ աշխատության մեջ նա ուսումնասիրում է ներհականիշությունը հնդեվրոպական տարբեր լեզուներում և նշում. «Որքան հին է լեզուն, այնքան ազգը պրիմիտիվ է, հետևաբար հին լեզուներում հաճախ կարելի է հանդիպել «էնանտիոսեմիա» երևույթը»: Վ.Շերցլը ներկայացնում է ռուսերենի «одолжить» բայը, որն ունի բևեռային իմաստներ՝ «պարտքով տալ» և «պարտք վերցնել»⁶: Օրինակ՝

ings&source=bl&ots=iW-_Okwfo-&sig=VCLpGuMp1BhObfwKs9QtFi_UEqs&hl=ru&sa=X&ei=i0I1VJeaDcXaaljZgsAB&ved=0CBsQ6AEwAA#v=onepage&q=benveniste%20on%20words%20having%20opposite%20meanings&f=false] last retrieved on 29/06/2015

⁵ Հոմեական դիցաբանության մեջ հակառակ կողմեր նայող երկդեմ աստված:

⁶ Язык, сознание, коммуникация: Сб. статей (Ред. В.В. Красных, А.И. Изотов), М., Диалог-МГУ, 2000. Вып. 12, 148 с.

Я одолжил ему крупную сумму денег.

Я одолжил у него крупную сумму денег.

Նմանօրինակ դեպք է նաև անգլերենի «own» բառը, որն արտահայտում է երկու հակադիր իմաստներ: Մի դեպքում այն նշանակում է «սեփականության առկայություն», մեկ այլ դեպքում՝ «դրա բացակայություն»: Օրինակ՝

I own a book or two of this writer.

Yesterday I owned him one of my books.

Ինչպես արդեն նշեցինք, ներհականիշության խնդիրն ուսումնասիրվել է բազմաթիվ ռուս լեզվաբանների կողմից, որոնք տարբեր կարծիքներ են հնչեցրել այս երևույթի վերաբերյալ:

Որոշ հետազոտողներ քննում են ներհականիշությունը բազմիմաստության լույսի ներքո (Օ. Սմիռնովա, Ֆ. Բացկիչ, Լ. Բեսսոնովա⁷): Նրանք պնդում են, որ ներհականիշությունը միևնույն բառում մի քանի փոխկապակցված իմաստների առկայությունն է, որոնք առաջացել են բառի առաջնային իմաստի զարգացման արդյունքում: Սակայն, պետք է նշել, որ ներհականիշ իմույթների առաջացման հիմքում ընկած է հակադրությունը: Հետևաբար, ներհականիշությունը պետք է ուսումնասիրել նաև որպես հականիշության դրսևորում:

Լեզվաբանների մի խումբ /Կ. Գելբլու, Օ. Սոկոլով⁸, Լ. Նովիկով⁹, Ռ. Բուդագով/ ներհականիշությունը դիտում է որպես հականիշության տեսակ, այսինքն՝ միևնույն բառում երկու հականիշ իմաստների առկայություն: Լ. Նովիկովն այս երևույթն անվանում է իմաստների բևեռացում կամ «էնանտիոսեմիա»: Օրինակ՝ ռուսերենի «бесценный» ածականն ունի հետևյալ իմաստները.

1. շատ բարձր գին ունեցող

2. արքայիկ՝ արժեքագուրկ, գին չունեցող

Ըստ Օ. Սոկոլովի՝ հականիշության և ներհականիշության միջև կապն անբաժանելի է, քանի որ երկուսի հիմքում էլ ընկած է հակադիր իմաստներ արտահայտելու կարողությունը, սակայն, ի տարբերություն հականիշության,

⁷ **Бессонова Л. Е.** Энантиосемия как особый тип в системе лексических противопоставлений // Проблемы лексической и категориальной семантики. Вып. II, Симферополь, 1982, с. 27-31.

⁸ **Соколов О. М.** Энантиосемия в кругу смежных явлений // НДВШ. Филологические науки, 1980, № 6, с. 36-42.

⁹ **Новиков Л. А.** Антонимия в русском языке (Семантический анализ противоположности в лексике), М., Изд-во Московского университета, 1973, 290 с.

որտեղ այդ հակադրությունն արտահայտվում է երկու տարբեր բառերով, ներհականիշությունն արտահայտվում է միևնույն բառային միավորում բևեռային իմույթների առկայությամբ:

Որոշ լեզվաբաններ (Վ. Վինոգրադով¹⁰, Ն. Շանսկի, Ե. Տերենտևա) հարում են այն կարծիքին, որ ներհականիշությունը համանունության տարատեսակ է: Այն ի հայտ է գալիս տարբեր բառային միավորներում, որոնք փոխկապակցված չեն, սակայն ունեն հնչյունական համընկնում:

Լեզվաբանների մեկ այլ խումբ ներհականիշությունը դիտարկում է որպես անցումային երևույթ՝ այն բնորոշելով որպես համանունության և հականիշության խաչաձևում/Ի. Գորելով¹¹, Օ. Սմիռնովա¹²:

Ори́на́ль' собака – друг человека /+/
соба́ке – соба́чья сме́рть /-/
սոբակա՝ սոբակա – սոբակա մահ

Մինչդեռ ռուս լեզվաբաններ Վ. Իվանովան¹³ և Վ. Պրոխորովան¹⁴ սահմանում են ներհականիշությունը որպես բազմիմաստության և համանունության խաչաձևում:

Լեզվում ներհականիշության տեղը որոշելու համար նախ և առաջ պետք է ուսումնասիրել այն լեզվական երևույթները, որոնք քիչ թե շատ կապված են ներհականիշության հետ:

Այսպիսով, բազմիմաստությունը միևնույն բառի մի քանի փոխկապակցված իմաստներ արտահայտելու կարողությունն է: Բազմիմաստությունը սովորաբար ի հայտ է գալիս բառի առաջնային իմաստի զարգացմամբ: Սակայն լինում են դեպքեր, երբ առաջնային իմաստի զարգացման արդյունքում բառը ձեռք է բերում առաջնային իմաստին հակադիր իմաստ՝ դառնալով

¹⁰ **Виноградов В. В.** Проблемы морфематической структуры слова и явления омонимии в славянских языках // Славянское языкознание. VI Международный съезд славистов. М., 1968, с. 53–119.

¹¹ **Горелов И. Н.** Энантиосемия как столкновение противоречивых тенденций языкового развития // Вопросы языкознания. М., 1986, № 6, с. 86–93.

¹² **Смирнова О. И.** Один случай энантиосемии // Лексикология и словообразование древнерусского языка. М., Наука, 1966, с. 56–67.

¹³ **Иванова В. А.** Антонимия в системе языка // Шти-инца. Кишинев, 1982, 163 с.

¹⁴ **Прохорова В. Н.** Энантиосемия в современном русском языке (о причинах и условиях возникновения и функционирования слов с противоположными значениями) // Вопросы русского языкознания. Вып. I, М., 1976, с. 157–165.

ներհականիշ: Օրինակ՝ անգլերենի «unqualified»¹⁵ բառն ունի ներհականիշ իմաստներ.

1.Unqualified - սահմանափակ, անբավարար, անհամապատասխան

/1/ Never discuss a case with an unqualified person, do not disclose information pertaining to the subject you have treated, that subject is the object of someone's affection, and whatever steps have to be taken to ensure preservation, that is your job¹⁶.

/2/ Clearer, comprehensive and more accurate advertising and pre-entry information might help avoid some adults applying for courses for which they are unqualified¹⁷.

2.Unqualified - բացարձակ, անվերապահ

/3/ Certainly its application within the large domestic market of the United States, which alone accounts for some 40 per cent of world air travel, can hardly be considered an unqualified success¹⁸.

/4/ Nietzsche's letter of acknowledgement evinced unqualified loyalty, but did so without one word of unqualified praise for Wagner's latest effort¹⁹.

Այսպիսով, պետք է փաստել, որ բազմիմաստությունն այն լեզվական երևույթներից է, որը համարվում է ներհականիշության առաջացման հիմնական գործոններից մեկը:

Լեզվական մեկ այլ երևույթ է համանունությունը, որը նույնպես իր ուրույն տեղն է զբաղեցնում ներհականիշության քննության գործընթացում: Համանունները միանգամայն տարբեր, միմյանց հետ որևէ կապ չունեցող բառեր են, որոնց առաջացման պատճառներ կարող են լինել փոխառությունները, ինչպես նաև բառակազմական մի շարք գործընթացներ: Համանունությունը երկու կամ ավելի լեզվական միավորների հնչյունական համընկնումն է,

¹⁵ Oxford advanced learner's dictionary of current English, Oxford university press 2010

1. Not having the right knowledge, experience or qualifications to do smth.

2. complete, not limited by any negative qualities.

¹⁶ British National Corpus, available online at: [<http://bnc.bl.uk/saraWeb.php?qy=unqualified&mysubmit=Go>], last retrieved on 07/09/2015.

¹⁷ Նույն տեղում:

¹⁸ Նույն տեղում:

¹⁹ Նույն տեղում:

որոնք միանգամայն տարբեր իմաստներ են արտահայտում և, ի տարբերություն բազմիմաստության, փոխկապակցված չեն:

Օրինակ՝ անգլերենի «cleave»²⁰ բայը ձեռք է բերել երկու հակադիր իմաստներ հին անգլերենի երկու տարբեր բայերից՝ «*clēofan*» բայից, որն ունեցել է «առանձնացնել, բաժանել» իմաստը և «*clifian*» բայը, որը նշանակել է «ամրացնել, միացնել»:

1.Cleave – զատել, բաժանել, առանձնացնել

/5/ The young lad took out the large chopper his father used to cleave wood for the fire and chased the bully out of the house and down the street²¹.

/6/ A single blow from a Singing Blade can cleave a fully armored man in two if it is struck from a thundering chariot²².

2.Cleave – ամրանալ, կպչել

/7/ She had forsaken her people and her father's house, and had, like every other well-brought-up girl, established her own household and she should cleave only unto it, forsaking all others so long as she should live²³.

/8/ Her tongue clove to the roof of her mouth²⁴.

Հականիշները բառային զույգեր են, որոնք արտասանությամբ տարբեր են և արտահայտում են հակառակ իմաստներ²⁵: Հականիշների և ներհականիշների միջև ընդհանրությունն այն է, որ երկուսին էլ հատուկ է իմաստային բևեռացումը, սակայն, ի տարբերություն հականիշության, ներհականիշությունը հակադիր իմաստներ է զարգացնում մեկ բառի շրջանակներում:

Ինչպես տեսնում ենք, այս լեզվական երևույթները միմյանցից միանգամայն տարբեր են, և ներհականիշությունը դիտարկել այդ երևույթների տարատեսակներից կամ որպես դրանց միջև գտնվող անցումային երևույթ հա-

²⁰ Oxford advanced learner's dictionary of current English, Oxford university press 2010
To split or cut sth, in two using sth. sharp and heavy
To stick close to sth./sb.

²¹ British National Corpus, available online at: [<http://bnc.bl.uk/saraWeb.php?my-submit=Go>], last retrieved on 16/09/2015.

²² Նույն տեղում:

²³ Նույն տեղում:

²⁴ Oxford advanced learner's dictionary of current English, Oxford university press 2010

²⁵ **Մարգարյան Ա.**, Ժամանակակից հայոց լեզու: Բառագիտություն, Երևան, 1993, էջ 99-100:

կասական կլինի: Օրինակ՝ անգլերենի «table» բայն ունի ներհականիշ իմաստներ:

1. Table (BrE)²⁶ – ներկայացնել քննարկմանը

/9/ They have tabled a motion for debate at the next Party Conference.

2. Table (AmE)²⁷ – հետաձգել

/10/ They voted to table the proposal until the following meeting.

Ակնհայտ է, որ վերը նշված օրինակում «table» բայը ներհականիշության վառ դրսևորում է: Այն իր հակադիր իմաստները ստացել է՝ իրացվելով երկու տարբեր լեզվամշակույթներում:

Այսպիսով, ինչպես բազմիմաստության, այնպես էլ համանունության և հականիշության ուսումնասիրությունը կարող է խթանել խնդրո առարկա ներհականիշության առաջացման նախադրյալների հայտնաբերումը:

Հետևաբար, ուսումնասիրելով բազմաթիվ գիտնականների կարծիքներ, հանգում ենք այն եզրակացության, որ ներհականիշությունն այնպիսի մի երևույթ է, որը հարում է տարբեր լեզվական երևույթների, ինչպիսիք են համանունությունը, բազմիմաստությունը, հականիշությունը, բայց միևնույն ժամանակ էապես տարբերվում է նրանցից:

ԱՄՓՈՓՈՒՄ

Հոդվածի նպատակն է ուսումնասիրել ներհականիշության էությունը, առանձնահատկությունները, վերլուծել այս երևույթը բազմիմաստության, համանունության և հականիշության լույսի ներքո՝ վեր հանելով դրանց ընդհանուր և տարբերակիչ հատկանիշները: Հոդվածում կատարվել է վերլուծություն անգլերենի որոշ բառային միավորների նյութի հիման վրա: Ուսումնասիրության արդյունքում կարող ենք փաստել, որ ներհականիշությունն այնպիսի մի երևույթ է, որը հարում է տարբեր լեզվական երևույթների, ինչպիսիք են համանունությունը, բազմիմաստությունը, հականիշությունը, բայց միևնույն ժամանակ էապես տարբերվում է նրանցից:

Բանալի բառեր – ներհականիշություն, բազմիմաստություն, համանունություն, հականիշություն, բևեռային իմաստներ:

²⁶ Oxford advanced learner's dictionary of current English, Oxford university press 2010 (BrE) to present sth. Formally for discussion

(AmE) to leave an idea, a proposal to be discussed at a later date

²⁷ Նույն տեղում:

К ВОПРОСУ ОБ ЭНАНТИОСЕМИИ

АСМИК КАДЖБЕРУНИ, ТАМАРА АКОПЯН

В статье представлен материал по сравнительному анализу энантиосемии с другими категориями лексической семантики (омонимией, антонимией, полисемией). В статье рассматриваются разные подходы к исследованию проявлений неоднозначности значений языковых единиц. По мнению некоторых исследователей, в пределах одного слова могут находиться элементы как с противоположными, так и с взаимоисключающими значениями. Энантиосемия довольно часто рассматривается как частный случай антонимии. Несмотря на то, что точки зрения придерживаются те исследователи, которые допускают в семантической структуре слова сосуществование отличных, но не полярных сем, приравнивая, тем самым, энантиосемию к полисемии.

Ключевые слова - энантиосемия, полисемия, антонимия, омонимия, полярные семы.

ENANTIOSEMY

HASMIK KAJBERUNI, TAMARA HAKOBYAN

The article is to investigate the notion of enantiosemy, its characteristic features from the point of polysemy, homonymy and antonymy in order to find out their similar and distinguishing attributes. After analyzing some English words it has been concluded that there is some correlation between enantiosemy and other lexical categories such as polysemy, homonymy and antonymy in spite of at the same time being different from them.

Key words - enantiosemy, polysemy, antonymy, homonymy, polar opposites.

ՊԱՏՄԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԿԱՆԱՆՑ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆ ԱՐՑԱԽՅԱՆ ՇԱՐԺՄԱՆ ԸՆԴՀԱՏԱԿՅԱ ՓՈԽԼԻՆ (1986-1988թթ.)

ԻՍԿՈՒՀԻ ԱՎԱՆԵՍՅԱՆ

1980-ական թվականներին ԽՍՀՄ-ը տնտեսական և քաղաքական խոր ճգնաժամի մեջ հայտնվեց: 1985 թվականին կուսակցության 27-րդ համագումարը (1986թ.) որոշեց համատարած վերակառուցել երկրի սոցիալ-տնտեսական և քաղաքական կյանքի բոլոր բնագավառները: Սակայն այդ որոշումները, որոնք հայտնի են «Վերակառուցում» անվանումով, չէին կարող իրականանալ և արմատական փոփոխություններ առաջ բերել հասարակության մեջ: Պատահական չէ, որ ձեռնարկված միջոցառումները ոչ միայն չբարելավեցին ԽՍՀՄ-ի տնտեսական վիճակը, այլև 1980-ական թվականների վերջերին երկրի սոցիալ-տնտեսական կացությունն ավելի վատթարացավ:

Կենտրոնական իշխանությունների անկարողությունը՝ լուծելու սոցիալ-տնտեսական, քաղաքական, ազգամիջյան հարաբերությունների ոլորտներում կուտակված հիմնախնդիրները, խորացրեց Խորհրդային Միության ժողովուրդների անվստահությունը նրանց հանդեպ: ԽՍՀՄ-ում գրեթե համատարած բնույթ ընդունեց անկախության ձգտումը, որն էլ ավելի սրեց ազգամիջյան հարաբերությունները:

Հռչակված «Վերակառուցման» ընթացքում ազգային հարցին յուրահատուկ արժեք տրվեց, և այն առաջին պլան մղվեց Արցախում, որտեղ պայքարը, ընդհանուր առմամբ, չէր դադարել: Ոգեշնչված արմատական փոփոխություններ ենթադրող «Վերակառուցման» քաղաքականության հռչակմամբ, կրկին բարձրացվեց դեռևս 1920-ական թվականներից չլուծված Ղարաբաղյան հիմնահարցը¹:

Լեռնային Ղարաբաղի հայ ազգաբնակչության ազգային-ազատագրական շարժումը երբեք էլ հանկարծակի չի սկսվել, այն հասունացել էր տասնամյակների ընթացքում: Հետևաբար, խաղաղ ցույցերում ու հանրահավաք-

¹ Нагорный Карабах: Историческая справка, Ереван, 1988, с. 8.

ներում առաջ քաշված խնդիրները նորություն չէին: Սակայն խորհրդային կայսերապետության պայմաններում միութենական Կենտրոնի հանցավոր թող-տվությամբ ու քաջալերմամբ Ադրբեջանի իշխանությունների կողմից այն հակազդվեց ուժային ճնշումներով: Ադրբեջանն իր առջև դրել էր հստակ նպատակ՝ ունենալ ադրբեջանական (թուրքացված) Արցախ: Ահա թե ինչու սկիզբ առավ արցախյան շարժումը, որը նոր էջ բացեց հայոց պատմության մեջ: Խնդիր դրվեց վերականգնել պատմական արդարությունն ու Արցախը վերամիավորել մայր հայրենիքին՝ Խորհրդային Հայաստանին:

1985-1987թթ. Արցախում թանձրացավ բնակչության դժգոհությունը, ինչը հանգեցրեց լայն բացատրական աշխատանքների ծավալմանը ԼՂԻՄ ճնշող մեծամասնություն կազմող էթնիկ հայ բնակչության շրջանում: ԼՂԻՄ-ը Հայաստանի հետ վերամիավորելուն միտված քարոզչական աշխատանքներն ակտիվացան, մանավանդ 1986թ. ամռանը: Անհրաժեշտ է շեշտել, որ այդ ժամանակ էլ ազգային-ազատագրական պայքարի ուշագրավ ու կարևոր առանձնահատկություններից էր կանանց զանգվածային մասնակցությունը: Այս անժխտելի իրողությունը քանիցս արձանագրվել է ժամանակաշրջանի տարեգիրների և ուսումնասիրողների կողմից. «Կանայք, հատկապես կանայք և աղջիկները,- գրում է Ղարաբաղյան շարժման տարեգիր Բագրատ Ուլուբաբյանը 1988-ի փետրվարյան հանրահավաքներից ստացած իր տպավորություններում: - Որքան խելոք, արդար ու վարակիչ են նրանց խոսքերը: Նրանք ինչպիսի՜ տրամաբանական հյուսվածքի մեջ են առնում իրենց կյանքի ցավն ու հոգսը, պայքարի կամքն ու վճռականությունը, հաղթանակի հույսն ու հավատը»²: Իսկ ակադեմիկոս Վլադիմիր Խոջաբեկյանն արձանագրել է. «Նորից հայ կինը հանդես եկավ ոչ միայն որպես արդարության վերահաստատման համար մղվող պայքարի ոգեշնչման աղբյուր, այլև նրա ակտիվ մասնակից: Ի դեմս միտինգների մասնակցող հայ կնոջ հպարտ, անձնուրաց, շեշտադրված կեցվածքի ու պահելաձևի, մենք նորից հանդիպեցինք Մամիկոնեից Մեծ տիկնոջ ֆենոմենը մարմնավորող խրոխտ ու հողեղեն կերպարին»³:

Այսպես, երբ խնդիր դրվեց վերականգնել պատմական արդարությունը և Արցախը վերամիավորել մայր հայրենիքին՝ Խորհրդային Հայաստանին, հայ կինը հանդես եկավ ոչ միայն պայքարի գաղափարակիր ու կազմակերպիչ, հասարակական-քաղաքական գործիչ, այլև հայրենիքի պաշտպան:

² Ուլուբաբյան Բ., Արցախյան գոյապայքարի տարեգրությունը, Երևան, 1997, էջ 10:

³ Խոջաբեկյան Վ., Արցախը փորձության ժամին, Երևան, 1991, էջ 25:

1985թ. հունիսից մինչև 1986թ. մայիսն ընկած ժամանակահատվածում ժամանակակիցների վկայությամբ Ղարաբաղյան շարժումը դրսևորվում էր ոչ մեծ հավաքներով, որոնց շատ քիչ մարդ էր մասնակցում: Շարժման ղեկավարներից Իգոր Մուրադյանի վկայությամբ 1986-1987թթ. Ստեփանակերտում ստորագրահավաքը հիմնականում իրականացվում էր քաղաքի բուժպոլի-կլինիկայի գրանցման բաժնի աշխատողների օգնությամբ⁴: Կանանց մասնակցությամբ իրականացվող «կիսաբացահայտ» գործունեությունը համակարգվում էր շարժման կազմակերպիչների կողմից, որոնց շնորհիվ ընդհատակյա աշխատանքներ ներգրավվեցին նաև Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի հայկական բաժնի մի խումբ ուսանողներ:

Շարժման կազմակերպիչները, որոնց շարքերում մեծ թիվ էին կազմում կանայք, սկզբում բնակչության հետ իրականացնում էին գաղափարական աշխատանքներ՝ գաղտնի թռուցիկների պատրաստում և տարածում: Թռուցիկների տարածմանը մասնակցում էին հիմնարկ-ձեռնարկությունների աշխատողներ. յուրաքանչյուր կոլեկտիվում կային մարդիկ, ովքեր արագ տարածում էին թռուցիկները: Սկսված ընդհատակյա աշխատանքներն ունեին մեկ նպատակ, ինչին կանայք մասնակցելով փորձում էին իրենց ներդրումն ունենալ խնդրի լուծմանը: Այնուհետև նրանց մասնակցությամբ սկսվեցին ստորագրահավաքները, որը կատարվում էր խիստ գաղտնի: Այն իրականացվեց 1986-1987թթ. «Լեռնային Ղարաբաղը Հայկական ԽՍՀ-ին վերամիավորելու օգտին»⁵: Ապա սկսվեց հեռագրերի և հանրագրերի ձևակերպումը: Այդ ամենն արվում էր հանուն համազգային նշանակության խնդրի լուծման: Գործող խմբերը ԼՂԻՄ-ը Հայկական ԽՍՀ-ին վերամիավորելու խնդրանք-պահանջով, ինչպես նաև շրջանի բնակչությանը հուզող այլ խնդիրների առնչությամբ հանրագրեր էին ուղարկում շրջանային ու մարզային ատյաններին, Ադրբեջանական ԽՍՀ, Հայկական ԽՍՀ բարձրագույն ղեկավար մարմիններին և Կենտրոնին: Եթե կազմակերպիչների մի մասն աշխատանքներ էր տանում Մոսկվա մեկնող պատվիրակություններին հանձնելու նպատակով հանրագրերի պատրաստման ուղղությամբ, ապա մեկ այլ խումբ նախապատրաստում էր կոլտնտեսություններում անցկացվող հաշվետու ժողովների օրակարգային հարցը ԼՂԻՄ-ը Հայկական ԽՍՀ-ին վերամիավորելու մասին: Համարյա մարզի բոլոր հաստատություններում ընդհատակյա գործունեություն էր ծավալվել:

⁴ Աբրահամյան Հ., Մարտնչող Արցախ 1917-2000, հատոր Գ, Երևան, 2007, էջ 18:

⁵ Նույն տեղում, էջ 17:

Ստեփանակերտում այդ աշխատանքներից անմասն չմնացին նաև Արաքսյա Հայրապետյանը (խոհարարուհի) և Վալյա Մեհրաբյանը (Ղարմետաքս կոմբինատի աշխատակից)⁶, կանայք, ովքեր կանգնած էին շարժման ակունքներում և անտեսելով սպառնացող վտանգն ու հանդիպող դժվարությունները՝ մտան պայքարի հորձանուտ:

Այդ օրերին տիրող բարոյահոգեբանական մթնոլորտի մասին Արցախի պետական համալսարանի (ԱրԴՀ) պրոֆեսոր, Ղարաբաղյան շարժման ակտիվ մասնակից Լենա Գրիգորյանը հետագայում գրում է. «Հիմա, երբ ամեն ինչ վաղուց հետևում է մնացել, շատ դյուրին կարող է թվալ այդ ամենը, սակայն այն ժամանակ միանգամայն այլ էր մթնոլորտը: Աշխատում էինք ադրբեջանական բաժնի հետ՝ կողք կողքի: Նախընտրեցի դիմել առավել վստահություն ներշնչող գործընկերներիս: Զգուշորեն բացատրեցի, թե ինչն ինչոց է: Եվ ի զարմանս ինձ, ոմանք կտրականապես հրաժարվեցին, ոմանք քաղաքավարությամբ մերժեցին՝ մտերմաբար խորհուրդ տալով, որ հեռու մնամ նման բաներից, որոնց վերջը բանտախուցն է»⁷:

Հատկանշական է, որ «Վերակառուցման» տարիներին ժողովրդի մի մասի մոտ առկա էին անտարբերությունն ու վախի զգացողությունը, որը կոտրելու նպատակով հայրենասեր ուժերը քարոզչական առավել ծավալուն գործ սկսեցին կատարել: Արցախը Հայաստանին վերամիավորելուն միտված քարոզչական աշխատանքներ էր կատարում նաև 1986թ. Ստեփանակերտում հիմնված «Արցախյան միություն» ընդհատակյա կազմակերպությունը⁸, որը ղեկավարվում էր 11 հոգուց բաղկացած կոմիտեի կողմից և ուներ ծրագիր ու կանոնադրություն: Արմատավորված անտարբերությունն ու վախի զգացողությունը կոտրելու նպատակով «Արցախյան միություն»-ը և հայրենասեր մյուս ուժերը քարոզչական առավել ծավալուն գործ սկսեցին կատարել: Կազմակերպության բաժանմունքներ հիմնվեցին նաև մարզի շրջաններում: Դրանում կանայք ներգրավված էին նաև ղեկավար կազմում: ԼՂԻՄ Մարտունու շրջանի բաժանմունքի ղեկավարներից էր շրջխորհրդի գործկոմի պլանային հանձնաժողովի նախագահ Անգելինա Հովսեփյանը⁹: Վերջինիս վկայությամբ, 1986թ. ընդգրկվելով շարժման կազմակերպիչների գաղտնի խմբի մեջ, ինքը մասնա-

⁶ «Շարժում 88», 20 փետրվարի, 2008, թիվ 2:

⁷ «Հայրենյաց պաշտպան», Ստեփանակերտ, 2003, 18 մարտի:

⁸ Դեռևս 1986թ. հուլիսին Ստեփանակերտում հիմնված ընդհատակյա կազմակերպությունը 1987թ. ստացավ «Արցախյան միություն» անունը:

⁹ «ԼՂ Հանրապետություն», Ստեփանակերտ, 1988, 22 հունվարի:

կից դարձավ ստորագրահավաքների կազմակերպմանը: Նրան հանձնարարված էր տեղեկություններ պատրաստել վերջին տասը տարիներին շրջանի սոցիալ-տնտեսական վիճակի մասին՝ ԽՄԿԿ Կենտկոմ ներկայացնելու նպատակով: Ամեն ինչ կազմակերպվում էր նախատեսված ծրագրերի համաձայն, բոլորը գիտակցում էին սկսած գործի կարևորությունը և աշխատում էին մեծ նվիրումով: Միությունը 1987թ. ամռանը և աշնանն իրագործեց իր նվազագույն ծրագիրը՝ հավաքելով ավելի քան 80 հազար ստորագրություն, որը նոյեմբերի վերջին ներկայացվեց ԽՄԿԿ Կենտկոմին¹⁰: Անկասկած, գաղտնի գործունեություն ծավալվեց ԼՂԻՄ-ի բոլոր շրջաններում, որում կանայք հանդես էին գալիս ակտիվությամբ:

1987թ. Մարտունու շրջանի տեղական կազմակերպիչների և ակտիվիստների շարքերը համալրած կանայք՝ Ռիտա Գևորգյանը (Մարտունու կենտրոնական գրադարանի տնօրեն), Սիլվա Բալայանը (Մարտունու կոմերիտշրջկոմի քարտուղար), Սիլվա Խաչատրյանը (լրագրող), նախաձեռնում և իրականացնում էին մասնավորապես գաղտնի ստորագրահավաքներ, կատարում գաղափարախոսական աշխատանքներ, կազմակերպում գաղտնի ժողովներ¹¹: Նույն աշխատանքներն իրականացվում էին նաև Մարտակերտի շրջանում, որտեղ ընդհատակյա կազմակերպության առավել ակտիվ գործիչներից էր Ժաննա Խուրշուդյանը¹²: Նա մասնակցում էր մարզի գաղտնի խմբերի հավաքներին, թոռուհիների տարածմանը և ստորագրահավաքին: Իհարկե, շրջանի գյուղերում դա իրականացվում էր համակիրների օգնությամբ, որոնց շարքերում մեծ թիվ էին կազմում շրջկենտրոնի և գյուղերի կանայք: Հարկ է նկատել, որ նրանց հիմնական մասը մտավորականներ էին: Թեկուզ գաղտնի, իրականացվող աշխատանքները նպաստեցին Հայաստանի հետ Արցախի միավորման պահանջի բարձրացմանը: Դրան հակառակ բոլորովին այլ ծրագրեր հասունացան Ադրբեջանի կառավարողների մոտ: 1987թ. բացահայտ

¹⁰ «ԼՂ Հանրապետություն», 1988, 21 հունվարի: 1988թ. փետրվարի 14-ին Հայկոմկուսի կենտկոմի առաջին քարտուղար Կ. Դեմիրճյանին Իգոր Մուրադյանի իղած դիմումում նշվում է, որ ստորագրահավաքին մասնակցել են 51-52 հազար մարդ: Սա իրական է: Սակայն հետագայում նույն հեղինակը «Հայոց աշխարհ» թերթում (20.01.1998) հրապարակած հուշերում ստորագրահավաքին մասնակիցների թիվը ցույց է տվել 125 հազար, որն անհավանական է: Հայության կոչերն ու դիմումները ԼՂԻՄ-ը Խորհրդային Հայաստանի հետ միավորելու համար, Երևան, 2014, էջ 13:

¹¹ «Ամարաս», Մարտունի, 2008, 15 փետրվարի:

¹² **Բեգլարյան Հ.**, Արցախ-Նամե, Ղարաբաղյան շարժում, գիրք Գ, Ստեփանակերտ, 2006, էջ 89:

դարձան հայերին բռնի տեղահանելու նրանց ձգտումները հատկապես Հյուսիսային Արցախում: Առաջին քայլերը նրանք կատարեցին հին ու հզոր արմատներ ունեցող հայկական Չարդախլու գյուղում, որի համախմբումը վստահություն էր ներշնչում շրջակա հայկական գյուղերի ամբողջ խմբին: Մի քանի ամիս շարունակված բռնությունները հասան նրան, որ ոստիկանության կազմակերպած ուժերով շուրջ 200 աղորբեջանցիներ զինված հարձակում գործեցին հայկական գյուղի վրա: Հանրապետական և կենտրոնական իշխանության մարմիններն ամեն կերպ քողարկեցին այդ երևույթը: Միայն «Սելսկայա ժիզն» կենտրոնական թերթում, այն էլ շատ ուշացումով, հաջողվեց նկարագրել, թե ինչպիսի բռնություններ ու ապօրինություններ են կատարվել հայերի նկատմամբ Չարդախլու գյուղում¹³: Հանուն հայրենիքի ազգային գոյատևման և մայր Հայաստանի միավորման, Հյուսիսային Արցախի հայերին մնում էր 1987թ. միանալ ստորագրահավաքին և համագործակցել ԼՂԻՄ-ում գործող ընդհատակյա խմբերի հետ: Տեղի կանայք ևս մասնակցում էին իրականացվող նախաձեռնություններին և այդ փուլում մի շարք աշխատանքներ կատարում հանուն նպատակի:

Թե՛ Ստեփանակերտում և թե՛ մարզի շրջկենտրոններում շարունակվում էին ընթանալ գաղտնի ժողովներ, հանդիպումներ, որտեղ որոշումներ էին ընդունում Լեռնային Ղարաբաղը Հայաստանի հետ վերամիավորելու կարևորության մասին: Գաղտնի խմբերի առաջնահերթ խնդիրներից էր նախաձեռնող խմբերի ստեղծումը, որն իրականացվեց 1987թ.: Արդեն սեպտեմբերին Ասկերանի շրջանի գրեթե բոլոր գյուղերում գործում էին նման խմբեր, որոնք ակտիվ համագործակցության մեջ էին շրջկենտրոնի իրենց համախոհների հետ: 1987թ. Ասկերանում քիչ չէին շրջանի տեղական կազմակերպիչները և ակտիվիստները, որոնց շարքերում էր Ժենյա Մովսիսյանը: Նրա և շատ ուրիշ կանանց մասնակցությամբ մի շարք աշխատանքներ էին տարվում շարժման գաղտնի փուլում, որը նպատակ ուներ պայքարն ընդհատակյա փուլից հանելու, դարձնելու համաժողովրդական:

Ասկերանում առաջին նախաձեռնող խմբերից էր նաև շրջանային «Կարմիր դրոշ» թերթի խմբագրակազմը: Շարժման սկզբում գրված համարձակ հոդվածները, որոնք չէին տպագրվում «Խորհրդային Ղարաբաղ» թերթում, անպայման տեղ էին գտնում Ասկերանի շրջանային թերթում: Այս աշխա-

¹³ «Сельская жизнь», Москва, 1987, 24 декабря.

տանքներին մասնակցում էր նաև լրագրող Ծովինար Գրիգորյանը¹⁴։ Կային նաև մարդիկ, ովքեր թեպետ ընդգրկված չէին նախաձեռնող խմբերի մեջ, բայց և մասնակցում էին նախապատրաստական աշխատանքներին։ Այստեղ գործող նախաձեռնող խմբերում ընդգրկված կանայք (Միրա Ավանեսյան, Նորա Առուշանյան, Մելանյա Առուշանյան, Գրետա (Ջեմմա) Թամրազյան), շրջկենտրոնում թողնվածներ տարածելուց, ստորագրահավաքներ կազմակերպելուց բացի, քարոզչական աշխատանքներ էին տանում նաև գյուղերում։ Ստորագրություն վերցնում էին նրանցից, ովքեր համակված էին նույն այդ գաղափարով՝ ԼՂԻՄ-ի վերամիավորում մայր հայրենիքին։ Կին ակտիվիստների վկայությամբ ձևաթղթերը, որոնցում պետք է նշվեին ստորագրողի անձնագրի համարն ու հասցեն, նրանք բաժանում էին և օրվա մեջ երկու անգամ այցելում «Կարմիր դրոշ» թերթի խմբագրատուն՝ հավաքած ստորագրությունները հանձնելու համար։ Այդ աշխատանքները կատարվում էին խիստ գաղտնի¹⁵։ Միաժամանակ կանայք մասնակցում էին նաև գաղտնի հավաքներին, որն էլ 1986-1987թթ.-ից վերածվեց ընդհատակյա քաղաքական կազմակերպության։

Նամակների, դիմումների, հանրագրերի հոսքը Հաղրուփի շրջանից սկսվեց դեռևս 1986 թվականից։ Այստեղ ևս ընդհատակյա աշխատանքներին մասնակից կանայք ամենուրեք ստորագրահավաքներ էին կազմակերպում՝ արդյունքները Մոսկվա ուղարկելու համար։ Հավատ կար, որ գորբաչովյան «Վերակառուցումը», նոր մտածողությունը հնարավոր կդարձնեն հեշտությամբ լուծելու բարձրացված հիմնահարցերը։ Մասնավորապես, խմբի նախաձեռնությամբ կազմված և Հաղրուփի շրջգործկոմին ուղղված հանրագրում հաղրուփցիները պահանջում էին լուծել Հաղրութում հայկական հեռուստաալիք ունենալու հարցը և դիմել Մոսկվային՝ Արցախի հարցին արդարացի լուծում տալու համար։ 1987թ. հաղրութցիները հանրագրով, այդ թվում՝ նաև կին ակտիվիստների ստորագրությամբ (Էլզա Աբրահամյան, Անիկ Հայրապետյան, Սիրվա Պողոսյան) դիմում են խՄԿԿ ԿԿ գլխավոր քարտուղար Մ. Գորբաչովին՝ խնդրելով լուծել ազգային պահանջատիրության հարցը՝ ԼՂԻՄ-ը վերամիավորել մայր Հայաստանին¹⁶։

Այսպես, հայկական հեռուստաալիքի հարցը չլուծվեց, միևնույն ժամանակ Հաղրութում սկսվեցին ճնշումները նախաձեռնող խմբի անդամների հան-

¹⁴ Ծովինար Գրիգորյանն այժմ աշխատում է Արցախի հանրային ռադիոյում՝ որպես առաջատար խմբագիր։

¹⁵ ԼՂՀ Ասկերանի շրջանային արխիվ (ԱՇԱ), ֆ.1, ց.1, գ.46, թ.4։

¹⁶ Նույն տեղում, Հաղրութի շրջանային արխիվ (ՀՇԱ), ֆ.1, ց.3, գ. 24, թ.5։

դեպ: Այնուամենայնիվ, շարժումը հետզհետե ավելի ու ավելի էր ծավալվում՝ մասնակից դարձնելով շրջանի բոլոր գյուղերը: Ընդհատակյա խմբերը, մեկը մյուսի հետ համագործակցելուց բացի, ունեին առանձին տեղական խմբեր, որոնց միջոցով իրականացվում էին մի շարք ներքին կազմակերպչական աշխատանքներ: Ստեփանակերտում ակտիվ տեղական կազմակերպիչների շարքերում էին Անահիտ Եղիազարյանը, Աղավնի Դանիելյանը, Քինա Հովհաննիսյանը¹⁷:

1988-ի սկզբներին շարժումը նոր, հուժկու թափ առավ: Անհրաժեշտ էր ԼՂԻՄ-ը Հայկական ԽՍՀ-ի հետ վերամիավորելու մասին Հռչակագիրը համաժողովրդական քննարկման դնել ու համապատասխան որոշում կայացնել:

Շարժման նախաձեռնող խմբերը կազմեցին ժողովների անցկացման ժամանակացույց, որը հիմնականում համապատասխանեցվեց ԼՂԻՄ-ում ավանդաբար փետրվարին անցկացվող տնտեսությունների ղեկավարների հաշվետու-ընտրական ժողովների ժամանակացույցի հետ, և ժողովում ներկայացվեց Լեռնային Ղարաբաղը Հայկական ԽՍՀ-ի հետ վերամիավորելու մասին Հռչակագիրը, որն ամենուր հավանության արժանացավ: Այդ գործընթացը նոր հույսեր արթնացրեց մարդկանց մեջ՝ Արցախի հարցը խաղաղ ճանապարհով լուծելու գործում: Կարճ ժամանակահատվածում շրջանի բոլոր կուլեկտիվներում անցկացվեցին ժողովներ, որտեղ կանայք ևս ելույթներով հանդես եկան ու առաջարկեցին դիմել Կենտրոնին՝ հիմնահարցին արդար լուծում տալու խնդրանք-պահանջով: Միաժամանակ շարունակվում էր ստորագրությունների փաթեթների հոսքը Մոսկվա: Հաղորդից ստորագրությունների փաթեթը Մոսկվա ուղարկվեց 1988թ. հունվարին: Այս անգամ ստորագրահավաքի կազմակերպմանը մասնակցում էր 66 մարդ, որոնցից 20-ը՝ կանայք: Այնուհետև վերջիններիս մասնակցությամբ Հաղորդում տարածվում են «Ղարաբաղը բռնությամբ Ադրբեջանի մաս չի կազմի», «Ղարաբաղը կազատագրվի ամեն գնով, ինչ էլ որ լինի», «Սահմանադրությունը ժողովրդի համար է, ոչ թե ժողովուրդը՝ Սահմանադրության», «Նախիջևանը օրինակ է Ադրբեջանի վարած քաղաքականության մասին» բովանդակությամբ կարգախոսներ¹⁸:

Ադրբեջանի Կոմկուսի կենտկոմը որոշեց շարժումը խեղդել, և 1988-ի փետրվարի 11-ին Ադրբեջանի ԿԿ կենտկոմի ներկայացուցիչները ժամանեցին Արցախ՝ կուսակցական ակտիվի նիստեր գումարելու նպատակով, կուսակ-

¹⁷ Բեգլարյան Հ., նշվ. աշխ., էջ 87:

¹⁸ ԼՂՀ ՀՇԱ, ֆ.1, ց.3, գ. 24, թ.6:

ցական կազմակերպության միջոցով շարժումը կասեցնելու համար: Նրանք պահանջեցին ԼՂԻՄ-ը ՀԽՍՀ-ին վերամիավորելու պահանջը դատապարտող որոշումներ կայացնել:

Հարկ է նշել, որ նրանց այդ նախաձեռնությունն արդյունք չտվեց, ավելին, նպաստեց շարժումը համաժողովրդական բնույթի վերածվելուն: Ակտիվի մասնակիցները դատապարտեցին Ադրբեջանի վարած գաղութային քաղաքականությունը և վճռականորեն հայտարարեցին պայքարը շարունակելու մասին:

Փետրվարի 12-ին Ադրբեջանի ԿԿ կենտկոմի երկրորդ քարտուղար Վ. Կոնովալովը, ժամանելով Ասկերան, որոշ քայլեր ձեռնարկեց, սակայն նրա առաքելությունը տապալվեց¹⁹: Նույն օրը Ասկերանում հանրահավաք կազմակերպվեց, որտեղ ելույթ ունեցող կանայք մերկացրին Ադրբեջանի իշխանությունների հակահայ քաղաքականությունը: Այստեղ հանրահավաքն անցկացվեց ցուցապաստառով՝ «Կեցցե Լեռնային Ղարաբաղի վերամիավորումը Հայկական ԽՍՀ-ին»:

Փետրվարի 12-ին Հաղրուօ և Մարտունի շրջկենտրոններում տեղի ունեցան այդ շրջանների բնակչության առաջին զանգվածային ցույցերը, որոնցում առաջ էր քաշվում մարզը Հայկական ԽՍՀ-ին վերամիավորելու պահանջը: Փաստորեն, Բաքվից եկած էմիսարների ճնշումները մարզի կուսակցական և պետական մարմինների աշխատակիցների վրա արդյունք չտվեցին:

Հաղրուօում ևս կուսակցական ակտիվի ժողովը տապալվեց, հետո կայացավ առաջին հանրահավաքը, որտեղ ընթերցվեց Հռչակագիրը²⁰: Այս ամենը կազմակերպվում էր նախաձեռնող խմբի ջանքերով, որի ղեկավարներից էր Նելլի Կասպարովան (ռուսաց լեզվի ուսուցչուհի): Նա մեկն էր այն գլխավոր գործող անձանցից, ովքեր կազմակերպում էին նամակների, հանրագրերի հոսքը Մոսկվա, իսկ փետրվարի 12-ին ակտիվ աշխատանք տանում կուսշրջկոմի պլենումում Հռչակագրի ընդունման, ապա և հաջորդ օրը մարզային իշխանությունների կողմից այդ փաստաթղթի օրինականացման ուղղությամբ: Նրա համախոհների շարքերում մեծ թիվ էին կազմում հաղրուօցի կանայք²¹:

Փետրվարի 12-ին Մարտունու շրջանում կայացած առաջին զանգվա-

¹⁹ «Բերդ», Ասկերան, 2010, 18 փետրվարի:

²⁰ «Լուսարար», Ստեփանակերտ, 2013, 11 փետրվարի, թիվ 2-3:

²¹ «Դիզակ», Հաղրուօ, 2007, 12 փետրվարի:

ծային հանրահավաքում ելույթ ունեցան Ռիտա Գևորգյանը (Մարտունու կենտրոնական գրադարանի տնօրեն) և Սիլվա Խաչատրյանը (լրագրող), որոնք ևս մեկ անգամ արտահայտեցին արցախցիների կամքը և պահանջեցին շարունակել սկսած գործը հանուն նպատակի: Այնուհետև Իրինա Մանասյանը ԼՂԻՄ-ը Հայաստանին վերամիավորելու մասին Հռչակագրի ռուսերեն օրինակը ներկայացրեց հանրահավաքի մասնակիցներին²²: Հետագայում Ռիտա Գևորգյանը, անդրադառնալով այդ օրերի դեպքերին, վկայում է. «Այդ տարիներին ես աշխատում էի շրջանային կենտրոնական գրադարանում... Ակտիվորեն սկսեցինք թռուցիկներ տարածել, որոնք մեզ էր տալիս Վոլոդյա Խաչատրյանը: ...Թռուցիկները ընդունվում էին մեծ ոգևորությամբ, և դրանք մեծ նշանակություն ունեցան մասսաներին համախմբելու, շարժման մեջ ընդգրկելու համար: Այնուհետև սկսվեցին ստորագրահավաքները, հեռագրերի տեքստերի ձևակերպումը, որում կարևոր դերակատարություն ունեին Անգելինա Հովսեփյանը և Սիլվա Բալայանը... Հաճախակի էինք հանդիպում Հադրութի մեր համախոհների հետ... Մինչև փետրվարի 12-ը գործում էինք անլեզալ, խիստ գաղտնի պահելով մեր գործունեությունը, սակայն իրադարձությունները շատ արագ էին զարգանում, և որոշվեց 1988թ. փետրվարի 12-ին ժամը 5-ին ցույց կազմակերպել... Նշված ժամին աշխատավորական կոլեկտիվները շարժվեցին դեպի հրապարակ... Մեզ արդեն ոչինչ արգելակել չէր կարող, շարժվում էինք առաջ: Հայտնի էր միայն, որ ժողովրդին այլևս կանգնեցնել հնարավոր չէ»²³: Վերջինիս վկայություններից հայտնի է դառնում, որ 1988թ. սկզբներին շարժումն աստիճանաբար համաժողովրդական բնույթ էր ստանում, իսկ նրա ակունքներում կանգնած կանայք անում էին ամեն ինչ: Նկատենք, այդ օրերին կանանց անմիջական մասնակցությամբ կազմակերպված աշխատանքներ էին իրականացվում նաև Մարտակերտում: Այստեղ աշխատանքներն ավելի ծավալուն բնույթ ունեին: Լինելով մարզի ամենամեծ շրջանը՝ Մարտակերտի ակտիվիստները ստիպված էին հիմնական աշխատանքները տանել գյուղերում, որտեղ հաճախակի էին տեղի ունենում գաղտնի ժողովներ:

Ադրբեջանի իշխանությունների նպատակներն ու բոլոր նախաձեռնությունները ձախողվեցին, և փետրվարի 12-ից մարզի հայ բնակչության պայքարը դարձավ զանգվածային:

²² ԼՂՀ Մարտունու շրջանային արխիվ (ՄՇԱ), ֆ.1, ց.1, գ. 10, թ.11:

²³ «Ամարաս», Մարտունի, 2006, 15-31 հունվարի:

Հարկ է նշել, որ շարժման ընդհատակյա փուլում ազգային-ազատագրական գործընթաց ներառված կանայք մեծապես նպաստեցին, որպեսզի շարժումը վերածվի համաժողովրդական պայքարի:

ԱՄՓՈՓՈՒՄ

Քննության առնելով 1985 թվականից մինչև 1988 թվականի սկիզբը ընկած ժամանակահատվածում կանանց դերը՝ միանշանակ կարելի է ասել, որ նրանք առանձնակի եռանդ ու մասնակցություն ցուցաբերեցին և մեծ դերակատարություն ունեցան համազգային գործում: Իրադարձությունների վերլուծությունը ցույց տվեց, որ այն պահից սկսած, երբ ԽՍՀՄ-ում «վերակառուցման» քաղաքականությամբ պայմանավորված փոփոխությունների հետևանքով սկիզբ առավ արցախահայության ազգային-ազատագրական պայքարի նոր փուլը, կանայք, մասնակից դառնալով այդ ամենին, դեռևս ընդհատակյա փուլում ընդգրկվեցին նախաձեռնող խմբերի կազմում և նպաստեցին, որպեսզի շարժումը վերածվի համաժողովրդական պայքարի: Դա նախ և առաջ իրականացվեց լայն բացատրական աշխատանքով մարզի էթնիկ հայ բնակչության շրջանում: Այնուհետև դրան հաջորդեց հանրագրերի հոսքը Մոսկվա՝ խորհրդային ղեկավարությանը, ապա 1988-ի փետրվարին՝ առաջին բազմամարդ հանրահավաքները, ցույցերը, երթերը: Այդ ամենին միացած կանայք, առաջ մղելով Արցախի հիմնահարցը, խորհրդային կայսերապետության վերադաս մարմիններից պահանջեցին այն լուծել ժողովրդավարական պահանջներին ու ազգերի ինքնորոշման սկզբունքներին համապատասխան:

1988թ. Ղարաբաղյան շարժման ժամանակ Արցախի կանայք իրենց դրսևորել են ոչ միայն որպես պայքարի գաղափարախոսներ և նրա կրողներ, այլև որպես հայրենիքի պաշտպաններ:

Հիշյալ շրջանում նրանց գործունեությունը հիմնականում դրսևորվեց քարոզչական աշխատանքներում, որի շնորհիվ ընդհատակյա շարժումը վերածվեց համաժողովրդականի:

Քանալի բառեր - բարեփոխումներ, շարժում, ազգային, կանայք, հանրահավաք, քաղաքականություն, ստորագրահավաք, պայքար, ժողովուրդ, «Վերակառուցում»:

УЧАСТИЕ ЖЕНЩИН В ПОДПОЛЬНОЙ ДЕЯТЕЛЬНОСТИ В ПЕРИОД АРЦАХСКОГО ДВИЖЕНИЯ (1986-1988ГГ.)

ИСКУИ АВАНЕСЯН

В 1980-х годах глубокий экономический и политический кризис в СССР заставил осуществить в стране экономические и политические реформы, что не только не улучшило экономическую ситуацию в СССР, но и в конце 1980-х годов ухудшило социально-экономическое положение страны. В ходе реконструкции национальным вопросам придавали особую ценность, и они выдвинулись на первое место в Арцахе, где борьба, в целом, не переставала.

Пропагандистские работы, направленные на воссоединение НКАО с Арменией, активизировались, особенно, летом 1986 года.

Рассматривая роль женщин в период с 1985 по 1988 гг., однозначно можно сказать, что они проявили особый энтузиазм и участие и сыграли большую роль в общенациональном деле. Анализ событий показал, что с того момента, когда в СССР в результате изменений, обусловленных политикой “Перестройки”, начался новый этап национально-освободительной борьбы арцахцев, женщины, участвуя в этом деле, еще на подпольном этапе вошли в состав инициативных групп и способствовали тому, чтобы движение превратилось во всенародную борьбу. Это прежде всего было осуществлено широкой разъяснительной работой среди этнического армянского населения. Затем последовал поток петиций в Москву – советскому руководству, а в феврале 1988 года начались первые многолюдные митинги, демонстрации, шествия. Присоединившиеся к этому делу женщины, продвигая карабахскую проблему, требовали от вышестоящих органов советской власти решить ее в соответствии с демократическими требованиями и принципами самоопределения наций.

В 1988 г. в Карабахском движении женщины Арцаха проявили себя не только в качестве носителей идеалов и организаторов борьбы, но и как защитницы отчизны.

В упомянутый период их деятельность, в основном, проявилась в агитационных работах, благодаря которым подпольное движение превратилось в общенародное.

Ключевые слова – реформы, движение, национальный, женщины, демонстрация, политика, подписи, битва, народ, “Перестройка”.

WOMEN IN THE ARTSAKH MOVEMENT AT THE UNDERGROUND STAGE (1986-1988)

ISKUHI AVANESSYAN

Despite the fact that In the 1980s the economical and political crisis in USSR called for reforms, the situation was worsening especially in the second half of the 1980s. National issues throughout USSR acquired a specific significance in the years of the “Perestroyka”. Artsakh’s struggle to unite with Armenia or get independence then occupied the foreground. In fact, the struggle had started and never stopped since the creation of the Nagorno-Karabakh Autonomous Oblast (NKAO) in Azerbaijan SSR in 1923.

By studying the role played by Artsakh women in the national movement in the period from 1985-1988 it can be unambiguously noted that their extraordinary enthusiasm and spirit all through has given renewed vitality to the movement. At the rise women got involved with the Artsakh underground and then helped to transform it into a national movement.

At the beginning of the movement different steps were undertaken to contribute to the people’s information on the issue. Petitions for reuniting with Armenia to the Soviet Leaders followed, and then in February 1988 the first crowded meetings, demonstrations and marches took place.

The women participating in all these movements demanded from the higher authorities of the Soviet Empire to solve the problem in accordance with the cardinal principle in modern international law, the right of nations to self-determination.

During the Karabakh movement, started in 1988, Armenian women were among the ideologists, organizers, public and political figures, and defenders of their Motherland as well.

Key words – reforms, movement, national, women, demonstration, politics, collection of signatures, struggle, people, “Perestroyka”.

ԱՌԱՋԻՆ ԲՈՒՐԺՈՒԱԴԵՄՈՎԱՏԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՎՐԱՑ ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎՐԱ

ՍԱԹԵՆԻԿ ԱՎՈՅԱՆ

Ռուսական կայսրության կազմում մինչև 1811թ. վրացական եկեղեցին վայելում էր ներքին ինքնավարություն, սակայն 1811 թվականին Վրաստանում վերացվեց կաթողիկոսական համակարգը, և կազմավորվեց վրացական էկզարխաթը(1811-1917թթ.), որն անվերապահորեն ենթարկվում էր ռուսական ուղղափառ եկեղեցու Սուրբ Սինոդին:

1905թ. Ռուսաստանում սկսած առաջին բուրժուադեմոկրատական հեղափոխությունը (1905-1907թթ.) իր խոր հետքը թողեց նաև վրաց ժողովրդի եկեղեցական գիտակցության վրա: Վրացական ուղղափառ եկեղեցու շարքերում սկսեցին ուժեղանալ ազգային տարրերն ու միտումները: Եկեղեցին և նրա գործիչները դարձան վրաց ժողովրդի հասարակական կարծիքի ակնհայտ կարգավորողը՝ իրականացնելով հասարակության բոլոր շերտերի գաղափարական միավորման գործողությունը: Վրացական մասսայական գիտակցության մեջ կրոնը հանդես եկավ որպես գաղափարական կատալիզատոր: Վրաց հոգևոր գործիչների մեջ հասունացավ իրենց եկեղեցու՝ ինքնավարության վերականգնման անհրաժեշտության պահանջը, որոնք բացահայտորեն հակադրվեցին վրացական էկզարխությանը (եկեղեցական մարզ):

Վրացական եկեղեցու ինքնավարության կողմնակիցների շրջանում կային այնպիսի վճռական հոգևոր առաջնորդներ, ինչպիսիք էին՝ Սուփումի եպիսկոպոս Կիրիոնը և Գուրիա-Մինգրելիայի եպիսկոպոս Լեոնիդը: Նրանց գլխավորությամբ վրաց հոգևորականները 1905թ. մարտի 6-ին դիմում են Նախարարների խորհրդին՝ ներկայացնելով վրաց ժողովրդի անիրավ դրությունը: Նրանք վրաց ժողովրդի շրջանում թշնամական վերաբերմունքի առաջացումը կապում էին ռուսական հոգևոր-ոստիկանական վարչակազմի հետ, ինչը վրաց ժողովրդի շրջանում անվստահություն էր սերմանել Կովկասի կառավարության հանդեպ: Վրաց հոգևորականները պահանջում են վրացական և իմերեթական կաթողիկոսական համակարգի վերականգնում, Բաքվի, Ելիզավետպոլի, Երևանի նահանգների և Կարսի մարզի ոչ վրացի ուղղափառ հասարակությանը ենթարկել ռուսական եպիսկոպոսին, հեռացնել ռուս քահանաներին,

սարկավագներին՝ որպես հոտի լեզուն չիմացողների, իսկ եկեղեցաձխական դպրոցների ցածր դասարաններում ուսուցումն անցկացնել վրացերենով¹:

1905թ. մարտի 19-ին Քուլթայիսի հոգևոր ճեմարանում կայացավ Իմերեթիայի (Արևմտյան Վրաստան) թեմի հոգևոր պատգամավորների համագումարը: Համագումարը, նախարարների կոմիտեին ներկայացնելու համար, կազմեց պետիցիա՝ եկեղեցական կառավարման մեջ արմատական փոփոխություններ մտցնելու պահանջով²: Պետիցիայում (386 ստորագրությամբ) հեղինակները նշում էին, որ Կովկասում անկարգություններն ուղղված էին եկեղեցական ծառայողների, ողջ հոգևոր շերտերի դեմ: Պետիցիայի հեղինակները «սգում էին» վրաց կաթողիկոսի կորուստը, որն ինքնավարության ողջ շրջանում «ժողովրդի համար եղել էր անդավաճան ընկեր, հայր, սփոփիչ»³: Վերջում հոգևոր պատգամավորները խնդրում էին կաթողիկոսի գլխավորությամբ ճանաչել վրացական եկեղեցու անկախությունը, որը կընտրվեր ողջ վրաց ժողովրդի և հոգևորականության կողմից և կհաստատվեր բարձրագույն իշխանությամբ, թույլատրել եկեղեցական ծառայողների ընտրությունը, բարեփոխել դպրոցական, կրթական և քահանաների պատրաստման համակարգը, շնորհել խոսքի, մամուլի, հոգևորականների ժողովների ազատություն, եկեղեցին ազատել քաղաքական նպատակներին ծառայեցնելուց⁴: Սակայն պետիցիայի այս դրույթները խիստ քննադատության ենթարկվեցին Սուրբ Սինոդի կողմից:

Էկզարխ (ուղղափառ եկեղեցում առանձին եկեղեցական մարզի արքեպիսկոպոս) Ալեքսիյ I-ի թույլտվությամբ 1905թ. մայիսի 28-ին Թիֆլիսում գումարվեց վրաց հոգևորականության համագումարը, իբրև թե «վրացիների նյութական վիճակի և կարիքների մասին հարցերը քննարկելու համար»: Սակայն նախանշված հարցերի քննարկման փոխարեն համագումարն անցավ այլ, չնախատեսված հարցերի քննարկմանը: Այն է՝ վրաց հոգևորականության ազատագրումը ռուսական ուղղափառ եկեղեցու կախվածությունից: Հավաք-

¹ **Дякин В. С.** Национальный вопрос во внутренней политике царизма (XIX-начало XX вв), СПб., 1988, с. 656-657.

² Всеподданнейший отчет Обер-прокурора Святейшего Синода по ведомству православного исповедания за 1905-1907 гг., СПб., 1910, с. 166.

³ РГИА, ф. 821, оп. 10, д. 18, л 6-8.

⁴ **Кумпан Е. Н.** Проблема религиозного самоопределения на Кавказе в начале XX в. // Парадигмы и оценки Кавказской политики в прошлом и настоящем, Краснодар, 2013, с. 151.

վաճ հոգևորականությունը երդվեց ինքնավարության համար պայքարում աջակցել միմյանց, թիկունք կանգնել մեկը մյուսին⁵: Սակայն մայիսի 31-ին կազակների զինված ուժերով համագումարը ցրվեց, իսկ զիշերը վրաց հոգևորականությունը խուզարկվեց: Այս իրադարձությունները բուռն ռեակցիա առաջացրին հասարակության շրջանում:

Էկզարխության տարածքում վրաց հոգևորականության դրսևորած ակտիվությունը և նրանց առաջ քաշած պահանջները չէին կարող չանհանգրստացնել ցարական չինովնիկներին: Այդ կապակցությամբ 1905թ. հունիսի 8-ին Կովկասի փոխարքա Ի. Ի. Վորոնցով-Դաշկովին հասցեագրված նամակում իր անհանգստությունն է հայտնում Սուրբ Սինոդի օբեր-դատախազ Կ. Պ. Պոբեդոնոսցը: «Եթե գործը հասնի նրան, որ ռուսական կայսրության մեջ Թիֆլիսում լինեն վրացական կառավարում և ազգային ինքնավար վրացական եկեղեցի, ապա այդ ժամանակ էկզարխը կլինի վրացի, և բոլորը կլինեն վրացիներ: Բայց մինչ դա կլինի, անհրաժեշտ է պարզել հարցն ի՞նչ է»⁶:

Սակայն Վրաստանի նոր էկզարխ Նիկոլայի (Նալիմով) (1905-1906թթ.) նշանակումն ավելի խորացրեց հակամարտությունը վրաց հոգևորականության և էկզարխության վարչակազմի միջև: Փոփոխությունների կողմնակիցները նրան ինքնավարության հակառակորդ էին համարում: Անձամբ նոր էկզարխը Սուրբ Սինոդին ուղղված զեկույցում գրում է, որ «Ինքնավարության հարցը միայն քողարկում է Վրաստանի ազգային ինքնորոշման ձգտումները»: Միաժամանակ նա գտնում էր, որ եթե վրացական եկեղեցին ուզում է ինքնավար լինել, ապա չկան կանոնական հիմքեր նրան մերժելու, «չկա նաև հնարավորություն վրացիներին համոզելու, որ իրենց եկեղեցու համար օգտակար է շարունակել սերտ կապը ռուսական եկեղեցու հետ, քանի որ այդ համոզմունքներում միշտ կկասկածվեն եսասիրական հիմքեր»⁷: Նիկոլայ Նալիմովը համոզված էր, որ ինքնավարությունը կվատթարացնի վրաց եկեղեցու դրությունը, քանի որ սեփական Սինոդ պահելը թանկ հաճույք էր: Սակայն դրանում վրացիները կարող էին համոզվել միայն սեփական փորձի հիման վրա:

1905թ. դեկտեմբերի 8-9-ը Թիֆլիսում կայացավ Վրաստանի համարյա բոլոր շրջաններից ժամանած հոգևոր պատգամավորների ժողովը: Ժողովի ընթացքում ընդունվեց ազգային-ազատագրական շարժումների հետ միասնա-

⁵ Всеподданнейший отчет обер-прокурора Святейшего Синода, с. 166.

⁶ Дякин В. С. Национальный вопрос во внутренней политике царизма, с. 682-683.

⁷ Նույն տեղում, էջ 684-685:

կան գործելու որոշումը: Հոգևոր ժողովն ընդունեց նաև «Վրացական եկեղեցու վերակառուցման նախագիծը», որով վրացական եկեղեցու տարածք էին կազմելու վրացիներով բնակեցված վայրերը՝ Թիֆլիսի և Քութայիսի նահանգները, Սուխումի, Բաթումի և Կարսի շրջանները: Նրա գլուխ պետք է կանգներ կաթողիկոսը: Վախենալով ինքնավարների շարժման թափից՝ կառավարությունը մարտավարական նպատակներով որոշակի զիջումների գնաց: Սուրբ Սինոդը որոշեց այդ հարցը փոխանցել Համառուսական ժողովի քննարկմանը, որի որոշմանը պետք է սպասեին վրաց բարձրաստիճան հոգևորականները: Սինոդը հենվում էր եկեղեցական օրենքների վրա՝ հիշատակելով, որ եկեղեցին ինքնավար հոջակելու համար պահանջվում է այն եկեղեցու թույլտվությունը, որի իրավասության մեջ է մտնում անկախություն խնդրող եկեղեցին⁸:

1906թ. հունվար-փետրվար ամիսներին Սուրբ Սինոդում այլ թեմաների հետ մեկտեղ քննարկվեց նաև վրացական եկեղեցական հարցը: Այդ նպատակով Սուրբ Սինոդին կից ստեղծվեց Հատուկ խորհրդակցությունը, որի նախագահ նշանակվեց նախկին էկզարխ միտրոպոլիտ Վլադիմիրը: Հատուկ խորհրդակցության կազմի մեջ մտան նախկին էկզարխ Ֆլավիանը, գործող էկզարխ Նիկոլայը (Նալիմով), օբեր-դատախազ Ալեքսեյ Դմիտրիևիչ Օբլենսկին (1905-1906թթ. ապրիլի 4) և նրա օգնականը, վրաց երկու եպիսկոպոսներ՝ Լեոնիդն ու Կիրիլոն⁹: Խորհրդակցությունը քննարկեց էկզարխության եկեղեցական կառավարման մեջ առկա անկարգությունների հարցը: Հարց բարձրացվեց այն մասին, որ եպիսկոպոսները էկզարխությունում չունեն սեփական կոնսիստորիա (եկեղեցական վարչական հիմնարկ) և կախված են վրաց-իմերեթական սինոդական գրասենյակից, որը ոչ կանոնական հաստատություն էր և գործելով որպես վարչական հաստատություն՝ սահմանափակում էր եպիսկոպոսների իրավունքները: Վրաց բարձրաստիճան հոգևորականների հաշվետվությունում նշվում էր, որ էկզարխության հոգևոր հաստատությունները չեն համապատասխանում իրենց նշանակությանը, դասավանդումն անցկացվում է հնացած դասագրքերով, որոնցում բավականաչափ տեղ չի հատկացվում վրացերենին, ինչի հետևանքով էլ հոգևորականությունը պատրաստ չի լինում իր հոտին ծառայելուն, քանի որ նրանք ավարտում են ճեմարանական դասընթացը՝ առանց իմանալու վրաց եկեղեցական լեզուն: Հոգևորականները գտնվում էին նյութապես անապահով վիճակում: Հոտի

⁸ Скурат К. Е. История Поместных Православных церквей, М., 1994, с. 31-32.

⁹ РГИА, ф. 796, оп. 186, д. 965, л. 27.

ներսում զգացվում էին պատվի պակասը, երբեմն անհավատությունը, ինչը, ըստ վրաց եպիսկոպոսների, կապված էր կրոնական տրամադրությունների անկման և սոցիալ-դեմոկրատական գաղափարների տարածման հետ¹⁰:

Վրացական էկզարխության եկեղեցական կառավարման մեջ և եկեղեցական կյանքում առաջացած անկարգությունները քննարկելուց հետո Խորհրդակցությունն անցավ այն միջոցների քննարկմանը, որոնք կարող էին հարթել այդ թերությունները, և որոնք հետո պետք է տրվեին Համառուսական եկեղեցական ժողովի դիտարկմանը: Առաջարկվեց մեղմ ծրագիր, որում մեծ ուշադրություն էր դարձվում տարածաշրջանի առանձնահատկություններին: Ընդունելով տեղացի եպիսկոպոսներին լիարժեք իշխանություն շնորհելու անհրաժեշտությունը՝ Խորհրդակցությունն առաջարկեց վրացական թեմը բաժանել երկու ինքնուրույն թեմերի՝ Կարսի և Թիֆլիսի, վրացական բոլոր թեմերը դարձնել ինքնուրույն: Կապված վրացերենի գործածման խնդրի հետ՝ Խորհրդակցությունը կանգ առավ այն հիմնական դրույթի վրա, որ եկեղեցական հովիվները պետք է իմանան տեղի պաշտամունքային լեզուն, որպեսզի ժամերգություններն անցկացնեն ակնաձանքով: Հատուկ խորհրդակցությունը ցանկալի համարեց նաև, հնարավորության սահմաններում, պետական գանձարանի հաշվին շարունակել հոգևորականների նյութական կարիքների բավարարումը: Ինչ վերաբերում էր հոտի ներսում արձանագրված անհավատության փաստին, ապա հույս հայտնվեց, որ հոգևորականների կարիքների աստիճանական բարելավումով, հոգևոր դպրոցների վերակազմավորումով կվերականգնվի և կամրանա հավատը Աստծո և սերը Սուրբ եկեղեցու նկատմամբ: Սակայն, Հատուկ խորհրդակցությանը մասնակցող վրաց եպիսկոպոսները՝ Կիրիոնը և Լեոնիդը, մերժեցին վրացական էկզարխության վերակազմավորման այս նախագիծը, քանի որ այն չէր նախատեսում ինքնավարության վերականգնումը: Ինքնավարության վերականգնման հարցը Հատուկ խորհրդակցությունում այդպես էլ չքննարկվեց¹¹:

Հանդես գալով էկզարխության վերակազմավորման նոր նախագծի դեմ՝ եպիսկոպոս Լեոնիդը (Օկոտպիիձե) արտահայտվեց առավել քան վճռորոշ. «Առաջարկվող միջոցները ամփոփ են, բայց չբուժող: Հանձնաժողովի կողմից հարցի բեմադրումը ցույց է տալիս, որ հավատքի, խղճի և եկեղեցական

¹⁰ Гамахария Джемал, Святой Священномученик Кирион II (Садзаглишвили) и Абхазия, Тбилиси, 2006, с. 105-106.

¹¹ РГИА, ф. 796, оп. 186, д. 965, л. 14.

կառավարման ազատությանը, որոնց անխոչընդոտ վայելում են հարևանները՝ հայերը, մուսուլմանները, կաթոլիկները, վրացական եկեղեցին կարող է հասնել միայն խզելով կապը ռուսական եկեղեցու հետ»¹²:

Եպիսկոպոս Կիրիոնը (Սադգելաձե) ևս դեմ արտահայտվեց վրացական թեմերի վերակազմավորման նախագծին՝ համառորեն բացատրելով դրա բացասական հետևանքները: «Վրաստանում եկեղեցական տրամադրությունները... չեն կարող վերացվել կիսատ միջոցներով, որը մշակվում է Սուրբ Սինդիկն կից Հատուկ խորհրդակցության կողմից... վրացական եկեղեցին առանձին ինքնուրույն միավորների մասնատելու նոր նախագիծը նրանց միջև կթուլացնի դարերով իրար կապող ազգային, բարեկամության հիմքերը, եկեղեցական ընդհանուր ավանդույթները... վերացնելով ապագայում նրանց միջև ցանկացած ընդհանուր եկեղեցական հարցերի քննարկման հնարավորությունը, ինչպիսիք են՝ տեղական ժողովի հրավիրումը, թեմական ազատ ամբիոններում թեկնածուների ընտրությունը... ընդհանուր բնույթի բոլոր այն հարցերը, որոնց լուծումը վեր է յուրաքանչյուր մասնավոր թեմի ուժից և դուրս՝ իրավասությունից»: Վերջում Կիրիոնը տալիս է խնդրի լուծման իր մոտեցումը. «Միայն ժողովրդի կողմից ընտրված վրացական եկեղեցու առաջնորդ կաթողիկոսը... կարող է բուժել հարազատ եկեղեցու վերքերը, վերակենդանացնել նրան և հանդարտել իր բազմաչարչար հոտին»¹³: Այնուամենայնիվ, պետք է նշել, որ Էկզարխությունը, որքան վատն էլ այն լինե, ծայրահեղ դեպքում պահպանում էր վրացական եկեղեցու միասնականության գաղափարն ու փաստը, ինչը լավ հասկանում էին վրաց հոգևորականները: Ասել է թե Էկզարխությունը վրացական ինքնավար եկեղեցու կառուցման համար իրենից տրամաբանական հիմք էր ներկայացնում, և նրա ոչնչացումը լուրջ անհաջողություն կլինե, ինքնավարական գաղափարների համար:

Վրաց եկեղեցու ինքնավարության վերականգնման համար պայքարը շարունակվեց նախախորհրդարանի նիստերի ժամանակ, սակայն այն ևս ոչինչ չտվեց վրաց հոգևորականությանը: Հենց որ հեղափոխությունը կայսրությունում մարեց (1907թ.), վրաց եկեղեցու ինքնավարության վերականգնման հարցը ևս աստիճանաբար դուրս մղվեց օրակարգից:

¹² РГИА, ф. 796, оп. 186, д. 965, л. 30.

¹³ РГИА, ф. 796, оп. 186, д. 965, л. 29 об -30.

ԱՄՓՈՓՈՒՄ

Վրացական եկեղեցու ինքնավարության վերականգնման պահանջների առաջացումը սերտորեն կապված էր 1905թ. կայսրությունում առաջացած քաղաքական իրավիճակի հետ, երբ ցարական ռեժիմը հայտնվեց ճգնաժամի եզրին, իսկ ծայրամասերի ժողովուրդները սկսեցին ակտիվորեն հանդես գալ իշխանության դեմ: Հատկանշական է, որ մինչև 1905թ. վրացական եկեղեցում կաթողիկոսական համակարգի վերականգնման մասին բաց խոսակցություններ չկային: Այս հանգամանքը միայն փաստում է, որ ռուսական եկեղեցական վարչակազմից վրաց հոգևորականության դժգոհությունների բացահայտ արտահայտումն ուղղակիորեն կապված էր առաջին բուրժուադեմոկրատական հեղափոխության հետ:

Բանալի բաներ – էկզարխ, էկզարխություն, վրաց հոգևորականություն, ռուսական կայսրություն, հեղափոխություն, ինքնավար եկեղեցի:

ВЛИЯНИЕ ПЕРВОЙ БУРЖУАЗНО-ДЕМОКРАТИЧЕСКОЙ РЕВОЛЮЦИИ НА ГРУЗИНСКОЕ ДУХОВЕНСТВО

САТЕНИК АВОЯН

Требование грузинской церкви о восстановлении автономии было тесно связано с политическими событиями 1905 г., когда царская власть была на грани кризиса, а народности окраины начали активно выступать против правительства. До 1905 года в грузинской церкви не было открытых розговоров о восстановлении церковной автономии. Этот факт подтверждает, что открытое недовольство грузинского духовенства русской церковной администрацией непосредственно было связано с буржуазно-демократической революцией.

Ключевые слова – экзарх, экзархат, грузинское духовенство, российская империя, революция, автономная церковь.

THE IMPACT OF THE FIRST BOURGOIS-DEMOCRATIC REVOLUTION ON THE GEORGIAN CLERGY

SATENIK AVOYAN

The claims to restore the autocephaly of the Georgian Church started in 1905. This was closely connected to the political situation of the Russian Empire, which was then in crisis and the peoples of the peripheral areas of the empire rebelled against the authorities.

It is noteworthy that till 1905 there were no calls heard for restoring the autocephaly of the Georgian Orthodox Church. This proves that the overt resentment of the Georgian clergy was directly associated with the first bourgeois-democratic revolution.

Key words – ekzarkh, exarchate, the Georgian clergy, the Russian Empire, revolution, an autocephalous church.

ՄՇԱԿՈՒՅԹ-ԱՌՕՐԵԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՓՈԽԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ԱՐԴԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐՈՒՄ¹

ՄԵԼԻՆԵ ԹՈՐՈՍՅԱՆ

Այս հոդվածում մենք քննության ենք առնում այն առանցքային հարցը, թե որքանով են սովորական մարդիկ իրենց առօրյա գործողություններն ընկալում իբրև մշակութային: Հոդվածի նպատակից բխող մյուս հարցադրումներն են՝ ի՞նչ չափով է կարևորվում մշակույթի դերն առօրյայի կազմակերպման մեջ, և ի՞նչ գործոններ են նպաստել նման ընկալման ձևավորմանը:

Առօրեականության և մշակույթի փոխառնչությունների դիտարկումն արդիական է նրանով, որ հնարավորություն է ընձեռում հասկանալու և բացատրելու մարդկային կյանքում տեղի ունեցող գրեթե բոլոր գործընթացները: Իսնդիրն այս տեսանկյունից դիտարկում է Է. Օռլովը: Համաձայն հեղինակի՝ մասնագիտական գործունեության յուրաքանչյուր ոլորտի համապատասխանում է առօրյայի որոշակի ոլորտ: Այսպես, տնտեսական մշակույթի սոցիալական կազմակերպման ոլորտին համապատասխանում է տնային տնտեսությունը, որը մտնում է առօրյա կյանքի կազմակերպման ոլորտի մեջ: Քաղաքական մշակույթին համապատասխանում են միջանձնային և ոչ ֆորմալ խմբային հարաբերությունները, իրավականին՝ սովորույթներն ու բարոյական նորմերը: Տարբեր կրոնական ոլորտների գիտելիքներին առօրյա մշակույթում համապատասխանում են սնահավատությունները, մասնագիտական արվեստին՝ կենցաղային գեղագիտությունը, ժամանցը, փիլիսոփայական պատկերացումներին համապատասխանում է կենցաղային աշխարհաճանաչողությունը, գիտական գիտելիքին՝ պրակտիկ փորձը և այլն²:

¹ «Ընկալում» հասկացության վերաբերյալ մեզ համար առաջնորդող է Դ. Կլոֆի և Մ. Փարկի մոտեցումը, քանի որ վերջինները, լինելով խաչամշակութային հետազոտողներ, տվել են ընկալման վերաբերյալ ամենաընդարձակ և որոշակի իմաստով մշակութային սահմանում: Նրանք ընկալումը ձևակերպում են իբրև «ներքին գործընթաց, որի օգնությամբ ընտրվում, դասակարգվում և մեկնաբանվում է արտաքին աշխարհից ստացված տեղեկատվությունը»: Տե՛ս Klopff D.W., Park M. Cross cultural communication: An introduction to fundamentals. Seoul: Hanshin Publishing Co., 1982. p. 21-29:

² Տե՛ս Шапинская Е. Культура повседневности в теоретических исследованиях // <http://1aya.ru/paper/art-388584.php>.

Այսինքն՝ առօրյա կյանքի սոցիալական փոխհարաբերությունների վերլուծությունը թույլ է տալիս մեկնաբանել ավելի խոշոր սոցիալական համակարգի և ինստիտուտների գործունեությունը: Փաստացի բոլոր մեծամասշտաբ սոցիալական համակարգերը հաշվարկված են սոցիալական փոխհարաբերությունների այն մոդելների վրա, որոնք ստեղծվում են անհատների կողմից առօրյա կյանքում:

Մեր աշխատանքի հետազոտական հիմքը կազմում են հարցաթերթային և խորացված հարցումները³, փաստաթղթի հետազոտությունը: Խորացված և հարցաթերթային հետազոտություններն իրականացվել են ՀՀ բոլոր մարզերում⁴, յուրաքանչյուր մարզում՝ մեկ քաղաքային և երկու գյուղական համայնքներում⁵: Խորացված և հարցաթերթային հարցումներն անցկացվել են հինգ տարիքային խմբերում՝ 1) 16-24 2) 25-34 3) 35-44 4) 45-64 5) 65 և բարձր: Հարցումների ընթացքում կարևորել ենք սոցիալ-ժողովրդագրական այնպիսի բնութագրեր, ինչպիսիք են՝ հարցվողների տարիքը, կրթությունը, զբաղվածության ոլորտը և բնակավայրը: Հարցազրույցների և հարցումների արդյունքում ստացված տվյալները վերլուծության են ենթարկվել «Սոցիալական գիտությունների վիճակագրական փաթեթ» (SPSS-Statistical Package for Social Science) ծրագրի միջոցով:

³ Խորացված և հարցաթերթային մեթոդների վերաբերյալ տե՛ս **Թադևոսյան Գ.**, Որակական սոցիալական հետազոտություններ, Երևան, «Երևանի համալսարանի հրատարակչություն», 2006, 374 էջ:

⁴ Հետազոտություններն անց են կացվել 2012-2014 թվականներին: Յուրաքանչյուր բնակավայրում անցկացվել է 10 որակական հարցազրույց՝ ամեն մարզի մեկ քաղաքային և մեկ գյուղական համայնքի պարագայում. այսպիսով, ընդհանուր առմամբ իրականացվել է 225 հարցազրույց: Բացառություն է Երևանը, որտեղ անցկացված որակական հարցազրույցների թիվը հասնում է 25-ի: Հարցաթերթային հարցումներն իրականացվել են գյուղական համայնքներում՝ 15, իսկ քաղաքներում՝ 25-ական (բացառությամբ Երևանի, որտեղ վերջիններիս թիվը կազմում է 75)՝ կազմելով ընդհանուր 475 (և ևս 39 լրացուցիչ) հարցազրույց: Ընդհանուր առմամբ իրականացվել է 739 հարցազրույց:

⁵ Սյունիքի մարզ՝ Գորիս, Քարահունջ, Շվանիձոր, Գեղարքունիքի մարզ՝ Գավառ, Ծովագյուղ, Գեղամավան, Վայոց ձորի մարզ՝ Եղեգնաձոր, Գլաձոր, Ջեղեա, Լոռու մարզ՝ Վանաձոր, Դարպաս, Շահումյան, Շիրակի մարզ՝ Գյումրի, Բավթա, Փանիկ, Արագածոտնի մարզ՝ Աշտարակ, Ն. Սասնաշեն, Արագած, Կոտայքի մարզ՝ Չարենցավան, Ջրաբեր, Պողոսյան, Տավուշի մարզ՝ Իջևան, Գետահովիտ, Ոսկեպար, Արմավիրի մարզ՝ Հոկտեմբերյան, Մերձավան, Զանֆիդա, Արարատի մարզ՝ Արտաշատ, Սայաթ-Նովա, Շահումյան և Երևան: Լրացուցիչ նյութեր՝ քաղաք Սպիտակ (Լոռու մարզ) և Քարահունջ գյուղ (Սյունիքի մարզ):

Աշխատանքում օգտագործված փաստաթղթային հետազոտության նյութերը՝ դասագրքեր և ԶԼՄ հրապարակումներ, ենթարկվել են բովանդակային և դիսկուրս վերլուծության: ԶԼՄ-ներից⁶ տպագիր և էլեկտրոնային մամուլից, ընտրվել են հարցվողների կողմից ամենաշատ ընթերցված առաջին երեք թերթերը՝ «Ազգ», «Առավոտ» և համացանցային լրատվական կայքերի հայալեզու էջերից՝ News.am:

Քանի որ հարցվողների մեջ որոշակի թիվ է կազմում նաև խորհրդային ժամանակաշրջանում ծնված, կրթություն, դաստիարակություն և տեղեկատվություն ստացած սերունդը, և որոնց ընկալման ձևավորման վրա ազդեցություն են ունեցել խորհրդային տեղեկատվական միջոցները, այդ իսկ պատճառով անդրադարձել ենք նաև այդ ժամանակաշրջանի մամուլին և դպրոցական դասագրքերին: Խորհրդային ժամանակաշրջանի մամուլից անդրադարձել ենք այդ ժամանակաշրջանում ամենից տարածված երկու թերթերի՝ «Ավանգարդ» և «Սովետական Հայաստան»⁷:

Ընկալման ձևավորման վրա զորեղ ազդեցություն ունեցող միջոցներից են, անշուշտ, կրթական համակարգը և հատկապես միջնակարգ կրթական համակարգը: Մշակույթ-առօրյա կապը հանրային ընկալումներում ուսումնասիրելու նպատակով անդրադարձել ենք նաև դպրոցական դասագրքերի վերլուծությանը⁸:

Հետազոտված նյութերի վերլուծության համար կիրառվել են դիսկուրս⁹

⁶ ԶԼՄ-ներից անդրադարձել ենք մամուլին, քանի որ հարցվողների կողմից այն առավել շատ է նշվել որպես տեղեկատվական միջոց:

⁷ «Ավանգարդ» և «Սովետական Հայաստան» թերթերի առավել տարածված լինելու եզրահանգմանը եկել ենք փորձագիտական հարցումների արդյունքում: Հետազոտությանը մասնակցած փորձագետներն են՝ Մ. Հարությունյան՝ անկախ մեդիա փորձագետ, լրագրող, Երևանի մամուլի ակումբի փորձագետ, Ա. Թադևոսյան՝ ազգագրագետ, ՀՀ ԳԱԱ գիտաշխատող, Վ. Մարտիրոսյան՝ սյունակագիր Lragir.am և Media.am վեբկայքերում, գրող, Ա. Շիրինյան՝ հեռուստառեժիսոր, Մ. Գալստյան՝ էթնոսոցիոլոգ, ՀՀ ԳԱԱ ավագ գիտաշխատող, Հ. Սարգսյան՝ ՀՀ ԳԱԱ գիտաշխատող:

⁸ Բովանդակային վերլուծության համար ընտրվել են ՀՀ հանրակրթական հաստատությունների 4-10-րդ դասարանների համար նախատեսված դասագրքերը՝ երաժշտագիտություն, մայրենի, գրականություն, հայրենագիտություն, հայոց պատմություն, հին աշխարհի պատմություն, համաշխարհային պատմություն, հայոց եկեղեցու պատմություն, հասարակագիտություն, անգլերեն, ռուսաց լեզու: Իսկ խորհրդային ժամանակաշրջանի պարագայում՝ 8-10-րդ դասարանների նորագույն պատմություն, հայ ժողովրդի պատմություն, նոր պատմություն և գրականություն դասագրքերը:

⁹ Դիսկուրսի վերաբերյալ տե՛ս **Йоргенсен М., Филлипп Л.** Дискурс анализ. Теория и

և բովանդակային վերլուծության¹⁰ մեթոդները, կոնստրուկտիվ ստրուկտուրալիզմի¹¹ մեթոդը: Աշխատանքի համար այս մեթոդների ընտրությունը կատարվել է՝ ելնելով աշխատանքի նպատակից և բնույթից, նշված մեթոդները համադրելու հնարավորությունից: Բացի այդ, այս մեթոդներն աշխատանքը բազմակողմանի վերլուծելու հնարավորություն են տալիս:

Մեզ համար կարևոր հարցադրումներից մեկն, անշուշտ, այն է, թե ինչպես է մշակույթի ընկալումն ազդում առօրեական վարքի վրա: Դա պարզելու համար նախ տեսնենք, թե ինչպես է մեզանից յուրաքանչյուրը մեկնաբանում բոլորի համար ընդհանուր սոցիալական աշխարհը, որում նա ապրում է և գործում որպես մարդ՝ «ուրիշ» մարդկանց շարքում, աշխարհը, որը ինքը հասկանում է որպես իր գործողությունների և կողմնորոշումների դաշտ՝ կազմակերպված իր անհատականության շուրջը հատուկ ձևով: Նաև պետք է նկատի ունենալ, որ սոցիալական աշխարհը համարվում է «ուրիշ» մարդկանց գործողությունների դաշտ՝ կազմակերպված իրենց տեսանկյունից:

Հիմնվելով մեր հետազոտության նյութերի վրա, մասնավորապես դրանցում անմիջականորեն երևակվող մշակույթի և առօրեականության կապին, նշենք, որ այդ կապի ընկալումը պարզելու համար հարցվողներին առաջարկվել է նկարագրել գործունեություն, որը կարելի է համարել մշակութային: Ինչպես պարզվում է հարցման արդյունքներից, հարցվողները որոշակի դժվարություններ ունեն առօրեական գործունեությունը մշակույթի հետ կապելու առումով: Այսպես, հարցման մասնակիցների գերակշիռ մասը (65.3%-ը) ընդհանրապես չի կարողացել նկարագրել որևէ մշակութային գործունեություն (իսկ մշակութային գործունեություն նշողները (20.4%-ը) որպես այդպիսին

метод. Харьков, Изд-во «Гуманитарный Центр», 2008, 352 с.; **Макаров М.** Основы теории дискурса. М., Изд-во «Гнозис», 2003, 280 с.; Современные теории дискурса: мультидисциплинарный анализ. Серия «Дискурсология». Екатеринбург, Изд-во «Дискурс-Пи», 2006, 177 с.

¹⁰ Տե՛ս **Թադևոսյան Գ.**, Որակական սոցիալական հետազոտություններ, Երևան, «Երևանի համալսարանի հրատարակչություն», 2006, 374 էջ: **Семенова В.** Качественные методы: Введение в Гуманистическую Социологию. М., Изд-во «Добросвет», 1998, 298 с.; **Олейник А.** Триангуляция в контент-анализе. Вопросы методологии и эмпирическая проверка // Социологические исследования СОЦИС, 2009, № 02, с. 65-78.

¹¹ Տե՛ս **Бурдые П.** Практический смысл. СПб., Изд-во «Алетейя», 2001, 562 с.; **Бурдые П.**, Формы капитала. Электронный журнал «Экономическая социология». Ред. журнала Радаев В. Том 3, № 5, ноябрь 2002, с. 60-75. www.ecsoc.msses.ru.; **Бурдые П.**, Социология социального пространства. СПб., Изд-во «Алетейя», 2007, 288 с.

թվարկել են հիմնականում արվեստի ոլորտներ՝ երաժշտություն, թատրոն, նկարչություն, գրականություն և այլն): Հարցվողների միայն 1.7%-ն է կապել մշակույթն ու առօրեական վարքը՝ թվելով հետևյալը՝ «խոհանոց»¹², «մարդկային փոխհարաբերություն»¹³, «վար ու ցանք անել»¹⁴, «խոսել»¹⁵: Ուշագրավ է, որ մշակույթի սահմաններին վերաբերող հարցին տրված պատասխաններում («Ի՞նչ եք հասկանում «մշակույթ» ասելով») առօրեականության հետ կապված պատասխանները բավականին մեծ թիվ էին կազմում՝ «կին-ամուսին հարաբերություններ», «մարդկանց առօրյան», «ապրելաձև», «պատ շարել», «տրանսպորտ նստել», «գինի սարքել», «ծառի տնկում», «խանութներից օգտվել», «հագնվել», «շինարարություն», «սեղանի շուրջ նստելու ձև», «մեքենա վարել», «մարդկային փոխհարաբերություն» և այլն: Միևնույն ժամանակ, դիտարկելով առօրեական գործընթացները («խոհանոց», «մարդկային փոխհարաբերություն», «վար ու ցանք անել», «խոսել») որպես մշակութային գործունեություն սահմանած հարցվողների առօրյայի կազմակերպումը, ակնհայտ է դառնում, որ վերջիններիս պատասխանների և նրանց առօրյայի կազմակերպման միջև ոչ մի ընդհանրություն չկա: Նրանց առօրյան բաղկացած է երաժշտություն ունկնդրելուց, գիրք ընթերցելուց, հեռուստալուրեր դիտելուց, խաղեր խաղալուց, եկեղեցի, կինոթատրոն այցելելուց, զբոսնելուց, պարելուց, սոցիալական ցանցերում ժամանակ անցկացնելուց և այլն: Այսինքն՝ մշակույթի վերը թվարկված մեկնաբանությունները հետազոտության մասնակիցների կողմից տրվել են ոչ թե իրենց առօրյայի կազմակերպման փորձից ելնելով, այլ, հավանաբար, այդ մասին ստացած տեղեկատվությունների հիման վրա, որոնք դեռևս չեն ձևակերպվել որպես առօրեական գիտելիք:

Հարցումների և հարցազրույցների ընթացքում փորձել ենք նաև առօրյա-մշակույթ կապը վեր հանել ըստ այն միջոցառումների և իրադարձությունների, որոնց մասնակցել են, կամ որոնց մասին տեղեկացվել են հարցվողները: Հարցվողներին խնդրվել է պատասխանել հետևյալ հարցին. «Վերջին շրջանում տեղի ունեցած ի՞նչ միջոցառումների կամ իրադարձությունների եք մասնակցել (կամ տեղեկացել), որոնք, ըստ ձեզ, կարելի է համարել մշակութային»: Ինչպես սպասելի էր, մշակութային համարվող իրադարձություն-

¹² Դաշտային ազգագրական նյութեր (այսուհետ՝ ԴԱՆ), հարգազրույցների թղթապանակ N5 (այսուհետ՝ միայն թիվը), Երևան:

¹³ ԴԱՆ 5, Երևան:

¹⁴ ԴԱՆ 8, Շիրակի մարզ:

¹⁵ ԴԱՆ 8, Շիրակի մարզ:

ները հանրային ընկալումներում գերազանցապես ասոցացվում են արվեստի ոլորտներին առնչվող իրադարձությունների հետ՝ «Եվրատեսիլ», «Նանսենի քանդակը», «Անուշ-ի բեմադրությունը», «Միհրան Ծառուկյանի շնորհանդեսը», «Գ. Նժդեհի մասին կինոդիտում», «Պ. Սևակի ասմունքի երեկո», «Բերդ համայթի 50-ամյակը», «Ներսիկ Իսախրյանի համերգը» և նմանատիպ այլ պատասխաններ: Սակայն, հետազոտության մասնակիցները նշում են նաև առօրյայի կազմակերպման մաս հանդիսացող գործողություններ՝ «Երևան պատվելու», «ճանապարհների կառուցումը», «ընկերոջս հարսանիքը», «մասնակցել եմ ամառային ճամբարի», «մեր գյուղապետը փողոցները սարքեց», «ծնունդ»: Որպեսզի պարզենք՝ արդյո՞ք առօրյա գործողությունները որպես մշակութային իրադարձություն ընկալող հարցվողների գիտելիքը ձեռք է բերվել առօրյա սոցիալական փորձում, թե այն ուղղակի ստացված տեղեկատվություն է, վերոհիշյալ պատասխանները համեմատել ենք մշակույթի սահմանմանը վերաբերող պատասխանների հետ՝ «Ի՞նչ եք հասկանում «մշակույթ» ասելով»: Բացառությամբ՝ «մեր գյուղապետը փողոցները սարքեց» պատասխանը տվող հարցվողից, ով մշակույթը սահմանել է որպես «գյուղատնտեսություն», մնացած դեպքերում մշակույթն ընկալվում է որպես թատրոն, երգ-երաժշտություն, պար, նկարչություն, կինո, գիր-գրականություն, արվեստ, գրադարան: Փաստորեն փողոցների բարեկարգումը՝ որպես մշակութային միջոցառում, իսկ գյուղատնտեսությունը՝ որպես մշակութային ֆենոմեն, կարող են դիտվել իբրև առօրեական ընկալման դրսևորումներ¹⁶:

Հարցաթերթային և հարցազրույցների հարցերի շրջանակում առաջարկված հարցերից մեկը վերաբերում էր մշակույթի և տարբեր հիմնախնդիրների միջև կապի բացահայտմանը («Վերը նշվող երևույթներից որո՞նք են կապված մշակույթի հետ»), ինչը նույնպես անուղղակիորեն թույլ էր տալու բացահայտելու մշակույթի և առօրեականության միջև ենթադրվող կապի ընկալումը: Այսօր Հայաստանում առկա են մեր առօրյայի մասը կազմող մի շարք հիմնախնդիրներ, որոնց առաջացման և լուծման վերաբերյալ առաջարկվում են ամենատարբեր միջոցներ: Մեր հետազոտության շրջանակներում

¹⁶ «Փողոցների բարեկարգումը»՝ որպես մշակութային միջոցառում, կամ «գյուղատնտեսությունը»՝ որպես մշակութային ֆենոմեն, դիտարկելը միայն մեծ վերապահությամբ կարող են ընդունվել իբրև առօրեական ընկալման դրսևորումներ, քանի որ հարցվողներն իրենց պատասխաններում չեն մանրամասնել տվյալ գործունեությունների և մշակույթի փոխառնչությունները: Այդուհանդերձ, վերոհիշյալ պատասխանները վերաբերում են որոշակի հարցերի, և մենք չենք կարող առհասարակ դրանք անտեսել:

առանձնացրել ենք այն հիմնախնդիրները, որոնց մասին պարբերաբար բարձրաձայնվում են և՛ ՁԼՄ-ների, և՛ կառավարության, և՛ հասարակության կողմից: Դրանք են՝ ինքնասպանություն, ամուսնալուծությունների թվաճ, տնտեսական և էկոլոգիական ճգնաժամ, կոռուպցիա, արտագաղթ, ծնունդների թվի նվազում, աղքատություն, գործազրկություն, սիրտ-անոթային հիվանդությունների տարածում և կրթական համակարգում առկա խնդիրներ: Վերը թվարկված հիմնախնդիրները, ինչպես գիտենք, հանրային և նեղ մասնագիտական ընկալումներում հիմնականում դիտարկվում են որպես քաղաքական, սոցիալ-տնտեսական, ժողովրդագրական, առողջապահական խնդիրներ, մշակութային առնչություններից դուրս: Մենք փորձել ենք հիմնախնդիրը դիտարկել այլ դիսկուրսում՝ արդյո՞ք հանրային ընկալումներում գիտակցվում է դրանց և մշակութային գործոնի միջև կապը, և ի՞նչ չափով է այն գիտակցվում:

Ինչպես որ ակնկալելի էր, վերոհիշյալ հիմնախնդիրների մեծ մասի դեպքում հանրությունն ուղղակի կամ անուղղակի կերպով առանցքային է համարում պետության/ղեկավարության դերակատարությունը (պատասխանների 50.3%-ում), իսկ պատճառների շարքում հիմնականում սոցիալ-տնտեսական գործոնն է: Այսինքն՝ հիմնախնդրի ու մշակույթի միջև փոխառնչությունը չի գիտակցվում: Առօրեական խնդիրների մեջ պետության դերակատարության կարևորման միտումը, կարելի է ասել, գլխավորապես, կապված է անցյալի տոտալիտար կառավարման համակարգի հետ (ԽՍՀՄ), երբ իշխանական կառույցներում էին որոշվում ոչ միայն քաղաքական, տնտեսական ինստիտուտների հետ քաղաքացիների հարաբերվելու սկզբունքները, եղանակները, այլև որոշ դեպքերում նաև նրանց կենցաղի կազմակերպման նորմերը: Իրենց կենցաղի կազմակերպման մեջ պետության ունեցած կարևորագույն դերի հաբիթուալ ընկալումները շարունակվում են նաև այսօր: Հանրության կողմից որոշ դեպքերում այն ընկալվում է որպես կազմակերպված աշխարհ, որն իրենց «տրվել» է կամ «տրվում» է պետության/ղեկավարության կողմից: Եվ, բնականաբար, այդ կազմակերպված աշխարհի ցանկացած փոփոխության կամ խաթարման խնդիր կարող է լուծվել այն կազմակերպողի, տվյալ դեպքում՝ պետության կողմից:

Սակայն, պետք է նշել, որ հանրային ընկալումներում արդեն իսկ նկատվում են երկրում առկա որոշ հիմնախնդիրների և մշակույթի միջև ուղ-

ղակի և անուղղակի կապակցման փորձեր¹⁷: Ստորև ներկայացնենք մշակույթով փոխադարձանվարված հիմնախնդիրների մեկնաբանություններից մի քանիսը: Ինքնասպանություն՝ «Եթե մշակույթը խեղված է, նպաստում է դրան»¹⁸, ամուսնալուծությունների թվաճ՝ «Երեխա չունենալու դեպքում մեր մշակույթը թույլ է տալիս ամուսնալուծվել»¹⁹, տնտեսական ճգնաժամ՝ «Մշակույթը կապ ունի տնտեսության հետ»²⁰, կոռուպցիա՝ «Սովետական մշակութային երևույթ է, գալիս է այդ ժամանակից»²¹, էկոլոգիական ճգնաժամ՝ «Աղբը չթափելու մշակույթ ունեցող մարդը ոչ մի տեղ չի թափի, ոչ թե միայն իր տանը»²², արտագաղթ՝ «Այստեղ տաքսի չեն քշում, գնում են ուրիշ տեղ հանքերում են աշխատում, դա էլ է մշակույթ»²³, ծնունդների թվի նվազում՝ «Օտար մշակույթը բերել են մեր տուն ու քիչ են ունենում»²⁴, աղքատություն՝ «Մարդը հեշտ ունեցվածք ձեռք բերելու սովորություն ունի: Մշակույթի ձև է, Հայաստանում հավաքարարություն չեն անում, իսկ դրսում անում են»²⁵, գործազրկություն՝ «Մարդիկ վարժվում են, որ սաղին խաբեն, ասեն՝ չենք աշխատում, բայց գրանցված են իրականում»²⁶, սիրտ-անոթային հիվանդությունների տարածվածություն՝ «Մարդը ներս է գցում հոգսերը, մենթալիտետի հետ է կապված»²⁷, կրթական համակարգում առկա խնդիրներ՝ «Մեր մշակույթում կաշառակերությունը տարածված է և ազդում է կրթական համակարգի վրա»²⁸:

Հատկանշական է, որ վերը թվարկված հիմնախնդիրներն իբրև մշակութային երևույթներ ընկալելը մեծամասամբ հանդիպում է երիտասարդ տարիքի (16-34տ) հարցվողների պատասխաններում: Վերջիններս կազմում են հիմնախնդիրները որպես մշակութային երևույթներ դիտարկող հարցվողների 82.3%-ը, իսկ երիտասարդ պատասխանողների (16-34 տարեկան)՝ 70.6%-ը:

¹⁷ Հարցվողների 7.5%-ն է հիմնախնդիրները դիտարկել որպես մշակութային երևույթներ, ընդ որում բացառապես քաղաքային համայնքների բնակիչները:

¹⁸ ԴԱՆ 9, Սյունիքի մարզ:

¹⁹ ԴԱՆ 5, Երևան:

²⁰ ԴԱՆ 7, Կոտայքի մարզ:

²¹ ԴԱՆ 3, Արարատի մարզ:

²² ԴԱՆ 1, Արագածոտնի մարզ:

²³ ԴԱՆ 4, Գեղարքունիքի մարզ:

²⁴ ԴԱՆ 10, Վայոց Ձորի մարզ:

²⁵ ԴԱՆ 10, Վայոց Ձորի մարզ:

²⁶ ԴԱՆ 3, Արարատի մարզ:

²⁷ ԴԱՆ 5, Երևան:

²⁸ ԴԱՆ 10, Վայոց Ձորի մարզ:

Սա վկայում է այն մասին, որ մերօրյա կրթական համակարգը (հատկապես բարձրագույն) և տեղեկատվական միջոցների բազմազանությունն ու հասանելիությունը նպաստում են առավել լայն աշխարհայացքի, գիտելիքների ձևավորմանը և երևույթների, այդ թվում՝ մշակույթի վերաբերյալ ընկալումների փոփոխմանը: Բացի այդ, երիտասարդ սերնդի ընկալումներում միտում է նկատվում հիմնախնդիրների առաջացման և լուծման մեխանիզմները տեսնել պետական/կառավարման դիսկուրսից դուրս՝ ժողովրդի մեջ²⁹: Այս հանգամանքը թույլ է տալիս ենթադրելու, որ երիտասարդ սերնդի հարցվողներն ընկալում են իրենց ունեցած դերակատարությունն (իրենց) առօրյայի կազմակերպման մեջ:

Ինչպես նշում են Բերգերն ու Լուքմանը, առօրյա կյանքը իրականություն է, որը մեկնաբանվում է մարդկանց կողմից և ունի նրանց համար սուբյեկտիվ նշանակություն³⁰: Սովորական մարդն ապրում է աշխարհում, որը նրա համար համարվում է «իրական», չնայած դրա ոչ բոլոր ասպեկտներն են իր համար «իրական», և նա «գիտի», որ այդ աշխարհն ունի այսպիսի կամ այնպիսի բնութագրեր³¹: Իսկ ինչպե՞ս է կազմակերպվում մեր հետազոտության մասնակիցների առօրյան: Ընդհանրապես հարցվողների պատասխաններում առօրեականության այն հատվածը, որը վերաբերում է ժամանցի (ազատ ժամանակի) կազմակերպմանը, աչքի չի ընկնում բազմազանությամբ: Հարցվողներն ազատ ժամանակն անցկացնում են գիրք կարդալով (19%), հեռուստալուրեր (18%), ֆիլմեր դիտելով (8%) և երաժշտություն լսելով (10%): Պետք է արձանագրենք հետևյալ ուշագրավ հանգամանքը. մեր հետազոտության մասնակիցներն իրենց ժամանցն անցկացնում են գլխավորապես միայնակ՝ և՛ հեռուստալուրեր ու ֆիլմեր դիտելը, և՛ երաժշտություն լսելը, և՛ գրքեր կարդալը, և՛ սոցիալական ցանցերից օգտվելը: Հանրության կողմից որպես իրենց առօրյայի կազմակերպման եղանակներ նշվել են նաև՝ «ուղղակի նստել», «պառկել», «քնել», «ծխել», «խմել», «կարել», «հյուր գնալ», «երեխաների հետ զբաղվել» և այլն:

Կարելի է համարել, որ չնայած ներկա ժամանակներում առօրյայի կազմակերպման ձևերի բազմազանությանը, հարցվողները շարունակում են հետևել առօրյայի կազմակերպման այն ձևերին, որոնք իրենց «տրված» են (նախ-

²⁹ Որպես հիմնախնդիրների առաջացման պատճառ ժողովրդի ունեցած դերակատարությունը նշել են 16-35 տարեկանների 39.1%-ը, 45-64 տարեկանների 24%-ը:

³⁰ **Бергер П., Лукман Т.** Социальное конструирование реальности. Трактат по социологии знания. М., Изд-во «Медиум», 1995, с. 38.

³¹ Տե՛ս նույն տեղում, էջ 10:

նիների/ծնողների կողմից), քանի որ առօրյայի նման կազմակերպումը դիմացել է ժամանակի փորձություններին և չի պահանջում բացատրություններ: Մյուս կողմից, կարելի է եզրակացնել, որ հարցվողների շրջանում մշակույթի ընկալման (առօրյայի հետ չկապելու) սահմանափակությունը կապված է նաև վերջիններիս միօրինակ առօրյա ունենալու և կազմակերպելու հետ:

Առօրյայի կազմակերպման մեջ մշակույթի ունեցած դերակատարության մասին հանրային ընկալումների վերաբերյալ առավել ամբողջական պատկերացում կազմելու նպատակով դրանք միաժամանակ դիտարկենք երկու հարթություններում՝ որպես առօրյայի ցանկալի փոփոխություն (ինչը կցանկանային փոխել իրենց առօրյայում) և որպես մշակութային ակնկալվող փոփոխություն (ինչը կփոխեին մշակույթի ոլորտում): Մեր խնդիրն է պարզել, թե արդյո՞ք հարցվողներն իրենց իսկ կողմից առաջ քաշված մշակութային փոփոխությունները դիտում են որպես առօրյայի կազմակերպման փոփոխություն:

Որպես իրենց առօրյայում ակնկալվող հնարավոր փոփոխություններ («Ի՞նչը կցանկանայիք փոխել ձեր առօրյայում»)՝ հարցվողները Հայաստանի հետ կապված բարեփոխումների, ազատության ձեռքբերման, սեփական առողջության բարելավման և նմանատիպ այլ փոփոխությունների կողքին նշում են առօրյան կազմակերպող որոշիչներ՝ «կյանքի բնույթը», «ֆիտնեսի գնալ», «թոշակը բավարարի ապրելու համար», «ընդմիջմանը տուն գնալ», «բնակավայրի փոփոխություն», «ճամփորդություն», «բնակարանի ձեռքբերում», «ապրել, ինչպես անձն է ցանկանում, ոչ թե ինչպես հասարակությունն է թելադրում», «այգին մշակել», «տուն նորոգել», «մեքենա ունենալ», «ավելի շատ զբոսանքի գնալ», «ժամանցի լավացում» և այլն:

Հարցը հաջորդ՝ մշակութային փոփոխությունների հարթությունում դիտարկելիս («Ի՞նչ կոնկրետ քայլեր կձեռնարկեիք, եթե լինեիք մշակույթի նախարար») հանրային ընկալումներում վերստին հեռանում է մշակույթ-առօրյա կապը. ակնկալվող մշակութային փոփոխություններում չեն նշվում առօրյա գործընթացներ: Ինչպես մշակութային իրադարձությունների ընկալման դեպքում, այստեղ ևս, որպես մշակույթի ոլորտում իրականացվելիք միջոցառումներ, նշվում են գլխավորապես արվեստի ոլորտների բարեփոխման ծրագրեր: Միայն հարցվողների 1.7%-ն է մշակույթի ոլորտի փոփոխությունների ներքո նշել առօրյա խնդիրներ: Դրանք են՝ «երեխաների դաստիարակությունը

փոքր հասակից»³², «կսահմանել երթուղայիններում, սրճարաններում երաժշտության կոնկրետ ցանկ, որը պիտի միացված լիներ»³³, «ծանոթ-բարեկամը չգործի»³⁴, «փողերը գրպանս չեն դնի»³⁵: Սակայն, որպես մշակույթի ոլորտի փոփոխություն՝ վերը թվարկված առօրյա խնդիրներն առաջ քաշող հարցվողները նույն խնդիրները չեն նշում որպես իրենց առօրյայի ցանկայի փոփոխություն: Որպես այդպիսին նրանք, համապատասխանաբար, նշում են՝ «ոչ մի բան», «աշխատանքային ռեժիմ», «երեխաներիս ավելի երջանիկ տեսնեմ», «առողջություն լինի»: Այսինքն՝ առօրյայի կազմակերպման ձևերը հարցվողների կողմից դիտվում են մշակութային այն դեպքում, երբ դրանք անմիջականորեն չեն առնչվում իրենց առօրյայի կազմակերպմանը: Քանի որ, եթե առաջնորդվենք Շյուցի մոտեցմամբ, այն կազմակերպված աշխարհում, որում ծնվել և մեծացել են հարցման մասնակիցները, կրթության և դաստիարակության միջոցով նրանց չի տրվել գիտելիք այն մասին, որ իրենց առօրյայի կազմակերպումն ինքնին մշակութային երևույթ է:

Նկատի ունենալով վերոբերյալը՝ կարող ենք հաստատել, որ առօրեականության ուսումնասիրությունը կարող է հիմք հանդիսանալ ոչ միայն առօրյայում, այլ նաև դրանից դուրս գտնվող ինստիտուտներում առկա խնդիրները մեկնաբանելու համար՝ տնտեսական, քաղաքական, կրոնական, արվեստաբանական, փիլիսոփայական և այլն: Քանի որ առօրյա կյանքում անհատների կողմից ստեղծված փոխհարաբերությունների հիման վրա են ձևավորվում վերը թվարկված սոցիալական համակարգերը: Ինչպես առօրեականության հետ անմիջականորեն կապված հիմնախնդիրների, այնպես էլ առօրյա-կենցաղային խնդիրների առաջացման և լուծման մեխանիզմները հասկանալու համար նախևառաջ անհրաժեշտ է իմանալ, թե ինչպես է ձևավորվում առօրյան: Սակայն, սովորական մարդիկ իրենց առօրյան համարում են ինքն իրեն կառուցվող, և առօրյա կյանքի սովորական ընթացքի մեջ մարդը չի մեկնաբանում, թե ինչպես է տեղի ունենում այդ ամենը: Իր առօրյա կյանքում մարդը, կարելի է ասել, տեղ-տեղ է արտահայտվում իր գիտելիքների մասին, այսինքն՝ մեծամասամբ չի անդրադառնում իր առօրյայի վերաբերյալ գիտելիքների ձևավորմանը, իր աշխարհը կազմավորող տարրերի միջև հարաբերություններին, դրանք ղեկավարող սկզբունքներին:

³² ԴԱՆ 2, Արմավիրի մարզ:

³³ ԴԱՆ 5, Երևան:

³⁴ ԴԱՆ 4, Գեղարքունիքի մարզ:

³⁵ ԴԱՆ 7, Կոտայքի մարզ:

Այդ գիտելիքների մեծ մասը և դրանց օգտագործումը սոցիոմշակութային ժառանգության բաղկացուցիչ տարր է, որը տրվում է տվյալ մշակույթում ծնված երեխային նրա ծնողների և ուսուցիչների միջոցով: Այսինքն՝ առօրեականության ձևավորման վերաբերյալ գիտելիքը՝ այն, որ առօրյայի ձևավորումն ինքնին մշակութային երևույթ է, և որ այն ձևավորվում է տվյալ մշակութային միջավայրում ապրող մարդկանց կողմից, երեխային պետք է տրվի կրթական կամ տեղեկատվական համակարգերի միջոցներով: Սակայն, ինչպես փաստում են մեր կողմից հետազոտված դպրոցական դասագրքերի վերլուծությունները, վերջիններում մշակույթը-առօրյա կապը գրեթե արտահայտված չէ: Դպրոցական դասագրքերում (և՛ խորհրդային, և՛ հետխորհրդային) չի հանդիպում «մշակույթ» բառին ուղեկցող և առօրյան բնորոշող որևէ որոշյալ (օրինակ՝ «ծխելու մշակույթ», «խաղալու մշակույթ», «փողոցն անցնելու մշակույթ», «խոսելու մշակույթ», «լռելու մշակույթ» և այլն): Այսինքն՝ միջնակարգ կրթական համակարգում մշակույթն առօրեականության համատեքստում չի ներկայացվում: Եվ հարցվողների կողմից մշակույթ-առօրյա կապի ընկալման դժվարությունների պատճառներից մեկն էլ կրթական համակարգում այդ գիտելիքի ձեռքբերման բացակայությունն է: Մինչդեռ հետխորհրդային մամուլում³⁶ արդեն իսկ հանդիպում են մշակույթի և առօրյայի փոխկապակցման օրինակներ, ինչպես՝ «հեծանվային տրանսպորտի մշակույթ», «բանավեճի մշակույթ», «խմելու մշակույթ», «ուտելու մշակույթ», «փողոցային մշակույթ», «շնորհակալ լինելու մշակույթ», «հարևանի մշակույթ», «հաղորդակցության մշակույթ» և այլն: Սակայն, ինչպես արդեն նշեցինք, այս տեղեկատվությունները ձեռք չեն բերվել սոցիալականացման ընթացքում, ուստի և դժվարությամբ են դառնում մշակույթ-առօրեականություն կապը պայմանավորող գիտելիք:

Այսպիսով, մեր հետազոտությունը թույլ է տալիս փաստել, որ հանրային ընկալումներում աստիճանաբար ճանաչելի է դառնում մշակույթի համընդգրկուն լինելը, սակայն դեռևս արտահայտված չեն մշակույթ-առօրեականություն փոխառնչությունները: Հավանաբար պատճառն այն է, որ գիտելիքների այդ մասը դեռ գտնվում է ինկորպորացված կապիտալի³⁷ նախասկզբնական վիճակում և չի հասցրել վերածվել հաբիթուսի³⁸: Մյուս ակնհայտ հանգամանքն

³⁶ Խորհրդային ժամանակաշրջանի մեր կողմից դիտարկված մամուլում չեն հանդիպում մշակույթի և առօրյայի փոխկապակցման օրինակներ:

³⁷ Կապիտալ հասկացության վերաբերյալ տե՛ս **Бурдые П.** *Формы капитала*, с. 60-75.

³⁸ Հաբիթուսը, համաձայն այս հասկացության անդրադարձած հեղինակներից մեկի՝ Պ. Բուրդյեի, ձևակերպվում է իբրև «ձեռքբերովի կայուն նախահակումների համակարգ»:

այն է, որ այդուհանդերձ այդ գիտելիքները չեն ծնվել առօրեական սոցիալական փորձում, ուստիև առօրեական վարքը բնութագրող շատ արտահայտություններ, ինչպես օրինակ՝ «մեքենա վարել», «տրանսպորտ նստել», «խանութից օգտվել» և այլն, չեն ենթարկվում առավել բարձր մակարդակի վերացարկման, որտեղ կարող է նշմարվել մշակույթի հետ ունեցած դրանց կապը:

Այսինքն՝ մի կողմից «սովորական» մարդը հակված չէ իրեն ծանրաբեռնել այնպիսի հարցերով, թե ինչն է իր համար «իրական», և ինչ ինքը «գիտի», մինչև այն ժամանակ, երբ չի բախվում խնդրի հետ: Նա իր «իրականությունը» և իր «գիտելիքը» համարում է ինքն իրեն կառուցվող: Մյուս կողմից էլ՝ առօրյա կյանքն իրականության համատեքստում ունի ինքն իրեն կառուցվող բնույթ: Այն չի պահանջում ոչ մի լրացուցիչ ստուգում այն բանի, որ այն ուղղակի գոյություն ունի:

ԱՄՓՈՓՈՒՄ

Հոդվածում, քննության առնելով այն առանցքային հարցը, թե որքանով են սովորական մարդիկ իրենց առօրյա գործողություններն ընկալում իբրև մշակութային, հիմնվել ենք դաշտային ազգագրական ուսումնասիրությունների և հարցաթերթային հարցումների արդյունքում ձեռք բերված ծավալուն նյութերի վրա: Հետազոտության արդյունքում կարող ենք փաստել, որ սովորական մարդիկ իրենց առօրյա գործողությունները չեն ընկալում իբրև մշակութային: Ընկալումների պատճառների հստակեցման նպատակով իրականացվել է ընկալումների ձևավորման վրա առաջնային նշանակություն ունեցող միջոցների՝ դպրոցական հումանիտար դասագրքերի և ՋԼՄ-ների հրապարակումների բովանդակային վերլուծություն, որի արդյունքում եկել ենք այն եզրահանգման, որ մշակույթ-առօրյա փոխհարաբերակցության նման ընկալումների պատճառը վերոհիշյալ աղբյուրներում մշակույթ-առօրյա կապը ցույց տվող գիտելիքի ձեռքբերման բացակայությունն է:

Բանալի բաներ - առօրյա, մշակույթ, ընկալում, հաբիթուս, մշակութային կապիտալ:

Այդ նախահակումները չեն ենթադրում գիտակցական նպատակադրում, քանի որ դրանք ձևավորվում են երկարատև գործընթացում, զանազան անհրաժեշտությունների ու պատահականությունների, արգելքների ու հնարավորությունների հիման վրա, որոնց, ի վերջո, մարդը հարմարվում է և, իբրև տևական փորձ, հետագայում դժվարությամբ է հրաժարվում դրանցից: Հաբիթուսի մասին տե՛ս **Бурдые П.** Практический смысл, с. 45.

ВЗАИМООТНОШЕНИЯ КУЛЬТУРА-ПОВСЕДНЕВНОСТЬ В СОВРЕМЕННОМ ОБЩЕСТВЕННОМ ВОСПРИЯТИИ АРМЕНИИ

МЕЛИНЕ ТОРОСЯН

В данной статье рассматривается следующий ключевой вопрос: насколько обычные люди воспринимают свою повседневную деятельность в качестве культурной? Статья основана на богатом материале, собранном в ходе этнографических полевых исследований и анкетных опросов. Подытожив полученные данные, мы можем утверждать, что обычные люди свои повседневные действия не воспринимают как культурные. Чтобы понять причины подобных восприятий, нами был проведен контент-анализ тех ресурсов, которые имеют первостепенное влияние - школьных гуманитарных учебников и публикаций в СМИ. В результате, мы пришли к выводу, что причиной подобного восприятия является отсутствие в этих источниках информации о приобретении знаний в сфере культура-повседневность.

Ключевые слова – повседневность, культура, восприятие, габитус, культурный капитал.

CULTURE-EVERYDAY LIFE CORRELATION IN ARMENIAN SOCIETY

MELINE TOROSYAN

The key issue considered in this article is to find out to what extent people in Armenia perceive their daily life as cultural. The investigations are based on analysis of the rich material obtained from ethnographic fieldwork research and quantitative or in-depth interviews. The outcome of the observation is that people do not relate their everyday activities with culture. To clarify the causes analysis of the subject matter of humanities textbooks and mass Media publications as means of primary influence for the formation of perceptions in general have been reviewed. The results show the lack of the *correlation between culture-daily life* discipline in both. This gives ground to conclude that the main cause of such perception is their lack of knowledge of the discipline.

Key words – everyday life, culture, perception, habitus, cultural capital.

ԲՈՒԼՂԱՐԻԱՅԻ ԹՈՒՐՔԱԼԵԶՈՒ ՓՈՔՐԱՄԱՆՈՒԹՅԱՆ ՄԵԾ ԱՐՏԱԳԱՂԹԸ 1989 Թ.

ՎԱՂԱՐՇԱԿ ՀԱԿՈՐՅԱՆ

1908 թ. Բուլղարիայի անկախության հռչակումից ի վեր տարբեր ժամանակաշրջաններում դեպի Թուրքիա բուլղարաթուրքերի ներհոսքը պայմանավորված է եղել տնտեսական, սոցիալական, իսկ խորհրդային կարգերի հաստատումից հետո նաև քաղաքական հանգամանքներով:

Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտին Բուլղարիայում հաստատված խորհրդային կարգերն արմատական փոփոխությունների առիթ հանդիսացան ոչ միայն երկրի քաղաքական կյանքի, այլև միգրացիոն գործընթացների համար: Երկրի քաղաքացիների ազատ տեղաշարժի հնարավորությունը սահմանափակվեց հատկապես սահմանային խիստ վերահսկողության և անձնագրերի տրամադրման բարդ համակարգերի ներդրմամբ: Այս տարիներին Բուլղարիայից արտագաղթը դեպի այլ երկրներ պայմանավորված էր հիմնականում իշխանության մասնակցությամբ¹:

Հետպատերազմյան շրջանում Բուլղարիայից թուրք փոքրամասնության արտագաղթի հարցում իշխանությունն իր առաջին լուրջ մասնակցությունն ունեցավ, երբ 1949 թ. որոշում կայացրեց հողի պետականացման մասին: Այն առիթ հանդիսացավ, որպեսզի 1950-1951 թթ. հողագործությամբ զբաղվող շուրջ 154.000 թուրք քաղաքացիներ տեղափոխվեին Թուրքիա²: Այս շրջանում Բուլղարիայից թուրքերի գաղթը խթանում էր նաև սոցիալիզմի հետ Բուլղարիայում հաստատված աթեիզմը, ինչը սահմանափակում էր ինչպես քրիստոնյաների, այնպես էլ մահմեդականների կրոնական իրավունքները³:

Արտագաղթի երևույթը նկատելի էր, թեև ոչ մեծ չափերով, նաև 1970-ական թթ.: Այս շրջանում 33.000 էթնիկ թուրքեր, համաձայն երկկողմ համաձայնագրի, տեղափոխվեցին Թուրքիա:

¹ **Markova E.**, Effects of Migration on Sending Countries: Lessons from Bulgaria, GreeSE Paper №35, 2010, London, p. 3.

² **Çolak F.**, Bulgaristan türklerinin Türkiye'ye göç hareketi (1950-1951), Tarih Okulu, Sayı XIV, 2013, ss 120-121.

³ **Նահապետյան Հ.**, Բուլղարաթուրքեր. Անկարայի 5-րդ շարասյունը, «21-րդ ԴԱՐ», թիվ 1 (15), 2007թ., էջ 80:

Խորհրդային ժամանակաշրջանում բուլղարաթուրքերի վերջին և ամենամեծ արտագաղթը տեղի ունեցավ 1980-ական թթ. վերջին, որին իր լուրջ և անմիջական մասնակցությունը ցուցաբերեց Բուլղարիայի կառավարությունը՝ երկրի կոմկուսի առաջնորդ Տոդոր Ժիվկովի գլխավորությամբ:

Իշխանության կողմից նման կարևոր որոշման ընդունման համար առիթ հանդիսացան 1989 թ. մայիսի 20-21-ին երկրի ողջ տարածքում տեղի ունեցած բուլղարաթուրքերի բազմահազարանոց ցույցերը, որոնք ուղղված էին 1980-ական թթ. թուրքերի «բուլղարականացման» քաղաքականության դեմ⁴:

Բուլղարիայի թուրք փոքրամասնության խնդիրը վերջնականապես լուծելու նպատակով որոշում կայացվեց կազմակերպել վերջիններիս արտագաղթը դեպի Թուրքիայի Հանրապետություն: Նման որոշում կայացնելու պատճառը, ըստ Տ. Ժիվկովի, Բուլղարիայի թուրք բնակչության աննախադեպ աճն էր: Տ. Ժիվկովը ԽՍՀՄ առաջնորդ Մ. Գորբաչովին տեղեկացրել էր, որ թուրք բնակչության թիվը տարեկան աճում է 10-15 հազարի սահմաններում և անհրաժեշտ է կազմակերպել շուրջ 200-300.000, եթե հնարավոր է նույնիսկ 500.000 թուրքերի արտագաղթը⁵:

Այդ նպատակով 1989 թ. մայիսի 29-ին Տ. Ժիվկովն ազգային հեռուստատեսությամբ երկրի հասարակությանն ուղղված իր ելույթում կոչ արեց Թուրքիայի իշխանություններին բացել սահմանը հայրենակիցների առջև⁶: Ի պատասխան Բուլղարիայի կոմկուսի առաջնորդի՝ Թուրքիայի վարչապետ Թ. Օզալն իր համաձայնությունը տվեց սահմանի բացման հարցում՝ նշելով, որ Բուլղարիայի հետ սահմանը երբեք չի փակվի իր հայրենակիցների առջև⁷: Նման հայտարարությունը չափազանց տարօրինակ էր՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ սահմանները բացվելուց ընդամենը երկու ամիս անց Անկարան կրկին փակեց սահմանադռները թուրք գաղթականների առջև:

⁴ IV Türkiyeye göç, p. 45, http://www.tbmm.gov.tr/kultursanat/yayinlar/yayin073/073_00_010.pdf

⁵ Petkova L., The Ethnic Turks in Bulgaria: Social Integration and Impact on Bulgarian – Turkish Relations, 1947-2000, The Global Review of Ethnopolitics, Vol. 1, no. 4, June 2002, p 48.

⁶ Minorities in Southeast Europe, Turks of Bulgaria, Center for Documentation and Information on Minorities in Europe – Southeast Europe (CEDIME-SE), p. 8, <http://www.greek-helsinki.gr/english/reports/CEDIME-Reports-Minorities-in-Bulgaria.html>

⁷ Gündüz A., Bulgaristandan Türkiyeye türk göçü (1989 örneği), Kırklareli Üniversitesi Balkan Araştırmaları Uygulama ve Araştırma Merkezi, 2013, s 4, <http://www.kirklareli.edu.tr/download/by-files/46832543.html>

Բուլղարիայի հետ Թուրքիայի սահմանը պաշտոնապես բացվեց 1989 թ. հունիսի 3-ին: Ըստ Բուլղարիայի ներքին գործերի նախարարության տվյալների, որին 1989 թ. հունիսի 7-ին Բուլղարիայի կոմունիստական կուսակցության քաղխորհրդի նիստին հանձնարարվել էր զբաղվել բուլղարաթուրքերի արտագաղթի կազմակերպման աշխատանքներով, հուլիսի 6-ի դրությամբ Թուրքիա տեղափոխվելու դիմում էին ներկայացրել 370.291 թուրքեր, որից 89.321-ը Վառնայի, 124.543-ը Ռազգրադի, 42.438-ը Բուրգասի, 97.194-ը Հասկովի, 539-ը Սոֆիայի շրջաններից: 1989 թ. հուլիսի 7-ին արտերկրի անձնագիր ստացած 125.441 անձանցից 111.336-ը արդեն լքել էին Բուլղարիան⁸:

Ընդհանուր առմամբ մինչև օգոստոսի 21-ը Բուլղարիայից Թուրքիա էին անցել 300.000-ից ավելի թուրք մահմեդականներ⁹:

Սակայն այս թիվը կարող էր շատ ավելի մեծ լինել, եթե չլիներ Թ. Օզալի կողմից սահմանները փակելու մասին որոշումը: Վերջինս նման որոշում կայացնելու համար ուներ երկու հիմնական պատճառ: Նախ, ինչպես նշում էր Թ. Օզալը, Թուրքիան պատրաստ էր տարեկան ընդունելու առավելագույնը 30.000 քաղաքացու, մինչդեռ յուրաքանչյուր օր Բուլղարիայի սահմանն էին հատում մոտավորապես 4000 բուլղարաթուրքեր: Եվ վերջապես Թուրքիայի համար շահեկան չէր, որպեսզի Բուլղարիան վերջնականապես ազատվեր թուրքական համայնքից, քանզի կարող էր հետագայում լուրջ և կարևոր դեր ունենալ Թուրքիայի արտաքին քաղաքականության համար:

Բուլղարիայի իշխանության քաղաքականությունը խիստ քննադատության արժանացավ ԱՄՆ-ի կողմից: Միևնույն ժամանակ ԱՄՆ-ի Կոնգրեսը որոշում կայացրեց Թուրքիային հատկացնել 10 մլն դոլարի օգնություն՝ ներգաղթյալների հետ կապված խնդիրները լուծելու համար¹⁰: Վերջիններս սկզբնական շրջանում բնակեցվեցին Թուրքիայի սահմանամերձ շրջաններում ստեղծված ճամբարներում, իսկ հետագայում ներգաղթյալները վերաբնակեց-

⁸ **Muyhtar F.**, The Human Rights of Muslim in Bulgaria in law and politics since 1878, Bulgarian Helsinki Committee, Sofia, 2003, p. 82.

⁹ **Çetin T.**, Bulgaristandan Türkiyeye son Türk göçünün (1989), Sosyo-ekonomik etkileri, Turkish Studies, International Periodical for the Languages, Literature and History of Turkish or Turkic, Vol. 4/3, 2009, p. 615.

¹⁰ **Zahariev B.**, The Treatment of Ethnic Turks by the Bulgarian Communist Party and their Status Quo, p.19, <http://www.ithaca.edu/hs/depts/history/docs/histjourndocs/spring04/turkish-minorities.pdf>

վեցին երկրի տարբեր շրջաններում¹¹:

Բնակավայր	Մարդ	%
Ստամբուլ	84,255	30.0
Բուրսա	67,378	24.0
Թեքիրդաղ	30,828	11.0
Իզմիր	25,489	9.1
Քոջաեյի	12,276	4.3
Էսքիշեհիր	9,845	3.5
Քըրքլարեյի	7,045	2.5
Անկարա	5,157	1.8
Բալքեսիր	4,852	1.7
Մանիսա	3,899	1.4
Այլ	30,035	10.7
Ընդամենը	281,059	100.0

Հատկանշական է, որ թեև մասնագիտական գրականության մեջ գերակայում է այն կարծիքը, որ բուլղարաթուրքերի արտագաղթը Բուլղարիայի կառավարության քաղաքականության արդյունքն էր, այնուամենայնիվ կարևոր է նաև կարևոր հանգամանք, որը նպաստող գործոն հանդիսացավ արտագաղթի հարցում, և որը շատ ավելի քիչ է շրջանառվում խնդիրն ուսումնասիրողների շրջանում. դա «բոլլուքն» էր՝ բուլղարաթուրքերի պատկերացումներում առկա առատ և «ոսկե» երկիրը, որի մասին վերջիններս երազել էին տարիներ շարունակ, որտեղ, համոզված էին, պետք է գտնեին բարեկեցիկ կյանք և սոցիալական լավ պայմաններ¹²:

¹¹ Çetin T., նշվ. աշխ., էջ 620:

¹² Dimitrova D., Bulgarian Turkish Immigrants of 1989 in the Republic of Turkey, Between Adaptation and Nostalgia: The Bulgarian Turks in Turkey, http://www.omda.bg/public/imir/studies/nostalgia_2.html

Սակայն վերջիններին սպասելիքները չարդարացան, և շուտով ստիպված էին կանգնել լուրջ դժվարությունների առաջ: Պատճառը նախ և առաջ հասարակական լարվածությունն էր թուրք ներգաղթյալների նկատմամբ: Վերջիններս Թուրքիայի բնակիչների կողմից ընկալվում էին որպես օտարներ, «գյավուրներ», որոնք, ըստ թուրքերի, տարբերվում էին ինչպես իրենցից, այնպես էլ նախկինում Թուրքիա գաղթած բուլղարաթուրքերից¹³: Շատ դեպքերում այդ լարվածությունը վերաճում էր թշնամանքի, քանի որ շատերն իրենց գործազրկության հիմնական պատճառը համարում էին Բուլղարիայից Թուրքիա տեղափոխված թուրքերին¹⁴: Թուրքերենի վատ իմացությունը, գործազրկությունը, պատմամշակութային, կենցաղային տարբերությունները լրացուցիչ դժվարությունների և հասարակությունից մեկուսացման առիթ էին բուլղարաթուրքերի համար¹⁵:

Կրոնը ևս լրացուցիչ խոչընդոտ հանդիսացավ այն բուլղարաթուրքերի համար, ովքեր ցանկանում էին նոր կյանք սկսել Թուրքիայում: Բուլղարիայում երկար տարիներ աթեիզմի առկայությունը լուրջ ազդեցություն էր ունեցել թուրքական համայնքի վրա: Նրանցից շատերի համար մահմեդականության կանոններն օտար էին, իսկ նրանք, ովքեր իրենց համարում էին հավատացյալներ, ամենևին Դուրանի մոլի հետևորդներ չէին, իսկ մզկիթ հաճախելը նրանցից շատերի համար պարտադիր պայման չէր¹⁶: Վերոնշյալ դժվարությունները հիմնական պատճառ հանդիսացան, որպեսզի 1990 թ. Բուլղարիայում ժողովրդավարության հաստատումից հետո շուրջ 150.000 բուլղարաթուրքեր, որոնք կազմում էին արտագաղթողների մոտ 42 %-ը, վերադառնան Բուլղարիա¹⁷:

1989 թ. բուլղարաթուրքերի արտագաղթը, որն ամենամեծ միգրացիոն

¹³ **Zahariev B.**, նշվ. աշխ., էջ 23, <http://www.ithaca.edu/hs/depts/history/docs/histjourndocs/spring04/turkishminorities.pdf>

¹⁴ **Zhelyazkova A.**, The Social and Cultural Adaptation of Bilgarian Immigrants in Turkey, http://www.omda.bg/public/imir/studies/nostalgia_1.html

¹⁵ Zahariev B., նշվ. աշխ., էջ 23, <http://www.ithaca.edu/hs/depts/history/docs/histjourndocs/spring04/turkishminorities.pdf>

¹⁶ **Dimitrova D.**, Bulgarian Turkish Immigrants of 1989 in the Republic of Turkey, Between Adaptacion and Nostalgia: The Bulgarian Turks in Turkey, http://www.omda.bg/public/imir/studies/nostalgia_2.html

¹⁷ Minorities in Southeast Europe, Turks of Bulgaria, Center for Documentation and Information on Minorities in Europe - Southeast Europe (CEDIME-SE), p. 10, <http://www.greekhelsinki.gr/english/reports/CEDIME-Reports-Minorities-in-Bulgaria.html>

գործընթացն էր Բուլղարիայից Թուրքիա արտագաղթի պատմության ընթացքում, ճգնաժամային փուլի հասցրեց բուլղարա-թուրքական հարաբերությունները¹⁸: Երկու երկրների միջև առկա խնդիրը լուծելու նպատակով 1989 թ. հոկտեմբերի 30-ին Քուվեյթում սկսվեց բանակցային գործընթաց, որը բխում էր ինչպես Բուլղարիայի, այնպես էլ Թուրքիայի շահերից: Նախ, այն միջոց էր, որպեսզի Բուլղարիան վերականգնի իր վնասված միջազգային հեղինակությունը: Ինչ վերաբերում էր Թուրքիային, ապա վերջինիս անհրաժեշտ էր բանակցություններ սկսել Բուլղարիայի հետ, քանի որ շահագրգռված էր Բուլղարիայից թուրք փոքրամասնության արտագաղթի կասեցմամբ¹⁹: Բանակցությունների ընթացքում Թուրքիայի արտաքին գործերի նախարար Մեսութ Յըլմազը հանդես եկավ մի շարք առաջարկություններով, որոնք վերաբերում էին Բուլղարիայում թուրք փոքրամասնության կրոնի ազատ դավանմանը, թուրքերենի գործածմանը, մահմեդական անունների վերականգնմանը և այլն: Քուվեյթում երկու երկրների միջև սկսված բանակցությունները չտվեցին դրական արդյունք, քանի որ Բուլղարիան ի սկզբանե միտված էր ձգձգելու բուլղարաթուրքերի հետ կապված խնդիրների քննարկումը²⁰:

1989 թ. Բուլղարիայի թուրք փոքրամասնության արտագաղթը մեծ արձագանք գտավ միջազգային հանրության շրջանակներում: Բուլղարիայի իշխանությունների քաղաքականությունը քննադատեցին այնպիսի երկրներ, ինչպիսիք են ԱՄՆ-ը, Իսրայելը, նախկին Գերմանիայի Դեմոկրատական Հանրապետությունը, մի շարք իսլամական երկրներ, այնպիսի սոցիալիստական երկիր, ինչպիսին էր Ռումինիան և այլն²¹:

1989 թ. բուլղարաթուրքերի արտագաղթը բացասական ազդեցություն ունեցավ Բուլղարիայի ինչպես արտաքին, այնպես էլ ներքին քաղաքական կյանքի վրա: Թուրք բնակչության արտագաղթը լուրջ կորուստ էր երկրի տնտեսության, մասնավորապես գյուղատնտեսության համար: Մեծ էր վնասը հատկապես ծխախոտի արդյունաբերության ոլորտում, որը մեծ նշանակություն ուներ Բուլղարիայի արտահանման շուկայում: Ինչ վերաբերում է Թուրքիայում ապաստան գտած բուլղարաթուրքերին, ապա վերջիններս կարողացան իրենց երկքաղաքացիության շնորհիվ Բուլղարիայի հետագա ընտրություններում

¹⁸ **Demirtaş-Çoşkun B.**, Turkish-Bulgarian Relations in the Post-Cold War Era: The Exemplary Relationship in the Balkans, The Turkish Yearbook, Vol. XXXII, 2001, p. 27.

¹⁹ **Muyhtar F.**, The Human Rights of Muslim in Bulgaria in law and politics since 1878, p. 84,

²⁰ Նույն տեղում:

²¹ Նույն տեղում:

ապահովել թուրքական «Իրավունքների և ազատությունների շարժում» կուսակցության ինչպես բարձր ցուցանիշը, այնպես էլ ակտիվ մասնակցությունը երկրի ներքին և արտաքին քաղաքական կյանքին:

ԱՄՓՈՓՈՒՄ

1989 թ. գարնանը Բուլղարիայի ողջ տարածքում տեղի ունեցան բուլղարաթուրքերի բազմահազարանոց ցույցեր, որոնք ուղղված էին 1980-ական թթ. թուրքերի «բուլղարականացման» քաղաքականության դեմ: Խնդիրը վերջնականապես լուծելու նպատակով Բուլղարիայի կառավարությունը որոշում կայացրեց կազմակերպել թուրքերի արտագաղթը դեպի Թուրքիայի Հանրապետություն: Այդ նպատակով 1989 թ. մայիսի 29-ին Տ. Ժիվկովը կոչ արեց Թուրքիայի իշխանություններին բացել սահմանը հայրենակիցների առջև: Բուլղարիայի հետ Թուրքիայի սահմանը պաշտոնապես բացվեց 1989 թ. հունիսի 3-ին: Ընդհանուր առմամբ մինչև օգոստոսի 21-ը Բուլղարիայից Թուրքիա էին անցել 300.000-ից ավելի թուրք մահմեդականներ, որոնցից 100.000-ը հետագայում վերադարձան Բուլղարիա:

Բանալի բառեր – թուրք, Բուլղարիա, Թուրքիա, արտագաղթ, իշխանություն:

ВЕЛИКИЙ ИСХОД ТУРКОЯЗЫЧНОГО МЕНЬШИНСТВА БОЛГАРИИ В 1989 Г.

ВАГАРШАК АКОПЯН

Весной 1989 г. на территории всей Болгарии прошли многотысячные митинги болгарских турок, которые были направлены против политики «болгаризации» турок в 1980-х гг. Для окончательного решения проблемы правительство Болгарии приняло решение подготовить эмиграцию болгарских турок на территорию Турецкой Республики. С этой целью в 1989 г. Тодор Живков призвал турецкие власти открыть границу перед соотечественниками. Граница Турции официально открылась 3 июня 1989 г. В общем счете, до 21 августа из Болгарии в Турцию перебрались более 300.000 турецких мусульман, 100.000 из которых в дальнейшем вернулись в Болгарию.

Ключевые слова – турки, Болгария, Турция, эмиграция.

THE “REMOVAL” OF TURKISH-SPEAKING MINORITY OF BULGARIA IN 1989

VAGHARSHAK HAKOBYAN

In the spring of 1989 mass demonstrations of Bulgarian Turks took place to abolish the act to naturalize its Turkish residents. To resolve entirely this problem the Bulgarian government decided to “remove” the Turkish residents from its territory. For this reason, the Head of State of the People’s republic of Bulgaria, Todor Zhivkov on May 29, 1989 appealed to the Turkish government to accept its Turkish residents. The Turkish government agreed and opened its borders on the 3rd of June. By the 21st of August of 1989 more than 300 000 Bulgarian Turks had left the country. However, about 100 000 of them returned back to Bulgaria.

Key words – a turk, Bulgaria, Turkey, emigration, government.

ՍԵՖՅԱՆ ԻՐԱՆԻ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԱՐՏԱՑՈԼՈՒՄԸ «ԹԱԶՔԻՐԱԹ ԱԼ-ՄՈՒԼՈՒՔ» ԳՐՔՈՒՄ

ԺԻԼԲԵՐԹ ՄԵՇԲԱՆԲԱՐՅԱՆՍ (ԻՐԱՆ)

Սեֆյան պետության մեջ տնտեսական կառույցների կարևոր դեր էր վերապահված հարկահանման համակարգին: Շահ Աբաս Ա-ն, վերանայելով երկրի հարկային համակարգը, մտցրեց որոշ բարեփոխություններ, որոնք նկատելիորեն նվազեցրին հարկահանության գործում պետական պաշտոնյաների կամայականությունները, նպաստեցին երկրում տնտեսական գործունեության զարգացմանը: Շահ Աբաս Ա-ն, նվազեցնելով մաքսային գանձումները և նոր նավահանգիստների կառուցմամբ ու նրանց ժամանակակից սարքավորումներով օժտելով, նպաստեց արտաքին առևտրի զարգացմանը: Պետության բոլոր եկամուտները կենտրոնացվեցին պետական գանձարանում: Յուրաքանչյուր քաղաքում կամ վիլայեթում շահի կողմից նշանակված էր ֆինանսական գործակալ, որի պարտականությունը միայն հարկերի գանձումն էր, որը, սակայն, գանձված գումարը տնօրինելու իրավունք չուներ: Այն վիլայեթներում, որոնցում շահն անձնական հողատարածքներ չուներ, ստանում էր ռոսում կոչվող տուրքեր: Ռոսումը գույքային և նպարային որոշ պարագաներում գումարի տեսքով գանձվող տուրքերն էին, որոնք գանձվում էին համաձայն վիլայեթների հարկստությանը և հնարավորություններին: Դրանց մի մասը թանկարժեք իրեր էին, որ որպես նվեր «փիշեք» կամ նովրուզի¹ առիթներով նվիրվում էին արքունական գանձարանին²:

XVI–XVIII դդ.՝ թուրքական և պարսկական տիրապետությունների ժամանակաշրջանում, Հայաստանում հարկերն ու տուրքերը գանձվում էին նահանգային և կենտրոնական հարկային մատյաններում նախապես գոյություն ունեցող տվյալների հիման վրա: Հայաստանի տարածքում հայտնի են սեֆյան պետության կողմից զանազան առիթներով սահմանված հետևյալ հարկատեսակները՝ ա) «մալ» կամ «մալիյե» հարկը, որը գանձվում էր եկամտաբեր բոլոր տեսակի սեփականատիրական գույքից (այգիներ, բանջարանոցներ և այլն), բ) «չոբանբեկի» հարկը, որը կանխիկ դրամով գանձվում էր մանր եղջերավոր

¹ Պարսկական Նոր տարի:

² 1362/1983, باستانی پاریزی محمد ابراهیم، سیاست و اقتصاد عصر صفوی، تهران، էջ 139-164:

անասունների դիմաց, գ) «ջիգյա» էր կոչվում այլակրոնության հարկը կամ գլխահարկը, որը գանձվում էր յուրաքանչյուր չափահաս քրիստոնյա տղամարդուց, դ) «բիգար»՝ պարտադիր աշխատանքային պարհակության կատարումն էր ռազմական նշանակության օբյեկտների կառուցման մասով, ե) «սուրսաթներ» էր կոչվում այն հարկը, որը դրվում էր բնակչության վրա ռազմական արշավանքների ժամանակ, և որը հատուցվում էր բացառապես հացահատիկով և այլ մթերքներով, զ) «խիդմաթանե» հարկը, որը գանձվում էր իբրև վարձատրություն այն ծառայության դիմաց, երբ հարկահանները զանազան առիթներով գալիս էին գյուղ և զբաղվում հարկերի ճշտման և գանձման գործերով, է) «փիշքաշ» հարկը, որն ազգաբնակչությունից գանձվում էր որոշակի նվերների տեսքով, և այլ հարկեր³: Հիշյալ հարկատեսակների թիվը երբեմն գերազանցել էր երեք տասնյակը: Իսկ եթե դրանց գումարվեն համայնքի ներսում գյուղական ավագների, քեփխուդանների, մելիքների, ինչպես նաև եկեղեցու կողմից սահմանված հարկերն ու տուրքերը, ապա հարկերի ընդհանուր թվաքանակը գերազանցում էր հիսունը: Ժամանակաշրջանի հարկերից էին բնակչությունից գանձվող անասնահարկը, գլխահարկը, ջրի համար վճարվող հարկերը, ինչպես նաև արհեստավորներից գանձվող հարկերը: Գոյություն ունեին երկրի ճանապարհների օգտագործման համար վճարվող հարկեր:

Սեֆյան ժամանակաշրջանում հարկերի տեսակները թեև բազմաթիվ էին, սակայն միաժամանակ աշխատում էին հարկերից ազատվելու զանազան հնարավորություններ, որոնցից հատկապես հիշատակելի է սոյուրդալ կոչվող հարկերից ազատման եղանակը: Սոյուրդալն այն տարածքներն էին, որոնք նվիրվում էին անհատներին՝ ընդհանրապես ազատելով նրանց հարկերի վճարումից, որի դիմաց միայն պարտավորվում էին պատերազմի ժամանակ զինվոր տրամադրել արքունիքին⁴: Սեֆյան պետության հարկային համակարգի վերաբերյալ առավել ամբողջական տեղեկություններ պահպանվել են «Թագքիթաթ ալ-մուլուք» երկրում:

³ «Հայ ժողովրդի պատմություն», հ. 4, խմբ. կողմ.՝ Աղայան Է. Բ., Առաքելյան Բ. Ն., Գալոյան Գ. Ա., Երեմյան Ս. Տ., Խաչիկյան Լ. Ս., Հակոբյան Ա. Մ., Հովհաննիսյան Ա. Գ., Ներսիսյան Մ. Գ., Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1972, էջ 286-287:

⁴ نویدی داریوش، تغییرات اجتماعی-اقتصادی در ایران عصر صفوی (قرن شانزدهم و هفدهم میلادی)، ترجمه 1368 هاشم آقاچری، تهران، 1368 (Նավիդի Դարիուշ, Թադիրաթե էջթեմաի-էդթեսադի դար Իրանե ասրե Սաֆավի (դարնե շանզդահոմ վա հեֆդահոմե միլադի), թարգման Հաշեմե Աղա-ջարի, Թեհրան, 1368), էջ 152:

Այն Սեֆյան պետության ղեկավարման եղանակը և վարչական կառույցը նկարագրող կարևոր աղբյուրներից է⁵: Թագքիրաթ ալ-մուլուքի հինգերորդ գլխի ավարտին հեղինակը հավելվածի երեք հոդվածներով անդրադառնում է ժամանակաշրջանի մավաջեբներին (աշխատավարձ) և ռոսումին, ինչպես նաև պետական պաշտոնյաների, սահմանային ամիրների և վալիների աշխատավարձերին և նրանց ենթակա մուլագեմներին (աշխատողներին), այնուհետև վիլայեթների եկամուտներին (մադախեյին) և ծախսերին: Թագքիրաթ ալ-մուլուքը, ներկայացնելով պետության եկամուտները ձևավորող համակարգն ու համապատասխան պաշտոնյաներին վճարվող աշխատավարձերը, արտացոլում է սեֆյան հասարակության տնտեսական համակարգի կարևոր կողմերը և վճարվող հարկերի, աշխատավարձերի, թիուլի և սոյուրդալի վերաբերյալ արժեքավոր տվյալներ:

Գրքի հավելվածների առաջին հոդվածն ընդգրկում է տեղեկություններ ութսուն գլխավոր պաշտոնյաների աշխատավարձերի վերաբերյալ: Թագքիրաթ ալ-մուլուքում որոշ պաշտոնների եկամուտների և աշխատավարձերի մասին տեղեկություններ չեն պահպանվել, սակայն մի քանի պաշտոնների մասին, որոնց վերաբերյալ բնագրում նախապես նշումներ չեն եղել, լրացումներ են կատարվել: Համաձայն Թագքիրաթ ալ-մուլուքի՝ երկու դիվանների՝ խասեի և մամալեքի եկամուտները և աշխատավարձերը հետևյալ կերպ են բաշխվել: Առաջին հոդվածը ներկայացնում է մավաջեբե մոսթամեր, մաբալեղե մավաջեբ, ռոսում և ռոսումի բաշխման (բաժանման) եղանակը: Մավաջեբե մոսթամերը կանոնավոր վճարվող աշխատավարձեր էին, որոնք պաշտոնյաների հիմնական եկամուտներն էին, որը հաճախ մասնակի նաև վճարվում էր բնամթերքով (ցորեն և կտորեղեն), այդ կապակցությամբ նաև նշվում է բարաթով վճարվող եկամուտների մասին մատնանշելով, որ վճարման այդ եղանակը հիմնականում կիրառվում էր զինվորականների համար: Մաբալեղե մավաջեբը վերաբերում է վճարվող աշխատավարձի գումարին: Համաձայն Թագքիրաթ ալ-մուլուքի տվյալների՝ գոյություն է ունեցել մավաջեքի երեք կարգ՝ բարձր (500 թումանից ավելի), միջին (100-ից մինչև 500 թուման) և ցածր (100-ից պակաս մինչև 100 թուման):

Թագքիրաթ ալ-մուլուքից տեղեկանում ենք՝ ժամանակաշրջանի պաշ-

⁵ Համաձայն պահպանված տեղեկությունների՝ գիրքը պատրաստվել է 1726 թվականին Աշրաֆ Աֆղանի հրամանով և գրի առնվել Սեֆյան Պարսկաստանի վարչական կառույցի ծախքերին լավատեղյակ պաշտոնյա Միրզա Սամիայի միջոցով:

տոնյաների աշխատավարձերի հետ 1-ին աղյուսակում ընդգրկված են սեփյան դիվանի աշխատողներից 35 հոգու աշխատավարձերին վերաբերող տվյալները, որը ներկայացնում ենք ստորև⁶.

Աղյուսակ 1

Մավաջեբներ	
Պաշտոններ	Քանակը
Վազիր-ե ազամ (գլխավոր վեզիր)	823 թուման
Ղուրջիբաշի (ղուրջիների գլխավոր)	1491
Սադրե Ազամ (գլխավոր Սադր)	1360
Ամիր Շեքար (որսի գլխավոր)	1050
Թոֆանգչի բաշի (հրացանակիրների գլխավոր)	711
Ռեքաբդար (ծիու ոտնակ պահող, ձիապան)	539
Դիվան բեգի (դատարանի գլխավոր)	500
Թուփչի բաշի (հրետանու գլխավոր)	500
Ղուլլար աղասի (ծառաների գլխավոր)	(չի նշվել)
Հաքիմբաշի (արքունական բժիշկ)	400
Նազերե բոյոթաթ (արքունական արհեստանոցների գլխավոր)	360
Մաջլես նեվիս (արքունական քարտուղար)	330
Թուշմալբաշի (կարգադիր)	315
Մոհթասաբ մամալեք (մամալեք տարածքների դատավոր)	303
Մոսթուֆի մամալեք (հարկային նախարար)	302
Դարուղե Էսֆահան (Սպահանի ոստիկանապետ)	300
Իշիք աղասի Հարամ (հարեմի արարողապետ)	300
Նազերե Դաֆթար (գրասենյակի ղեկավար)	225
Ամիր ախոռե Զելո (արքունական ախոռապետ)	182
Մոնշի ալ մամալեք (շրջանների քարտուղար)	153
Նազերե դավաթ (վերահսկիչ)	150
Ամիր Ախոռ սահրա (քաղաքից դուրս գտնվող ախոռների արքունական ախոռապետ)	127
Ավարաջենեվիս-ե Ֆարս (հարկերի հավաքման և գրանցման պատասխանատու Ֆարս-ում)	118

⁶ Minorskii, Tadkhirat al-Muluk, նշվ. աշխ., էջ 165-167:

Մավաջերներ	
Պաշտոններ	Քանակը
Սահեբջամե շիրե խանե (արքունական քաղցրավենիքի պահեստի պատասխանատու)	100
Սահեբջամե արդար խանե (արքունական սպասքի պահեստների պատասխանատու)	87
Վեզիրներ (գործակալներ)	50-ից 100
Չաբեթենեվիս (նախագծեր գրող)	89
Ավարաջե նեվիս Արաղ (հարկերի հավաքման և գրանցման պատասխանատու Իրաք Աջամի-ում)	69
Սահեբջամե զինխանե (թամբերի պատասխանատու)	60
Սահեբջամե քեթաբխանե (գրադարանի պատասխանատու)	50
Սահեբջամե դիջաշիխանե(արքունական կարանոցի պատասխանատու)	40
Սահեբջամե նաղաշխանե (նկարիչների արհեստանոցի պատասխանատու)	30
Սահեբջամե միվեխանե (արքունական մրգերի պահեստների պատասխանատու)	20
Սահեբջամե թավայել (ախոռների պատասխանատու)	12
Սահեբջամե դանաթ (արքունիքի մսամթերքի պահեստների և մատակարարողների պատասխանատու)	8

Իրականում նշված եկամուտները պաշտոնյաների եկամտի այն հատվածն են, որ նրանք ստանում էին ի պաշտոնե: Նշված եկամուտները չի կարելի վերջնական համարել, քանի որ բարձրաստիճան պաշտոնյաների աշխատավարձերը շատ ավելի բարձր էին, որ, ի տարբերություն միջին աշխատավարձ ունեցող պաշտոնյաների, շատ մեծ էր, այնինչ միջին և ցածր աշխատավարձ ունեցող պաշտոնյաների աշխատավարձերի տարբերությունն ավելի տրամաբանական էր: Հավանաբար ստորին կարգի պաշտոնյաների համար նշված աշխատավարձերն իրենց պաշտոնի իրական քանակն են: Սա ապացուցում է, որ նրանք մեծ հնարավորություններ ունեին՝ առավել եկամուտներ ունենալու համար: Սակայն եղած տվյալների հիման վրա կարելի է հետևյալ եզրահանգումները կատարել: Աշխատավարձերի միջին չափը բարձրաստիճան պաշտոնյաների համար 768 թուման, միջին կարգի պաշտոնյաների համար՝ 255, իսկ ստորին կարգի պաշտոնյաների համար 53 թուման էր: Այս աղ-

բյուրի համաձայն՝ զինվորականների հինգ աստիճանների աշխատավարձը 4-ից 9 թումանի սահմաններում էր, և միջին աշխատավարձը 5,8 թուման էր հաշվվում: Սա նշանակում է, որ հասարակ զինվորների աշխատավարձն այլ պաշտոնյաների 7,5 տոկոսն էր կազմում: Վերը նշված բաժանումների հիման վրա կարելի է եզրակացնել, որ աշխատավարձերը բաշխվել են չափազանց անհավասար եղանակով⁷: Համար 2 աղյուսակում ներկայացվում են զինվորական չորս խմբերի ծախսերը:

Աղյուսակ 2

Համար	Զինվորական խմբերի ծախսեր	Քանակ	Միավոր
1	Աֆրադե թուփխանե(իրետանու անձնակազմ)	1642	թուման
2	Աֆրադե դուրչի (դուրչիների անձնակազմ)	25572	թուման
3	Ղոլամներ (ծառաներ)	18261	թուման
4	Աֆրադե թոֆանգչի (հրացանակիրների անձնակազմ)	21960	թուման
Ընդհանուր գումար		67175	թուման

Համաձայն Թագքիրաթ ալ-մուլուք-ի՝ պետության վարչական և ռազմական ծախսերը հասնում են մինչև 491986 թումանի և 5700 դինարի, որից 396792 թումանը տրամադրվում էր հաքիմներին և ամիրներին, իսկ վարչական կառույցում աշխատող ամիրների համար սահմանված աշխատավարձի ընդհանուր գումարը մոտավորապես 6047 թուման է հաշվվել: Մշտական վարձու բանակի զինծառայողների աշխատավարձերը կազմում էին ընդհանուր ծախսերի տասը տոկոսը:

Պաշտոնական աշխատողների աշխատավարձերի մի այլ տեսակն էլ կոչվում էր ռոսում: Դրանք զանազան արտադրություններից գանձված եկամուտներն են: Թագքիրաթ ալ-մուլուքում եկամուտները ևս ռոսում էին կոչվում: Ռոսումը երկու տեսակի էր, մի քանի բաժանմունքից գանձվող միասնական և միայն մեկ բաժնից գանձվող հատուկ ռոսումներ: Ամենից զարմանալի ռոսումն այն էր, որը գանձվում էր փիշքեշներից (նվերներից) և այն գումարներից,

⁷ نویدی داریوش (Նավիդի Դարիուշ), տե՛ս նույն տեղում, էջ 161:

որոնք նվիրվում էին շահին: Փիշքեշենվիսը (նվերներ ցանկագրողը) հատուկ տետրում արձանագրում էր ստացված բոլոր նվերները, գնահատում, ապա որոշում էր նրանց մոտավոր արժեքը, որից հետո միայն նվիրատուներին ուղեկցում էին շահի մոտ: Նվիրատուին ստիպում էին հավելյալ գումար վճարել՝ որպես նվիրատվության տուրք: Թագքիրաթ ալ-մուլուքի մեջ այդ տեսակի ռոսումը կոչվում էր տասին մեկ կամ տասին կես տոկոս ռոսում: Իսկ գանձված գումարը պետության վարչական կենտրոնական կառույցում, համաձայն աստիճանի, բաժանվում էր աշխատողների միջև: Նվիրված գույքերի արժեքի գնահատումը սովորաբար կատարվում էր ճշգրիտ, քանի որ նվիրատուները չէին ցանկանում հավելյալ տուրք վճարել կամ էլ նվիրատվության արժեքի ցածր գնահատման պատճառով արժեզրկել իրենց կողմից կատարված նվիրատվությունները: Հետաքրքիր է այն փաստը, որ այդ օրենքին էին ենթարկվում նույնիսկ օտարերկրյա դեսպանները: Ռոսումի բաշխման վերաբերյալ պահպանված տեղեկությունը, որը կապվում է ներքին վարչական ռոսումի հետ, թերի է, օրինակ՝ ամիրների թիովից գանձված հարկերի գումարը նշվել է թումանով, սակայն շահառու անհատների համար նկատի առնված բաժինը՝ դինարով: Մատնանշելի է, որ տասը հազար դինարը մեկ թուման էր կազմում, և քանի որ շահառու անհատների բաժնի գումարը 1730 դինար էր կազմում, կարելի է ենթադրել, որ այլ շահառու պաշտոնների որոշակի հատվածը մոռացության է ենթարկվել և չի նշվել: Ռոսումի բաշխումը ցույց է տալիս, որ բաժանումն ուղղակիորեն կապված էր նրանց պաշտոնի հետ⁸:

Թագքիրաթ ալ-մուլուքի հավելվածի երկրորդ հոդվածը տեղեկություններ է պարունակում վիլայեթների կառավարիչների, նրանց աշխատավարձերի և աշխատակիցների քանակի, բեկլարբեկությունների հաքիմների և սուլթանների եկամուտների և ծախսերի կապակցությամբ, որի մեջ նշվում են սահմանային ամիրների համար որոշված գումարները և սպասավորների քանակը: Թագքիրաթ ալ-մուլուքի հեղինակը, ըստ սովորության, նախ նշում է ընդհանուր գումարը, այնուհետև՝ նրա բաղկացուցիչ մասերը: Առավել հստակ պատկերացում կազմելու նպատակով աղյուսակում ներկայացնում ենք բեկլարբեկությունների և վալիների եկամուտների ընդհանուր գումարը, ինչպես նաև նրանց ենթակաների քանակը⁹:

⁸ Minorskii, տե՛ս նույն տեղում, էջ 155-175:

⁹ ميرزا سميعا تذكره الملوك, տե՛ս նույն տեղում, էջ 72-86:

Աղյուսակ 3

Հա- մար	Բեկլարբեկությունների և վալիների եկամուտները	Աշխա- տող	Եկամուտ (Մադախեթ)
1	Ադրբեջան Թավրիզ և ենթակա շրջանների բեկլարբեկություն	900 հոգի	34234 թուման և 4906,5 դինար ու կես
2	Չոխուրսաադ և ենթակա շրջաններ	2860 հոգի	25910 թուման և 6326 դինար
3	Ղարաբաղ և ենթակա շրջաններ	1430 հոգի	24726 թուման և 978 դինար
4	Շիրվան և ենթակա շրջաններ	2581 հոգի	21983 թուման և 9033 դինար
5	Խորասան և Հարաթի ենթակա շրջաններ բեկլարբեկություն	2682 հոգի	15277 թուման և 6034 դինար
6	Ս. Մաշհադ և ենթակա շրջաններ	670 հոգի	7443 թուման և 9195 դինար
7	Ղանդահար և ենթակա շրջաններ	1123 հոգի	-
8	Մերվ և ենթակա շրջաններ	2352 հոգի	7193 թուման և 6140 դինար
9	Աստարաբադ և ենթակա շրջաններ բեկլարբեկություն	1503 հոգի	10553 թուման և 4860 դինար
10	Դարովմարզ և ենթակա շրջաններ	1200 հոգի	5052 թուման և 5354 դինար
11	Քերման	-	-
12	Իրաք(Աջամի) և ենթակա շրջաններ բեկլարբեկություն	700 հոգի	7779 թուման և 9755 դինար
13	Քուրդիստան շրջաններ	1000 հոգի	-
14	Ֆարս, Քոհգիլուի և ենթակա շրջաններ բեկլարբեկություն	2000 հոգի	12000 թուման
15	Արաքստանի վալի	150 հոգի	1045 թուման և 6108,5 դինար ու կես

Աղյուսակի ուսումնասիրությունից պարզվում է, որ ցանկը ներկայացնում է տասնհինգ բեկլարբեկության անվանում երկրորդ գլխի նախաբանում նշված տասներեքի փոխարեն: Հեղինակը գրքի սկզբում իր նշած տասներեք բեկլարբեկություններից երկուսի՝ Ղալամրո Ալիշաքարի և Դարոլսալթանե Ղազվինի աշխատողների և եկամուտների կապակցությամբ որևէ տեղեկություն չի փոխանցում, իսկ մյուս կողմից էլ տալիս է Դարոլմարզի և ենթակա շրջանների, Իրաքի (Աջամի) և ենթակա շրջանների, Քուրդիստանի և Արաքստանի վալիի աշխատողների քանակը և նրանց եկամուտների թիվը: Հարկ է նշել, որ Թագքիրաթ ալ-մուլուքի մեջ, բացի բեկլարբեկությունների ընդհանուր եկամուտներից, նշվել են նաև նրանց ենթակա շրջանների եկամուտները: Առավել շատ աշխատողներ գրանցված են Չոխուրսաադում, իսկ եկամուտների առումով այն երկրորդ տեղում է Ադրբեջանից հետո:

Թագքիրաթ ալ-մուլուքի հավելվածի երրորդ հոդվածը պետական բյուջեի աղյուսակն է, որտեղ նախ՝ նշվել են եկամուտները, ապա՝ ծախսերը: Հիշյալ տեղեկություններն արժեքավոր են ժամանակաշրջանի տնտեսության ուսումնասիրության դիտանկյունից¹⁰:

Երրորդ հոդվածում նշված թվերի միջև մեծ տարբերություններ չկան, հեղինակն ուղղակի նշում է եկամուտների թվերը, որոնց ավելացնում է քարի (մոտավոր) բաղը: Նախնական գումարման միջև նախ կրճատվել են մանր գումարները, որոնք, սակայն, վերջնական գումարման ժամանակ ընդհանուր գումարի մեջ նորից հաշվվել են, ինչն ընդհանուր գումարների կամ հասելքամների մեջ հաշվի տարբերության պատճառ է դարձել: Ուստի այս պարագայում անհրաժեշտ է նկատի ունենալ, որ գրքում բերված հասելքամներում (ընդհանուր գումարներում) նկատելի են հեղինակի կողմից որոշ բաժիններում ուղղակի մոռացության մատնված կամ ընդհանրապես չնշված սխալներ, իսկ թվերը տառերով գրվելու պատճառով ևս տառասխալներ են թույլ տրվել¹¹: Երրորդ հոդվածը բաղկացած է երկու գլխից՝ եկամուտներ և եկամուտների գանձման բաժինների ղեկավարներ: Վիլայեթների եկամուտների վերաբերյալ Թագքիրաթ ալ-մուլուքում կան հիշատակումներ¹²:

¹⁰ الملوک میرزا سمیعا تذکره الملوك, տե՛ս նույն տեղում, էջ 16:

¹¹ Minorskii, Tadkhirat al-Muluk, նշվ. աշխ., էջ 208:

¹² الملوک میرزا سمیعا تذکره الملوك, նշվ. աշխ., էջ 88-91:

Աղյուսակ 4

Վիլայեթների տարեկան եկամուտները՝ համաձայն Թագքիրաթ ալ-մուլուքի

Վիլայեթների անունները	Վիլայեթների տարեկան եկամուտները
Քիրման	17713 թուման և 7000 դինար
Խուզեսթան	117639 թուման և 5850 դինար
Իրաք (Աջեմի)	213416 թուման և 6058 դինար
Ֆարս	142001 թուման և 3000 դինար
Ազերբայջան	161969 թուման և 8400 դինար
Դարոլմարզ	69102 թուման և 7000 դինար
Շիրվան	63784 թուման և 8900 դինար
Ընդհանուր գումար	785718 թուման և 1908 դինար

Աղյուսակի տվյալների ուսումնասիրությամբ պարզվում է, որ այստեղ ևս հեղինակի նշած վիլայեթների անունները չեն համապատասխանում գրքի երկրորդ գլխի նախաբանում բերված չորս վիլայեթների անունների հետ, քանի որ դրանցից և ոչ մեկը չի ներգրավվել վիլայեթների եկամուտներին և ծախսերին վերաբերող այդ հոդվածի մեջ։ Սա ևս մեկ անգամ գալիս է հաստատելու հեղինակի ունեցած տեղեկությունների պակասի մասին։

Թագքիրաթ ալ-մուլուքի հավելվածների երրորդ գլխում կատարված բացատրությունների և վերլուծությունների հիման վրա պարզվում է, որ Թագքիրաթ ալ-մուլուքի մեջ պահպանված տնտեսական տվյալները համակարգված չեն պահպանվել։ Թագքիրաթ ալ-մուլուքի մեջ պահպանված տվյալների հիման վրա վիլայեթներից ստացված եկամուտների ընդհանուր գումարը հաշվվում է 785,718 թուման և 1908 դինար¹³, որից ծախսերի ընդհանուր գումարը հաշվվում էր 625,273 թուման, որոնց տարբերությունը, այսինքն՝ 160,445 թումանը

¹³ میرزا اسمعیل، تذکره الملوك (Միրզա Սամիա, Թագքիրաթ ալ-մուլուք), նշվ. աշխ., էջ 87-91:

մտնում էր արքունական գանձարան: Եկամուտների մեծ մասը կազմում էին պաշտոնյաների աշխատավարձերը և ծախսվում էին արքունիքի համար: Փաստորեն երկրի արտադրությունից առաջացած եկամտի 80 տոկոսը շահի անձնական կարիքների և արքունիքի համար էր ծախսվում, մնացած 20 տոկոսն էր մտնում արքունական գանձարան:

Կատարված բացատրությունների և վերլուծությունների հիման վրա պարզվում է, որ Թագքիրաթ ալ-մուլուքի մեջ պահպանված տնտեսական տվյալները թեև արժեքավոր են, սակայն ունեն մի շարք հակասություններ:

ԱՄՓՈՓՈՒՄ

Պետությունների եկամուտների գլխավոր մասը գոյանում էր հարկահանության միջոցով: Սեֆյան պետության մեջ տնտեսական կառույցների կարևոր դեր էր վերապահված հարկահանության համակարգին: Սեֆյան պետության հարկային համակարգի վերաբերյալ առավել ամբողջական տեղեկություններ պահպանվել են Թագքիրաթ ալ-մուլուք երկրում: Թագքիրաթ ալ-մուլուքի հինգերորդ գլխի ավարտին հեղինակը հավելվածի երեք հոդվածներով անդրադառնում է ժամանակաշրջանի մավաջեբների (աշխատավարձ) և ռոսումին, ինչպես նաև պետական պաշտոնյաների, սահմանային ամիրների և վալիների աշխատավարձերին և նրանց ենթակա մոլագեմներին (աշխատողներին), այնուհետև վիլայեթների եկամուտներին (մադալսեյին) և ծախսերին: Թագքիրաթ ալ-մուլուքը, ներկայացնելով պետության եկամուտները ձևավորող համակարգն ու համապատասխան պաշտոնյաներին վճարվող աշխատավարձերը, արտացոլում է սեֆյան հասարակության տնտեսական համակարգի կարևոր կողմերն ու վճարվող հարկերի, աշխատավարձերի, թիուլի և սոյուրդալի և սեֆյան համակարգի տնտեսության վերաբերյալ արժեքավոր տվյալներ:

Քանալի բառեր - Սեֆյան, Պարսկաստան, Թագքիրաթ ալ-մուլուք, տնտեսություն, հարկեր, աշխատավարձեր, մավաջեբ, մոլագեմներ, ռոսում, թիուլ, սոյուրդալ, մադալսեյ:

ОСНОВНЫЕ ПРОБЛЕМЫ ЭКОНОМИКИ СЕФЕВИДСКОГО ИРАНА И ИХ ОТРАЖЕНИЕ В КНИГЕ «TADKERAT AL-MOLUK»

ЖИЛЬБЕРТ МЕШКАНБАРЯНС

Основная доля дохода государства поступала от налогов. Сефевидское государство выполняло важную роль в экономических структурах налоговой системы.

Обширные сведения о сефевидском Иране относительно налогов, заработных плат и других типов дохода представлены в книге «Tadkerat al-moluk» автора Mirza Samia, в которой в трех приложениях к первой главе представлены данные о заработных платах, доходах (madakhel) служащих (molazem) правительственных чиновников и доходов от провинций. «Tadkerat al-moluk» содержит ценные материалы и детали о доходной и финансовой политике указанной эпохи.

Ключевые слова – Сефевидское государство, Иран, Tadkerat al-moluk, экономика, налоги, заработные платы, molazem, madakhel.

“TADKERAT AL-MOLUK” - ECONOMIC ISSUES OF SAFAVID IRAN

JILBERT MESHKANBARIANS

Taxes are known to be the main source of revenue of most countries. The Safavid empire has played an important role in the formation of tax policies. This is evinced in the pre-eminent source of the Safavid administrative system, “Tadkerat al-moluk”, a Persian manual by Mirza Samia. The manual consists of an introduction, five chapters, and an “epilogue” or “conclusion” (*ḵātema*). Mirza Samia in the “conclusion”, which is actually an appendix of three parts to the first chapter of the book deals in great detail with wage payments, incomes (madakhel), officials (molazem), and government officeholders and with provincial revenues and expenditures. Important economical policies, taxes and issues of the empire as well as other valuable information concerning the Safavid societies are included in “Tadkerat al-moluk”.

Key words – Safavid, Iran, Tadkerat al-moluk, economy, taxes, wages, incomes (madakhel), employees (molazem).

ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ (1920-1925 ԹԹ.)

ՌՈՒԲԵՆ ՄԻՐՉԱԽԱՆՅԱՆ

1920 – 25 թթ. խորհրդահայ գեղարվեստական գրականության համար սկզբնավորման շրջան էր: Գրականագետ Ս. Աղաբաբյանն իրավացիորեն նշել է. «...առանձնակի կարևորություն ստացավ նրա (գրականության – Ռ. Մ.) ստեղծագործական անձնակազմի խնդիրը՝ ովքե՞ր են լինելու նորագույն գրականության կառուցողները, ի՞նչ հարաբերություններ են լինելու «հին» և «նոր» գրական ուժերի միջև»¹:

Հին գրական ուժեր ասելով նա հասկանում է հայ դասականներին, որոնց դիրքորոշումը նոր կարգերի նկատմամբ միանշանակ չէր. նշանավոր գրականագետն այն տեսակետն է հայտնում, որ «Հայ մտավորականության շարքերում, իհարկե, եղան սակավաթիվ փախստականներ, «օտար ափերում» դեգերողներ, սակայն նրանց մեծագույն մասը, առանց վերապահության, ընդունեց սոցիալիստական հեղափոխության պատմական անհրաժեշտությունը»²:

Չանտեսելով այն հանգամանքը, որ այլ կերպ հնարավոր չէր գրել խորհրդային ժամանակներում, անհրաժեշտ ենք համարում մատնանշել, որ հայ գրողների մեջ դժվար է որոնել և գտնել մեկին, որն ընդունել է «սոցիալիստական հեղափոխության պատմական անհրաժեշտությունը»: Ավելի ճիշտ կլինի պնդել այն տեսակետը, որ **հայ գրողներից, մասնավորապես դասականներից ոմանք համակերպվել են խորհրդային կարգերի հետ, ոչ թե ընդունել են դրանք, ինչը չի կարելի պնդել 1920-ական թթ. առաջին կեսի համար, երբ խորհրդային Հայաստանում գեղարվեստական գրականության զարգացման ապագան մշուշապատ էր:**

Եթե նրանք դրական են արտահայտվել գրական ստեղծագործողների նկատմամբ, հատկապես Ալ. Մյանսիկյանի որդեգրած վերաբերմունքի առնչությամբ, մի անձնավորության, որն ստանձնել էր մշակույթի բոլոր ուղղությունների ներկայացուցիչների՝ մայր հայրենիքում համախմբելու դրվատելի գործը,

¹ Աղաբաբյան Ս., Հայ նոր գրականության պատմություն, հատոր առաջին, Երևան, 1986, էջ 33:

² Նույն տեղում, էջ 33 – 34:

ապա ամենակին չի նշանակում, որ նրանք ընդունել են խորհրդային կարգերը կամ գաղափարախոսությունը:

Սա հատկապես վերաբերում է Հովհ. Թումանյանին, Ալ. Շիրվանզադեին, Ավ. Իսահակյանին, Նար-Դոսին:

Սուրեն Աղաբաբյանը հետևյալն է գրում. «Թեև նրանց (հայ արվեստի վարպետների – Ռ. Մ.) վերադարձը առանձին դեպքերում կապված է եղել աշխարհագրական զիզգագների՝ հարցականների ու կասկածների հետ, ի վերջո, բոլորը զգացին պատմության նոր ժամի մեծագույն իմաստը»³:

Սա նույնպես վիճարկելի տեսակետ է: Մասնավորապես 1920-ական թթ. առաջին կեսին «պատմության նոր ժամի մեծագույն իմաստը» նոր համակարգն արարողները դեռևս չէին զգում, առավել ևս՝ հայ գրողները և ավելին՝ դասականները: Բոլշևիկյան կուսակցության վերին օղակներում դեռևս ընթանում էր պայքարը իշխանության համար, որը նշանակում էր նաև մշակութային քաղաքականության մեջ հստակության բացակայություն, և այդ բացակայությունը զգացվում էր մինչև 20-ական թթ. վերջը, երբ պայքարն իշխանության համար արդեն ավարտվում էր Ստալինի հաղթանակով:

Այսպիսով, 1920-ական թթ. հայ գրականության ներկայացուցիչները դեռևս անորոշության մեջ էին: Ճշմարիտ է՝ այդ շրջանի հայ ղեկավար գործիչները Ալ. Մյասնիկյանի գլխավորությամբ հայրենիքում համախմբվելու կոչեր էին անում և վստահ էին նոր պետականության կերտման նկատմամբ իրենց հավատամքի իրականացման հարցում, բայց դա կրում էր ժամանակավոր բնույթ: Հայ գրողներին այս շրջանում չէր միավորում որևէ գաղափարական հենք, ուստի կարելի է նրանց տարաբաժանել՝ դասական գրողների, որոնք կա՛մ համակերպվում էին խորհրդային իշխանության հետ, կա՛մ՝ ոչ, և գրողների, որոնք բոլշևիկներ էին և կռվել էին հանուն բոլշևիկյան նպատակների իրականացման կամ հանուն խորհրդային կարգերի հաստատման, և, վերջապես, գրողների, որոնք ի հայտ էին գալիս իրենց գրական հնարավորություններով նոր ժամանակներում:

Առաջին խմբի գրողները կայացած էին, հեղինակ էին գրական գլուխգործոցների, և խորհրդային կարգերի հետ նրանցից ոմանց համակերպվելը չի կարելի մեկնաբանել որպես նոր իշխանության ճանաչում: Նրանք այլընտրանք չեն ունեցել: Դա վերաբերում է Հովհ. Թումանյանին, Շիրվանզադեին, Նար-

³ Նույն տեղում, էջ 34:

Դոսին, Ստ. Զորյանին, Դ. Դեմիրճյանին, իսկ ավելի ուշ նաև՝ Ավ. Իսահակյանին:

Երկրորդ խմբի գրողները հիմնականում բոլշևիկներ էին, և նրանց ստեղծագործությունների գաղափարախոսական հիմքում ընկած էին մարքս-լենինյան տեսությունները: Նրանց ստեղծագործությունների հերոսները պրոլետարիատի կամ ճնշված աշխատավորության ներկայացուցիչներն էին, հանուն Հայաստանի խորհրդայնացման պայքար տարած բոլշևիկները: Նշված դրսևորումներն արտահայտվում էին Հ. Հակոբյանի, Շ. Կուրդինյանի, Մ. Արազու, Հ. Կամարիի ստեղծագործություններում:

Երրորդ խմբի ներկայացուցիչների ստեղծագործական ուղին սկզբնավորվեց միայն խորհրդային կարգերի հաստատումից հետո:

Թերևս վերջի երկու խմբերի միջև պետք է տեսնել մի քանի ստեղծագործողների, որոնք, չնայած երիտասարդ տարիքին, արդեն կայացած և տաղանդավոր գրողներ կամ բանաստեղծներ էին: Դրանց մեջ ամենակենտրոնական դեմքը Եղիշե Չարենցն էր: Գրական ասպարեզ իջան Ա. Վշտունին, Վ. Թոթովենցը, Գ. Աբովը:

Ուսումնասիրվող ժամանակահատվածում ձևավորվում են տարբեր գրական խմբակներ, որոնք համատարած բնորոշվում էին որպես պրոլետարական գրական խմբակներ: Նման գրական խմբակներից ամենահայտնին «Երեքի»՝ Չարենցի, Աբովի և Վշտունու գրական խմբակն էր, որը 1922թ. հունիսի 14-ին հրապարակում է հանրահայտ «Երեքի դեկլարացիան»⁴: Հեղինակների ըմբռնումների համաձայն՝ «դեկլարացիան» փորձում էր մատնանշել այն ուղին, որով պետք է ընթանար հայկական նոր պոեզիան: Նրանում կարդում ենք. «Ներկա հայ բանաստեղծությունը մի թոքախտավոր է, որն անխուսափելիորեն դատապարտված է մահվան:

Նրա գոյության միակ արդարացումը մահամերձ լինելն է: Նրա տրադիցիաները նման են թոքախտավոր երեխաների, որոնք բացի վարակումից ոչինչ չեն առաջացնում:

«Հայրենիք», «Սեր անբիծ», «Անապատ ու մենություն», «Մթնշաղեր նրբակերտ», «Մոռացում ու երազներ», ահա՛ մեր գրական թոքախտի մանրէները, որոնց առաջացրած պտուղներն են՝ նացիոնալիզմը, ռոմանտիզմը, պեսիմիզմը, սիմվոլիզմը:

Մենք հանդես ենք գալիս որպես ախտահանողներ: Մենք բերում ենք

⁴ «Խորհրդային Հայաստան», հունիս 14, 1922, N 130:

մեզ հետ մաքուր օդ և երկաթե առողջություն: Քաղքենի նացիոնալիզմին մենք հակադրում ենք պրոլետարական ինտերնացիոնալիզմը: «Անբիծ սիրուն» մենք դեմ ենք դնում առողջ բնագրը:

Մեզ համար անապատները դարձել են բազմաժխտր քաղաքներ: Իսկ մեր երակների մեջ զգում ենք բազմահազար ամբոխների հույզը:

Նրբակերտ մթնշաղերին այսօր հաջորդել է բոսոր արշալույսը և պայքարող դասակարգի մարտական շեփորը մեզ արթնացրել է «մոռացման երազներից»:

Մեր մեջ ստեղծագործում է բազմությունների տեմպը և մենք դեպի բազմություններն ենք իջեցնում մեր ստեղծագործությունը:

Մենք պահանջում ենք.

1. Դուրս հանել բանաստեղծությունները սենյակներից դեպի փողոցներն ու մասսաները և գրքերից՝ դեպի կենդանի խոսքը:
2. Արտահայտել այն, ինչ այժմեական է՝ շարժում, դասակարգային պայքար, երկաթ ու կարմիր:
3. Այդ նպատակներին հասնելու համար բանաստեղծության մեջ պետք է կիրառել՝
 1. Ռիթմը, որպես շարժում.
 2. Պատկերը (օճառ) որպես կենցաղի բնորոշում.
 3. Ոճը և լեզուն որպես տվյալ նյութի և խառնվածքի արտահայտություն:
 4. Մեր օրվա լոզունգն է՝ կորչեն գրական արիստոկրատ շկոլաները, առանձնասենյակային գրողները, գրադարաններում ննջող գրքերը և սալոնային կանայք: Կեցցե՛ սալոնային կենդանի խոսքը, ստեղծագործող բազմությունները:

Կեցցե՛ ստեղծագործող բազմությունը՝ իր հզոր ռիթմով:

Կեցցե՛ պրոլետարական հեղափոխությունը:

Եղիշե Չարենց, Ազատ Վշտունի, Գևորգ Արով⁵:

«Երեքի դեկլարացիան» ժամանակին խորը քննադատության է ենթարկվել: Բայց կարծում ենք, որ այնտեղ արտահայտված դրույթները պետք է պայմանավորել ժամանակի տրամաբանությամբ, գեղարվեստական մտքի զարգացման ուղիների որոնումներով, ուղիներ, որոնք հստակեցված չէին: Դեկլարացիայի հեղինակները հակվում էին դեպի ֆուտուրիզմը, որի հիմնադիրն է իտալացի բանաստեղծ Ֆիլիպո Թոմազո Մարինետտին: Վերջինս 1909 թ.

⁵ Նույն տեղում:

փետրվարի 20-ին ֆրանսիական «Լը Ֆիգարո» ամսագրում հրապարակում է ֆուտուրիզմի մանիֆեստը, որով առհասարակ արվեստի զարգացման մեջ առաջնայնությունը տալիս էր ինքնատիպությանը, մերժում էր նմանակումը, ժխտում էր ներդաշնակությունն ու ճաշակը, դնում էր հնից, ծեծված թեմաներից ազատվելու խնդիրը և կոչ անում ներկայացնել արդի կյանքը իր ամբողջ ռիթմով, չկաղապարված ձևով և բովանդակությամբ: Գրեթե նույն դրույթներն են արտացոլված ֆուտուրիստ նկարիչ Ումբերտո Բոչչոնիի՝ 1910թ. մարտի 3-ին Թուրինում հրապարակած ֆուտուրիստ նկարիչների մանիֆեստում:

Հայ իրականության մեջ ֆուտուրիստական հայացքներով հայտնի գրական գործիչներից էր Ք. Կարա - Դարվիշը (Հակոբ Գենջյան): Ավելին, նա հայտնի էր որպես ֆուտուրիստների պարագլուխ, որը «Երեքին» հայտարարել էր իր «հոգևոր լակոտները»⁶:

Սակայն նման որակավորումը սխալ էր, որովհետև, ինչպես նշեցինք, ֆուտուրիստական մշակույթի տեսությունը գալիս էր Արևմուտքից, ուստի համանման տրամաբանությամբ վերջինիս նույնպես կարելի էր համարել այս ուղղության վերոհիշյալ հիմնադիրների «հոգևոր լակոտները»: Այլ հարց է, որ թերևս Կարա - Դարվիշն էր հայ գեղարվեստական իրականության մեջ այս գաղափարախոսության առաջին սերմանողներից մեկը, որի մասին հիշատակվում է նաև 1924թ. Թիֆլիսի Հայարտան թատրոնում նրա ստեղծագործության քննադատության ընթացքում ընդունված մեղադրական տեքստում, որում մասնավորապես նշվում էր. «Կարա - Դարվիշը հայ իրականության մեջ հանդիսանում է գրական այդ հոսանքի անդրանիկ արտահայտիչը և մասնավորապես ֆուտուրիզմի առաջին տեսաբանը մեզանում՝ իր 1914 թվին հրատարակած «Ինչ է ֆութուրիզմը» գրքուկով»⁷:

«Երեքի խմբակը», ունենալով շատ կարճ կյանք, հենց հիմնադրման նույն տարում պառակտվել էր: Պառակտման պատճառը հետևյալ ձևով է մեկնաբանում բանաստեղծ Վ. Նորենցը:

««Երեքի» պառակտումը շատ տրամաբանական էր», - գրում է նա, «Ի՞նչը կարող էր երկարատև դարձնել Ե. Չարենցի, Ա. Վշտունու և Գ. Աբովի ստեղծագործական համագործակցությունը: Իրենց գրական խառնվածքով, ստեղծագործական կարողությամբ և պոետական կուլտուրայով անհունորեն տարբեր էին նրանք իրարից: Անցյալի ամբողջ արժեքների ժխտումը մի լուրջ ու

⁶ Նորենց Վ., Հուշեր և արձագանքներ, Երևան, 1968, էջ 93:

⁷ Աղաբաբյան Ս., նշվ. աշխ., էջ 38:

կենսունակ գաղափար չէր, որ նրանց պահեր միասին, նոր գրականություն ստեղծելու ընդհանուր մղումով նրանք կանգնած էին տարբեր ստեղծագործական ճանապարհների վրա... և տարբեր ճանապարհներով էլ գնացին»⁸:

Միանգամայն ճիշտ է Նորենցը. գրական տարբեր ծիրներ և ընդունակություններ ունեցող այս երեք անձանց միայն ժխտողականությունն անցյալի նկատմամբ չէր կարող երկարատև համագործակցության հիմք հանդիսանալ: Մանավանդ որ այդ ժխտողականությունը շատերը չէին ընդունում:

Այնուամենայնիվ, ավելորդ չենք համարում մատնանշել, որ «Երեքի դեկլարացիայի» որոշ դրույթներ զուրկ չէին տրամաբանությունից: Հետաքրքրական էր գրականության այսպես կոչված մասսայականացման կոչը: Ճիշտ է, այն ելնում էր բոլշևիկյան կարգախոսներից, արդարև սակավարժեք է այն խոսքը, որը կտրված է ժողովրդական լայն հատվածից: Մի՞թե գեղարվեստական խոսքի կամ արվեստի ժողովրդականացումը պետք է անպայման ընթանար հինը ժխտելու ճանապարհով: Ամենևին ոչ, և այստեղ պետք է որոնել և գտնել իրական գաղափարախոսական սայթաքումը: Արդյո՞ք ժողովրդական լայն զանգվածներն անհաղորդ էին Հովհ. Թումանյանի, Ավ. Իսահակյանի պոեզիային: Իհարկե ոչ: Հետևաբար խնդիրը պետք է պայմանավորել ամեն տեղ պրոլետարիատի դերի հիմնավոր ներկայացման անհրաժեշտությամբ: Ահա այստեղից էլ ծագում է պրոլետարական կուլտուրայի տեսությունը, որն արհեստական էր: Բայց արդարությունը պահանջում է շեշտել, որ դեկլարացիայում ամենևին չի դրվում հին նկատմամբ բացարձակ ժխտողականության անհրաժեշտության գաղափարը: Այլ հարց է, որ հետագայում նրա հեղինակները մի կարճ ժամանակ տարվեցին այդ ժխտողականությամբ՝ փորձելով հիմնավորել այն պրոլետարական գրականության ստեղծմամբ: Ընդհանուր առմամբ կարելի է ճիշտ համարել Հ. Սուրխաթյանի «Երեքի խմբակի» մասին արտահայտած հետևյալ տեսակետը. «Եթե «Երեքի» հանդես գալը անպտուղ եղավ գրական արտադրանքի տեսակետից, ապա այդ փաստի (ելույթի) դրականն այն էր, որ մեր երկրի խորհրդայնացումից հետո առաջին անգամ շեշտվում էր գրական կազմակերպված աշխատանքի անհրաժեշտությունը, հրահրվում խնդրի հասունացած լինելու հանգամանքը»⁹:

Այս տեսանկյունից էլ անարդար մոտենալու հիմքեր ենք տեսնում բոլոր այն ընդդիմախոսների գործերում, որոնք լույս տեսան «Դեկլարացիայի»

⁸ Նորենց Վ., նշվ. աշխ., էջ 97:

⁹ Սուրխաթյան Հ., Գրականության հարցեր, Երևան, 1970, էջ 94:

հրապարակումից անմիջապես հետո¹⁰:

«Երեքի խմբակի» պառակտումից հետո նրա անդամներն ընթացան միանգամայն տարբեր ճանապարհներով:

Ա. Վշտունին սկսում է ղեկավարել Հայաստանի պրոլետարական գրողների ասոցիացիան, Գ. Աբովը Մոսկվայում հրատարակում է «Ջարկի» դեկլարացիան, իսկ Չարենցը նախ՝ «Ավանգարդ» անունով ամսագիր է փորձում հրատարակել, որը չի հաջողվում, որից հետո Մոսկվայում Կ. Հալաբյանի և Մ. Մազմանյանի հետ տպագրում է «Ստանդարտ» ամսագիրը, որն ունենում է միայն մեկ համար: Ինչպես նկատում է Ս. Աղաբաբյանը՝ «պրոլետարական գրական շարժումը հունավորվեց պրոլետկուլտական շնչի խմբակներում, որոնք համախմբված էին «Մուրճ» (Երևան), «Դարբնոց» (Թիֆլիս), «Քուրա» (Մոսկվա), «Վիշկա» (Բաքու), «Մուրճ և մանգաղ» (Դոնի Ռոստով) պարբերականների շուրջը»¹¹:

Խորհրդային Միության գրական կյանքն այս ժամանակահատվածում ներշնչված էր պրոլետարական կուլտուրայի տեսությամբ: Վերոհիշյալ պարբերականներն իրենց խմբագրականներում, «շարադրելով իրենց գործունեության նպատակները, հանգում էին ցեխային գրականության, զտարյուն պրոլետարական կուլտուրայի դրույթին, ուրիշ խոսքով կրկնում էին Պրոլետկուլտի և 1920-ին նրանից անջատված «Кузница» խմբակի գեղագիտական դիրքերը: Դրանք բոլորը «Кузница»-ի հայկական տարատեսակներն էին և հենվում էին ռուս իրականության հոսանքային-ենթահոսանքային «կալեյդոսկոպի» թերևս ամենաուժեղ հոսանքի դեղատոմսերի վրա»¹²:

Ուշադրության է արժանի այս շրջանի գրական սերնդի վերաբերյալ գրականագետ Հ. Թամրազյանի հետևյալ բնութագրումը. «Այո՛, գրական նոր սերնդի պահանջը, արդիականությունը, արտացոլման որոնումները և եռանդագին ճիչերը ունեին ինչ-որ նոր և կարևոր երանգներ, աղերսվում էին զարգացող կյանքի տրամաբանությանը: Բայց նրանց տեսության մեջ երևան էր գալիս հիվանդագին թեքում, որը հարված էր հասցնում ստեղծագործական փորձին: Հակառակ անկեղծ ցանկություններին՝ պատմականորեն անհրաժեշտ

¹⁰ Պողոս Մակինցյան, Հայկական Բուալոն և նրա երեք ու կես արբանյակները, «Խորհրդային Հայաստան», 1922, N 157, **Սուրխաթյան Հ.**, Մի գրական դեկլարացիայի առթիվ, «Նոր աշխարհ», 1922, N 1, **Կարինյան Ա.**, Վտանգավոր սայթաքում, «Պայքար», 1923, N 2, **Խանգադյան Ց.**, Աշխատանքի գրական դպրոց, 1923, N 5:

¹¹ **Աղաբաբյան Ս.**, նշվ. աշխ., էջ 39:

¹² Նույն տեղում, էջ 40:

նոր արվեստի հետ միասին մի որոշ ժամանակ ծնվեցին նաև անխուսափելի մոլորություններ և զարգացման ամբողջ ընթացքի դեմ ուղղված արատավոր ձևեր, որոնք սկզբից էլ դատապարտված էին»¹³:

Այսպես, Հակոբ Հակոբյանի գլխավորությամբ «Դարբնոցի» շուրջ համախմբվածները (Ս. Խանոյան, Մ. Արագի, Մ. Դարբինյան, Հ. Աղաբաբ, Ծ. Թորգոմյան և ուրիշներ) Թիֆլիսում, իրենց շուրջը համախմբելով տարբեր սոցիալական խմբերի ներկայացուցիչների, կիսամտավորականների, բանվորների, «իրենց խմբակը դարձնում են գրական կյանքին շեշտ տվող, ազդեցիկ ուժ», որի նպատակն էր դարբնել հայ պրոլետարիատի ամբողջական կյանքը, արտացոլել նրա կոլեկտիվ ապրումները, նրա հոգեբանական իմպուլսները»¹⁴:

Հ. Հակոբյանն անցյալի ժառանգությունից հրաժարվելու ջերմեռանդ կողմնակից էր, և այս առումով նա իր դիրքերը որոշ չափով զիջեց միայն 1925-ին, երբ որդեգրեց անցյալից չհրաժարվելու, բայց այն չաստվածացնելու ուղին:

«Դարբնոցը» Վրաստանի գրողների ասոցիացիայի հայկական սեկցիայի պաշտոնական օրգանն էր:

Գրեթե նույն ուղղությունն էր հետապնդում Ա. Վշտունու խմբագրած «Մուրճը», որը Վ. Նորենցի վկայությամբ. «անուրանալի դեր կատարեց՝ համախմբելով նոր, կենսունակ գրական ուժերին: Այդ ամսագրի շուրջ հավաքված երիտասարդ գրողներն էլ դարձան «Հայաստանի Պրոլետարական գրողների ասոցիացիայի միջուկը»¹⁵:

Նոր ժամանակների վերաբերյալ իր բանաստեղծական ընկալումները Ա. Վշտունին արտահայտում է իր «Նեո Օրիենտալիա» ստեղծագործության մեջ:

Ընդհանուր առմամբ պետք է շեշտել, որ **1920-ական թթ. առաջին կեսի հայ գրականության ներկայացուցիչների գլխավոր նպատակը պրոլետարական գրականության ստեղծումն ու մասսայականացումն էր: Եվ անվերապահորեն կարելի է պնդել, որ այս շրջանում «խորհրդահայ գրականություն» հասկացությունը դեռևս չէր ձևավորվել:**

Ստեղծված իրավիճակը պայմանավորված էր նաև իշխանության կողմից ցուցումների բացակայությամբ: Դեռևս չէր ավարտվել իշխանության համար մղվող պայքարը:

¹³ Հրանտ Թամրազյան, Եղիշե Չարենց, Երևան, 1981, էջ 288:

¹⁴ Աղաբաբյան Ս., նշվ. աշխ., էջ 40:

¹⁵ Նորենց Վ., նշվ. աշխ., էջ 98:

Պրոլետարական գրականությունը ստեղծելը սին գաղափար էր, դժվար հիմնավորվող: Այս իսկ պատճառով էլ հետագայում ձևավորված սոցիալիստական ռեալիզմի մեթոդը սոսկ բացառում էր այլընտրանքային գաղափարական հիմքով գրական գործերի ստեղծումը, այսինքն՝ այնպիսի գործերի, որոնք բացառում էին բուլճարիկական գաղափարախոսության ճշմարտացիությունը: Սրանով պետք է պայմանավորել նաև այն հանգամանքը, որ «պրոլետարական գրողներ» հասկացությունն ավելի շատ հանդիպում է 1920-ական թթ. սկզբին, երբ նոր-նոր ձևավորվում էին Խորհրդային համակարգի սկզբունքները:

Պրոլետարական գրողները չէին կարող երկար գոյատևել, քանզի նրանց գեղարվեստական ընկալման հնարավորությունը սահմանափակ էր: Պատահական չէ, որ կարճատև կյանք ունեցան նաև այդ գրողների ձևավորած կազմակերպությունները:

Այսպես, 1922 թ. դեկտեմբերին ստեղծվեց «Հայաստանի պրոլետարական գրողների միությունը», որի ղեկավարն էր Ա. Վշտունին: Միության կանոնադրության մեջ նշվում էր. «Միության նպատակն է ի մի համախմբել պրոլետարիատի գրական ստեղծագործական ուժերը՝ **բազմակողմանի կերպով ձևակերպելու նրանց դասակարգային կոմունիստական իդեոլոգիան, զարգացնելու պրոլետարական գրականությունը և պաշտպանելու պրոլետարիատի տնտեսական-իրավական շահերը**: Միության ամբողջ գործունեությունը պետք է համապատասխանի Կոմկուսի և կոմինտերնի գործունեության»¹⁶ (ընդգծումը մերն է - Ռ. Մ.):

Ինչպես պարզ է դառնում ընդգծվածից, գրողների միությունն իր առջև նպատակ էր դնում պաշտպանելու կոմունիստական գաղափարախոսությունը, զարգացնելու այնպիսի գրականություն, որը պետք է նպատակաուղղվեր պրոլետարիատի տնտեսական և իրավական շահերին: Հարց է առաջանում. ի՞նչ կապ կարող է ունենալ գրականությունը տնտեսական և իրավական խնդիրների հետ, որոնց լուծումներն ակնկալվում են պետական մարմիններից: Պատահական չէ, որ արդյունքում պետք է մնար միայն գրական ստեղծագործությունների ստեղծումը, որոնք պետք է բովանդակեին բանվոր դասակարգի հեղափոխական պայքարը, հերոսացնեին կոմունիստներին և այլն. անշուշտ, նման թեման մշտական և անսպառ լինել չէր կարող: Սրանով պետք է պայմանավորել այս ընկերությունների ոչ երկարատև կյանքը և, բնականաբար,

¹⁶ ՀԱԱ, ֆ. 112, ց. 1, գ. 69, տե՛ս Կանոնադրություն Հայաստանի պրոլետարական գրողների միության, Յերեվան, 25 դեկտ., 1922, թ. 131:

պրոլետարական գրողների ստեղծագործությունների ցածր մակարդակը: Չարենցն այս շրջանում գրեց «Կապկազ թամաշա», «Պոեզոգություն», «Ասպետական», «Կոմալմանախ» ստեղծագործությունները: Վերջիններիս համար հատկանշական է Վ. Նորենցի հետևյալ բնորոշումը. «Թեպետև «Պոեզոգությունայի» մի քանի բանաստեղծությունների մեջ կայծկլտում էր Չարենցի բացառիկ տաղանդը, սակայն նա այն չէր, ինչ ես գտել էի նրա երկու շքեղ հատորների մեջ: Չարենցից չէր դա, այլ ինչ-որ թռուցիկ և անհարազատ ազդեցության հետևանք: Հիմա էլ, երբ խոսքը գնում է այս կամ այն գրողի ունեցած ազդեցության մասին, ես միշտ պատկերացնում եմ այդ ֆուտուրիստական ազդեցությունը միայն: Այլ կերպ՝ ուղղակի առեղծվածային է թվում, թե ինչպես միաժամանակ նա գրել է «Երկիր Նաիրի» վեպը, «Ասպետական» պոեմը և «Ռոմանս անսերն» ու «Կոմալմանախը»¹⁷:

Թերևս միակ վերապահությունը կարելի է անել «Ասպետական» ռապսոդիայի մասին, որը սիրո կաղապարված ընկալումներից ձերբազատված ինքնատիպ ստեղծագործություն է:

Դժվար է համաձայնվել այն հեղինակների հետ, որ վերոհիշյալ գործերի համեմատ, Նորենցի արտահայտությամբ «գրական մի ամբողջ հարստություն» էին 1924թ. աշնանից 1925թ. հունիսը արտասահմանում գտնվելու ընթացքում Չարենցի կողմից ստեղծված «Ստամբուլը», «Լենինն ու Ալին», «Էլեգիա՝ գրված Վենետիկում» և նման մի քանի այլ գործեր: Դրանք նույնպես բնորոշ չէին նրա հզոր տաղանդին, որն իր դրսևորումը պետք է գտներ ավելի ուշ:

Այնուամենայնիվ, այս գործերի հետ համեմատության եզրեր անգամ չունեին այն պրոլետար գրողների գործերը, որոնք համալրել էին «Հայաստանի պրոլետարական գրողների միության» անդամների շարքերը (Ա. Վշտունի, Գ. Աբով, Նաիրի Չարյան, Անուշավան Վարդանյան, Վահրամ Ալազան, Գուրգեն Վանանդեցի, Սարմեն և այլն): Սրանով պետք է պայմանավորել նաև այն, որ վերջիններս գրեթե թշնամական հարաբերությունների մեջ էին Չարենցի հետ, որին չէին համարում պրոլետարական գրող: Վերջիններս առաջարկում էին ամբողջությամբ խզել պրոլետարական գրականությունը դասականի հետ կապող թելերը¹⁸:

Այս ժամանակաշրջանի հակասական գրական կյանքը հետագայում դիպուկ է բնութագրել Գ. Մահարին:

¹⁷ Նորենց Վ., նշվ. աշխ., էջ 96 – 97:

¹⁸ Աղաբաբյան Ս., նշվ. աշխ., էջ 42:

«Ծանր ժամանակներ էին հիրավի»,- գրում է նա, «Ասոցիացիան չէր ճանաչում Եղիշե Չարենցին, որպես պրոլետարական պոետի, իսկ Չարենցին սիրողները համարվում էին նրա էպիգոնները, այն էլ մանր-բուրժուական: Ասոցիացիայի անդամները գրում էին անարյուն, անսիրտ պատմվածքներ, ստիխներ և ստեղծագործական կարողությունից զուրկ բազուկներով ուզում էին հաստատել իրենց հեգեմոնիան: Հեգեմոնիա ասածը դա մի մարմին էր, որի գլուխը Վշտունին էր, աջ ձեռքը Ալազանը, իսկ ձախը՝ Ն. Չարյանը: Իսկ մարմնի ողնաշարը... բայց ողնաշար չունեի այդ մարմինը»¹⁹:

«Պրոլետարական գրողների միության» կամ ասոցիացիայի՝ Չարենցի հանդեպ որդեգրած թշնամական վերաբերմունքի մասին գրում է նաև Նորենցը. «Չարենցի նկատմամբ Ասոցիացիան հենց սկզբից անբարյացակամ դիրք էր բռնել: Այդ անբարյացակամությունը երբեմն վերածվում էր թշնամանքի»²⁰:

Եվ Չարենցը խորը ցավ էր զգում, երբ «գրական բանավեճերն օգտագործվում էին անազնիվ կերպով և անհիմն մեղադրանքներ էին արվում այս կամ այն գրողին»²¹:

«Պրոլետարական գրողների միության» հետ ունեցած նրա տարակարծությունները և նոր գրական ուղու որոնումները նրան ստիպեցին 1925 թ. աշնանը ստեղծել «Նոյեմբեր» միությունը: Մինչև նրա գործունեությանն անդրադառնալը, մի փոքր էլ մանրամասնենք «Պրոլետարական գրողների միության» գործունեությունը:

Վերջինս իր բաժանմունքներն է ստեղծում Լենինականում, Ղարաքիլիսայում, Ալավերդիում, Էջմիածնում և այլուր, ինչպես նշում է Սուրեն Աղաբաբյանը, կազմակերպությունը նպաստում է պրոլետարական գրական շարժման ընդլայնմանը, ինչպես նաև բուրժուական գաղափարախոսության դեմ պայքարին²²:

Գրական այս շարժման արդյունքում որևէ մնայուն գրական ստեղծագործություն գրեթե չի ստեղծվել:

Կազմակերպության անդամների գաղափարական տարակարծությունները նպաստում են վերջինիս պառակտմանը: Պակաս դեր չի ունենում նրա անդամների՝ գրական շարժման մեջ հեգեմոն դիրք գրավելու ձգտումը: Կազմակերպության մեջ նույնիսկ առաջանում են հակադիր թևեր՝ գրական տար-

¹⁹ Հիշողություններ Եղիշե Չարենցի մասին, Երևան, 1957, էջ 69:

²⁰ Նորենց Վ., նշվ. աշխ., էջ 99:

²¹ Նույն տեղում:

²² Աղաբաբյան Ս., նշվ. աշխ., էջ 44:

բեր թեքումներով: Տարածայնություններն իրենց գազաթնակետին են հասնում 1925 թ. հունվարին հրավիրված առաջին համագումարում: Ակնհայտ է դառնում, որ կազմակերպությունը ճգնաժամ է ապրում:

Շատ չանցած՝ միությունից դժգոհ մի շարք գրողներ՝ Մ. Արմենը, Գ. Մահարին, Գ. Սարյանը և ուրիշներ, Լենինականում ստեղծում են բանվոր և գյուղացի գրողների «Հոկտեմբեր» խմբակը: Սակայն այն նույնպես չունեի գործունեության հստակ ծրագիր: Խմբակի «պատվավոր նախագահ» է ընտրվում Չարենցը, որը, սակայն, նոր գրական շարժման համար նեղ էր համարում այս խմբակի աշխարհագրական շրջանակները, ուստի նա իր հերթին ստեղծում է «Նոյեմբեր» միությունը:

Միության մեջ մտնում էին Գ. Մահարին, Ս. Տարոնցին, Վ. Նորենցը, Գ. Սարյանը, Ա. Բակունցը, Մ. Արմենը և ուրիշներ, որոնցից շատերը մինչ այդ մտնում էին «Հոկտեմբեր» միության մեջ: Այն ձևավորվում է սեպտեմբերի 12-ին, իսկ հաջորդ օրը լույս է տեսնում միության դեկլարացիան: Ս. Աղաբաբյանը նկատել է, որ «Նոյեմբերի» ծննդյան հիմնավորումը կուսակցության առաջադրած ազատ մրցակցության կիրառությունն էր: Նոյեմբերականները Չարենցի գլխավորությամբ գտնում էին, որ պրոլետարական գրական շարժման լայնացումն արդյունավետ կարող է ազդել նաև ստեղծագործական բովանդակության վրա՝ գրական արտադրանքը բեռնաթափելով «ցեխային» հոգեբանության կաշկանդումներից ու դրոշմներից:

Ամեն մի կաստայացում համարելով գրական ստեղծագործության համար վնասաբեր՝ նոյեմբերականները, մասնավորապես Չարենցը, իրենց վաղեմի «պոզիցիաներից» թռիչք էին կատարում դեպի սոցիալիստական ռեալիզմի գրականությունը»²³:

«Նոյեմբեր» միության համագումարը տեղի է ունենում սեպտեմբերի 27-28-ին «Խորհրդային Հայաստանի» խմբագրության շենքում: Փաստորեն, ինչպես վկայում է Վ. Նորենցը, նրա գրական գործունեության հիմքում դրված էր այն դրույթը, որ «...Ոչ մի բան չի անձնելով կոմունիզմի դիրքերը, մի թիվ անգամ չնահանջելով պրոլետարական իդեոլոգիայից՝ երևան բերելով գանազան գրական ստեղծագործությունների օբյեկտիվ դասակարգային էությունը, միտքը, պետք է անխնա պայքար մղենք հակահեղափոխական երևույթների դեմ գրականության մեջ... միաժամանակ մեծ տակտ, զգուշավորություն և

²³ Նույն տեղում, էջ 49:

համբերություն պիտի ցուցադրենք գրական բոլոր այն առաջավոր շերտերի նկատմամբ, որոնք կգնան պրոլետարիատի հետ»²⁴:

«Նոյեմբերի» գործունեությունը պետք է գնահատել հետևյալ տեսանկյունից. գրական կյանքում առկա քառսի պայմաններում այն առաջինն էր, որ փորձեց հստակություն մտցնել խորհրդային պայմաններում որդեգրվելիք գրական գաղափարախոսության մեջ և լուրջ դերակատարություն ունեցավ ավելի ուշ մեկ ստեղծագործական միության ձևավորման ճանապարհին:

Սկզբնական շրջանում «Նոյեմբերի» և ասոցիացիայի հարաբերությունները թշնամական էին: Այդ մասին Ս. Աղաբաբյանը գրում է. «Մինչ Չարենցի խմբակցությունը աշխատում էր հնարավորության սահմաններում հեռու մնալ մանր կաստայացումից և ավելի լայն բովանդակություն դնել «պրոլետարական գրականություն» հասկացության մեջ, ասոցիացականները կաստայացման՝ «ինքնամեկուսացման» դիրքերից շարունակում էին պայքարը նոյեմբերականների դեմ»²⁵:

Ասոցիացականները տարբերվում էին նոյեմբերականներից այն հանգամանքով, որ առաջինները գրականության ստեղծման հիմքում տեսնում էին դասակարգային «ինքնամիփոփաժությունը», իսկ «Նոյեմբերը» դնում էր ժողովրդական բոլոր շերտերի կյանքն ու հոգեբանությունն արտահայտող ռեալիստական գրականության ստեղծման պահանջ²⁶:

Ի վերջո, ժամանակի հեռավորությունից կարող ենք պնդել, որ միանգամայն սխալ էր գրական մտքի ծրագրումը, որ անկախ որոշ տարբերություններից՝ որդեգրել էին երկու կազմակերպություններն էլ, որոնք անզոր էին հակառակն անել, քանի որ այդպիսով դեմ կգնային ժամանակի պահանջներին:

Շատ չանցած՝ երկու կազմակերպությունների միավորումը դառնում է անհրաժեշտություն: 1926 թ. դեկտեմբերի 22-ին երկու միությունների կոնֆերանսում նրանց միավորմամբ ստեղծվում է «Խորհրդային Հայաստանի գրողների միությունը»²⁷:

Իհարկե, դրանով Հայաստանի գրողների միավորման գործընթացը դեռևս իր ավարտը չի գտնում:

²⁴ Նորենց Վ., նշվ. աշխ., էջ 104:

²⁵ Աղաբաբյան Ս., նշվ. աշխ., էջ 48:

²⁶ Նույն տեղում, էջ 49:

²⁷ Նույն տեղում, նաև՝ Թամրազյան Հր., Սովետահայ գրականության պատմություն, Երևան, 1980, էջ 194:

ԱՄՓՈՓՈՒՄ

Հոդվածում քննության են առնվում սոցիալ-քաղաքական և գաղափարախոսական առավել կարևոր հանգամանքները, որոնցում երևան եկավ Սովետական Հայաստանի գեղարվեստական գրականությունը: Միաժամանակ վերլուծվում են իշխող միտումները և գրական հանգուցային գործիչների միջև նշանակալի հակասությունները 1920-ից մինչև 1925 թվականները: Հոդվածում քննության առնված փաստերն ընդգրկում են Խորհրդային Հայաստանում գեղարվեստական գրականության ոլորտի կոնցեպտուալ, գաղափարական և կազմակերպական ձևավորման և զարգացման առավել կարևոր ժամանակաշրջանը:

Բանալի բաներ – Խորհրդային Հայաստան, գեղարվեստական գրականություն, 1920-25 թվականներ:

ХУДОЖЕСТВЕННАЯ ЛИТЕРАТУРА СОВЕТСКОЙ АРМЕНИИ: 1920-1925 ГГ.

РУБЕН МИРЗАХАНИЯН

В статье рассматриваются наиболее важные социально-политические и идеологические обстоятельства, при которых возникла художественная литература Советской Армении. Также анализируются господствующие тенденции и значительные противоречия между ключевыми литературными деятелями периода с 1920 по 1925 гг. Рассмотренные в статье факты охватывают наиболее важный период концептуального, идейного и организационного формирования и развития сферы художественной литературы в Советской Армении.

Ключевые слова – Советская Армения, художественная литература, 1920-1925 гг.

LITERARY ART IN SOVIET ARMENIA (1920-1925)

RUBEN MIRZAKHANYAN

The article refers to the major socio-political and ideological considerations when the literature of the Soviet Armenian was created. At the same time, the

mainstream trends and significant contradictory views among key literary figures in the period from 1920-1925 are reviewed. The items surveyed in the article compromise the most important period for the conceptual, ideological and organizational formation and development of creative literary works of Soviet Armenia.

Key words – Soviet Armenia, literary art, the 1920-25 years.

**ՍԱՌԻԴԱ-ԻՐԱՆԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԻՐԱՆՈՒՄ 2005 Թ.
ՆԱԽԱԳԱՀԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՀԵՏՈ**

ՍԵՐԳԵՅ ՈՍԿԱՆՅԱՆ

2015 թ. հուլիսի 15-ին Իրանը և միջազգային միջնորդների վեցյակը (ԱՄՆ, Ֆրանսիա, Մեծ Բրիտանիա, Գերմանիա, Չինաստան և Ռուսաստան) համաձայնության եկան Իրանի միջուկային ծրագրի վերաբերյալ: Դրա փոխարեն պետք է վերացվեն Իրանի նկատմամբ մինչ այդ կիրառված պատժամիջոցները: Ըստ համաձայնության՝ Իրանը պետք է թույլատրի Ատոմային էներգիայի միջազգային գործակալության մասնագետներին մուտք գործել իր միջուկային օբյեկտներ, իսկ արևմտյան երկրները քայլ առ քայլ պետք է վերացնեն Իրանի դեմ կիրառված պատժամիջոցները: Համաձայնությունը պետք է վավերացվի բոլորի կողմից և հավանության արժանանա ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի կողմից:

Ըստ այս համաձայնության՝ Իրանի հարստացված ուրանի մեծ մասը պետք է դուրս բերվի երկրից, երկրի միջուկային օբյեկտներից ոչ մեկը չպետք է ապամոնտաժվի, ուրանի հարստացման կենտրոններից մեկը պետք է դառնա գիտահետազոտական կենտրոն, ԱԷՄԳ-ն պետք է 20 տարի ժամկետով միջուկային օբյեկտներ մուտք գործելու իրավունք ստանա, որը թույլ կտա հետևել Իրանի միջուկային խաղաղ ծրագրին, և ԱՄՆ-ի, Եվրամիության և ՄԱԿ-ի ԱԽ-ի պատժամիջոցները վերջնականապես կվերացվեն միայն այն բանից հետո, երբ համապարփակ համաձայնություն կկնքվի Իրանի և վեցյակի միջև:

Այսպիսով, հստակ առաջընթաց գրանցվեց վերջին տասնամյակում մերձավորարևելյան տարածաշրջանը և ամբողջ միջազգային հանրությանը լարվածության մեջ պահող կարևորագույն հարցերից մեկում: Իրանյան միջուկային ծրագիրը մեծ ազդեցություն ուներ վերջին տարիներին տարածաշրջանում ընթացող իրադարձությունների վրա: Այն իր արձագանքը գտավ նաև սաուդա-իրանական հարաբերություններում:

Ստորև ներկայացնում ենք, թե ինչպես Իրանը սկսեց զարգացնել սեփական միջուկային ծրագիրը, և ինչ հետևանքներ այն ունեցավ Իրանի և սաուդա-իրանական հարաբերությունների վրա սկզբնական շրջանում:

2002թ. օգոստոսի 14-ին իրանյան ընդդիմադիր ուժերը պահանջում էին ղեկավարությունից վերաբացել Իրանի Նաթանզ քաղաքում գտնվող ուրանի

հարստացման կենտրոնը և Արակում գտնվող ծանր ջրային կառույցները: Որպես հետևանք՝ տարբեր երկրներ պահանջում էին միջազգային հետաքննություն: Նույն տարվա դեկտեմբերի 13-ին ԱԷՄԳ-ի գլխավոր քարտուղար Ալ-Բարադեին հայտարարեց, որ գործակալությունը տեղյակ է այս երկու կառույցներից: 2003 թ. սկզբին Իրանը հաստատեց Նաթանզում ուրանի հարևտացման կենտրոնի գոյությունը: Նույն թվականի փետրվարին Ալ-Բարադեին այցելեց Իրան և խուզարկեց Նաթանզի կառույցները: Հետագայում նա նշեց, որ Իրանը պնդում է այն մասին, որ սեփական միջուկային խաղաղ ծրագիրը զարգացնելու իրավունք ունի: Նա նաև նշեց, որ Իրանը խախտել է միջուկային զենքի չտարածման վերաբերյալ համաձայնագրում ստանձնած իր պարտավորությունները¹: 2003 թ. օգոստոսին Իրանը պաշտոնապես հայտարարեց, որ պատրաստ է բանակցելու ԱԷՄԳ-ի հետ այս հարցի շուրջ և համապատասխան արձանագրություն ստորագրելու: Սակայն եվրոպական մի շարք երկրներ պնդեցին, որպեսզի Իրանն ընդունի ներկայացվող արձանագրությունը և դադարեցնի իր միջուկային ծրագրի ստեղծմանն ուղղված բոլոր քայլերը: 2003 թ. հոկտեմբերին եվրոպական երկրների երեք արտգործնախարարներ համաձայնության եկան Իրանի հետ, ինչի արդյունքում Իրանը վավերացրեց իրեն ներկայացված արձանագրությունը և դրա ուժի մեջ մտնելը: Նոյեմբերի 10-ին Իրանը ԱԷՄԳ ուղարկեց պաշտոնական նամակ, որում հայտարարեց իր համաձայնությունը ներկայացված արձանագրությանը, իսկ նոյեմբերի 21-ին կառավարիչների խորհուրդը վավերացրեց այդ արձանագրությունը: Մի քանի օր անց այդ խորհուրդն ընդունեց Իրանի միջուկային ծրագրի դեմ ուղղված եվրոպական երկրների երկրորդ որոշումը: 2004 թ. փետրվարին Իրանը և եվրոպական մի քանի երկրներ ստորագրեցին ևս մեկ համաձայնագիր Բեյզիայում: Սակայն մեկ ամիս անց ընդունվեց եվրոպական երկրների կողմից առաջարկված մեկ այլ որոշում, որը կրկին ուղղված էր Իրանի միջուկային ծրագրի դեմ: Հետագայում՝ 2004 թ. հունիսին և սեպտեմբերին, ևս երկու որոշում ընդունվեց Իրանի դեմ, ինչից հետո եվրոպական երկրների հետ վարած բանակցությունների արդյունքում Իրանը նոյեմբերին ստորագրեց Փարիզի համաձայնագիրը, որով պարտավորվում էր դադարեցնել Սպահանում տեղակայված ուրանի փոխարկման կենտրոնի գործունեությունը: Սակայն 2004 թ.

¹ Amir M.Haji-Yousefi, “Iran’s Foreign Policy during Ahmadinejad: From Confrontation to Accommodation”, Concordia University, Montreal, Canada 2010, p.7.

նոյեմբերի 29-ին Իրանի դեմ ընդունվեց ևս մեկ որոշում²:

Իրանի արտաքին և միջուկային քաղաքականությունը փոխվեց, երբ 2005 թ. գարնանը իշխանության եկավ Մահմուդ Ահմադինեջադը: Դրանից հետո Իրանի քաղաքական ղեկավարությունը, մասնավորապես արտաքին քաղաքականության պատասխանատուները եկան այն եզրահանգման, որ ԱՄՆ-ի և Եվրոպայի գլխավոր նպատակը ոչ միայն Իրանի միջուկային ծրագրի դադարեցմանն ուղղված շարունակական քայլերի ձեռնարկումն է, այլև դրա իսպառ դադարեցումը: Այդ իսկ պատճառով որոշում ընդունվեց փոխել արտաքին քաղաքական կուրսը:

Իրանը հայտարարեց, որ եվրոպական երկրները չեն կատարում իրենց պարտականությունները, որոնք ստանձնել են Փարիզի համաձայնագրով, և դժգոհություն արտահայտեց այդ կապակցությամբ: Այնուհետև պաշտոնական նամակով Իրանը դիմեց ԱԷՄԳ-ին, որով գլխավոր քարտուղարին տեղեկացնում էր, որ իսլամական հանրապետությունը վերսկսում է Իսֆահանում գտնվող ուրանի փոխարկման կենտրոնի աշխատանքները³: Աշխատանքների վերսկսումից մի քանի օր անց Եվրոպան Իրանին առաջարկեց բազմակողմ պլան, որը մերժվեց, քանի որ դրանով Եվրոպան կրկին պնդում էր դադարեցնել մի քանի կենտրոնների գործունեությունը: Դրանից հետո ևս մեկ որոշում ընդունվեց ԱԷՄԳ-ի կողմից՝ ուղղված Իրանի դեմ, որով կոչ էր արվում դադարեցնել ուրանի հարստացմանն ուղղված աշխատանքները:

2005 թ. սեպտեմբերի 17-ին ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայում կայացած իր առաջին ելույթի ժամանակ նախագահ Ահմադինեջադը հայտարարեց, որ Իրանի միջուկային ծրագիրը խաղաղ բնույթ է կրում, և նշեց, որ միջուկային զենքերի ստեղծումն արգելված է և հակասում է իսլամական կրոնական սկզբունքներին⁴: Դրանից հետո ԱԷՄԳ-ն ևս մեկ որոշում կայացրեց Իրանի դեմ և կոչ արեց բանակցել եվրոպական երկրների հետ և դադարեցնել ուրանի հարստացումը:

Իրանի միջուկային ծրագիրը հիմնված էր մի քանի սկզբունքների վրա: Նախ՝ Իրանը հայտարարեց, որ շարունակելու է բանակցություններն ու համագործակցությունը ԱԷՄԳ-ի հետ, սակայն երբեք չի բանակցի հարստացման գործընթացի դադարեցման հարցի շուրջ: Հետո Ահմադինեջադի վարչակարգը

² Amir M.Haji-Yousefi, "Iran's Foreign Policy during Ahmadinejad: From Confrontation to Accommodation", Concordia University, Montreal, Canada 2010, p.7.

³ Նույն տեղում, էջ 9:

⁴ Նույն տեղում:

տեղեկագիրք հրապարակեց, որում ասվում էր, թե ինչ ֆորմատով օտար երկրները կարող են մասնակցել Իրանի միջուկային ծրագրին:

Միջուկային քաղաքականության կուրսի փոփոխությունն իր ազդեցությունն ունեցավ նաև արտաքին՝ մասնավորապես տարածաշրջանային քաղաքականության վրա: Ահմադինեջադի վարչակարգը հենվում էր այն սկզբունքի վրա, որ անհրաժեշտ է առաջին հերթին ակտիվ համագործակցության մեջ մտնել հարևան, իսլամական և երրորդ աշխարհի երկրների հետ: Առաջնահերթությունը տրվում էր իսլամական պետություններին, մասնավորապես Ծոցի համագործակցության խորհրդի երկրներին: Երկու տարվա ընթացքում Իրանի նախագահը չորս անգամ այցելեց Սաուդյան Արաբիա:

Իրանի միջուկային քաղաքականության փոփոխությունը մեծ ազդեցություն ունեցավ Իրանի և Սաուդյան Արաբիայի հարաբերությունների վրա: Այն ավելի խորացրեց տարածաշրջանային այս երկու գերտերությունների առանց այդ էլ բարդ և լարված հարաբերությունները: Հարաբերությունները լարվեցին նաև Սաուդյան Արաբիայի գործընկեր երկրների հետ, ովքեր միշտ Իրանին դիտում էին որպես անվտանգության սպառնալիք:

ԾՀԽ անդամ-երկրների հետ հարաբերությունների լարվածությունը թուլացնելու համար Իրանի ղեկավարությունը նոր նախաձեռնություններով հանդես եկավ, որոնք ուղղված էին տարածաշրջանում միջուկային ծրագրի հետևանքով առաջացած լարվածության թուլացմանը: Մասնավորապես Թեհրանն առաջարկեց Սաուդյան Արաբիային և Ծոցի արաբական մյուս երկրներին չհարձակման պակտ կնքել: Իրանյան ղեկավարությունը նաև առաջարկեց համաձայնություն կնքել համատեղ պաշտպանության վերաբերյալ, որը նախատեսելու էր, որ այդ երկրները չեն հարձակվելու իրար վրա⁵:

Սաուդյան Արաբիայի և ԾՀԽ անդամ մյուս երկրների պատասխանն այս առաջարկի կապակցությամբ շատ զգույշ էր: Այդ առաքելությունն իր վրա վերցրեց Օմանի արտաքին գործերի նախարարը: Նա հայտարարեց, որ ԾՀԽ երկրները որևէ վտանգ չեն տեսնում Իրանի կողմից: Այս իսկ պատճառով արաբական երկրներն անհրաժեշտ չեն համարում չհարձակման պակտ ստորագրել: Արտգործնախարարը նշեց, որ դեռևս չի հասունացել այնպիսի վիճակ տարածաշրջանում, որը հիմք կհանդիսանար նման պակտի կնքման համար:

⁵ **Розов А. А.** Государства Персидского залива и иранская ядерная программа: анализ взаимосвязей, сайт Института Ближнего Востока, <http://www.iimes.ru/?p=5180>, 26 ноября 2006 г.

Սակայն այս գաղափարը մանրակրկիտ մշակման և համաձայնեցման կարիք ունի: Նա միաժամանակ նշեց, որ Թեհրանի կողմից նկատելի չեն ագրեսիայի դիմելու միտումներ: Ուստի այս պայմաններում չհարձակման պայմանագիր ստորագրելու շուրջ բանակցություններ վարելն անիմաստ է: Համաձայն ԾՀԽ անդամ-երկրների դիրքորոշման՝ կարիք չկար որևէ երրորդ երկրի դեմ համաձայնագիր կնքելու, քանի որ արաբական երկրները չեն տեսնում որևէ վտանգ, որ գալիս է երրորդ երկրի կողմից: Օմանի արտգործնախարարն ավելացրեց, որ Իրանի և ԾՀԽ երկրների հարաբերություններում գլխավորը բարիդրացիական բնույթն է, որը պայմանավորված է տարածաշրջանային համագործակցությամբ: Ճիշտ է, ԾՀԽ երկրները կտրականապես չմերժեցին Իրանի առաջարկությունը, սակայն դիվանագիտական զգուշությամբ հայտարարեցին, որ նման համաձայնագիր կնքելու պահը դեռևս չի հասունացել⁶:

Սաուդյան Արաբիայի արտաքին գործերի նախարարը հայտարարեց, որ Իրանի միջուկային ծրագիրը սպառնալիք չէ իր երկրի համար, սակայն դրա հետ մեկտեղ կոչ արեց Իրանի ղեկավարությանն ավելի մեծ ուշադրություն դարձնել միջազգային հանրության կողմից հնչվող պահանջներին: Սաուդյան ղեկավարությունը հայտարարեց, որ Բուշեի ատոմակայանում օգտագործվող տեխնոլոգիան անվտանգ չէ: Թագավորությունում կարծում էին, որ Իրանի միջուկային ծրագրի հավակնությունները, ի տարբերություն իրաքյանի, իրական են: Սակայն միաժամանակ իրենց մտահոգությունն էին հայտնում ամերիկյան օդային ուժերի կողմից ռազմական հրթիռներով իրանյան միջուկային ծրագրի իրականացմանն ուղղված կենտրոններին հարվածելը, քանի որ դա կարող էր ավելի վատթարացնել իրավիճակը⁷:

ԱԷՄԳ-ի զեկույցի համաձայն՝ Սաուդյան Արաբիան և Լա հինգ արաբական երկիր կարող են զարգացնել ատոմային էներգիա: Սակայն Բուշ Կրտսերի վարչակարգը չէր ողջունում իր դաշնակից Սաուդյան Արաբիայի կողմից ատոմային էներգիայի զարգացման ուղղությամբ վերջինիս ունեցած հավակնությունները և դրանք իրագործելու հնարավոր ծրագրերը: Միացյալ Նահանգներն ավելի կողմնակից էր, որպեսզի իր դաշնակիցները Պարսից ծոցում Սաուդյան Արաբիայի գլխավորությամբ համախմբվեն և հակակշիռ ստեղծեն իրանական վտանգի դեմ:

⁶ Նույն տեղում:

⁷ A.Ehteshami and M.Zweiri, "Iran's Foreign policy, from Khatami to Ahmadinejad", Lebanon 2008, p. 125

Այս իրավիճակն էր տիրում տարածաշրջանում, երբ 2007 թ. մարտի 5-ին պաշտոնական այցով Սաուդյան Արաբիա ժամանեց Իրանի նախագահ Ահմադինեջադը: Նրա և Աբդալլահ թագավորի միջև տեղի ունեցան բանակցություններ: Բանակցությունների ընթացքում կենտրոնական թեմաներն էին տարածաշրջանի որոշ երկրներում (օրինակ՝ Լիբանանում և Իրաքում) տիրող քաղաքական լարված իրավիճակը և իրանյան միջուկային ծրագիրը: Իրանի նախագահը մինչև Սաուդյան Արաբիա մեկնելը հարցազրույցի ժամանակ նշել էր, որ Իրանն ու Սաուդյան Արաբիան պետք է համատեղ գործեն, ինչպես տարածաշրջանում, այնպես էլ իսլամական աշխարհում⁸:

Բանակցություններից հետո Սաուդյան Արաբիայի արտաքին գործերի նախարարության տարածած հայտարարության համաձայն՝ դրանք հաջող են անցել, և դա պայմանավորված է նրանով, որ երկու երկրներին միավորում են «մեկ հավատի» կապերը: Սաուդյան և իրանյան պաշտոնական հայտարարությունների մեջ նշվում էր, որ մուսուլմանական աշխարհին սպառնացող ամենախոշոր վտանգը սուննիների և շիաների միջև թշնամանք սերմանելու փորձերն են, որոնց դեմ անհրաժեշտ է համապատասխան գործողություններ կատարել⁹:

Սաուդյան Արաբիայի արտաքին գերատեսչության հայտարարության մեջ ասվում էր նաև, որ Իրանի հետ համաձայնություն է ձեռք բերվել տարածաշրջանային մի շարք հարցերի վերաբերյալ: Իրանն իր հավանությունն է տվել 2002 թ. Սաուդյան Արաբիայի կողմից առաջարկված խաղաղ նախաձեռնությանը, որը վերաբերում էր պաղեստինա-իսրայելյան հակամարտության կարգավորմանը: Երկուստեք կարևորվել էր, որ անհրաժեշտ է պահպանել Իրաքի անկախությունն ու միասնականությունը: Իսկ Լիբանանի կապակցությամբ նշվել էր, որ թե՛ Իրանը և թե՛ Սաուդյան Արաբիան հույս ունեն, որ այնտեղ շուտով քաղաքական դաշտում կհաստատվի խաղաղություն, և կստեղծվի ազգային միասնության կառավարություն: Իրանի միջուկային ծրագրի վերաբերյալ ոչ մի հայտարարություն այս անգամ չարվեց¹⁰:

Այդ ժամանակ Իրանը փորձում էր ամեն կերպ խուսափել ԵՄ-ի և ԱՄՆ-ի կողմից հնարավոր պատժամիջոցների կիրառումից: Սաուդյան Արաբիան և ԾՀԽ անդամ մյուս արաբական երկրները չէին ցանկանում, որպեսզի

⁸ Косач Г. Г., О визите президента ИРИ М. Ахмадинежада в Саудовскую Аравию, сайт Института Ближнего Востока, <http://www.iimes.ru/?p=5519>, 5 марта 2007 г.

⁹ Նույն տեղում:

¹⁰ Նույն տեղում:

Իրանի միջուկային ծրագրի հարցը ռազմական ճանապարհով լուծվի և դրա համար զգույշ դիվանագիտական հայտարարություններով էին հանդես գալիս սկզբնական շրջանում:

Ահա այսպիսին էին Սաուդյան Արաբիայի և Իրանի Իսլամական Հանրապետության միջև հարաբերությունները, երբ 2005 թ. Իրանի նախագահական ընտրություններից հետո կտրուկ փոփոխություն կատարվեց երկրի միջուկային ծրագրի քաղաքականության հարցում, ինչն իր մեծ ազդեցությունն ունեցավ երկրի արտաքին քաղաքական կուրսի վրա:

ԱՄՓՈՓՈՒՄ

Սաուդյան Արաբիան և Իրանի Իսլամական Հանրապետությունը հզոր տերություններ են մերձավորարևելյան տարածաշրջանում: Նրանց միջև առկա տարածայնություններն իրենց դրսևորումներն են ունենում ինչպես կրոնամշակութային, այնպես էլ տարածաշրջանային հակամարտության ենթատեքստերում: Հոդվածում ներկայացված են Իրանում 2005 թ. նախագահական ընտրություններից հետո Իրանի միջուկային ծրագրի շուրջ ստեղծված լարվածությունը և տարածաշրջանային իրավիճակը:

Բանալի բաներ – Սաուդյան Արաբիա, Իրան, ընտրություններ, միջուկային, պաշտոնական, պատժամիջոցներ, ԱԷՄԳ, համաձայնագիր, պակտ, նախագահ:

САУДОВСКО-ИРАНСКИЕ ОТНОШЕНИЯ ПОСЛЕ ПРЕЗИДЕНТСКИХ ВЫБОРОВ В ИРАНЕ В 2005 ГОДУ

СЕРГЕЙ ВОСКАНЯН

Саудовская Аравия и Исламская Республика Иран влиятельные и сильные региональные игроки на Ближнем Востоке. Разногласия между этими странами проявляются как на религиозно-культурной почве, так и в контексте регионального соперничества.

В статье представлены региональная ситуация и напряжение вокруг иранской ядерной программы после президентских выборов в Иране в 2005 году.

Ключевые слова – Саудовская Аравия, Иран, выборы, ядерная, официальный, санкции, МАГАТЭ, соглашение, пакт, президент.

SAUDI-IRANIAN RELATIONS AFTER THE IRANIAN PRESIDENTIAL ELECTIONS, 2005

SERGEY VOSKANYAN

Saudi Arabia and The Islamic Republic of Iran are both powerful regional players in the Middle East. The disagreements between these two countries are embodied in both the religious-cultural and the regional rivalry contexts.

This article presents the created situation and strain in the Persian Gulf region around the Iranian nuclear program after the Iranian presidential elections, 2005.

Key words – Saudi Arabia, Iran, elections, nuclear, official, sanctions, IAEA, agreement, pact, president.

ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԴԻՎԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

ԱՆՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Գլոբալացման և տարածաշրջանային ինտեգրման գործընթացների համատեքստում օրըստօրե աճում են խորհրդարանական դիվանագիտության դերն ու կշիռը միջազգային հիմնախնդիրների կարգավորման գործընթացում:

2010թ. հոկտեմբերի 28-ին Տավրիկյան պալատում անցկացված «ԵԱՀԿ և ԱՊՀ. նոր հնարավորություններ ու հեռանկարներ» թեմայով միջազգային խորհրդարանական համաժողովի ժամանակ ԱՊՀ ՄԽՎ պաշտպանության և անվտանգության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Վ. Վոյտենկոն իր զեկույցի շրջանակներում նշեց. «... Արդի հանրությունը մոտեցել է գլոբալ կառավարման բազմակենտրոն համակարգի արժեքի գիտակցմանը, որը սահմանափակում է ազգային եսասիրությունը և խոչընդոտում երկրների՝ սեփական խնդիրներն այլոց հաշվին լուծելու փորձերը: Այդպիսի պայմաններում խորհրդարանական դիվանագիտությունը դառնում է միջազգային հարաբերությունների բազմագործառական, պահանջված և պրագմատիկ գործիք»¹:

Միջազգային հարաբերությունների արդի կառուցվածքում խորհրդարանական դիվանագիտությունն արդեն իսկ կարևոր դեր է ստանձնել՝ ապացուցելով իր անհրաժեշտությունն ու բարձր արդյունավետությունը փոխադարձ կարևորության հարցերի շուրջ ազգամիջյան երկխոսությունը զարգացնելու և ժողովուրդների միջև փոխվստահություն ու համագործակցություն հաստատելու գործում: Ներկայացնելով իրենց ժողովրդի կողմից ընտրված լեգիտիմ իշխանությունը՝ խորհրդարանականները միջազգային երկխոսության մեջ ավելի ազատ են և կարող են այս կամ այն գաղափարն ավելի արագ հասցնել իրենց գործընկերներին՝ հող նախապատրաստելով դրանց քննարկման և իշխանության գործադիր մարմինների մակարդակում որոշումների ընդունման համար: Հաշվի առնելով խորհրդարանական դիվանագիտության մեծ ճկու-

¹ Вестник Межпарламентской Ассамблеи, Санкт-Петербург, 2011, № 1(57), с. 50-51.

նությունը փոխզիջումներ գտնելու հարցում՝ կարևորվում է նրա դերը հատկապես միջազգային այնպիսի բարդ հիմնախնդիրների լուծման գործում, որոնք կապված են չկարգավորված հակամարտությունների և տարածքային վեճերի հետ, ինչը մեր երկրի համար ունի հատուկ արդիականություն:

Հակամարտություններով լի մեր տարածաշրջանում կայուն խաղաղության հաստատումն առաջնահերթություն է, որն ստիպում է նորովի արժևորել հակամարտությունների ժամանակ ուժի չկիրառման, դրանք բացառապես խաղաղ ճանապարհով կարգավորելու դերն ու նշանակությունը: Այս իմաստով մեր պետական և ազգային անվտանգության հիմնական բաղադրիչը շարունակում է մնալ Լեռնային Ղարաբաղի հիմնախնդիրը, որի հանգուցալուծման գործընթացը պահանջում է դիվանագիտության բոլոր ճյուղերի փոխհամաձայնեցված աշխատանք: Դրանում կարևոր դեր է բաժին ընկնում խորհրդարանական դիվանագիտությանը:

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովը լայն ներկայացված է տարբեր միջազգային խորհրդարանական կառույցներում և իր ակտիվ մասնակցությունն է բերում ՀՀ արտաքին քաղաքական կուրսի կյանքի կոչման և միջազգային հարթակներում մեր ազգային շահերի համակողմանի պաշտպանության գործընթացին: Ի թիվս ՀՀ արտաքին քաղաքական օրակարգի այլ առաջնահերթությունների՝ խորհրդարանի մշտական ուշադրության կենտրոնում է Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ կարգավորման խնդիրը:

Հիմնախնդրի վերաբերյալ համատեղ հայտարարություններով պարբերաբար իրենց դիրքորոշումն են հայտնել Ազգային ժողովի խմբակցությունները: Խորհրդարանում ներկայացված են տարբեր քաղաքական հայացքներ ունեցող ուժեր, բայց ԼՂ հիմնախնդրի հարցում չկան հատվածական շահեր, և հակամարտության կարգավորման ռազմավարական հարցերում նրանց կեցվածքը հստակ է. հակամարտությունը պետք է լուծվի բացառապես խաղաղ ճանապարհով, իսկ կարգավորման գործընթացում ձեռք բերված յուրաքանչյուր պայմանավորվածություն պետք է արժանանա ԼՂՀ մեր հայրենակիցների հավանությանը:

Ղարաբաղյան հակամարտության կարգավորման ուղիների շուրջ Ազգային ժողովում բազմիցս տեղի են ունեցել քննարկումներ: Հիմնախնդրին լայն հասարակական հնչեղություն հաղորդելու առումով մեծ նշանակություն ունեցան 2005 թ. մարտին Աժ արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողովի կողմից կազմակերպված «Լեռնային Ղարաբաղի հիմնախնդիր.

կարգավորման ուղիներ» թեմայով երկօրյա խորհրդարանական լսումները, որոնք նպատակ ունեին ճշգրտելու խորհրդարանական դիվանագիտության հնարավորությունները հակամարտության կարգավորման գործընթացում, համակարգելու և ամբողջացնելու հայկական կողմի մոտեցումներն ու դիրքորոշումները: Լսումների ժամանակ ԼՂ հակամարտության կարգավորման գործընթացում խորհրդարանական դիվանագիտության առավելություններին անդրադառնալով՝ ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի նախագահի խորհրդական Խաչատուր Բեգիրջյանն ասաց. «... Եթե գործադիր իշխանությունը ներկայացնող պաշտոնատար անձինք պարտավոր են քաղաքական նույն գծին հետևել, ապա խորհրդարանականներն ազատ են, միջազգային ֆորումներում կարող են տրամագծորեն հակառակ կարծիքներ հայտնել և տարբեր կերպ քվեարկել: Նույն պատճառներով ավելի հեշտ է մեր ցանկացած որոշումներին հասնել այլ երկրների խորհրդարաններում, քան այդ երկրների գործադիր իշխանություններում»²:

Ադրբեջանն այսօր աշխարհի գրեթե բոլոր քաղաքական հարթակներն օգտագործում է հակահայկական քարոզչություն իրականացնելու համար: Օգտվելով հատկապես միջազգային խորհրդարանական կազմակերպություններում շատերի անտեղյակությունից՝ ադրբեջանական կողմը ջանք չի խնայում կեղծ տեղեկատվությամբ դարաբաղյան հիմնախնդրի էությունը նենգափոխելու համար: Խորհրդարանական դիվանագիտության ներուժը մեծապես կարևորվում է հակամարտության իրական պատկերը վերականգնելու և հիմնախնդրին միջազգային հնչելություն հաղորդելու գործընթացում: Ազգային ժողովն այսօր աչքի է ընկնում երկկողմ և բազմակողմ գործընկերային կապերի լայն աշխարհագրությամբ և կարող է շփումներ հաստատել նաև այնպիսի երկրների հետ, որոնց հետ Հայաստանը չունի դիվանագիտական հարաբերություններ:

Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման գործընթացում խորհրդարանական դիվանագիտության հիմնական իրականացնողներից մեկն Ազգային ժողովի նախագահն է, ով տարբեր երկրների բարձրաստիճան պաշտոնյաների հետ հանդիպման, ինչպես նաև միջազգային համաժողովների ժամանակ տարածաշրջանային անվտանգության համատեքստում մշտապես անդրադառնում է հիմնախնդրին՝ վերահաստատելով խաղաղ կարգա-

² «Լեռնային Ղարաբաղի հիմնախնդիր. կարգավորման ուղիներ», Երևան, 2006, էջ 78- 79:

վորման համաձայնեցված սկզբունքների հանդեպ մեր երկրի հավատարմությունը, միջազգային հանրության ուշադրությունը հրավիրում Ադրբեյջանի՝ պետական քարոզչության մակարդակի հասած ռազմատենչ հայտարարություններին, որոնց պատճառով չեզոքանում են հակամարտության կարգավորմանն ուղղված ջանքերը:

Հաշվի առնելով, որ նամակագրությունը ևս ընդունված ձևաչափ է միջպետական հարաբերություններում առաջ եկած խնդիրները քննարկելու համար, խորհրդարանի ղեկավարները բազմիցս նամակով իրենց մտահոգությունն են հայտնել միջազգային հանրությանը՝ Ադրբեյջանի կողմից ղարաբաղյան հիմնախնդրի էությունը խեղաթյուրող կեղծ տեղեկատվության տարածման և դրա ազդեցությամբ ընդունվող ոչ հայանպաստ բանաձևերի ու զեկույցների առնչությամբ:

2009թ. մայիսի 14-ին Սանկտ Պետերբուրգում տեղի ունեցած ԱՊՀ միջխորհրդարանական վեհաժողովի 32-րդ լիագումար նիստի բացման ընթացքում ԵԱՀԿ խորհրդարանական վեհաժողովի անունից ելույթով հանդես էր եկել Ադրբեյջանի Միլի Մեջլիսի փոխնախագահ, ԵԱՀԿ ԽՎ-ում Ադրբեյջանի պատվիրակության ղեկավար Բահար Մուրադովան՝ փորձելով իր ելույթն օգտագործել ղարաբաղյան հակամարտության վերաբերյալ խեղաթյուրված փաստեր ներկայացնելու համար: Այդ ելույթի կապակցությամբ չորրորդ գումարման Ազգային ժողովի նախագահ Հովիկ Աբրահամյանը նամակ էր հղել ԵԱՀԿ ԽՎ-ի նախագահ Ժոաո Սոարեշին. «Անընդունելի է, որ Լեռնային Ղարաբաղի հակամարտության կողմերից մեկը ներկայացնող պետության պատգամավորը, այդ բարձր ամբիոնից ներկայացնելով Ձեր ողջունի խոսքը, այն օգտագործում է Հայաստանի դեմ կեղծիքներ տարածելու և Լեռնային Ղարաբաղի հակամարտության վերաբերյալ ապատեղեկատվություն պարունակող արտահայտություններ հնչեցնելու համար: ... Հուսով եմ, որ ԵԱՀԿ խորհրդարանական վեհաժողովը չի շեղվի իր որդեգրած ուղուց»³:

2010թ. մայիսի 21-ին մեկ այլ նամակով Հովիկ Աբրահամյանը Եվրախորհրդարանի նախագահ Եժի Բուզեկին իր մտահոգությունն էր հայտնել նախօրեին Եվրախորհրդարանի ընդունած «Հարավային Կովկասում Եվրամիության կողմից ռազմավարություն մշակելու անհրաժեշտության մասին»

³ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պաշտոնական կայք, ՀՀ ԱԺ նախագահ Հովիկ Աբրահամյանը նամակ է հղել ԵԱՀԿ ԽՎ նախագահին, 22.05.2009, http://www.parliament.am/news.php?cat_id=2&NewsID=3353&year=2009&month=05&day=22&lang=arm:

բանաձևում տեղ գտած որոշ դրույթների առնչությամբ: Աժ նախագահն իր նամակում մասնավորապես նշել էր, որ բանաձևի հեղինակ, բուլղարացի պատգամավոր Եվգենի Կիրիլովը երբևէ առնչություն չի ունեցել Լեռնային Ղարաբաղի խնդրին և զեկույցի պատրաստման ընթացքում չի այցելել տարածաշրջան՝ հարկ չհամարելով նաև խորհրդակցել բանակցային գործընթացում միջնորդների՝ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների հետ, ինչը Լեռնային Ղարաբաղին վերաբերող ձևակերպումներում անհանդուրժելի խեղաթյուրումների պատճառներից է: Այս կարգի մոտեցումը Աժ նախագահի խոսքով վնաս է հասցնում Եվրախորհրդարանի հեղինակությանը և լուրջ բացասական ազդեցություն կարող է ունենալ ղարաբաղյան հիմնախնդրի կարգավորման գործընթացի վրա»⁴:

Միջազգային հանրության մեջ ղարաբաղյան հիմնախնդրի վերաբերյալ օբյեկտիվ պատկերացում ձևավորելու ուղղությամբ մեծ աշխատանք է տարվում հատկապես Աժ երկու՝ արտաքին հարաբերությունների և եվրոպական ինտեգրման հարցերի մշտական հանձնաժողովների կողմից: Հանդիպումների և փոխայցերի ժամանակ հանձնաժողովի անդամները գործընկեր երկրների խորհրդարանականներին ներկայացնում են հիմնախնդրի իրական էությունը, մատնանշում Ադրբեյջանի պատասխանատվությունը հակամարտությունը սրելու, ապակառուցողական գործելակերպով բանակցային գործընթացը խոչընդոտելու հարցում: Օգտվելով բաց ու անկեղծ քննարկումների՝ խորհրդարանական դիվանագիտության ընձեռած հնարավորությունից՝ խորհրդարանականները բազմիցս նաև իրենց դժգոհությունն ու վրդովմունքն են արտահայտել եվրոպացի գործընկերներին՝ վերջիններիս ոչ այնքան հայանպաստ հայտարարությունների և բանաձևերի առնչությամբ՝ հորդորելով նրանց Հարավային Կովկասի հարցում լինել անկողմնակալ:

2013թ. ադրբեյջանական ԶԼՄ-ները, հղում անելով Ադրբեյջանի ԱԳՆ մամուլի ծառայության ղեկավար Էլման Աբդուլահին, հայտնել էին, որ Չեխիայի Հանրապետության խորհրդարանի պատգամավորների պալատի արտաքին հարաբերությունների հանձնաժողովն ընդունել է Խոջալուի վերաբերյալ բանաձև, որում դատապարտել է Խոջալուի «էթնիկ զտումները» և «ճանաչել

⁴ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պաշտոնական կայք, ՀՀ Աժ նախագահ Հովիկ Աբրահամյանի նամակը Եվրախորհրդարանի նախագահ Եժի Բուզեկին, 21.05.2010,

http://www.parliament.am/news.php?cat_id=2&NewsID=3957&year=2010&month=05&day=21:

Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը», ներառյալ Լեռնային Ղարաբաղը: Չեխիայի Հանրապետության ԱԳՆ Հյուսիսային և Արևելյան Եվրոպայի երկրների վարչության պետ Ելիշկա Ժիգովայի հետ հանդիպման ժամանակ ԱԺ Եվրոպական ինտեգրման հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Նաիրա Զոհրաբյանն իր վրդովմունքն էր հայտնել հիշյալ բանաձևի նախագծի առնչությամբ՝ նշելով, որ «...եթե ցանկանում ենք իրապես ունենալ եվրոպական ընտանիք, ապա պետք է ուղղակիորեն թույլ չտալ, որ նման խայտառակ բանաձևեր ընդունվեն Եվրամիության անդամ-երկրի խորհրդարանում»⁵: Խոջալուի բանաձևի նախագծի առնչությամբ իր չեփ գործընկերոջը նամակ էր հղել ԱԺ արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողովի նախագահ Արտակ Զաքարյանը՝ արտահայտելով Հայաստանի խորհրդարանի մտահոգությունն ու դիրքորոշումը:

Միջազգային հանրության աջակցությունը ձեռք բերելու և հայանպաստ մոտեցումներ առաջ տանելու գործում չափազանց պատասխանատու դեր է բաժին ընկնում ՀՀ խորհրդարանական պատվիրակություններին: Լեռնային Ղարաբաղի հիմնախնդիրը քննարկվում է հիմնականում երեք (ԵԱՀԿ, ԵԽ, ՆԱՏՕ) միջազգային կազմակերպությունների խորհրդարանական վեհաժողովներում, որտեղ հայ խորհրդարանականները ներկայացնում են հիմնախնդրի վերաբերյալ իրենց դիրքորոշումներն ու առաջարկները, միջազգային հանրությանը կոչ անում ավելի հստակ գնահատական տալ Ադրբեջանի ապակառուցողական գործելակերպին, դատապարտել նրա սադրիչ գործողությունները և հետևել, որպեսզի այդ պետությունն անշեղորեն կատարի հակամարտության կարգավորման գործընթացում ստանձնած պարտավորությունները: Եվրոպական կառույցներում ԼՂ հիմնախնդրի վերաբերյալ օբյեկտիվ տեղեկացվածության ապահովման նպատակով հայ խորհրդարանականներն իրենց օտարերկրացի գործընկերներին փոխանցում են փաստավավերագրական նյութեր, տրամադրում տեղեկատվություն հակամարտության ծագման ու ծավալման իրական պատճառների մասին:

Խորհրդարանականների կողմից անպատասխան չեն մնում նաև հիմնախնդրի կարգավորման գործընթացը նոր հարթակներ տեղափոխելու կամ ԵԱՀԿ Մինսկի խմբին զուգահեռ բանակցային գործընթաց սկսելու Ադրբեջանի

⁵ Նույն տեղում, Հանդիպում ՀՀ ԱԺ Եվրոպական ինտեգրման հարցերի մշտական հանձնաժողովում, 12.03.2013.

http://www.parliament.am/news.php?cat_id=2&NewsID=5763&year=2013&month=03&day=12&lang=arm:

փորձերը: Ըստ Արտակ Ջաքարյանի՝ Հայաստանն ադրբեջանական պատվիրակության դեմ պայքարի դառը փորձ ունի հատկապես նորաստեղծ Արևելյան գործընկերության ԵՎՐԱՆԵՍԹ խորհրդարանական ձևաչափում⁶: Ադրբեջանը զերծ չի մնացել այս ձևաչափը ևս տարածաշրջանային վեճերի հարթակ դարձնելուց, ինչը հանգեցրել է նրան, որ հայկական պատվիրակության պնդմամբ մտցվել է վետոյի իրավունք: Բացի այդ, ԵՎՐԱՆԵՍԹ ԽՎ-ում հայկական պատվիրակության անդամները բազմիցս հորդորել են ԵՎՐԱՆԵՍԹ-ի բյուրոյին թույլ չտալ Ադրբեջանին շեղել վեհաժողովն իր հիմնական նպատակից՝ արևելյան գործընկերների եվրոպական ինտեգրացիայից:

2013թ. Le Huffington Post թերթում հրապարակված հոդվածում Ֆրանսիայի Ազգային ժողովի պատգամավոր Ֆրանսուա Ռոշերլուանը գրել էր, որ Լիտվայի խորհրդարանում ԼՂՀ-ի հետ բարեկամության խմբի ստեղծումը վկայում է այդ նոր ժողովրդավարության հանդեպ միջազգային հանրության համակրանքի մասին⁷: Ասվածի համատեքստում չափազանց կարևոր են միջազգային հանրության ներկայացուցիչների ճանաչողական այցերը ԼՂՀ, որոնք խորհրդարանական դիվանագիտության ջանքերի շնորհիվ դարձել են ավելի հաճախակի:

2010թ. հոկտեմբերի 29-ին ՀՀ ԱԺ նախագահի հետ հանդիպման ժամանակ Եվրախորհրդարանի պատգամավոր Դամիեն Աբադը, ներկայացնելով իր տպավորությունները Լեռնային Ղարաբաղ կատարած այցելությունից, ասաց. «Ինձ ցնցեց, որ Ղարաբաղում ապրող ժողովուրդ կա, որ այնտեղ գործում են պետական կառույցներ և ժողովրդավարական ինստիտուտներ»⁸: Եվրախորհրդարանի պատգամավորի խոսքով արցախյան հիմնախնդրին առավել մոտիկից ծանոթանալու համար կարևոր են նման այցերը, քանի որ Եվրախորհրդարանի պատգամավորներից շատերը լավ պատկերացում չունեն կովկասյան տարածաշրջանի խնդիրների մասին:

⁶ Ազատ Արցախ, Խորհրդարանական դիվանագիտական պայքար՝ բոլոր ուղղություններով, 21.05.2013, http://artsakhtert.com/arm/index.php?option=com_content&view=article&id=5084:2013-05-21-06-07-10:

⁷ 168.am., Մենք ցանկանում ենք վերջ դնել ԼՂՀ-ի մեկուսացմանը. Ֆրանսիացի պատգամավոր, 12.04.2013, <http://168.am/2013/04/12/209308.html>:

⁸ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պաշտոնական կայք, ՀՀ ԱԺ նախագահ Հովիկ Աբրահամյանն ընդունեց Եվրոպական խորհրդարանի պատգամավորներին, 29.10.2010, http://www.parliament.am/news.php?cat_id=2&NewsID=4204&year=2010&month=10&day=29:

2011թ. ապրիլի 21-ին Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության խորհրդարանի Բրիտանա-հայկական համակուսակցական խորհրդարանական խմբի նախագահ բարոնուհի Քերոլայն Քոքսն ԱԺ-ում տեղի ունեցած մամլո ասուլիսում, անդրադառնալով Լեռնային Ղարաբաղ կատարած իր այցին, ասաց. «Մենք այնտեղ ականատես եղանք, թե Մինսկի խմբի ձևաչափով բանակցային գործընթացում ինչ առաջընթաց է եղել: Ես կարծում եմ, որ ԼՂ ժողովուրդը պետք է իրավունք ունենա մասնակցելու բանակցային գործընթացին: Ես տեսնում եմ, որ Հայաստանը, հայերը կամք են ցուցաբերել շարժվել այդ սկզբունքների հիման վրա, ու հիմա ադրբեջանցիներն էլ պետք է համագործակցեն»⁹: Համայնքների պալատի անդամ Ջոն Ուիթինգդեյլն իր հերթին խոստացավ Բրիտանիա վերադառնալուն պես Համայնքների պալատին ներկայացնել այն ամենը, ինչին ականատես է եղել Ղարաբաղում, քանի որ թյուր տեղեկություններ կան այդ ամենի վերաբերյալ:

Ղարաբաղյան հիմնախնդրի կարգավորման գործընթացում միասնական դիրքորոշում մշակելու և խորհրդարանական դիվանագիտության հնարավորությունները համակարգելու տեսակետից կարևոր նշանակություն ունի նաև Հայաստան-Արցախ միջխորհրդարանական համագործակցությունը, որի իրավական հիմքը դրվել է 1994թ. մարտի 29-ին ԼՂՀ Գերագույն խորհրդի նախագահության կողմից ընդունված որոշմամբ¹⁰: Համագործակցությունը կազմակերպական առումով իրականացվում է տարբեր ձևաչափերով ու մակարդակներով: ՀՀ ԱԺ-ի և ԼՂՀ ԱԺ-ի միջև համագործակցության միջխորհրդարանական հանձնաժողովի հերթական նիստերից բացի, տեղի են ունենում երկու խորհրդարանների մշտական հանձնաժողովների համատեղ նիստեր: Հակամարտության կարգավորմանն առնչվող հարցերը քննարկվում են նաև երկու երկրների խորհրդարանների նախագահների, նրանց տեղակալների, պատգամավորների աշխատանքային հանդիպումների ընթացքում: ՀՀ Ազգային ժողովում գործում է ԼՂՀ ԱԺ ներկայացուցչությունը:

Այսպիսով, էապես լրացնելով երկրի պաշտոնական դիվանագիտությանը, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովը խորհրդարանական

⁹ Նույն տեղում, Բրիտանա-հայկական համակուսակցական խորհրդարանական խմբի անդամների մամլո ասուլիսն Ազգային ժողովում, 21.04.2011, http://www.parliament.am/news.php?cat_id=2&NewsID=4478&year=2011&month=04&day=21:

¹⁰ Լեռնային Ղարաբաղի/Արցախի/Հանրապետության պաշտոնական կայք, http://nankr.am/page/353/Midzhkhvorhhdaranakan_kaper.html:

դիվանագիտության բոլոր ռեսուրսների գործադրմամբ շարունակաբար իր նպաստն է բերում Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ կարգավորման գործընթացին:

Նախ՝ Ազգային ժողովը քաղաքական բանավեճի բարձրագույն հարթակ է, որտեղ տարբեր քաղաքական ուժեր և հասարակական կազմակերպություններ քննարկում են ԼՂ հիմնախնդիրը, գնահատում հակամարտության կարգավորման գործընթացի դինամիկան, հստակեցնում ու ճշգրտում հայկական կողմի տեսակետներն ու մոտեցումները՝ միջազգային հարթակներում դրանք առավել համակարգված ներկայացնելու համար:

Տեղեկատվական հաղթանակը դիվանագիտական և քաղաքական հաղթանակի ապահովման կարևորագույն միջոց է: Մեր օրերում հենց տեղեկատվական հոսքերն են վճռորոշ դառնում այս կամ այն հիմնախնդրի վերջնական հանգուցալուծման համար: Այս իմաստով չափազանց կարևոր է, որպեսզի Լեռնային Ղարաբաղի վերաբերյալ որոշումներ կայացնող միջազգային ատյաններում հնչեն օբյեկտիվ գնահատականներ, իսկ դրա համար միջազգային հանրությունը պետք է հստակ և անկողմնակալ տեղեկատվություն ունենա հիմնախնդրի վերաբերյալ: Խորհրդարանական դիվանագիտությունն այս ուղղությամբ գործադրում է մեծ ջանքեր. նախապես ձեռք բերված պայմանավորվածությունների հիման վրա պարբերաբար Լեռնային Ղարաբաղ են այցելում միջազգային խորհրդարանական կառույցների ներկայացուցիչներ, տեղում անմիջականորեն ծանոթանում իրավիճակին, ինչը տրամագծորեն փոխում է հիմնախնդրի մասին նրանց՝ մինչ այդ ունեցած պատկերացումները: Իբրև չափելի արդյունք՝ կարող ենք նշել ԼՂՀ Ազգային ժողովի հետ բարեկամական խմբերի թվի աճը:

Տևական խաղաղության ապահովման համար անհրաժեշտ առաջին քայլը հաշտեցումն է, որը ենթադրում է խոր փոփոխություններ հակամարտություն ներգրավված կողմերի գիտակցության մեջ: Խորհրդարանական դիվանագիտությունը՝ իբրև միջնորդ պաշտոնական և ժողովրդական դիվանագիտության միջև, կարող է օգնել հասարակությանը խաղաղության պատրաստելու, ընդունված որոշումները ժողովրդին հասցնելու և փոխվստահության մթնոլորտ ձևավորելու գործում: Սա շատ կարևոր փուլ է հակամարտության կարգավորման գործընթացում, քանզի միջազգային կառույցների ջանքերն այդ ուղղությամբ չեն լինի արդյունավետ, եթե հասարակությունն ինքն այդ լուծումները համարի անարդար:

ԼՂ հակամարտության կարգավորման գործընթացում խորհրդարանական դիվանագիտությունն ունի մի կարևոր գործառույթ ևս՝ տեղեկատվության փոխանցման քվազի-պաշտոնական ճանապարհը, որի օգնությամբ խորհրդարանականներն իրենց եվրոպացի գործընկերներին հորդորում են ղարաբաղյան հիմնախնդրի հարցում չդրսևորել կողմնակալ մոտեցումներ, որոնք կարող են վտանգել բարիդրացիական հարաբերություններն իրենց պետությունների միջև:

Անշուշտ, կան նաև խորհրդարանական դիվանագիտության չօգտագործված ներուժ և խնդիրներ, որոնք խորհրդարանական դիվանագիտության շրջանակներում լուծվում են ոչ բավարար արդյունավետությամբ կամ արագությամբ: Առաջին հերթին դա վերաբերում է Ադրբեյջանի հակահայկական քարոզչությանն արդյունավետ հակազդելուն: Այստեղ ճիշտ կլիներ չսահմանափակվել միայն ադրբեյջանական կողմի սադրիչ հայտարարություններն ու ապատեղեկատվությունը հերքելով, այլ դրսևորել ավելի ակտիվ նախաձեռնողական քաղաքականություն: Խոսքն, իհարկե, նպատակային ակտիվության մասին է, քանզի ինչպես «Realpolitik» ծրագրի շրջանակներում նշեց ԱԺ արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողովի նախագահ Արտակ Զաքարյանը, դիվանագիտությունն ունի նրբերանգներ, և ակտիվություն կա, որն այդ պարագայում կարող է վնասակար լինել¹¹:

Խորհրդարանական դիվանագիտության արդյունավետությունը բարձրացնելու համար հարկավոր է ավելի հաճախ կազմակերպել հակամարտությունների կանխարգելման ու կարգավորման գործընթացում խորհրդարանի դերի գնահատմանը նվիրված քննարկումներ՝ ներգրավելով համապատասխան փորձագետների, մասնագետների, ինչպես նաև ուժեղացնել խորհրդարանական դիվանագիտության վերլուծական բաղկացուցիչը:

Տեղեկատվական առճակատումների դաշտում գործելիս պատմականորեն ավելի փաստարկված հանդես գալու համար պրոֆեսոր Ալեքսանդր Մանասյանը կարևորում է գիտական շրջանակների հետ համագործակցությունը: Նրա խոսքով ԼՂ հիմնախնդրի վերաբերյալ կա չօգտագործված փաստերի ու փաստաթղթերի մեծ փաթեթ, որոնք շրջանառության մեջ դնելը պահանջում է շատ նուրբ աշխատանք: Ըստ պրոֆեսորի՝ ղարաբաղյան հիմնախնդրի կարգավորումը համապետական գիտական հարց է, որը պահանջում է միաս-

¹¹ YouTube.com, REALPOLITIK 02(34) - Արտակ Զաքարյան Armedia, 11.02.2013, <https://www.youtube.com/watch?v=AucckxCJknY>:

նական մոտեցում. «Այդպիսի մոտեցում կարող է տալ միայն գիտությունը, որը պատվիրել կարող է միայն ու միայն պետությունը»¹²:

Անելիքները շատ են, բայց եղածն էլ քիչ չէ կանխատեսելու, որ Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման գործընթացում խորհրդարանական դիվանագիտությունն ունի կայուն հեռանկարներ, և նրա դերն առաջիկայում միայն աճելու է: Խորհրդարանականներն, իհարկե, անմիջական մասնակցություն չունեն բանակցային գործընթացին, դա դիվանագետների, գործադիր իշխանության առանձնաշնորհն է: Խորհրդարանական դիվանագիտության հիմնական խնդիրը կարգավորման գաղափարները զարգացնելն է, բանակցությունների համար բարենպաստ քաղաքական մթնոլորտ ստեղծելը: Իրեն բնորոշ ճկունությամբ խորհրդարանական դիվանագիտությունը նպաստում է քաղաքական գործընթացի մասնակիցների միջև լարվածության թուլացմանը՝ հնարավորություն տալով շփման եզրեր գտնել այնպիսի իրավիճակներում, երբ արարողակարգով սահմանափակված են ավանդական դիվանագիտության հնարավորությունները կամ չեն գործում պաշտոնական դիվանագիտական խողովակները: Ավելին, ինչպես նշեց ՌԴ Դաշնային ժողովի Դաշնության խորհրդի միջազգային գործերի կոմիտեի նախագահ Կոնստանտին Կոսաչյովը, խորհրդարանական դիվանագիտությունը կարող է մնալ այն միակ խողովակը, որի միջոցով շարունակվի երկխոսությունն այնպիսի պետությունների միջև, որոնք դադարել են շփվել կամ հասկանալ միմյանց պաշտոնական դիվանագիտության մակարդակում¹³: Միջազգային փորձը վկայում է, որ փոխգիջումներ որոնելու հարցում խորհրդարանական դիվանագիտությունը պաշտոնականի համեմատ նաև ավելի ճկուն է, և հաճախ այնտեղ, որտեղ դիվանագետները չեն կարողանում հասնել փոխգիջումների, խորհրդարանականների միջազգային համագործակցությունը տալիս է իր արդյունքը: Այստեղ տեղին է հիշել, որ հենց խորհրդարանականներն առաջին անգամ նստեցին Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորմանն ուղղված բանակցությունների սեղանի շուրջ: Կառավարական կառույցների չափազանց կոշտ դիրքորոշումը թույլ չէր տալիս նման քայլ անել¹⁴: Խորհրդա-

¹² YouTube.com, Դիսկուրս. Ալեքսանդր Մանասյան, Արա Պապյան, 23.05.2012, <https://www.youtube.com/watch?v=UKOhTGKxre0>:

¹³ Вести.RU, "Сенат": перспективы развития парламентской дипломатии, 28.01.2015, <http://www.vesti.ru/videos/show/vid/633993/cid/1761/>.

¹⁴ Косов Ю. В., Торпыгин А. В. Содружество независимых государств: институты, интеграционные процессы, конфликты и парламентская дипломатия. М., 2009, с. 191.

րանի ղեկավարների կողմից ստորագրված բիշքեյան արձանագրությունը Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման գործընթացում միակ փաստաթուղթն է, որում Լեռնային Ղարաբաղը ճանաչվել է իբրև հակամարտության լիարժեք կողմ: Այս համաձայնությունը նաև հիմք հանդիսացավ ռազմական գործողությունների դադարեցման համար և մերթնդմերթ արձանագրվող խախտումներով պահպանվում է մինչ օրս:

ԱՄՓՈՓՈՒՄ

Հակամարտություններով լի մեր տարածաշրջանում կայուն խաղաղության հաստատումը թիվ մեկ առաջնահերթությունն է, որն ստիպում է նորովի արժևորել հակամարտությունների ժամանակ ուժի չկիրառման, դրանք բացառապես խաղաղ ճանապարհով կարգավորելու դերն ու նշանակությունը: Այս իմաստով մեր պետական և ազգային անվտանգության հիմնական բաղադրիչը շարունակում է մնալ Լեռնային Ղարաբաղի հիմնախնդիրը, որի հանգուցալուծման գործընթացը պահանջում է դիվանագիտության բոլոր ճյուղերի փոխհամաձայնեցված աշխատանք: Դրանում կարևոր դեր է վերապահված խորհրդարանական դիվանագիտությանը: Էապես լրացնելով երկրի պաշտոնական դիվանագիտությունը՝ ՀՀ Ազգային ժողովը խորհրդարանական դիվանագիտության բոլոր ռեսուրսների գործադրմամբ շարունակաբար իր նպաստն է բերում ԼՂ հակամարտության կարգավորման գործընթացին:

Բանալի բաներ – խորհրդարանական դիվանագիտություն, Լեռնային Ղարաբաղի հակամարտություն, կարգավորում, ՀՀ Ազգային ժողով, միջազգային խորհրդարանական կազմակերպություններ:

РОЛЬ ПАРЛАМЕНТСКОЙ ДИПЛОМАТИИ В ПРОЦЕССЕ УРЕГУЛИРОВАНИЯ НАГОРНО-КАРАБАХСКОГО КОНФЛИКТА

АННА ГРИГОРЯН

В нашем регионе, богатом конфликтами, установление стабильного мира является приоритетом номер один, который заставляет по-новому оценивать роль и значение неприменения силы во время конфликтов, их разрешения исключительно мирным путем. В этом смысле основным компонентом нашей государственной и национальной безопасности по-прежнему остается Нагорно-Карабахский вопрос, процесс решения которого требует согласованной работы всех ветвей дипломатии. Важная роль в нем отводится парламентской дипломатии. Существенно дополняя официальную дипломатию,

Национальное Собрание РА, применяя все ресурсы парламентской дипломатии, постоянно привносит свой вклад в процесс урегулирования Нагорно-Карабахского конфликта.

Ключевые слова – парламентская дипломатия, Нагорно-Карабахский конфликт, урегулирование, Национальное собрание РА, международные парламентские организации.

PARLIAMENTARY DIPLOMACY IN THE NAGORNO KARABAKH CONFLICT

ANNA GRIGORYAN

The establishment of sustainable peace in our region, which is full of conflicts, is a priority. This fact compels us to assess in a new way the essence and importance of the commitment to the exclusion of the use of arms to resolve the conflict of Nagorno Karabakh and its exclusively peaceful settlement. The main issue of our state and national security in this connection continuous to be the problem of Nagorno Karabakh the final resolution of which calls for all kinds of coordinated diplomacy measures among them importantly Parliamentary diplomacy to be put into operation. The RA National Assembly with all its resources and as an alternative form of diplomacy complements the efforts of the RA Ministry of Foreign Affairs parliamentary diplomacy by continuously contributing to the processes concerning the peaceful resolution of the NK conflict.

Key words – parliamentary diplomacy, Nagorno Karabakh conflict, settlement, the RA National Assembly, international parliamentary organizations.

**ՀՈԳԵՎՈՐ- ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԵՎ
ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ**

ԳԱԳԻԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Մշակույթը մարդու գոյության և գործունեության միջավայրն է, կարելի է ասել երկրորդ «բնօրրանը», որտեղ նա ստեղծում, վերարտադրում և սերունդներին է փոխանցում նյութական, հոգևոր, սոցիալական արժեքներ՝ խորհրդանիշների, նորմերի, ավանդույթների ձևով, այսինքն՝ մարդու գործունեության արգասիք է¹: Ազդելով հասարակական գործունեության բոլոր ոլորտների վրա՝ մշակույթը միաժամանակ կրում է աշխարհում և մարդու կյանքում գործընթացների ազդեցությունը ևս: Իր զարգացման հակասականությամբ հանդերձ մշակույթը մնում է սոցիալական փորձի հաղորդման, անձնավորության սոցիալականացման միակ և անփոխարինելի ձևը: Այս համընդհանրական գործառույթների շնորհիվ մշակույթն իրականացնում է հասարակության սոցիոմշակութային միասնության ապահովումը՝ մարդու մեջ պահպանելով նրա գոյության, արժանապատվության և այլ բարոյական հատկանիշների ամբողջությունը: Մշակութային համակարգը, սերտորեն փոխկապակցված լինելով քաղաքական, տնտեսական համակարգերի հետ, սրանցից որևիցե մեկի փոփոխության հետևանքով նույնպես ենթարկվում է փոփոխության²: Այլ խոսքով՝ հասարակության հոգևոր-մշակութային կյանքը կարելի է ընկալել որպես նրա քաղաքական, կրոնաբարոյական և սոցիալ-մշակութային արժեքների վրա հիմնված կեցություն, որն ապահովում է այդ հասարակության ոչ

¹ **Ադո Ա. Վ., Ալտման Վ. Վ. և ուրիշներ**, Փիլիսոփայական բառարան /Երևան, «Հայաստան», 1975թ., էջ 220-221 :

² **Թադևոսյան Ա.**, Մշակութային ինքնության պահպանման և վերարտադրման հիմնահարցերը ՀՀ ազգային անվտանգության համատեքստում //«Նորավանք» ԳԿՀ, ՀՀ ԳԱԱ ՀԱԻ /Երևան, «Բավիղ», 2003թ., էջ 56:

³ **Սարգսյան Ա., Սարգսյան Ս., Հովականյան Յու., Նիկողոսյան Մ., Օհանյան Ս., Մալքոջյան Ա.**, ՀՀ Ազգային անվտանգության հայեցակարգի հոգևորբարոյական հիմնախնդիրները //ՀՊՏՀ, «Ամբերդ» մատենաշար, №10, 2014թ., 87էջ /Երևան, «Տնտեսագետ», 2014թ., էջ 23-24:

նյութական պահանջմունքների բավարարումը, հատկապես այդ արժեքներով պայմանավորված սոցիալ-բարոյական նորմերով սերունդների դաստիարակումը^{4 5 6 7}:

Հոգևոր-մշակութային անվտանգության խնդիրները ներառված են Հայաստանի Հանրապետության (<<) ռազմավարական ծրագրերում և մշակութային քաղաքականության մեջ: Ազգային մշակույթի պաշտպանությունն ամեն տեսակի ոտնձգություններից ի վերջո հասարակական գործունեության բոլոր ձևերի հիմնական գործառույթներից մեկն է, քանի որ մշակույթն ընդգրկում է էթնիկ հանրույթի հաղորդակցման ողջ համալիրը, և տվյալ հանրույթի ինքնատիպությունն էլ պայմանավորված է մշակույթի յուրահատկությամբ^{8 9}: Ազգային մշակույթի անաղարտության պահպանումը կամ, ընդհանուր առմամբ, հասարակական գործունեության հոգևոր-մշակութային ոլորտի անվտանգության ապահովումը յուրաքանչյուր պետության և հասարակության պարտավորությունն է և հիմնախնդիրը^{10 11 12 13 14}: Այս աշխատանքի նպատակն է ցույց տալ հոգևոր-մշակութային անվտանգության բաղադրիչի նշանակությունը, տեղն ու խնդիրները ՀՀ ազգային անվտանգության ապահովման ռազմավարական ծրագրերի և մշակութային քաղաքականության վարման համատեքստում, և, ընդհանուր առմամբ, ազգային անվտանգության համակարգում:

⁴ Տե՛ս հղում N°2, էջ 372:

⁵ Տե՛ս հղում N°3, էջ 10:

⁶ Տե՛ս հղում N°4, էջ 67:

⁷ **Բաբայան Ա.**, Փիլիսոփայություն. Դասախոսությունների համառոտագրեր //<< ԳԱԱ, Փի /Երևան, «Ձանգակ», 2012թ., էջ 318-323 :

⁸ Տե՛ս հղում N°3, էջ 3, 56, 10, 21-22:

⁹ Տե՛ս հղում N°4, էջ 17-18:

¹⁰ Տե՛ս հղում N°3, էջ 62:

¹¹ Տե՛ս հղում N°4, էջ 22-23, 51-69:

¹² **Ամիրյան Դ., Սարգսյան Ա.**, Ազգային մշակույթը որպես ազգի ինքնության ձևավորման պայման /«Հոգեբանություն և կյանք», N°3, 2007թ., էջ 123-124:

¹³ **Քինակցյան Ա. Լ.**, Հոգևորմշակութային անվտանգությունը որպես տեղեկատվական անվտանգության բաղադրիչ //«Բանբեր Երևանի համալսարանի», Հասարակական գիտություններ, Իրավագիտություն, N°3 (134), 2011թ., էջ 22-23 :

¹⁴ Քոչարյան Հ., Տեղեկատվական համակարգի զարգացման հիմնախնդիրները ՀՀ ազգային անվտանգության համատեքստում //«Նորավանք» ԳԿՀ, ՀՀ ԳԱԱ ՀԱԻ /Երևան, «Բավիղ», 2003թ., էջ 16, 31-32, 87, 90-92 :

Ազգային անվտանգության ապահովման, մշակութային ոլորտը կարգավորող պետաիրավական ակտերն ըստ էության ամբողջական չեն լինի, եթե չընդգրկեն ազգային մշակույթի պահպանման, վերարտադրման և կատարելագործման մեխանիզմների ու միջոցառումների համակարգ: Այս նկատառումներն արդիական են, միևնույն ժամանակ հրատապ ՀՀ պարագայում, քանի որ համաշխարհայնացման (գլոբալացման) գործընթացներով և հասարակական գործունեության հոգևոր-մշակութային ոլորտի բարեփոխումներով պայմանավորված վտանգներից այսօր նա զերծ չէ:

Աշխատանքում հետազոտության օբյեկտը հոգևոր-մշակութային անվտանգության բաղադրիչն է՝ ՀՀ ազգային անվտանգության ռազմավարության, ՀՀ ռազմական դոկտրինի, ՀՀ տեղեկատվական անվտանգության հայեցակարգի՝ ՀՀ ազգային անվտանգության ապահովման դրույթների համատեքստում, ինչպես նաև ՀՀ մշակույթի ոլորտի պետական լիազոր մարմնի՝ մշակույթի նախարարության վարած քաղաքականության տեսանկյունից: Ուստի իմաստ ունի մեջբերել հոգևոր-մշակութային անվտանգության, հոգևոր-մշակութային անվտանգության սուբյեկտի և օբյեկտի հասկացությունները¹⁵:

Հոգևոր-մշակութային անվտանգություն. պետական, քաղաքական, հասարակական հաստատությունների (պետական սահմանակարգեր, հասարակական կազմակերպություններ, ընտանիք, անհատ), ստեղծագործական ակտիվության (հոգեմտավոր ներուժի), հոգևոր-մշակութային արժեհամակարգի և մշակութային ինքնատիպության պահպանման, վերարտադրման ու զարգացման ապահովումն է ՀՀ (հնարավորինս նաև Սփյուռքում) և սրանց խոչընդոտող ներքին և արտաքին գործոնների չեզոքացումը:

Հոգևոր-մշակութային անվտանգության սուբյեկտ. գլխավոր սուբյեկտը պետությունն է քաղաքական իշխանության իր սահմանակարգերով (բանակ, ոստիկանություն, ազգային անվտանգության մարմիններ և այլն), որը պարտավոր է պաշտպանել հասարակությանն իր ժողովրդավարական ձեռքբերումներով ու մշակութային արժեհամակարգով հանդերձ, ինչպես նաև ոչ պետական ազգային հաստատությունները (արհմիություն, եկեղեցի, ստեղծագործական միություններ, մամուլ և այլն):

Հոգևոր-մշակութային անվտանգության օբյեկտ. անհատն իր իրավունքներով և ազատություններով, ընտանիքի ինստիտուտը, հասարա-

¹⁵ Տե՛ս հղում №4, էջ 910:

կությունը՝ իր նյութական և հոգևոր արժեքներով, պետությունը՝ իր ինքնիշխանությամբ, տարածքային ամբողջականությամբ, սահմանադրական կարգով, որոնք ենթակա են վտանգների, տարբեր մակարդակների մարտահրավերների ու տարաբնույթ սպառնալիքների ազդեցության:

Ըստ ՀՀ ազգային անվտանգության ռազմավարության (ստորև՝ ռազմավարություն). ազգային հոգևոր ժառանգության հարատևությունն ապահովող և ազգային ինքնատիպությունը մարմնավորող գործոնների զարգացումը ազգային մշակույթի զարգացումն է, իսկ առաջընթացը ինքնատիպության հիմքերի պահպանմամբ համամարդկային մշակութային արժեքների ու նվաճումների յուրացումն է, արտերկրում հայկական մշակութային ժառանգության և ժամանակակից նվաճումների ներկայացմամբ:

Ռազմավարության դրույթների համաձայն՝ ազգային անվտանգության հիմնարար արժեքներին, հոգևոր-մշակութային ոլորտին սպառնացող արտաքին և ներքին վտանգներն են՝ հայրենիք-սփյուռք ազգային մշակութային կապի թուլացումը, փոխհարստացնող և փոխլրացնող բավարար շփման բացակայությունը, հանրապետությունում հասարակության բևեռացման պատճառով կրթության ոչ լիարժեք մատչելիությունը, ուրբանիզացիայի առկա գործոնը, հասարակության ժողովրդավարացմամբ պայմանավորված չկառավարվող գործոնները՝ ցածր ծնելիությունը, արտագաղթը, գիտական և կրթական ներուժի արտահոսքը:

Ռազմավարությունը հասարակական գործունեության հոգևոր-մշակութային ոլորտի անվտանգության ապահովման համար ներառում է ռազմավարական բնույթի միջոցառումների համալիր, որում ընդգրկված են հետևյալ հիմնական դրույթները.

– հանրապետությունում մտավոր ներուժի զարգացմանը միտված հեռանկարային պետական քաղաքականության իրականացում, գիտակրթական համակարգի վերակառուցում և համապատասխանեցում եվրոպական չափանիշներին, ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաների ներդրում, մշակութային արտադրանքի (ներառյալ գիտական արտադրանքը) ապրանքայնացում, գիտական ներուժի ներգրավում հասարակական գործունեության բոլոր բնագավառներ, ներառյալ պաշտպանական բնագավառը՝ դրանց արդիականացումն արդյունավետ կերպով ապահովելու նպատակով,

– «ուղեղների» արտահոսքի կանխում,

– հայոց լեզվի (որպես հայ ազգի լեզվամտածողության հիմք և ՀՀ պետական լեզու) դերի բարձրացում,

- մտավոր սեփականության արդյունավետ պաշտպանություն,
- համամարդկային և ազգային արժեքների, հայ ազգային հոգևոր-մշակութային ժառանգության պահպանման ու դրանց վերարտադրության, զարգացման համար նպաստավոր պայմանների ստեղծում,
- մշակութային արժեքներին հաղորդակցվելու մատչելիության ապահովում,
- աջակցություն Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու (ստորև՝ եկեղեցի) հոգևոր, բարոյական, սոցիալական և մշակութային գործունեությանը,
- հայ ժողովրդի հոգևոր-մշակութային ինքնությանը և բարոյական արժեքներին սպառնացող երևույթների կանխարգելում,
- համագործակցություն այլ պետությունների հետ՝ նրանց տարածքում գտնվող հայկական պատմական, հոգևոր ու մշակութային արժեքների պահպանման նպատակով,
- ՀՀ տարածքում գտնվող ազգային փոքրամասնությունների պատմական, հոգևոր, մշակութային արժեքների և էթնիկական ինքնության պաշտպանություն:

Ռազմավարությունը հայ ինքնության պահպանության պետական քաղաքականության համակարգ է: Այն ռազմավարական և մարտավարական հայացքների, հայ ազգի հոգեմտավոր ներուժի, արժեհամակարգի, ազգային-մշակութային ինքնատիպությանը վերաբերող գաղափարների, ծրագրերի ամբողջությունն է և դրանց կենսագործման մեթոդաբանությունը^{16 17}:

ՀՀ ռազմական դոկտրինը՝ որպես ռազմական, ռազմավարական բովանդակության պաշտոնական հայեցակետերի համախումբ, նախանշում է ռազմական անվտանգության ապահովման համակարգում ՀՀ զինված ուժերի (ՀՈՒ) ղեկավարման և կառավարման համալիր միջոցառումներ ընդգրկված ՀՈՒ անձնակազմի բարոյահոգեբանական պատրաստությունը, իսկ հանրապետության տարածքը հնարավոր ռազմական գործողությունների նախապատրաստման գործընթացում՝ հասարակության կայուն բարոյահոգեբանա-

¹⁶ Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարություն // ՀՀ Նախագահի հրամանագիր՝ ՆՀ37Ն, առ 07.02.2007թ., «ՀՀ ազգային անվտանգության ռազմավարությունը հաստատելու մասին» /Երևան, ՀՀՊՏ №11(591), 25.02.2007թ. (հղումներն ըստ պաշտոնապես արտատպագրված առանձին գրքույկի՝ էջ 2, 3, 5, 8, 10, 16-18, 35-37):

¹⁷ Տե՛ս հղում №4, էջ 16-17, 29-33, 40-41, 47-50:

կան վիճակը և ռազմահայրենասիրական դաստիարակությունը: Բնականաբար, այս միջոցառումների համալիրը զուրկ չէ մշակութային հենքից, հասարակության հոգևոր-մշակութային ինքնության պահպանման օբյեկտիվ անհրաժեշտությունից և դրա իրականացման համար՝ տեղեկատվական անվտանգության ապահովումից^{18 19} :

Տեղեկատվության ոլորտն իրականացնում է պետության կարևոր գործառնություններից մեկը՝ հասարակության հոգևոր, բարոյական, ստեղծարար ներուժի զարգացումը, ինչպես նաև նոր գիտելիքների ստացման ու կուտակման գործընթացները: Այս առումով է, որ ՀՀ տեղեկատվական անվտանգության հայեցակարգը (ստորև՝ հայեցակարգ) բխում է ՀՀ ազգային անվտանգության ռազմավարությունից և ըստ էության ՀՀ տեղեկատվական անվտանգության ապահովման նպատակների, խնդիրների, սկզբունքների և հիմնական ուղղությունների նկատմամբ պաշտոնական մոտեցումների համակարգ է և հիմք՝ ՀՀ տեղեկատվական անվտանգության ապահովման ոլորտում պետական քաղաքականության հիմնական ուղղությունների և գերակայությունների մշակման ու իրականացման համար²⁰: Այս իսկ հիմնավորումների հետևանքով է, որ հոգևոր-մշակութային անվտանգությունն առավել հաճախ դիտարկվում է անհատի, ընտանիքի, հասարակության, պետության ընդհանուր տեղեկատվական անվտանգության ապահովման համատեքստում:

Համաձայն հայեցակարգի՝ անձի, ընտանիքի, հասարակության, պետության շահերը տեղեկատվական ոլորտում ներառում են՝

- ժողովրդավարության ամրապնդումը,
- իրավական սոցիալական պետության կառուցումը,
- հասարակական համաձայնության և հանդուրժողականության հաստատումը,
- հայ ժողովրդի և նրա տարբեր հատվածների հոգևոր ու պատմամշակութային ժառանգության պահպանումը,

¹⁸ Հայաստանի Հանրապետության ռազմական դոկտրին // ՀՀ Նախագահի հրամանագիր՝ ՆՀ308Ն, 25.12.2007թ., «ՀՀ ռազմական դոկտրինը հաստատելու մասին» /Երևան, ՀՀՊՏ №1(591), 07.01.2008թ., էջ 89-90 :

¹⁹ Տե՛ս հղում №4, էջ 6, 17-18, 25:

²⁰ Հայաստանի Հանրապետության տեղեկատվական անվտանգության հայեցակարգ // ՀՀ Նախագահի կարգադրություն՝ ՆՀ497Ն, 26.06.2009թ., «ՀՀ տեղեկատվական անվտանգության հայեցակարգը հաստատելու մասին» /Երևան, ՀՀՊՏ №35(701), 15.07.2009թ., էջ 43-44 :

– ազգային արժեքների և ավանդույթների վերարտադրությունն ու զարգացումը,

– հայ ինքնության հիմնասյուների՝ հայոց լեզվի և հայեցի մտածողության, հայի բարոյահոգեբանական կերտվածքի և եկեղեցու դերի պահպանումն ու ամրապնդումը,

– Հայաստան-Արցախ-Սփյուռք եռամիասնության տեղեկատվական ապահովումը²¹:

Ներկայումս, համաշխարհայնացման գործընթացներով պայմանավորված, ՀՀ հոգևոր-մշակութային ոլորտը ենթարկվում է ապակողմնորոշող տեղեկատվական հոսքերի ազդեցությանը^{22 23}: Հայեցակարգը մատնանշում է այդ ոլորտի անվտանգության՝ տեղեկատվական բնույթի սպառնալիքները և դրանց աղբյուրները: Սպառնալիքների արտաքին աղբյուրը կողմնորոշված է հիմնականում հակահայկական կեղծ տեղեկատվության տարածման, ինչպես նաև հայ հասարակության մեջ արմատավորված արժեքներին անհարիր այլ հոգևոր, բարոյական և բռնության պաշտամունքի վրա հիմնված զանգվածային մշակույթի քարոզչության, հայ ինքնության հիմնասյուների խարխլման և ստեղծագործ ներուժի թուլացման ուղղությամբ^{24 25 26}: Սպառնալիքների ներքին աղբյուրի գործունեությունը հիմնականում պայմանավորված է տեղական զանգվածային լրատվամիջոցներով հասարակության բարոյահոգեբանական վիճակն ապակայունացնող հաղորդումներով և հրապարակումներով, ինչին երիցս նպաստում են կուսակցական, կրոնաաղանդավորական, ինչպես նաև առանձին անհատների մասնավոր տեսակետներով հարուստ պատվերները^{27 28 29}: Ըստ հայեցակարգի՝ տեղեկատվական անվտանգության ապահովման համատեքստում հոգևոր-մշակութային ոլորտի անվտանգության ապահովման հիմնական խնդիրներն են՝ սպառնալիքների գնահատում, սպառնալիքների ձևերի, մեթոդների, միջոցների կանխատեսում, սպառնալիքներին հակազդող համակարգերի մշակում, ներդրում և կատարելագործում, պետական,

²¹ Նույն տեղում, էջ 45-48:

²² Նույն տեղում, էջ 48-49:

²³ Տե՛ս հղում №14, էջ 21-26:

²⁴ Տե՛ս հղում №21, էջ 50-52:

²⁵ Տե՛ս հղում №4, էջ 51-53:

²⁶ Տե՛ս հղում №15, էջ 86-87:

²⁷ Տե՛ս հղում №21, էջ 54-55:

²⁸ Տե՛ս հղում №4, էջ 57-63, 71, 73:

²⁹ Տե՛ս հղում №14, էջ 21-23:

մասնավոր հիմնարկ-ծեռնարկությունների գործունեության կարգավորում: Իսկ այս խնդիրների կարգավորումն ապահովելու համար անհրաժեշտ է համացանցում հայագիտության բոլոր ճյուղերին վերաբերող և առնչվող անհրաժեշտ ծավալի և որակով հայալեզու, օտարալեզու պաշտոնական կայքէջերի տեղակայում, ինչն իրագործելու համար էլ նպատակահարմար է համահայկական ցանցերի առկայություն: Հոգևոր-մշակութային անվտանգությունը՝ որպես տեղեկատվական անվտանգության բաղադրիչ, հասարակության հոգևոր, բարոյական, մշակութային արժեքների այնպիսի վիճակ է, երբ դրանք պաշտպանված են տեղեկատվական քայքայիչ ազդեցությունից^{30 31}:

ՀՀ մշակույթի ոլորտի պետական լիազոր մարմինը՝ մշակույթի նախարարությունը, մշակում և վարում է երկրի մշակութային քաղաքականությունը, որի իրականացմանն է միտված մշակութային օրենսդրությունը: Մշակութային օրենսդրական դաշտը սահմանում է պետական մշակութային քաղաքականության սկզբունքները, նպատակները (մշակույթը՝ որպես զարգացման միջոցի գիտակցում, նոր արժեքների և նոր գաղափարների որոնում, հասարակության ստեղծագործական ներուժի վերարտադրման և զարգացման համար պայմանների ստեղծում, քաղաքացիական հասարակության ձևավորում), մշակութային ոլորտին պետական աջակցություն ցուցաբերելու իրավական հիմքերը և ստեղծագործական գործընթացներին պետության կողմից չմիջամտելու երաշխիքները, քաղաքացիների՝ մշակութային կյանքին մասնակցելու սահմանադրական իրավունքի պաշտպանությունը, ինչպես նաև մշակութային ոլորտի հիմնարար հասկացությունները³²: Համաձայն մշակութային օրենսդրության՝ «Մշակույթը հասարակության կյանքի նյութական և հոգևոր ոլորտներում գործողությունների, զգացողության, մտածելակերպի ամբողջությունն է ու դրանց արժեքավոր արտահայտությունը»³³: Բացի այս, մշակույթն ընկալվում է իր բաղադրիչներով (հոգեկերտվածք, կենսակերպ, մտածելակերպ, ավանդված մշակութային ժառանգություն, արվեստ և ժողովրդական ստեղծագործություն, գիտություն, կրթություն և այլն) մեկ ամբողջություն՝ խարսխված ազգային ավանդույթների հենքի վրա, պայմանավորված այն կենսատարածքով, որտեղ ձևավորվել և հարատևում է հայ ժողովուրդը:

³⁰ Տե՛ս հղում №15, էջ 16, 31-32:

³¹ Տե՛ս հղում №21, էջ 43-45:

³² ՀՀ սահմանադրություն (փոփոխություններով), հոդված 27:

³³ ՀՀ օրենքը «Մշակութային օրենսդրության մասին», հոդված 5:

Մշակութային քաղաքականությունը նախանշում է ՀՀ ազգային անվտանգության ռազմավարության դրույթներով նախատեսված մշակույթի ոլորտի կառավարման ծրագրային միջոցառումներ³⁴: Ծրագրի շրջանակներում նախատեսվում է՝

- հայ ժողովրդի հոգևոր-մշակութային ինքնությանը և բարոյական արժեքներին սպառնացող երևույթների կանխարգելում՝ մշակութային գործընթացներում հասարակության ներգրավում, ավանդական մշակույթի ներկայացում հանրությանը և փոխանցումը սերունդներին ու այդ մշակույթի տարրերի ներդրում ժամանակակից արվեստում, ավանդական արժեքների նորովի լուսաբանում,

- ներգրավվում միջազգային տեղեկատվական դաշտ՝ Հայաստանի ու հայության մասին ճշմարտության արհեստավարժ ներկայացումով, ապատեղեկատվությանն ու վնասաբեր քարոզչությանը հակազդումով,

- օտարալեզու ինտերակտիվ Web կայքի ստեղծում,
- հանրային հեռուստատեսությամբ մշակութային ծրագրերի թողարկում և հեռարձակում հեռուստաալիքների դեցիմետրային տիրույթի ալիքով,

- տեղական և միջազգային շուկայում գովազդվող, Հայաստանին և հայ մշակույթին նվիրված բրենդների ձևավորում,

- աջակցություն եկեղեցու հոգևոր, բարոյական, սոցիալական, մշակութային գործունեությանը:

Վերը բերվածից հետևում է, որ ՀՀ մշակութային քաղաքականությունը ազգային մշակույթի անվտանգության ապահովման գործընթացը դիտում է ժամանակակից մարտահրավերների հաղթահարման, արտաքին և ներքին սպառնալիքների մեկուսացման տեսանկյունից: Մասնավորապես ազգային անվտանգության ռազմավարության համատեքստում մշակութային քաղաքականության ծրագրային դրույթները նպատակաուղղված են մշակութային ոլորտն ապակայունացնող վտանգների կանխատեսմանը, գնահատմանը, կանխարգելմանն ու չեզոքացմանը, ինչպես նաև հայ ժողովրդի ազգային մշակութային ինքնության պահպանման երաշխիքների և պետականության զարգացման համար մշակութային անվտանգ ու բարենպաստ պայմանների

³⁴ «ՀՀ ազգային անվտանգության ռազմավարության դրույթներով նախատեսված մշակույթի ոլորտի ծրագիրը և մշակույթի ոլորտի ծրագրի միջոցառումների ցանկը հաստատելու մասին» //ՀՀ կառավարության որոշում՝ N°449, 15.04.2010թ. /Երևան, ՀՀՊՏ N°20 (754), 12.05.2010թ., էջ 36, 38-41, 43-44:

ապահովմանը: Իսկ ազգի ինքնությունը համակարգ է, որի շուրջ կազմավորվում, ընթանում և զարգանում է նրա կյանքը³⁵:

Ազգային մշակույթի պահպանումը, ինչպես նաև պաշտպանությունն ամեն տեսակի ոտնձգություններից ի վերջո հասարակական գործունեության բոլոր ձևերի գործառույթներից մեկն է: Իսկ հոգևոր-մշակութային անվտանգությունը ՀՀ ազգային անվտանգության ապահովման համակարգի ինքնուրույն բաղադրիչ է կամ ներկայացվում է տեղեկատվական անվտանգության ենթաբաղադրիչի ձևով: Քանի որ հոգևոր-մշակութային անվտանգության սուբյեկտներ են անհատը, ընտանիքը, դպրոցը, մտավորականությունը, հասարակությունը, պետությունը, իսկ օբյեկտ՝ ստեղծված հոգևոր-մշակութային արժեքները, ապա հասարակության ներսում ձևախեղումների հետևանքով սուբյեկտն ու օբյեկտը կարող են փոխվել տեղերով: Իրավիճակի զարգացման յուրաքանչյուր դեպքում պետական կառավարման մարմինների, հասարակական կազմակերպությունների, ինչու ոչ նաև անհատների պարտականություն է պահպանել սեփական ազգային մշակույթը, ներառել նրա անվտանգության ապահովման հիմնախնդիրներն ազգային ռազմավարական բնույթի և մշակութային քաղաքականության պետաիրավական ակտերում՝ ոչ որպես քարացած դոգմաներ, այլ ժամանակի հետ համատակտ և արդյունավետ փոփոխվող հիմնադրույթներ ու դրանց իրագործումն ապահովող համալիր միջոցառումներ:

ԱՄՓՈՓՈՒՄ

Ազգային անվտանգության ապահովման համակարգում հոգևոր-մշակութային անվտանգությանը, հենց մշակույթի դերին ու նշանակությանը պետք է անդրադառնալ այն տեսանկյունից, որ մշակույթը պատմական ժամանակաշրջանի գործընթացներով պայմանավորված իրավիճակներում ազգը կամ տվյալ հասարակության մեջ էթնիկ հանրույթը ներկայացնող սոցիալական ստեղծագործ խմբերի և առանձին անհատների հոգեզգացմունքային բացահայտումներն ու անդրադարձներն են սեփական ինքնության՝ համամարդկային քաղաքակրթության մեջ ունեցած նշանակության, դերի և զբաղեցրած տեղի մասին, ինչպես նաև համամարդկային արժեհամակարգով առաջնորդվելու զարգացումների տեսանկյունից: Հայաստանի Հանրապետությունը, քաղաքական միավոր կամ միջազգային իրավունքի սուբյեկտ լինելուց բացի,

³⁵ Տե՛ս հղում №13, էջ 124:

համաշխարհայնացման գործընթացներով պայմանավորված ժամանակաշրջանում պետք է դառնա համամարդկային արժեհամակարգի կրողներից մեկը՝ որպես ազգային ռազմավարական նպատակ և հրատապ խնդիր, ընդ որում՝ չաղավաղելով և չկորցնելով իր էթնիկ ինքնագիտակցությունն ու ինքնատիպությունը, մշակութային ինքնությունը:

Աշխատանքում հոգևոր-մշակութային անվտանգությունը ՀՀ ազգային անվտանգության ապահովման համակարգում դիտարկվել է ինքնուրույն, կայուն բաղադրիչի ձևով, ինչպես նաև միաժամանակ ներկայացվելով որպես տեղեկատվական անվտանգության ենթաբաղադրիչ: Ցույց է տրվել հոգևոր-մշակութային անվտանգության տեղն ու դերը ՀՀ ռազմավարական բնույթի պետաիրավական փաստաթղթերում, մասնավորապես ՀՀ ազգային անվտանգության ռազմավարության, ՀՀ ռազմական դոկտրինի, ՀՀ տեղեկատվական անվտանգության հայեցակարգի, ինչպես նաև ՀՀ մշակութային քաղաքականության համատեքստում:

Բանալի բաներ – հոգևոր-մշակութային անվտանգություն, հոգևոր-մշակութային անվտանգության սուբյեկտ և օբյեկտ, հոգևոր-մշակութային ոլորտի անվտանգության սպառնալիքներ, մշակութային ինքնություն, ազգային անվտանգության ռազմավարություն, ռազմական դոկտրին, տեղեկատվական անվտանգության հայեցակարգ, մշակութային քաղաքականություն, համաշխարհայնացում:

ЗАДАЧИ ДУХОВНО-КУЛЬТУРНОЙ БЕЗОПАСНОСТИ В КОНТЕКСТЕ СТРАТЕГИЧЕСКИХ ПРОГРАММ И ПОЛИТИКИ В СФЕРЕ КУЛЬТУРЫ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

ГАГИК ХАЧАТРЯН

В системе обеспечения национальной безопасности государства необходимо учитывать духовно-культурную составляющую, сферу культуры в целом, как духовно-эмоциональное проявление и отображение чувств социально-творческих групп какой-либо этнической общины в конкретном обществе или народа по отношению к собственной культурной идентичности, учитывать ее роль и место во всемирных достижениях в сфере культуры и ее развития, руководствуясь при этом общечеловеческими ценностями.

Республика Армения, как полноправный субъект международного права, вступая в эпоху глобализации, несомненно, тоже должна руководствоваться общечеловеческими ценностями, сохраняя при этом свою культурную иден-

тичность, не искажать свое этническое самосознание и обеспечивать свои национальные интересы и безопасность.

В работе духовно-культурная безопасность рассмотрена в качестве отдельного, самостоятельного компонента в системе обеспечения национальной безопасности Республики Армения и, одновременно, как подсиставляющая информационной безопасности. Показано место и назначение духовно-культурной безопасности в контексте правовых документов стратегического значения, таких как Стратегия национальной безопасности Республики Армения, Военная доктрина Рспублики Армения, Концепция информацонной безопасности Республики Армения, а также проводимой государством политики в сфере культуры.

Ключевые слова – духовно-культурная безопасность, субъект и объект духовно-культурной безопасности, угрозы духовно-культурной безопасности, культурная идиентичность, Стратегия национальной безопасности, Военная доктрина, Концепция информационной безопасности, политика в сфере культуры, глобализация.

SPIRITUAL-CULTURAL SECURITY ISSUES IN RA STRATEGIC PROGRAMS & CULTURAL POLICY

GAGIK KHACHATRYAN

In a national security precept of a country special attention must be devoted to the role and significance of culture to ensure the security of spiritual and cultural values. Culture, in view of the nature of processes and events in history is the main tool that helps to discover and reflect the distinctive identity of a nation or social creative groups or individuals representing ethnic communities of a society. Culture helps to percieve the significance, role and status of each identity in the diverse cultures of the world as well as to refine one's in accord with human absolute value developments.

RA besides being a political entity or a subject of international law should become one of the holders of universal values in accordance with globalization processes. These universal values, without disrupting and loosing ethnic self-awareness, singularity and cultural identity must come to be the national strategic objective and an urgent issue.

In this paper the spiritual-culture security is considered on its own as a separate fixed component in the RA national security guaranteeing system and

simultaneously as an information security subcomponent. The role and status of the spiritual-culture security in the RA legal documents of strategic import, in particular in the RA Security Strategy, RA Military Doctrine, RA Information Security Concept as well as from the point of view of RA cultural policy have been attested.

Key words – spiritual-culture security, the subject and object of spiritual-culture security, the threats to the security of the spiritual-cultural sphere, cultural identity, the national security, The Strategy of National Security, The Military Doctrine, The Concept of Information Security, the cultural policy, globalization.

**ՀԱՅՐԵՆԻՔ-ՍՓՅՈՒՌ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԷԿՈԼՅՈՒՑԻԱԼ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԵՎ ԵՐԿՐՈՐԴ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՇՐՋԱՆՈՒՄ**

ՍՏԱԼ ՍԱՐԴԱՐՅԱԼ

Հայրենիք-Սփյուռք հարաբերությունների և արդյունավետ փոխգործակցության հարցն օրակարգային է եղել 1918 թ. մայիսի 28-ին Հայաստանի անկախ պետականության վերականգնումից ի վեր: Հայաստանի Առաջին հանրապետության գոյության ժամանակահատվածում (1918-1920 թթ.) Սփյուռքի հետ հայրենի պետականության համագործակցությունը հիմնված էր երեք առանցքային խնդիրների լուծման ուղղությամբ համատեղ ջանքերի գործադրման վրա: Դրանցից կարևորագույնը Սփյուռքի օժանդակությունն էր նորաստեղծ հայկական պետականության կայացմանը և նրա առջև ծառացած բազմաթիվ խնդիրների ու մարտահրավերների հաղթահարմանը: Հայաստանի անկախ պետականության հռչակումից հետո արտերկրի հայությունն ամեն կերպ փորձել է գորավիզ լինել նրան՝ նպաստելով նրա խնդիրների լուծմանը բոլոր ոլորտներում՝ սոցիալական, տնտեսական, կրթական և ընդհուպ մինչև ռազմական: Դա բնական է, քանի որ ցանկացած սփյուռքի (արտերկրում բնակվող որևէ ազգի ներկայացուցիչների) բնորոշ հատկություններից մեկն էլ սեփական հայրենիքին սատարելու ձգտումն է: Ինչպես նշում է ազգագրագետ Լևոն Աբրահամյանը, Սփյուռքի ներկայացուցիչները «...վստահ են, որ պետք է հավաքական կերպով աջակցեն իրենց սկզբնական հայրենիքի գոյությանը, անվտանգությանը և բարգավաճմանը կամ նպաստեն նրա վերականգնմանը»¹:

Գաղթականության հարցը: Հայաստանի Առաջին հանրապետության տարիներին հայրենի պետությունն ու Սփյուռքը միասնաբար ջանքեր էին գործադրում Արևմտյան Հայաստանից բռնագաղթած հարյուրիավազարավոր հայերի խնդիրները լուծելու, նրանց դրությունը թեթևացնելու ուղղությամբ: Այս համատեքստում կարևոր խնդիր էր նաև հնարավոր հայրենադարձության կազմակերպումը:

Դիվանագիտական ճակատում Հայկական հարցի լուծումը: Այս խնդիրը

¹ **Абрамян Л.** Армения и армянская диаспора: расхождение и встреча // Диаспоры. № 1-2, 2000, с. 72.

հանգում էր Արևմտյան Հայաստանի ազատագրմամբ ազատ, անկախ և միացյալ Հայաստանի ստեղծմանը: Ի դեպ, քաղաքագիտության դոկտոր Մարիամ Մարգարյանի դիտարկման համաձայն՝ Հայ դատն այն սոցիետալ խնդիրներից էր, որը նպաստեց Հայաստանի Առաջին հանրապետության պետականության ինստիտուցիոնալացմանը²:

Այս ասպարեզում համագործակցության դրսևորման ձևն այն էր, որ Սփյուռքում եզիպտահայ մեծահարուստ, բարերար, հասարակական-քաղաքական գործիչ, ՀԲԸՄ հիմնադիր Պողոս Նուբար փաշայի գլխավորությամբ ձևավորված հայկական ազգային պատվիրակությունը Հայաստանի Հանրապետության պատվիրակության (ղեկավար՝ Ավետիս Ահարոնյան) հետ մասնակցեց Առաջին համաշխարհային պատերազմից հետո հրավիրված Փարիզի խաղաղության վեհաժողովին: Նախքան վեհաժողովը վարչապետ Հովհաննես Քաջազունին իր հրահանգով հորդորում էր Հայաստանի Հանրապետության պատվիրակությանը. «... պահպանել մշտական կապ և սերտ համաձայնություն Պողոս Նուբար փաշայի հետ, որը պետք է նկատվեր իբրև արևմտահայության ներկայացուցիչ և պետք է աջակցեր պատվիրակությանը Միացյալ Հայաստանի գաղափարն իրագործելուն»³: Միևնույն ժամանակ Ամենայն Հայոց կաթողիկոս Գևորգ 5-րդն էր հորդորում ազգային պատվիրակության նախագահ Պողոս Նուբարին «համախոհ գործողությունների» Հայաստանի Հանրապետության պատվիրակության հետ⁴:

Չնայած որոշակի տարածայնություններին⁵ երկու պատվիրակությունների կողմից մշակվեց և խաղաղության վեհաժողովին հանձնվեց հայկական կողմի պահանջների վերաբերյալ համատեղ փաստաթուղթ⁶: Այսպիսով, «Հայաստանի Հանրապետության և ազգային պատվիրակությունների գործունեությամբ Եվրոպայում սկսվեցին Հայ դատի պաշտպանության նոր փորձեր»⁷:

Դրանից հետո էլ Հայաստանը և Սփյուռքը ներկայացնող հայկական

² **Մարգարյան Մ.**, Քաղաքական արդիականացման և զարգացման հիմնահարցեր, Երևան, «Պետական ծառայություն», 2004, էջ 162:

³ **Ավետիսյան Հ.**, Հայկական հարցը 1918 թվականին, Երևան, Բարձրագույն դպրոց, 1997, էջ 329:

⁴ Նույն տեղում:

⁵ Ազգային պատվիրակության դիրքորոշումները և պահանջներն ավելի արմատական էին, իսկ Հայաստանի Հանրապետությանը՝ ավելի չափավոր: Տե՛ս **Վրացյան Ս.**, Հայաստանի Հանրապետություն, Երևան, «Հայաստան», 1993, էջ 362:

⁶ Տե՛ս նույն տեղում, էջ 362-363:

⁷ **Ավետիսյան Հ.**, նշվ. աշխ., էջ 329:

զույգ պատվիրակությունները շարունակեցին իրենց համագործակցությունը Սան Ռեմոյում, Սկրում և ընդհուպ մինչև Լոզանում, չնայած Լոզանի կոնֆերանսի ժամանակ (1922 թ. նոյեմբերի 20-ից մինչև 1923 թ. հուլիսի 24-ը) Հայաստանն արդեն խորհրդայնացվել էր, և վերջինիս պատվիրակությունն այլևս չէր ներկայացնում խորհրդային Հայաստանն ու նրա իշխանություններին:

Հայաստանում խորհրդային կարգերի հաստատումը 1920 թ. նոյեմբերի 29-ին և վերջինիս ընդգրկումը խորհրդային Միության կազմ 1922 թ. դեկտեմբերի 31-ին որոշակիորեն փոխեցին Հայրենիք-Սփյուռք հարաբերությունների տրամաբանությունը: Նախ՝ Հայաստանում խորհրդային կարգերի հաստատումից կարճ ժամանակ անց այստեղ իրենց գործունեությունը դադարեցրին հայկական ավանդական երեք կուսակցությունները՝ Հայ հեղափոխական դաշնակցությունը, Ռամկավար-ազատական կուսակցությունը⁸ և Սոցիալ-դեմոկրատական հնչակյան կուսակցությունը: Վերջիններս ընդհուպ մինչև 1980-ական թվականների վերջը գործում էին միայն Սփյուռքում:

Խորհրդային կարգերի հաստատումից հետո Հայաստանում իրենց գործունեությունը դադարեցրին նաև սփյուռքյան մյուս կառույցները: Միակ սփյուռքահայ կառույցը, որին թույլատրվեց գործունեություն ծավալել Հայաստանում, Հայկական բարեգործական ընդհանուր միությունն էր: Սակայն նրա գործունեությունը Հայաստանում տևեց մինչև 1937 թ., որից հետո այն ևս դադարեցվեց⁹: «Դրանով իսկ, 1923-1937 թթ. Միության գործունեությունը խորհրդային Հայաստանում մնաց որպես եզակի և բացառիկ երևույթ Խորհրդային Հայաստան – հայ սփյուռք փոխհարաբերությունների պատմության մեջ»¹⁰:

Փոփոխության ենթարկվեց նաև Հայրենիք-Սփյուռք հարաբերությունների օրակարգը: Մասնավորապես, օրակարգից դուրս եկավ միասնական ճակատով ազատ և միացյալ Հայաստանի ստեղծման համար պայքարի հարցը, քանի որ Հայաստանի խորհրդային իշխանությունները Ռուսաստանի կոմու-

⁸ Ստեղծվել է 1921 թ. Կ. Պոլսում ազատական գաղափարախոսությունը դավանող հայկական կուսակցությունների միավորման արդյունքում: Հայաստանի Առաջին հանրապետությունում ազատական գաղափարախոսությունը դավանող կուսակցությունը Հայաստանի Ժողովրդական կուսակցությունն էր:

⁹ **Վարդանյան Ա.**, Հայկական բարեգործական ընդհանուր միության (ՀԲԸՄ) հայրենասիրական գործունեությունը Հայաստանի Հանրապետությունում և ԼՂՀ-ում, **Մինասյան Է.**, **Վարդանյան Ա.**, Հայրենիք-Սփյուռք առնչությունները ՀՀ անկախության տարիներին (1991-2009 թթ.), հոդվածների ժողովածու, Ստեփանակերտ, «Պոլիգրաֆ», 2010, էջ 45:

¹⁰ **Մելքոնյան Է.**, Հայկական Բարեգործական Ընդհանուր Միությունը Խորհրդային Հայաստանում 1923-1937 թթ., Երևան, «Նոյան տապան», 1999, էջ 186:

նիստների ազդեցությամբ տարված էին համաշխարհային սոցիալիստական մեծ հեղափոխության իրականացման և ամբողջ աշխարհում սոցիալիստական հասարակարգի ձևավորման խնդիրներով: Ռուսաստանում հաստատված խորհրդային իշխանության «... վարած արտաքին գաղափարականացված քաղաքական մարտավարությունն ու ռազմավարությունը Հայկական հարցի լուծման ընթացքը ևս տարան բոլորովին անծանոթ մի ուղիով... Հոկտեմբերյան հեղափոխությունը Հայկական հարցը «հանեց» հին փակուղուց և ... մտցրեց մի նոր փակուղի»¹¹:

Առաջին հանրապետության ժամանակ գոյություն ունեցած Հայրենիք-Սփյուռք համագործակցության օրակարգի մյուս երկու հարցերը որոշակիորեն պահպանեցին իրենց գոյությունը նաև Հայաստանում խորհրդային կարգերի ձևավորումից հետո: Մասնավորապես հայրենի պետության կայացմանը և նրա խնդիրների լուծմանը նպաստելը շարունակեց մնալ Սփյուռքի օրակարգում: Ալ. Խատիսյանի բառերով՝ վերջինս ձգտում էր «... ամեն կերպ ամրացնել Հայաստանի Հանրապետության հիմքերը թե՛ տնտեսապես, թե՛ մշակութային տեսակետով, թե՛ ֆիզիքապես՝ բոլորովին անկախ անոր մեջ տիրող ռեժիմէն»¹²: Այդ նպատակով 1921 թ. Կ. Պոլսում ստեղծվեց Հայաստանի օգնության կոմիտեն (Հովհաննես Թումանյանի նախաձեռնությամբ), որի նպատակն էր Սփյուռքում հանգանակություններ իրականացնելու միջոցով նպաստել Հայաստանի սոցիալ-տնտեսական և այլ խնդիրների լուծմանը և հայրենի պետության վերելքին: Կոմիտեն զգալի դեր ունեցավ Խորհրդային Հայաստանում կարիքավոր բնակչությանը (մասնավորապես գաղթականությանը) օգնելու, նրա դրությունը բարելավելու, շինարարության և այլ հարցերում: Կոմիտեն, սակայն, լուծարվեց 1936 թ.:

Համանման դեր խաղաց նաև մինչև 1937 թ. Խորհրդային Հայաստանում գործունեություն ծավալած ՀԲԸՄ-ն: Վերջինիս միջոցներով կառուցվել են բազմաթիվ բնակելի շենքեր, հիվանդանոցներ և այլն, օգնություն է հատկացվել սոցիալապես անապահով ընտանիքներին: Չնայած ՀԲԸՄ-ի գործունեության դադարեցմանը հայրենիքում, այնուամենայնիվ Խորհրդային Հայաստանի իշխանությունները ստիպված էին հետագայում կրկին համագործակցել նրա հետ, մասնավորապես Հայրենական մեծ պատերազմի տարիներին (1941-

¹¹ **Սարուխանյան Ն.**, Հայկական հարցը մինչխորհրդային հայ հասարակական-քաղաքական մտքի և պատմագրության մեջ, Երևան, «Ոսկան Երևանցի», 1997, էջ 155:

¹² **Խատիսյան Ալ.**, Հայաստանի Հանրապետության ծագումն ու զարգացումը, Աթեք, «Նոր օր», 1930, էջ 359-360:

1945 թթ.)՝ Սփյուռքից օժանդակություն ստանալու, հայրենադարձության իրականացման հարցերում: «ՀԲԸ Միության մասին խորհրդային իշխանությունները հիշեցին Բ Համաշխարհային պատերազմի տարիներին, երբ նրան հնարավորություն տրվեց դրամական և նյութական օժանդակություն ցուցաբերելու Հայաստանի ժողովրդին, ինչպես նաև պատերազմից անմիջապես հետո, երբ հայտարարվեց զանգվածային նոր ներգաղթի մասին», - գրում է ՀԲԸՄ պատմության խորը գիտակ, ճանաչված պատմաբան Է. Մելքոնյանը¹³:

Ինչ վերաբերում է հայրենադարձության խնդրին, ապա հարկ է նշել, որ Հայաստանում խորհրդային կարգերի հաստատումից հետո էլ այդ հարցը մնաց հայկական պետության օրակարգային կարևոր հարցերից մեկը: «Կոմունիստական պարտիան և սովետական կառավարությունը Հայաստանում սովետական կարգերի հաստատման հենց առաջին օրերից իրենց գլխավոր հարցերից մեկը դարձրին սփյուռքահայերի հայրենադարձությունը, որպես կարևորագույն պետական միջոցառում»¹⁴:

Այդ մասին է վկայում այն, որ 1921 թ. փետրվարյան ապստամբության պարտությունից անմիջապես հետո Հայաստանի խորհրդային իշխանությունները ձեռնամուխ եղան ապստամբության հետևանքով Պարսկաստանում ապաստանած շուրջ 10 հազար հայերի վերադարձին հայրենիք: Այդ նպատակով 1921 թ. ապրիլի 10-ին ընդունվեց դեկրետ ապստամբության մասնակիցների մասնակի, իսկ ապրիլի 24-ին՝ ընդհանուր համաներման մասին¹⁵: «Ներգաղթին ավելի կազմակերպված բնույթ տալու և ընդհանրապես գաղթականների հետ տարվող աշխատանքները մի մարմնի ձեռքում կենտրոնացնելու նպատակով ...»¹⁶ 1921 թ. հուլիսի 13-ին ստեղծվում է Գաղթականական գործերի գլխավոր վարչությունը: Վերջինս մինչև իր գործունեության դադարը (1921 թ. վերջը) «... զգալի աշխատանք կատարեց ոչ միայն ներգաղթը կազմակերպելու, այլև երկրի ներսում եղած արևմտահայ գաղթականությանը հողի հետ կապելու, նրանց տնտեսական դրությունը բարելավելու ուղղությամբ»¹⁷:

Խորհրդային ժամանակաշրջանում հայրենադարձություն իրականացվել է դեռևս 1920-1930-ական թվականներին: Հայրենադարձության ամենամեծ

¹³ Մելքոնյան Է., նշվ. աշխ., էջ 186:

¹⁴ Հայաստանի ազգային արխիվ, ֆոնդ 875, ցուցակ 1, գործ 31:

¹⁵ Զոհրաբյան Է., Սովետական Ռուսաստանը և հայ-իրանական հարաբերությունները (1920-1922 թթ.), Երևան, Երևանի համալս. հրատ., 1985, էջ 207-208:

¹⁶ Նույն տեղում, էջ 214:

¹⁷ Նույն տեղում, էջ 215:

ալիքը տեղի ունեցավ 1946-1948 թվականներին, որի արդյունքում արտասահմանյան տարբեր երկրներից Հայաստան տեղափոխվեց շուրջ 90 հազար հայ¹⁸: Այդ պատճառով էլ այդ թվականների հայրենադարձությունն ընդունված է անվանել Մեծ հայրենադարձություն: Դրանից հետո էլ և՛ 1950-ական, և՛ 1960-ական, և՛ 1970-ական թվականներին, և՛ հետագայում կազմակերպվել է սփյուռքահայերի հայրենադարձություն: Ընդհանուր առմամբ հայրենադարձության բոլոր ալիքների արդյունքում միասին վերցրած հայրենադարձների ընդհանուր թիվը կազմել է 200 հազար մարդ:

Հայրենադարձության այս բոլոր ալիքներն էլ իրականացվել են Հայրենիք-Սփյուռք, այն է՝ Խորհրդային Հայաստան – Սփյուռքի կառույցներ (կուսակցական՝ ՍԴՀԿ, ՌԱԿ, կրոնական՝ Հայ Առաքելական, Կաթողիկե, Ավետարանական եկեղեցիներ, բարեգործական՝ ՀԲԸՄ և այլն) համագործակցությամբ: Սփյուռքի բոլոր հաստատություններն էլ, բացառությամբ ՀՅԴ-ի, սատարել են Խորհրդային Հայաստանի վարած հայրենադարձության քաղաքականությանը՝ համագործակցելով վերջինիս իշխանությունների հետ¹⁹: Մասնավորապես ՀԲԸՄ-ն 1946-1948 թթ. Մեծ հայրենադարձության ժամանակ, ինչպես և նախկինում, դարձավ «... ներգաղթի հիմնական ֆինանսավորողը սփյուռքում, այդ նպատակին տրամադրելով հատուկ հանգանակությունների շնորհիվ հավաքած շուրջ երկու մլն դոլար»²⁰:

Ինչ վերաբերում է Խորհրդային տարիներին Հայրենիք-Սփյուռք հարաբերությունների քաղաքական բաղադրիչին, ապա սկզբնական շրջանում այն աչքի էր ընկնում որոշակի լարվածությամբ և փոխադարձ թյուրըմբռնո-

¹⁸ Հայաստանի ազգային արխիվ, ֆոնդ 875, ցուցակ 1, գործ 31:

¹⁹ Տե՛ս, օրինակ, **Մելքոնյան Է.**, Հայկական բարեգործական ընդհանուր միությունը 1946-1948 թթ. հայրենադարձության գործընթացում, «1946-1948 թթ. Հայրենադարձությունը և դրա դասերը. հայրենադարձության հիմնախնդիրն այսօր» համահայկական գիտաժողովի զեկուցումների ժողովածու, Երևան, «Լիմուշ», 2009, էջ 60-68: **ԼԷՎԷՃԵԱՆ Կ.**, Հայրենադարձությունը և ՍԴՀԿ-ի դերակատարությունը, «1946-1948 թթ. Հայրենադարձությունը և դրա դասերը. հայրենադարձության հիմնախնդիրն այսօր» համահայկական գիտաժողովի զեկուցումների ժողովածու, Երևան, «Լիմուշ», 2009, էջ 69-74: **Առաքելյան Հ.**, Ռամկավար ազատական կուսակցության դերակատարությունը 1946-1948 թթ. հայրենադարձության կազմակերպման գործընթացում, «1946-1948 թթ. Հայրենադարձությունը և դրա դասերը. հայրենադարձության հիմնախնդիրն այսօր» համահայկական գիտաժողովի զեկուցումների ժողովածու, Երևան, «Լիմուշ», 2009, էջ 75-84:

²⁰ **Մելքոնյան Է.**, նշվ. աշխ., էջ 186:

ղությանը: Հիմնական պատճառը թյուր պատկերացումներն էին միմյանց նկատմամբ:

Հայրենի խորհրդային իշխանությունները սկզբնական շրջանում, Խորհրդային Միության իշխանությունների հետ դաշնակցած, տարված էին համաշխարհային սոցիալիստական մոտայուտ հեղափոխության պատրանքներով: Այս համատեքստում էլ դիտվում էին Սփյուռքի խնդիրները և Հայրենիք-Սփյուռք հարաբերությունների հարցը: Արտերկրի հայ համայնքները, եղեռնից հետո արտասահմանում հայտնված հայ գաղթականների խմբերը հայրենի իշխանությունների կողմից մասամբ ընկալվում էին որպես միջոց սոցիալիստական հեղափոխության արտահանման համար: Համարվում էր, որ սոցիալիզմի գաղափարները և հեղափոխության միջոցով մոտ ապագայում արագ սոցիալիստական հասարակարգի կառուցման հեռանկարը կարող էին գայթակղիչ լինել ծանր պայմաններում գտնվող արտերկրի հայության որոշ մասի համար՝ նրա մեջ արթնացնելով այդ կերպ իր դրությունը բարելավելու հույս:

Սփյուռքի կառույցներն իրենց հերթին, հաճախ տուրք տալով հայրենակալ երկրների հակակոմունիստական քարոզչությանը, կասկածանքով էին նայում Հայաստանում հաստատված խորհրդային կարգերի կենսունակությանն ու ամրությանը: Նրանք ակնկալում էին, որ նորահաստատ խորհրդային իշխանությունները ինչպես ողջ Խորհրդային Միությունում, այնպես էլ Հայաստանում, ձախողվելով իրենց հռչակած գաղափարները կյանքի կոչելու հարցում, կտապալվեն, այդ թվում նաև՝ արտաքին միջամտության հետևանքով: Արդյունքում իրենք կրկին հնարավորություն կստանան վտարանդիությունից վերադառնալու հայրենիք, այնտեղ ծավալելու իրենց գործունեությունը, այդ թվում նաև՝ իշխանությանը տիրելու միջոցով: Նրանք արտասահմանից անգամ որոշակիորեն նպաստում էին այդ ակնկալիքների իրականացմանը: Պատահական չէ, որ Խորհրդային Հայաստանում 1920-1930-ական թվականներին բռնաճնշումների ենթարկվածներից շատերը մեղադրվել են օտարերկրյա գործակալ լինելու, արտաքին ուժերի հետ համագործակցելու, գաղտնի կազմակերպություններին անդամակցելու մեջ²¹:

Հայաստանում խորհրդային կարգերի մոտայուտ տապալման ակնկալիքը Սփյուռքի կառույցներին սկզբնական շրջանում զգալիորեն հեռու էր պա-

²¹ Տե՛ս **Մանուկյան Ա.**, Քաղաքական բռնաճնշումները Հայաստանում 1920-53 թթ., Երևան, «Առեքտում»-Անի հրատ., 1999, էջ 9-217:

հում հայրենի իշխանությունների հետ համագործակցելուց: Այնուամենայնիվ, հայկական ավանդական կուսակցությունները որոշակիորեն տարբերվում էին միմյանցից Խորհրդային Հայաստանի և նրա իշխանությունների նկատմամբ ունեցած վերաբերմունքով: Վերջիններիս նկատմամբ ամենասուր բացասական վերաբերմունքն ուներ ՀՅԴ-ն, ինչը պայմանավորված էր ոչ միայն Խորհրդային կարգերի հաստատմամբ Հայաստանում իշխանությունը կորցնելու, այլև այդ կարգերի հաստատումից հետո ամենաշատը տուժած լինելու հանգամանքով: Դաշնակցությունը հրաժարվում էր ցանկացած համագործակցությունից Խորհրդային Հայաստանի իշխանությունների հետ:

Համեմատաբար ավելի մեղմ դիրքորոշում ունեին ՌԱԿ-ը և ՍԴՀԿ-ն: Չընդունելով Հայաստանում հաստատված կարգերը՝ նրանք, այնուամենայնիվ, Հայաստանը համարում էին հայ ժողովրդի կորուսյալ հայրենիքից պահպանված մի փոքր հողակտոր, որտեղ առկա է նաև հայկական պետականություն: Ելնելով այս հանգամանքից՝ նրանք պատրաստ էին նպաստելու Խորհրդային Հայաստանի շենացմանը: ՍԴՀԿ-ն, օրինակ, Խորհրդային Հայաստանին սատարելու մասին իր որոշումը՝ ընդունված կուսակցության 8-րդ համագումարում (Աթենք, 1924 թ.), հիմնավորում էր նրանով, որ Խորհրդային Հայաստանը ռուսական գավառ չէ. հայկական պետությունը կրկին անկախ է, փոխվել են միայն կառավարությունը և իշխանության բնույթը²²:

Հայրենիք-Սփյուռք հարաբերություններում Հայաստանում Խորհրդային իշխանության հաստատման առաջին տարիներին տեղ գտած բարդությունները և խոչընդոտները ժամանակի ընթացքում իրենց տեղը զիջեցին ավելի կառուցողական մոտեցումներին, երբ երկուստեք պատրանքների փոխարեն սկսեցին գերիշխել սառը դատողությունն ու երևույթների իրատեսական զգացումը:

Բացի այդ, Հայրենիք-Սփյուռք հարաբերությունների ջերմացմանը որոշակիորեն նպաստեցին ևս երկու հանգամանք: Առաջինը Խորհրդային Հայաստանի կողմից մշտապես վարվող հայրենադարձության քաղաքականությունն էր, ինչի մասին խոսվեց վերը:

Երկրորդը Խորհրդային Միության գերտերություն լինելը և նրա կողմից

²² Хуршудян Л. Армянские политические партии на современном этапе / Автореф. дисс... докт. ист. наук, Ереван, 1966, с. 141; Хуршудян Л., Худавердян К. Армянские политические партии: некоторые вопросы истории и идеологии // Непролетарские партии и организации национальных районов России в Октябрьской революции и гражданской войне, М., 1980, с. 106.

իր ազդեցությունն աշխարհի զանազան տարածաշրջաններում ընդլայնելու քաղաքականությունն էր: Այս համատեքստում արտերկրի հայ համայնքները դիտվում էին որպես այդ ազդեցության տարածման և ամրապնդման գործոններ: Ելնելով այս հանգամանքից՝ Խորհրդային Միության կենտրոնական ղեկավարությունն ինչ-որ տեղ խրախուսում էր Հայաստանի կապերը Սփյուռքի հետ: Որոշակիորեն օգտագործվում էին նաև Հայ Առաքելական եկեղեցու հնարավորություններն ու ազդեցությունը սփյուռքահայության վրա²³:

Հարկ է նշել, որ Սփյուռքն էլ իր հերթին էր արձագանքում հիշյալ համատեքստում Խորհրդային Հայաստանի և Խորհրդային Միության ձգտումներին՝ դրա մեջ տեսնելով ազգային խնդիրների լուծման հնարավորությունը: Պատահական չէ, որ այս համատեքստում կապեր և համագործակցություն հաստատվեցին անգամ ՀՅԴ-ի հետ՝ չնայած Խորհրդային ղեկավարության հետ վերջինիս ունեցած սուր տարածայնություններին: Այս առումով ՀՅԴ ղեկավարներից մեկը մի առիթով նշել է, որ եթե Ստալինը միացնի Արևմտյան Հայաստանը Խորհրդայինին, ապա «Դաշնակցությունը» կարող է դադարեցնել իր գոյությունը²⁴:

Խորհրդային Հայաստանի զարգացման ու հզորացման հետ մեկտեղ աստիճանաբար փոխվեցին նաև սփյուռքահայության ինքնաընկալումները: Հայրենիքի գրանցած հաջողությունները տարբեր ասպարեզներում (տնտեսություն, գիտություն, մշակույթ, սպորտ և այլն) ազգային հպարտության և հիացմունքի զգացումներով լցրին սփյուռքահայերի հոգիները: Վերջիններս աստիճանաբար սկսեցին հաղթահարել պետականազուրկ ազգի բարոյթը, ընկալել իրենց որպես սեփական պետություն ունեցող մարդկային ընդհանրություն: «Պետականութիւնը կը զօրանայ, եւ մենք կը սկսինք այլեւս պետական ըմբռնումով հաւաքականութիւն դառնալ», - նշվում է ՌԱԿ ԺԱ Ընդհանուր պատգամավորական ժողովի (1961 թ.) կողմից ընտրված կենտրոնական վարչության առաջին իսկ շրջաբերականում²⁵:

Արդյունքում Սփյուռքի մոտեցումներն ու գործելակերպն աստիճանաբար

²³ Տե՛ս **Լազեան Գ.**, Հայաստան և Հայ դատը: Հայնոսու յարաբերութիւններու լոյսին տակ, Երևան, «Աղանա», 1991, էջ 316:

²⁴ **Оганесян Э.** Век борьбы: очерк 100-летней истории дашнакской партии и национально-освободительной борьбы армянского народа, т. 2, Мюнхен-Москва, “Феникс”, 1991, с. 404.

²⁵ Հղումը՝ ըստ **Դալլաքյան Կ.**, Ռամկավար ազատական կուսակցության պատմություն, գիրք երկրորդ, Երևան, «Մուղնի», 2007, էջ 232:

դառնում էին առավել հայաստանակենտրոն: Սփյուռքահայ կազմակերպությունները որոշումներ ընդունելիս ավելի ու ավելի էին կարևորում հայրենիքի՝ հայրենի պետության շահերը: Այսպես, ՌԱԿ ԺԱ Ընդհանուր պատգամավորական ժողովը, քննելով Միջին Արևելքի տագնապալի կացությունը, որոշում ընդունեց հանձնարարել կուսակցական մամուլին այդ իրադարձությունները լուսաբանել «առաելաբար հայկական ու Հայաստանեան անկիւններէ»՝ չմոռանալով, անշուշտ, հյուրընկալ երկրների շահերի ու խնդիրների մասին²⁶:

Այնուամենայնիվ, ընդհանուր առմամբ խորհրդային տարիներին Հայաստան-Սփյուռք հարաբերությունները զարգանում էին մշակութային ոլորտում, որի դրսևորման ձևերն էին Հայաստանի և Սփյուռքի արվեստագետների, ստեղծագործական խմբերի փոխադարձ հյուրախաղերը, ցուցահանդեսները և այլ մշակութային միջոցառումներն արտերկրի հայ համայնքներում և Հայաստանում: Կրթական ոլորտում Հայրենիք-Սփյուռք համագործակցությունը միտված էր հայապահպանությանը Սփյուռքում: Դրա դրսևորման ձևերն էին հայ անվանի գրողների (Հր. Քոչար, Ս. Խանզադյան, Ս. Կապուտիկյան, Գ. Էմին և ուրիշներ) պարբերական այցելությունները հայկական համայնքներ, սփյուռքահայ ուսուցիչների վերապատրաստման ծրագրերը Հայաստանում, Հայաստանի բուհերում սփյուռքահայ երիտասարդների ուսումնառությունը, Սփյուռքի դպրոցների համար Հայաստանում դասագրքերի և այլ ուսումնական ձեռնարկների պատրաստումն ու առաքումը և այլն:

Այսպիսով, Հայրենիք-Սփյուռք հասարակական-քաղաքական հարաբերությունների օրակարգը, բնույթն ու բովանդակությունը որոշակիորեն տարբերվում էին Հայաստանի Առաջին և Երկրորդ հանրապետությունների ժամանակաշրջաններում: Քաղաքական գիտության մեթոդաբանության տեսակետից դա ցույց է տալիս, որ քաղաքական համակարգի փոփոխությունն իր ազդեցությունն է թողնում նաև քաղաքական կյանքի բնույթի և բովանդակության վրա: Քաղաքական համակարգի փոփոխության հետևանքով Հայաստանում նախ փոփոխությունների ենթարկվեց քաղաքական ինստիտուտների համակարգը: Սփյուռքի մասով դա արտահայտվեց նրանում, որ երկրում իրենց գործունեությունը դադարեցրին հայկական ավանդական կուսակցությունները, ինչպես նաև սփյուռքյան մյուս կառույցները: Ինչ վերաբերում է քաղաքական գործընթացներին, ապա դա արտահայտվեց Հայրենիք-Սփյուռք հարաբերությունների օրակարգում տեղ գտած որոշակի փոփոխություններով:

²⁶ Նույն տեղում, էջ 233:

Հայկական հարցի լուծման համար միասնական պայքարը, որը գոյություն ուներ Առաջին հանրապետության տարիներին, օրակարգից դուրս եկավ Հայաստանում խորհրդային կարգերի հաստատումից հետո: Սփյուռքի կողմից հայրենիքին օժանդակության և հայրենադարձության խնդիրները շարունակեցին մնալ օրակարգում: Չնայած Հայաստանի խորհրդայնացումից հետո հայկական պետության և Սփյուռքի կառույցների փոխհարաբերություններում սառույցը տասնամյակների ընթացքում կոտրվեց, փոխադարձ թյուրմբռնումներն ու անվստահությունն իրենց տեղը զիջեցին ավելի կառուցողական և ջերմ մթնոլորտին, այնուամենայնիվ, խորհրդային տարիներին Հայրենիք-Սփյուռք հասարակական-քաղաքական գործակցության մակարդակը զգալիորեն զիջում էր մշակութային ոլորտում կապերի մակարդակին:

ԱՄՓՈՓՈՒՄ

Հայրենիք-Սփյուռք հասարակական-քաղաքական հարաբերությունների օրակարգը, բնույթն ու բովանդակությունը որոշակիորեն տարբերվում էին Հայաստանի Առաջին և Երկրորդ հանրապետությունների ժամանակաշրջաններում: Հայկական հարցի լուծման համար միասնական պայքարը, որը գոյություն ուներ Առաջին հանրապետության տարիներին, օրակարգից դուրս եկավ Հայաստանում խորհրդային կարգերի հաստատումից հետո: Սփյուռքի կողմից հայրենիքին օժանդակության և հայրենադարձության խնդիրները շարունակեցին մնալ օրակարգում: Չնայած հայկական պետության և Սփյուռքի կառույցների փոխհարաբերություններում սառույցը տասնամյակների ընթացքում կոտրվեց, այնուամենայնիվ, խորհրդային տարիներին Հայրենիք-Սփյուռք հասարակական-քաղաքական գործակցության մակարդակը զգալիորեն զիջում էր մշակութային ոլորտում կապերի մակարդակին:

Բանալի բաներ - Հայաստան, Սփյուռք, Հայրենիք-Սփյուռք հարաբերություններ, համագործակցություն, Հայ դատ, հայրենադարձություն:

ЭВОЛЮЦИЯ ОТНОШЕНИЙ РОДИНА-ДИАСПОРА В ПЕРИОД ПЕРВОЙ И ВТОРОЙ РЕСПУБЛИК АРМЕНИИ

СТАЛ САРДАРЯН

Повестка дня, характер и содержание общественно-политических отношений Родина-Диапора определенно различались в периоды Первой и Второй Республик Армении. Совместная борьба за решение Армянского воп-

роса, которая существовала в годы Первой Республики, вышла из повестки дня после утверждения советских порядков в Армении. Вопросы поддержки Родины со стороны Диаспоры и репатриации продолжали оставаться в повестке дня. Хотя во взаимоотношениях армянского государства и структур Диаспоры лед в течение десятилетий сломался, тем не менее, в советские годы уровень общественно-политического сотрудничества Родина-Диаспора осязаемо уступал уровню связей в культурной сфере.

Ключевые слова – Армения, Диаспора, отношения Родина-Диаспора, сотрудничество, Армянский вопрос, репатриация.

ARMENIA-DIASPORA RELATIONSHIPS DURING THE FIRST AND SECOND REPUBLICS OF ARMENIA

STAL SARDARYAN

The agenda, character and the content of Homeland-Diaspora socio-political relationships were evidently different during the First and the Second Republics of Armenia. The unified struggle to resolve the Armenian issue during the years of the First Republic came to a halt during the Second Republic with the establishment of the Soviet regime. Financial and other contribution from diaspora as well as thoughts of return to homeland were as yet on the agenda as important issues. Even though with time the relationship between the different diaspora establishments and homeland authorities got better but still all through the Soviet years the level of the cultural link between them was at a higher level than the socio-political.

Key words – Armenia, diaspora, Armenia-diaspora relations, collaboration, the Armenian Cause, repatriation.

ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

ԱՐԱՄ ԱՅՎԱԶՅԱՆ

ՀՀ քրեական օրենսգրքի /այսուհետ քր. օր./ 308-րդ հոդվածում «պաշտոնատար անձ» հասկացությունը տրված է սահմանափակ մեկնաբանությամբ: Ըստ էության, այդ հասկացությունից դուրս էր մնացել պետական պաշտոնյաների մի զգալի շրջանակ: Այսպես, քր.օր.-ի 308-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պաշտոնատար են համարվում մշտապես, ժամանակավորապես կամ առանձին լիազորությամբ իշխանության ներկայացուցչի գործառույթներ իրականացնող անձինք, պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում, դրանց կազմակերպություններում, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության զինված ուժերում, Հայաստանի Հանրապետության այլ զորքերում և զինվորական միավորումներում մշտապես, ժամանակավորապես կամ առանձին լիազորությամբ կազմակերպական-տնօրինչական, վարչատնտեսական գործառույթներ իրականացնող անձինք:

Թվում է, թե օրենսդրական այս բնորոշումը սպառիչ է ու հստակ, սակայն իրականում վերը նշված ձևակերպումները բացառապես անհարկի հարցադրումներ են առաջացնում: Այսպես, չի կարելի հստակ ու միանշանակ ասել, թե ինչպես կարելի է մեկնաբանել «կազմակերպական-տնօրինչական», «վարչատնտեսական» հասկացությունները: Դրանք խորհրդային իրավական համակարգում հարցադրումներ չեն առաջացրել, որովհետև ԽՍՀՄ Գերագույն դատարանը հանգամանորեն տվել է պարզաբանումներ, որոնք պարտադիր իրավական նշանակություն են ունեցել: Մինչդեռ, նախ՝ այդ պարզաբանումներն այլևս հասկանալի պատճառներով չունեն համարժեք իրավական նշանակություն, իսկ որևէ այլ մարմնի այդպիսի լիազորությամբ օժտելը համահունչ չի լինի մեր պետաիրավական համակարգին:

Գործնական վերլուծությունները ցույց են տալիս, որ վերը նշված հասկացությունների մեկնաբանության շուրջ դեռևս չեն ձևավորվել միասնական

մոտեցումներ, ինչը խիստ անհանգստացնող է, եթե նկատի ունենանք, որ խոսքն արարքների որակման և կոնկրետ անձին քրեական պատասխանատվության ենթարկելու խնդրի մասին է: Անհարկի տարամեկնաբանությունների տեղիք տվող եզրույթների առկայությունը վտանգավոր է հենց կոռուպցիոն դիսկերի տեսանկյունից, քանի որ դա ակնհայտ հարմար սողանք է քրեական հետապնդում իրականացնող պաշտոնյաների և դատավորների համար՝ սուբյեկտիվ գնահատականների միջոցով անձին քրեական պատասխանատվությունից ազատելու համար:

Հարց է ծագում. 2003թ. օգոստոսի 1-ին գործողության մեջ դրված քրեական օրենսգրքում սահմանափակվել է արդյոք «պաշտոնատար անձ» հասկացության բովանդակությունը: Պատասխանը հետևյալն է. ձևական առումով՝ ոչ, բովանդակային առումով՝ այո: Խնդիրն այն է, որ նոր օրենսգրքում հիմք է ընդունվել նախկին խորհրդային քրեական օրենսգրքում տեղ գտած եզրույթը: Սակայն, եթե դա ընդունելի էր հենց խորհրդային իրավական համակարգի տեսանկյունից /պաշտոնատար անձ էր համարվում նաև պետական ձեռնարկությունում վարչական լիազորություններով օժտված անձը/, ապա բացարձակապես կիրառելի չէր նոր իրավական համակարգում: Ցավոք, օրենսգիրքը մշակելիս հաշվի չի առնվել այն պարզ փաստարկը, որ խորհրդային իրավական համակարգին բնորոշ եզրույթները չեն կարող ընդունելի լինել այնպիսի իրավական համակարգում, որը ձեռնարկատիրության ոլորտում բացառում է իշխանական լիազորություններով օժտված «պաշտոնատար անձի» գաղափարը:

2008թ. քրեական օրենսգրքի լրացումներով նախատեսվեցին նաև երկու նոր հանցակազմեր, այն է՝ պաշտոնատար անձ չհանդիսացող հանրային ծառայողի կողմից ապօրինի վարձատրություն ստանալը /311-րդ հոդված/ և պաշտոնատար անձ չհանդիսացող հանրային ծառայողին ապօրինի վարձատրություն տալը /312-րդ հոդված/՝ տարանջատելով կաշառելու ակտիվ և պասիվ տեսակներն ըստ այն չափանիշի, թե դրա սուբյեկտը պաշտոնատար ա՞նձն է, թե՞ հանրային ծառայողը: Այդ նոր հանցակազմեր ներառվել են արդեն այն սուբյեկտները, որոնք դուրս էին մնացել «պաշտոնատար անձ» հասկացության շրջանակներից՝ քրեական օրենսգրքի 311-րդ և 312-րդ հոդվածներով նախատեսված հանցակազմերի առումով:

311-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ հանրային ծառայողներ են համարվում «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն հանրային ծառայության պաշտոնների անվանացանկով

նախատեսված որևէ պաշտոն զբաղեցնող կամ օրենքով սահմանված դեպքերում և կարգով հանրային ծառայության համապատասխան կադրերի պահեստում գտնվող անձինք¹:

Կոռուպցիայի քրեականացման տեսանկյունից առանցքային հարցերից մեկը կոռուպցիոն հանցագործության սուբյեկտի՝ «պետական պաշտոնատար անձ» հասկացության շրջանակների բացահայտումն է: Դրանց շրջանակը, որը տեղ է գտել ՀՀ քր. օր.-ում «պաշտոնատար անձ» և «հանրային ծառայող» հասկացությունների բացահայտման ներքո, ընդհանուր առմամբ, համահունչ է ՄԱԿ-ի կոռուպցիայի դեմ կոնվենցիայի 2-րդ հոդվածի 2-րդ ենթակետում տրված սահմանմանը² և միջազգային մոտեցումներին՝ չնայած որ փաստորեն առանձնացվել են նույնական օբյեկտիվ կողմով, բայց տարբեր անվանումներով հանցակազմեր: Պետք է ընդգծել, որ միջազգային փաստաթղթերի առումով «պաշտոնատար անձ» հասկացությունն ըստ էության ներառում է նաև հանրային ծառայողներին: Ընդ որում, «պաշտոնատար անձ» հասկացության առումով նշանակություն չունի նաև այն հանգամանքը, թե անձը վճարովի հիմունքներով է զբաղեցնում այդ պաշտոնը, թե՞ ոչ: Քր. օր.-ում տեղ գտած բնորոշումները չեն հստակեցնում այս հանգամանքը, ինչն ինքնին կարևոր է³:

Եթե համադրելու լինենք քր. օր.-ի 311-րդ և 3111-րդ հոդվածները, ապա կնկատենք, որ դիսպոզիտիվ հատկանիշների բովանդակային առումով դրանք նույնական են, տարբերությունը վերաբերում է բացառապես սուբյեկտներին և պատիժների տեսակին ու չափին: Եթե 311-րդ հոդվածով պատասխանատվության սուբյեկտ է ճանաչված պաշտոնատար անձը, ապա 3111-րդ հոդվածով՝ պաշտոնատար անձ չհանդիսացող հանրային ծառայողը: Բնականաբար, երկրորդ դեպքում պատիժը համեմատաբար մեղմ է:

Այսպիսով, հիշյալ նորամուծությամբ ընդլայնվել է այն հանրային ծառայողների շրջանակը, որոնք պատասխանատվություն են կրում՝ կաշառք կամ ապօրինի վարձատրություն ստանալու համար: Իրավակիրառ տեսանկյունից տվյալ դեպքում ծագում է նոր հարցադրում. հնարավո՞ր է, արդյոք, հստակ սահմանազատել քր.օր.-ի իմաստով պաշտոնատար անձանց պաշտոնատար անձ չհանդիսացող հանրային ծառայողներից: Կարծում ենք, վերը նշված պատճառներով հանդերձ որոշ դեպքերում հնարավոր չի լինի հստակ սահ-

¹ Տե՛ս «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենք:

² Տե՛ս ՄԱԿ-ի «Կոռուպցիայի դեմ» կոնվենցիա:

³ Տե՛ս **Ծաղիկյան Ս., Սարգսյան Գ.**, Կոռուպցիայի հակազդման քաղաքականությունը, Երևան, 2010, էջ 94:

մանազատել այդ եզրույթները և սահմանագծել դրանց շրջանակները: Ուստի նպատակահարմար է հետագայում անդրադառնալ նաև 311-րդ հոդվածի՝ վիճահարույց եզրույթների հստակեցմանը:

Մեկ այլ կարևոր հարցադրում ևս. միևնույն անձը կարող է մի դեպքում հանդես գալ որպես 311-րդ հոդվածով, իսկ մեկ այլ դեպքում՝ 311-րդ հոդվածով նախատեսված հանցակազմի սուբյեկտ: Մի խումբ քրեագետներ կարծում են, որ այս հարցին կարելի է դրական պատասխան տալ՝ պատճառաբանելով, որ 311-րդ հոդվածն ամրագրում է նաև առանձին լիազորությամբ իշխանության ներկայացուցչի կամ կազմակերպչական-տնօրինչական և վարչատնտեսական լիազորություններ իրականացնելու հնարավորություն: Ասվածից բխում է, որ, օրինակ, եթե որևէ նախարարության վարչության հանրային ծառայող լիազորվում է քաղաքացիական դատարանում ներկայացնելու նախարարությունը, ապա տվյալ քաղաքացիական դատավարությունում վերջինս հանդես կգա որպես պաշտոնատար անձ, իսկ վարչության շրջանակներում իր գործառույթներն իրականացնելիս՝ որպես պաշտոնատար անձ չհանդիսացող հանրային ծառայող:

Օրենսդրական մյուս նորամուծությունն առնչվում է իրական կամ ենթադրյալ ազդեցություն ունեցող անձանց ևս պետական ծառայության դեմ ուղղված հանցագործության սուբյեկտ ճանաչելուն, եթե վերջիններս շահադիտական նպատակով ներազդում են պաշտոնատար անձանց և պաշտոնատար անձ չհանդիսացող հանրային ծառայողի վրա և հասնում վերջիններիս կողմից որոշակի անիրավաչափ գործողությունների (անգործության) կատարմանը: Այս հանցակազմն ամրագրված է քր. օր.-ի 3112-րդ հոդվածով:

Այս հարցի առնչությամբ հայտնի է, որ դեռևս ՀՀ Ազգային ժողովում հարցը ներկայացնելիս ծագել էին որոշ տարաձայնություններ: Մասնավորապես, պատգամավորների մի մասն այն տեսակետին էր, որ վերը նշված հոդվածի ներմուծմամբ պաշտոնատար անձինք այլ պաշտոնատար անձանց վրա ներազդելու միջոցով կաշառք տվողի կամ նրա ներկայացրած անձանց օգտին նախատեսված որևէ գործողություն կատարելուն կամ չկատարելուն նպաստելու համար կենթարկվի պատասխանատվության ոչ թե 311-րդ հոդվածով, այլ 3112-րդ հոդվածով: Այս «մտահոգությունը» 3112-րդ հոդվածի հեղինակների կողմից համարվել է անհիմն՝ հետևյալ պատճառաբանությամբ. պաշտոնատար անձի վերը նշված բնույթի արարքը կորակվի քր. օր.-ի 311-րդ հոդվածով, եթե վերջինս այն կատարի պաշտոնեական դիրքի չարաշահմամբ, սակայն, եթե վերջինս կօգտագործի իր պաշտոնական դիրքի չարաշահման

հետ չկապված իրական կամ ենթադրյալ ազդեցություն, ապա արարքը կորակվի քր. օր.-ի 3112-րդ հոդվածով⁴:

Քրեական օրենսգրքի 3112-րդ հոդվածի առկայության տեսանկյունից կարող է հարց ծագել. ինչո՞ւ սահմանված չէ քրեական պատասխանատվություն նաև իրական կամ ենթադրյալ ազդեցությունը շահադիտական նպատակով օգտագործող անձանց ապօրինի վարձատրություն տալու համար: Գործնականում այդ դեպքերը ևս քրեորեն հետապնդելի արարքներ են, սակայն վերջիններիս արարքը կորակվի ոչ թե որպես կատարողի, այլ հանցակցի արարք: Իսկ առանձին հոդվածով քրեական պատասխանատվություն չի նախատեսվել՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ հիշյալ անձանց ապօրինի վարձատրություն տալը չի կարող որակվել որպես պետական ծառայության դեմ ուղղված հանցագործություն:

Այսպիսով, ամփոփելով հոդվածում կատարված ուսումնասիրության արդյունքները, կարելի է փաստել, որ չնայած հակակոռուպցիոն ուղղվածության քրեաիրավական նորմերի բարեփոխման ուղղությամբ օրենսդրի կողմից կատարված լայնածավալ աշխատանքներին, այնուամենայնիվ, այդ ոլորտը կարգավորող քրեաիրավական նորմերը դեռևս հեռու են կատարյալ լինելուց: Կարծում ենք, որ հակակոռուպցիոն ուղղվածության քրեաիրավական նորմերի բարեփոխման առաջիկա միտումները պետք է կապված լինեն «պաշտոնատար անձ» հասկացության օրենսդրական հստակեցման և պաշտոնատար անձի ու այդպիսին չհանդիսացող հանրային ծառայողի սահմանազատման որոշակի ու հստակ չափանիշների առանձնացման հետ:

ԱՄՓՈՓՈՒՄ

Հոդվածում ներկայացված է Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 3-րդ մասով ամրագրված «պաշտոնատար անձ» հասկացության սահմանափակ մեկնաբանությունը, տրված են 2008թ. քրեական օրենսգրքի լրացումներով նախատեսված 3111-րդ և 3121-րդ հոդվածների ամրագրման անհրաժեշտությունն ու հիմնավորումը՝ համեմատելով դրանք միջազգային փաստաթղթերում առկա ձևակերպումների հետ: Տարբեր իրավական վիճակներում անդրադարձ է կատարվել նաև «պաշտոնատար անձ» և «հանրային ծառայող» հասկացությունների համեմատությանը:

⁴ Տե՛ս ՀՀ գլխավոր դատախազություն. Կոռուպցիոն հանցագործությունների բացահայտման և քննության առանձնահատկությունները, «Օրենսդրական բարեփոխումների նշանակությունը կոռուպցիայի դեմ պայքարում», **Դանիելյան Գ.**, Երևան, 2009, էջ 14:

Բանալի բաներ - պաշտոնատար անձ, հանրային ծառայող, պատժա-
չափ, կազմակերպչական-տնօրինչական կամ վարչատնտեսական գործա-
ռույթներ, կաշառք խոստանալը, առաջարկելը, տրամադրելը:

К ВОПРОСУ О ЗАКОНОДАТЕЛЬНОЙ РЕФОРМЕ КОРРУПЦИОННЫХ ПРЕСТУПЛЕНИЙ

ARAM AYVAZYAN

В статье представлено ограниченное толкование понятия “должностное лицо”, закрепленного 3-й частью 308-й статьи Уголовного кодекса Республики Армения, даны необходимость и обоснование закрепления предусмотренных в 2008 году дополнениями уголовного кодекса статей 311¹ и 312¹, сравнивая их с имеющимися в международных документах формулировками. Приведены также сравнения понятий “должностное лицо” и “общественный служащий” в различных правовых ситуациях.

Ключевые слова – должностное лицо, общественный служащий, мера наказания, организационно-директорские или административно-экономические функции, обещание, предложение, дача взятки.

LEGISLATIVE REFORMS FOR CORRUPTION CRIMES

ARAM AYVAZYAN

The limited interpretation of the perception of «public servant» considered as state officials, which is stipulated in RA Criminal Code Article 308, part 3 is considered in this paper. Also presented are the necessity and grounding for the confirmation of the amendments to Articles 311¹ and 312¹ of the Criminal Code in 2008 compared with formulations of similar notions found in international documents. Reference to the comparison drawn between «executive» and «public servant» notions in different legal situations is also made.

Key words – executive, public servant, sentence, organizational-directorships or administrative-economic functions, bribe, promising, offering, dispensing.

ՀԱՐԿԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ ԵՎ ԻՐԱՎԱՍՈՒԲՅԵԿՏՈՒԹՅՈՒՆԸ

ԹԱՄԱՐԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Հարկային իրավունքի սուբյեկտների համակարգի, դրա յուրաքանչյուր տարրի և տեսակների ուսումնասիրությունն անհնար է առանց «հարկային իրավունքի սուբյեկտ» և «հարկային իրավահարաբերության սուբյեկտ» եզրույթների սահմանման, դրանց տարբերակման և դրանցից յուրաքանչյուրի կազմում գտնվող տեսակների թվարկման:

Հարկային իրավունքի սուբյեկտները հարկաիրավական նորմերին համապատասխան սուբյեկտիվ հարկային իրավունքներ և պարտականություններ կրողներն են: Հարկային իրավունքի սուբյեկտները, իրացնելով իրենց հարկային իրավունակությունը, հարկային իրավահարաբերություններում կրելով սուբյեկտիվ հարկային իրավունքներ և պարտականություններ, դառնում են այդ իրավահարաբերության սուբյեկտներ¹:

ՀՀ հարկային օրենսդրությունը «հարկային իրավունքի սուբյեկտ» եզրույթի հասկացությունը չի տալիս և չի լուծում դրանց տեսակների առանձնացման հարցը: Դրան հակառակ՝ իրավաբանական գրականության մեջ առանձնացվում են հարկային իրավունքի սուբյեկտների հետևյալ հիմնական տեսակները՝

- 1) Հայաստանի Հանրապետությունը (պետությունը),
- 2) ֆիզիկական անձինք,
- 3) իրավաբանական անձինք:

Հարկային իրավահարաբերության սուբյեկտների շրջանակը, ի տարբերություն հարկային իրավունքի սուբյեկտների շրջանակի, ավելի ընդգրկուն է: ՀՀ հարկային օրենսդրության որոշ նորմեր անմիջական առնչություն ունեն քննարկվող խնդրին: Օրինակ՝ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի² 5-րդ և 6-րդ հոդվածները տալիս են հարկային հարաբերությունների որոշ մասնակիցների թվարկումը, մասնավորապես, ըստ հիշյալ նորմերի, հարկային իրավահարաբերության մասնակիցներ են՝

¹ Տե՛ս Ա.Խաչատրյան, Հարկային իրավունք, Երևան, 2003, էջ 156:

² Ընդունվել է 14.04.1997 թ. և գործողության մեջ դրվել 30.05.1997 թ.:

- 1) իրավաբանական անձինք,
- 2) ֆիզիկական անձինք,
- 3) հիմնարկները,
- 4) տեղական ինքնակառավարման մարմինները,
- 5) հարկային գործակալները,
- 6) ներդրումային ֆոնդի կառավարիչները:

Հարկային իրավահարաբերության սուբյեկտների թվում են դասվում նաև հարկային մարմինները («Հարկերի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդված):

ՀՀ հարկային օրենսդրությունը հարկային հարաբերության սուբյեկտների թվարկման հարցում բովանդակում է որոշ անհստակություններ: Այսպես, հարկային իրավահարաբերությունների մասնակիցների թվում նշված չէ պետական իշխանության ներկայացուցչական (օրենսդիր) մարմինը (Ազգային ժողովը), մինչդեռ հենց վերջինս է հարկ հասկացությունը, հարկերի հիմնական տեսակները, հարկային վեճերի լուծման կարգը, հարկային օրենսդրությունը և հարկային հարաբերությունների կարգավորումը, հարկային իրավահարաբերություններում կիրառվող սկզբունքները սահմանող հիմնական սուբյեկտը: **Ահա թե ինչու մենք առաջարկում ենք հարկային իրավահարաբերության սուբյեկտների շարքում՝ որպես հարկային իրավահարաբերության մասնակցի, ներկայացնել նաև պետական իշխանության ներկայացուցչական մարմին:**

Հիշյալ սուբյեկտները հարկային իրավահարաբերության հիմնական մասնակիցներն են: Հարկ է նշել, որ հարկային իրավահարաբերություններին, բացի հարկային իրավունքի հիմնական սուբյեկտներից, կարող են մասնակից դառնալ նաև այլ, ոչ հիմնական (ֆակուլտատիվ) սուբյեկտներ: Արդյունքում հարկային իրավահարաբերություններին մասնակցում են նաև սուբյեկտներ, որոնք անուղղակիորեն ճանաչվում են հարկային հարաբերությունների մասնակիցներ, օրենսդրությամբ օժտված են հարկային իրավունքներով և պարտականություններով, իսկ օրենքով սահմանված դեպքերում կարող են կրել հարկաիրավական պատասխանատվություն: Հարկային իրավահարաբերությունների ոչ հիմնական մասնակիցները հիմնական մասնակիցներից տարբերվում են նրանով, որ առաջինները հարկային հարաբերություններում չունեն սեփական գույքային կամ այլ բնույթի շահ, այլ կոչված են օժանդակելու հար-

կային իրավահարաբերությունների հիմնական մասնակիցներին՝ առավել արդյունավետ իրականացնելու իրենց հարկային իրավասությունները³:

Հարկային իրավահարաբերությունների ոչ հիմնական մասնակիցներն են՝ մասնագետները, փորձագետները, աուդիտորները, թարգմանիչները, վկաները և փաստաբանները:

Հիշյալ ոչ հիմնական սուբյեկտները ներկայացված են «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքում⁴:

Հարկ է նշել, որ հիշյալ օրենքով ներկայացված հարկային իրավահարաբերությունների մասնակիցների շրջանակը ոչ ամբողջական է, քանի որ դրանում բացակայում է հարկ վճարողի լիազորված անձը, ով իրավունք ունի հարկ վճարողի անունից մասնակցելու ցանկացած բնույթի հարկային իրավահարաբերության («Ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդված): Վերոշարադրյալի հիման վրա **նպատակահարմար կլիներ հիշյալ օրենքի համապատասխան կետում որպես հարկային իրավահարաբերության ոչ հիմնական մասնակցի ավելացնել նաև հարկ վճարողի լիազորված անձին:**

Հարկային իրավահարաբերության ոչ հիմնական սուբյեկտները կարող են մասնակցել հարկային մարմնի կողմից իրականացվող ստուգման գործընթացին, հարկ վճարողների հաշվետվությունների կազմմանը, դրանք գրանցող մարմիններին ներկայացնելուն, հարկային իրավահարաբերություններում հիմնական մասնակիցների շահերի պաշտպանությանը և համապատասխան գործառնությունների իրականացմանը⁵:

ՀՀ օրենսդրությամբ կարգավորված չէ ոչ միայն հարկային իրավահարաբերության ոչ հիմնական սուբյեկտների հստակ շրջանակը, այլ նաև ներկայացված չէ վերջիններիս իրավունքների և պարտավորությունների շրջանակն ու դրանք խախտելու դեպքում կիրառվելիք պատասխանատվության միջոցները: Նման բացը կարող է իրական վտանգ ստեղծել հարկային հարաբերություններին ոչ հիմնական սուբյեկտների մասնակցության տեսակետից, ուստի **գտնում ենք, որ անհրաժեշտ է օրենքում հստակեցնել հարկային հարաբե-**

³ St' u Налоговое право России: Учебник // Под ред. Крохиной Ю. А., М., НОРМА, 2003, с. 216-219:

⁴ Ընդունվել է 17.05.2000թ. և գործողության մեջ դրվել 01.07.2000թ.:

⁵ Այդ մասին մանրամասն տե՛ս «ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենք, 7-րդ և 9-րդ հոդվածներ:

րության սուբյեկտների հիշյալ շրջանակն ու հստակ սահմանել դրանց իրավական կարգավիճակին վերաբերող դրույթները, ինչն արված է հարկային հարաբերության հիմնական մասնակիցների պարագայում:

Հարկային իրավահարաբերության հիշյալ սուբյեկտները բաժանվում են երկու մեծ խմբի՝

- I. հարկային իրավունքի հանրային սուբյեկտներ,
- II. հարկային իրավունքի մասնավոր սուբյեկտներ:

Սուբյեկտների նման տեսակները հարկային իրավահարաբերությունների տարբեր կողմեր են, քանի որ ունեն հակադիր շահեր:

«Մասնավոր սուբյեկտ» եզրույթն անմիջական առնչություն ունի «հարկ վճարող» եզրույթի հետ: «Հարկ վճարող»-ը դասվում է հարկային օրենսդրության առանձնահատուկ եզրույթների շարքում և օգտագործվում է բացառապես այն նշանակությամբ, որը սահմանված է «Հարկերի մասին» և «Կազմակերպության և ֆիզիկական անձանց հարկային հաշվառման վերցնելու և հարկային հաշվառումից հանելու մասին»⁶ ՀՀ օրենքների համապատասխան հոդվածներում: Հիշյալ օրենքներում ներկայացված են նաև հարկ վճարողի կարգավիճակի առանձնահատկությունները: Այդպիսիք են հարկ վճարող կազմակերպություններն ու ֆիզիկական անձինք, որոնց վրա հարկային օրենսդրությամբ դրվում է օրենքով սահմանված հարկի վճարման պարտավորություն, և որոնք նման կարգավիճակ ձեռք են բերում իրենց ազատ կամահայտնությամբ: Նման բնորոշումը հարկային իրավունքի սուբյեկտի՝ որպես հարկային իրավահարաբերության մասնակցի, կարգավիճակ ձեռք բերելու իրավաբանական փաստակազմ է:

Վերոշարադրյալի հիման վրա կարելի է ներկայացնել հարկ վճարող հասկացության հետևյալ սահմանումը. **հարկ վճարողը այն հատուկ իրավական կարգավիճակում գտնվող անձն է, ըստ որի նրա վրա օրենքով սահմանված կարգով պարտավորություն է դրվում վճարել հարկեր:** Վերջիններիս իրավական կարգավիճակի պարտադիր տարրեր են հարկ վճարողների իրավունքների և պարտականությունների ամբողջությունը, դրանք խախտելու արդյունքում վրա հասնող պատասխանատվությունը:

Հարկային իրավահարաբերություններում հարկ վճարող ֆիզիկական անձինք դրանց առավել ակտիվ մասնակիցներ են: Վերջիններիս թվում պետք է առանձնացնել անհատ ձեռնարկատերերին, ովքեր իրավունք ունեն, առանց

⁶ Ընդունվել է 11.10.2007թ. և գործողության մեջ դրվել 01.01.2008թ.:

իրավաբանական անձ կազմավորելու, ինքնուրույն, իրենց անունից և իրենց ռիսկով իրականացնելու գործունեություն, որի հիմնական նպատակը գույք օգտագործելիս, ապրանքներ վաճառելիս, աշխատանքներ կատարելիս կամ ծառայություններ մատուցելիս շահույթ (եկամուտ) ստանալն է:

Երբեմն անհատ ձեռնարկատիրոջ հարկային իրավունակության բովանդակությունը համեմատվում է կազմակերպության հարկային իրավունակության հետ: Սա պայմանավորված է նրանով, որ ֆիզիկական անձից անհատ ձեռնարկատիրոջ կարգավիճակին անցնելու առանձնահատկությունները թույլ չեն տալիս հավասարության նշան դնել իրավաբանական անձի և անհատ ձեռնարկատիրոջ միջև:

Այսպես, անհատ ձեռնարկատիրոջ հարկային իրավունակության առանձնահատկությունն այն է, որ նրա վրա կարող է տարածվել նաև այնպիսի առանձնահատուկ հարկային կարգ, ինչպիսին հարկման պարզեցված համակարգն է: Հիշյալ կարգին անցնելու հնարավորությունը սահմանված է որոշակի հարկատեսակների մասին օրենքներում⁷, ինչը բացակայում է իրավաբանական անձի մոտ:

Հարկային իրավահարաբերությունների մասնակից է նաև կազմակերպությունը: Իրավաբանական գրականության մեջ «կազմակերպություն» հասկացությունը հաճախ նույնացվում է «իրավաբանական անձ» հասկացության հետ⁸, սակայն դրանք միանգամայն առանձին հասկացություններ են, ավելին՝ այդ հասկացությունները հարաբերվում են որպես մաս և ամբողջություն, ընդ որում, կազմակերպությունն ավելի լայն հասկացություն է, քան իրավաբանական անձը: Իրավաբանական անձը կազմակերպության ընդամենը մեկ տեսակն է:

Քննարկվող հասկացությունների վերաբերյալ քաղաքացիական և հարկային իրավունքներում ցուցաբերվում են տարբեր մոտեցումներ: Քաղաքացիական իրավունքում «կազմակերպություն» և «իրավաբանական անձ» հասկացությունները դիտարկվում են որպես տարբեր հասկացություններ, իսկ հարկային իրավունքը դրանք գրեթե նույնացնում է:

Հարկային օրենսդրության մեջ «կազմակերպություն» հասկացությունն օգտագործվում է, որպեսզի առանձնացվի կոլեկտիվ հարկ վճարողը⁹: Տարած-

⁷ Տե՛ս «Եկամտային հարկի մասին» օրենքի 22-րդ հոդված, «Շահութահարկի մասին» օրենքի 3-րդ հոդված:

⁸ Տե՛ս **Виницкий Д.В.** Субъекты налогового права, М., 2000, с. 33-34:

⁹ Տե՛ս «Կազմակերպությունների և ֆիզիկական անձանց հարկային հաշվառման վերց-

ված է նաև այն մոտեցումը, համաձայն որի այսպիսիք այն հարկ վճարողներն են, ովքեր ֆիզիկական անձ չեն¹⁰: Հարկ վճարող կազմակերպությունները բաժանվում են երկու խմբի՝ իրավաբանական անձինք և անձինք, որոնք այդպիսիք չեն:

Հարկային օրենսդրությունը չի տալիս «իրավաբանական անձ» հասկացության իր բնորոշումը: Հարկային օրենսդրությամբ օգտագործվում է իրավաբանական անձի այն հասկացությունը, որը սահմանված է ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ: Իսկ սա նշանակում է, որ իրավաբանական անձանց թվին են պատկանում այն կազմակերպությունները, որոնք օժտված են հետևյալ հատկանիշներով. ունեն սեփականություն, տնտեսական կամ օպերատիվ կառավարման իրավունքով առանձնացված գույք, իրենց անունից կարող են ձեռք բերել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում լինել հայցվոր և պատասխանող, ունենալ սեփական հաշվեկշիռ:

Իրավաբանական անձանց շարքում չդասվող հարկ վճարողներ են քաղաքացիական իրավասուբյեկտությամբ օժտված կազմակերպությունները, որոնք ստեղծվել են այլ պետության օրենսդրությանը համապատասխան: Այդպիսիք են միջազգային կազմակերպությունները, ՀՀ տարածքում ստեղծված նրանց մասնաճյուղերը և ներկայացուցչությունները:

Հարկային օրենսդրությամբ սահմանված չէ իրավաբանական անձ չհանդիսացող կազմակերպություն հասկացությունը, իսկ հատկանիշները ներկայացված են մասամբ, ուստի մեր կարծիքով անհրաժեշտ է օրենսդրական կարգավորման ենթարկել հիշյալ հարկ վճարողներին առնչվող հիմնախնդիրները:

Հարկային իրավունքի սուբյեկտի ընդհանուր բնութագիրն անհնար է տալ առանց դրա իրավասուբյեկտության բնութագրման: Հարկային իրավասուբյեկտությունն իրավասուբյեկտության հատուկ տեսակ է, որի հիմնական առանձնահատկությունը հետևյալն է. հարկային իրավունքում հստակ սահմանվում է այն անձանց շրջանակը, ովքեր ընդունակ են ձեռք բերելու այս կամ այն հարկային իրավունքը և կրելու համապատասխան պարտականություն, որովհետև միայն հարկային իրավասուբյեկտության առկայության դեպքում է անձի մեջ ծագում հարկ վճարելու պարտականությունը (ինչպես նաև այլ հար-

նելու և հարկային հաշվառումից հանելու մասին» ՀՀ օրենքի 2-րդ և 4-րդ հոդվածները:

¹⁰ St'a **Петров Г. И.** Сущность Советского административного права, Л., 1959, с. 91-92:

կային իրավունքներ և պարտականություններ) և, համապատասխանաբար, անձը ձեռք է բերում հարկ վճարողի իրավական կարգավիճակ, դառնում հարկային իրավունքի սուբյեկտ: Մեր կարծիքով հարկային իրավասուբյեկտությունը հարկային իրավունքի սուբյեկտի հարկային-իրավական կարգավիճակի նախադրյալն է:

Թեև հարկային իրավունքի գիտության մեջ «իրավասուբյեկտություն» եզրույթն ամբողջ ծավալով ուսումնասիրված չէ, սակայն դրանում առկա են հարկային իրավունքի սուբյեկտի հարկային իրավական կարգավիճակի և իրավասուբյեկտության հարաբերակցության վերաբերյալ տարբեր մոտեցումներ: Այսպես, Ա. Վ. Միցկևիչը «իրավասուբյեկտություն» հասկացությունն ավելի լայն է դիտարկում, քան «իրավական կարգավիճակը». իրավասուբյեկտությունը ներառում է իրավական կարգավիճակը, և դրանք հարաբերակցվում են որպես մաս և ամբողջություն¹¹: Ն. Ա. Բոգդանովան և Մ. Ա. Պերեպելիցան ընդգծում են իրավահարաբերության սուբյեկտի իրավական կարգավիճակի՝ իրավահարաբերություններում իր ինքնուրույն որակով առանձնանալու հանգամանքը¹²:

Ավելի հիմնավոր են այն հեղինակների տեսակետները, որոնք իրավասուբյեկտությունը դիտարկում են իրավական կարգավիճակի նախադրյալի որակմամբ: Օրինակ, սահմանադրական իրավունքում այս տեսակետն ընդունում են Ս. Լ. Սերգենինը¹³, Ա. Ա. Լիվերովսկին¹⁴:

Հարկային իրավունքի տեսությունում հարկային իրավասուբյեկտությունը դիտարկվում է որպես հարկային իրավունքի սուբյեկտի հարկային իրավական կարգավիճակի հիմք¹⁵:

¹¹ Տե՛ս **Мицкевич А. В.** Правовые отношения (Проблемы общей теории права и государства), М., 2002, էջ 373:

¹² Տե՛ս **Богданова Н. А.** Система науки конституционного права, М., 2001, с. 67-68, Տե՛ս **Перепелица М. А.** Правовое регулирование статуса плательщиков налогов и сборов в Украине / Под ред. Н. П. Кучерявенко, Харьков, 2003, с. 42-52:

¹³ Տե՛ս **Сергеевнин С. Л.** Субъект Федерации: статус и законодательная деятельность, СПб., М., 1999, с. 76-77:

¹⁴ Տե՛ս **Ливеровский А. А.** О статусе субъекта Российской Федерации // Правоведение, М., 2000, N 2, с. 90:

¹⁵ Տե՛ս **Ногина О. А.** Правовой статус налогоплательщиков, плательщиков сборов, налоговых агентов и налоговых представителей // Налоговое право России, общая часть: Учебник / Отв. ред. Н. А. Шевелева, М., 2001, с. 67:

Վերոշարադրյալի հիման վրա գտնում ենք, որ հարկային իրավասուբյեկտությունը հարկային իրավունքի սուբյեկտի հիմնական հատկությունն է, հարկային-իրավական կարգավիճակի սկզբնական հիմքը: Հարկային իրավասուբյեկտությամբ օժտված լինելու հանգամանքն է հարկային իրավունքի մասնավոր սուբյեկտին դարձնում հարկային իրավունքի սուբյեկտ:

Իրավասուբյեկտությունը մասնավոր սուբյեկտի հարկային իրավական կարգավիճակի նախադրյալն է, որը հնարավորություն է տալիս վերջինիս մտնելու հարկային իրավահարաբերությունների մեջ: Արդյունքում **հարկային իրավասուբյեկտության ընդհանուր տեսական հասկացությունը կարելի է ներկայացնել հետևյալ կերպ. հարկային իրավասուբյեկտությունը սուբյեկտի՝ հարկային իրավունքի նորմերով սահմանված հնարավորությունն է՝ հարկային իրավահարաբերություններում լինել հարկային իրավունքներ և պարտականություններ կրող:**

Վերոշարադրյալից հետևում է, որ հարկային իրավասուբյեկտությունն ընկալվում է որպես սուբյեկտի հարկային իրավական կարգավիճակի տարր:

Հարկային իրավասուբյեկտությունն ունի կառուցվածքային երկու հիմնական տարր՝ հարկային իրավունակություն և հարկային գործունակություն: Հարկային իրավունակությունը հարկային իրավունքի սուբյեկտի՝ հարկային իրավունքի նորմերով սահմանված հարկային իրավունքներ ունենալու և պարտականություններ կրելու ունակությունն է, որը հարկային իրավունքի սուբյեկտ հանդիսացող բոլոր քաղաքացիների և իրավաբանական անձանց համար ճանաչվում է հավասարապես: Իսկ հարկային գործունակությունը հարկային իրավունքի սուբյեկտի՝ հարկային իրավունքի նորմերով սահմանված հարկային իրավունքներ ձեռք բերելու և իրականացնելու, իր համար հարկային պարտականություններ ստեղծելու ու դրանք կատարելու ունակությունն է:

Վերոշարադրյալից հետևում է, որ հարկային իրավասուբյեկտությունը հարկային իրավունքի սուբյեկտի հնարավորությունն է՝ ունենալու և իր կամ իր ներկայացուցչի միջոցով իրականացնելու հարկային իրավունքի նորմերով սահմանված և պաշտպանվող իրավունքներ ու պարտականություններ, ինքնուրույն մտնելու հարկային իրավահարաբերությունների մեջ:

ԱՄՓՈՓՈՒՄ

Հոդվածը նվիրված է հարկային իրավունքի սուբյեկտների բնութագրմանը և նրանց իրավասուբյեկտության (իրավունակության և գործունա-

կության) հատկանիշներին: Տրվել են հարկային իրավունքի սուբյեկտների իրավական հասկացությունը, նրանց շրջանակները, հարկային իրավահարաբերություններին հիմնական և լրացուցիչ մասնակիցների կազմը, դրանց դասակարգումը: Ըստ հեղինակի՝ հարկային իրավասուբյեկտությունը հարկային իրավունքի սուբյեկտների հիմնական հատկությունն է, որ նրան դարձնում է իրավունքի սուբյեկտ, ինչպես նաև նրա հնարավորությունն է ինքնուրույն մտնելու հարկային իրավահարաբերությունների մեջ: Առաջարկ է արվել հարկային իրավահարաբերության լրացուցիչ մասնակիցների շարքում ավելացնելու նաև հարկ վճարողի լիազորված անձին:

Բանալի բաներ – հարկային իրավունքի սուբյեկտ, իրավասուբյեկտություն, իրավական կարգավիճակ, հարկային իրավունակություն, հարկային գործունակություն:

ОБЩЕЕ ОПИСАНИЕ И ПРАВОСУБЪЕКТНОСТЬ СУБЪЕКТОВ НАЛОГОВОГО ПРАВА

ТАМАРА ГРИГОРЯН

Настоящая статья посвящена описанию субъектов налогового права и признакам их правосубъектности (правоспособности и дееспособности). Даны правовое понятие субъектов налогового права, их рамки, состав основных и дополнительных участников налоговых правоотношений, их классификация. Согласно автору, налоговая правосубъектность – это основной признак субъектов налогового права, который превращает их в субъект права, а также дает им возможность самостоятельно войти в налоговые правоотношения. Было предложено к числу дополнительных участников налоговых отношений добавить также доверенное лицо налогоплательщика.

Ключевые слова – субъект налогового права, правосубъектность, правовой статус, налоговая правоспособность, налоговая дееспособность.

TAXATION OF LEGAL PERSONS & THEIR LEGAL PERSONALITY

TAMARA GRIGORYAN

This article is concerned with the characterization of legal persons and their legal personality that is

their legal rights and legal capacity. Defined are the concept of legal personality, restrictions, the list and classification of the incorporated members of the basic and additional juridical persons. According to Grigoryan, the main attribute of legal persons is their legal personality, which makes him entitled independently to have legal rights and in itself is a prerequisite to legal capacity. It is proposed to add to the additional juridical persons a natural person certified to pay taxes

Key words – legal persons, legal personality, legal status, tax illegibility, tax capability.

ԻՐԱՎՈՒՆՔԸ ԵՎ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԸ

ԱՐՄԵՆ ՇՈՒՔՈՒՐՅԱՆ

Ազատությունը սովորաբար ներառվում է իրավունքի հիմնադիր արժեքների համակարգ՝ հաճախ առաջնակարգ տեղ գրավելով այդ համակարգում: Սակայն բուն «ազատություն» հասկացության մեկնաբանության մեջ միշտ չէ, որ առկա է անհրաժեշտ որոշակիությունը: Ինչպես գրում էր Շ.Լ. Մոնտեսքիոն. «...չկա այնպիսի բառ, որը կստանար այնքան տարատեսակ արժեքներ ու այդքան տարբեր տպավորություններ գործեր ուղեղների վրա, որքան «ազատություն» բառը: Ոմանք ազատություն են անվանում կարողությունը գահընկեց անել նրան, ում իրենք օժտեցին բռնապետական իշխանությամբ, ուրիշները՝ ընտրել նրան, ում իրենք պետք է ենթարկվեն, երրորդները՝ զենք կրելու և բռնություն կատարելու իրավունքը, չորրորդներն այն տեսնում են սեփական ազգության մարդու կառավարման տակ գտնվելու կամ սեփական օրենքներին ենթարկվելու առավելության մեջ...»¹:

Ազատության դասական հայեցակարգերից մեկը պատկանում է Ի. Կանտին: Ազատությունը, իր բարքերի մետաֆիզիկային համապատասխան, կապվում է «կամայականություն» հասկացության հետ. «Ցանկության կարողությունը, հասկացություններին համաձայն, քանի որ այն գործողությունը սահմանող հիմքը գտնվում է դրանում, այլ ոչ թե օբյեկտում, կոչվում է սեփական հայեցողությամբ գործելու կամ չգործելու կարողություն: Քանի որ այդ կարողությունը կապված է օբյեկտ ստեղծելու համար արարքներ կատարելու կարողության գիտակցության հետ, այն կոչվում է կամայականություն... Կամայականության ազատությունը դրա սահմանման անկախությունն է զգայական դրդումներից. կամայականության ազատությունը բացասական հասկացություն է: Իսկ դրա դրական հասկացությունը զուտ բանականության՝ ինքն իր համար գործնական լինելու կարողությունն է»²: Կանտի ազատություն հասկացության սահմանումն ավելի կարճ է՝ «անկախություն ուրիշի ստիպող կամայականությունից»³:

Այսպիսով, Կանտի փիլիսոփայության մեջ ազատություն հասկացու-

¹ **Монтескье Ш.Л.** О духе законов // Избранные произведения. М., Наука. 1955, с. 288.

² **Кант И.** Метафизика нравов // Сочинения. Т. 4, часть 2, М., Норма, 1965, с. 119-120.

³ Նույն տեղում, էջ 147:

թյունը մեկնաբանվում է որպես բանական որոշումների ընդունման ու իրականացման կարողություն /դրական կողմ/ անկախ սեփական զգացումներից և այլ մարդկանց կողմից հարկադրանքից /բացասական կողմ/:

Մարքսիստական ավանդույթում ընդհանուր տեղ է դարձել ազատության՝ իբրև ճանաչված անհրաժեշտության /կամ «անհրաժեշտության ճանաչման»/ սահմանումը: Կարելի է ենթադրել, որ ցանկացած արժեք արդիականանում է դրա բացակայության կամ պակասի պայմաններում, երբ հանկարծ պարզվում է, որ կարևոր մի բան է պակասում:

Անբավարարվածությունը, սեփական շահերի ոչ լիարժեք իրացման և սեփական ճանապարհին խոչընդոտների գիտակցությունը զգացվում են իբրև անազատության վիճակ: Համապատասխանաբար, ազատությունը թվում է իբրև դրա հակառակը, այսինքն՝ իբրև սահմանափակումների բացակայություն /«ազատություն ինչ-որ բանից»/ կամ իբրև սեփական նպատակներին հասնելու համար անհրաժեշտ միջոցների առկայություն /«ազատություն ինչ-որ բանի համար»/:

Ազատություն կոչվող հնարավորությունը կրում է ոչ թե բացարձակ, այլ հարաբերական բնույթ, քանի որ դրա օբյեկտը կենսական ընտրությունն է, որն ի սկզբանե սահմանափակված է ինչպես առկա այլընտրանքներով, այնպես էլ բազմապիսի արտաքին ու ներքին պայմաններում, որոնք ուղեկցում են դրա կատարումը⁴: Ըստ էության, հենց ազատության շրջանակների խախտումն է հիմքը դրա «զրկման» համար /հիարկե, ոչ լիարժեք, այլ մասնակի/: Քանի որ ազատության օբյեկտը դրա իրավական արժեքի մեջ է, ըստ էության, միայն մարդու արտաքին ակտիվությունը, ապա այն կարելի է սահմանել իբրև ազատ տեղաշարժման հնարավորություն: Վերջապես, իրավաբանական ազատությունը տարբերվում է ազատության այլ տեսակներից իր ներկայացման ձևով, այն երաշխավորված է սուբյեկտին թույլատրելի վարքագծի սահմանների հրապարակային, պաշտոնական սահմանման միջոցով⁵:

Այսպիսով, ազատությունն իրավական տեսակետից կարելի է դիտարկել իբրև պաշտոնապես սուբյեկտիվ ներկայացված շարժման հարաբերական հնարավորություն կամ իբրև անխոչընդոտ կենսակերպի դաշտ:

Ազատությունը գոյաբանական իմաստով անհատին կամ կոլեկտիվին

⁴ Տե՛ս **Роберт Алекс.** Понятие у действительность права (ответ юридическому позитивизму). М., Норма, 2005, с. 109-110.

⁵ Տե՛ս **Малахов В.П.** Общая теория права и государства. М., ЮНИТИ-ДАНА, 2013, с. 71-72.

փաստացի հասանելի սոցիալական հնարավորությունների ծավալն է մշակույթի որոշակի մոդելի սահմաններում:

Իրավական վարքագծի ոլորտում առավելապես տարածված է այսպես կոչված թելեոլոգիական դետերմինացիան, որը ոչ միայն չի մերժում կամքի ազատությունը, այլև անմիջականորեն հիմնվում է դրա վրա: Թելեոլոգիական դետերմինացիա նշանակում է, որ սուբյեկտիվ գործունեությունը պայմանավորվում է ոչ միայն արտաքին հանգամանքների համընկնմամբ, այլև որոշակի նպատակով, որը նա իր առջև է դնում՝ հաշվի առնելով այս պայմանները. «նա որոշակի էֆեկտ է դնում իբրև «նպատակ», այսինքն՝ դրա հետ է միավորում որոշակի արժեք»⁶: Ընդ որում իրավական սահմանումներն այն գործոններից են, որոնց ազդեցությամբ մարդիկ ձևավորում են իրավական արժեքների /բարիքների/ իրենց համակարգը և ընտրում այդ բարիքներին հասնելու եղանակը:

Ազատությունն արքիոլոգիական իմաստով վարքագծի այն հնարավորությունն է, որը ցանկալի է սուբյեկտի համար և իր բանական նպատակադրման կամ հուզական ձգողականության առարկա է:

Իրավունքի ոլորտում ազատության արժեքը կարելի է ցուցադրել երկու ձևով: Մի կողմից, ազատությունն օբյեկտիվորեն անհրաժեշտ է մարդուն իբրև իր գոյատևման պայման: Ի.Պ. Պավլովն անգամ փորձեց հիմնավորել հատուկ «ազատության ռեֆլեքսի» գոյությունը, որն արտահայտվում է նրանում, որ կենդանի էակը չի դիմանում սեփական շարժման սահմանափակումներին և ձգտում է ազատվել դրանցից. «Ազատության ռեֆլեքսը կենդանիների ընդհանուր հատկությունն է, ընդհանուր արձագանքը, ի ծնե կարևորագույն ռեֆլեքսներից մեկը: Եթե այն չլիներ, ցանկացած փոքրագույն խոչընդոտ, որը կենդանին կհանդիպեր իր ճանապարհին, ամբողջովին կդադարեցներ իր կյանքի ընթացքը»⁷: Այլ կերպ ասած, շարժման ցանկացած խոչընդոտ պոտենցիալ վտանգ է ներկայացնում կյանքի համար անգամ ֆիզիոլոգիական իմաստով: Դիցուք ազատության պահանջն ի սկզբանե առաջանում է իբրև գործիքային, առաջացած այլ՝ ավելի խորը բնազդներով. սակայն, լինելով ինքնապաշտպանության լիովին անփոխարինելի միջոց, ժամանակի հետ այն դառնում է ինքնուրույն մշակութային արժեք:

Մյուս կողմից, ազատությունը բազմակողմանի ձևական-իրավաբանա-

⁶ Риккерт Г. Философия жизни. М., 2000, с. 150.

⁷ Павлов И. П. Рефлекс свободы. М., СПб, 2001, с. 78.

կան ճանաչում է ստանում իբրև արժեք /բարիք/: ՀՀ սահմանադրությունն ուղղակիորեն հայտարարում է ազատությունը /ավելի ճիշտ՝ «ազատությունները» բազմակի /բարձրագույն արժեք /հոդ. 3/: Հետագայում ազատությունն ինքն է նկարագրվում իբրև անձնական սահմանադրական իրավունքներից մեկի օբյեկտ /«ազատության ու անձնական անձեռնմխելիության իրավունք»/ և վերջապես որոշակիացվում է բազմաթիվ հատուկ «ազատությունների» տեսքով /խոսքի ազատություն, մտքի ազատություն, խղճի, տեղաշարժի ազատություն և այլն/:

Սակայն, հարկավոր է ուշադրություն դարձնել նրան, որ ազատությունը, լինելով համապարփակ իրավական արժեք, գրեթե ոչ մի դեր չի խաղում ծառայությունների ոլորտում⁸: Ի տարբերություն պատժի՝ խրախուսման համար անգամ չի պահանջվում, որպեսզի պարզևատրվող անձի գործողությունները կրեն կամայական բնույթ, հարկադրանքի տակ կատարված արարքը հիմք չի ծառայում՝ խրախուսանքը բացառելու համար: Խրախուսման միջոցների նկատմամբ կիրառելիս ազատությունը հանդես է գալիս իբրև իրավական արժեք միայն քրեական պատիժ կրելուն առնչվող հարաբերությունների նեղ ոլորտի համար: Հենց ազատությունն է արժեքային հիմք այնպիսի խրախուսիչ միջոցների համար, ինչպիսիք են պատիժ կրելուց պայմանականորեն վաղաժամկետ ազատումը և այլն:

Ազատության արժեքը մարդու ինքնիրացման պարտադիր պայմանն է՝ թույլ տալով իր սեփական հայեցողությամբ սահմանել սեփական գործունեության նպատակներն ու միջոցները: Ազատությունը դիտարկվում է իբրև ճշմարիտ բարիք, քանի որ հենց ազատության առկայությունից կամ բացակայությունից է կախված այն, թե արդյոք մարդը կկարողանա՞ ինքնուրույն գտնել սեփական նյութական ու հոգևոր պահանջների բավարարման ճանապարհները: Որքան շատ ազատ ընտրության հնարավորություններ ունեն իրավական կյանքի սուբյեկտները, այնքան ավելի ինտենսիվորեն է ընթանում ինքնակազմակերպումը և ընդհակառակը: Ազատությունն ու ինքնաիրացումը, եթե ոչ համարժեք, ապա համենայն դեպս լիովին համադրելի հասկացություններ են: Ազատության բացակայությունը կամ դրա ծայրաստիճան նեղությունը կարող են հանգեցնել լուրջ սոցիալական լարվածության, որն առաջացել է չիրացված շահերի կուտակմամբ, ինչը վերջին հաշվով սպառնում է քաղաքացիական

⁸ См. **Малинов И. П.** Философия права и юридическая герменевтика. М., Норма, 2014, с. 18-19.

խաղաղությանը, համաձայնությանն ու համերաշխությանը: Եթե իրավաբանական փորձն առանձին անհատների կամ ամբողջ սոցիալական խմբերի համար կրում է տրավմատիկ բնույթ, այսինքն՝ տառապանք է պատճառում իրենց, ապա այն կարող է դառնալ իրենց կողմից իրավակարգի նկատմամբ հավատարմության կորստին:

Եթե իրավական համակարգում ցածր է թույլատրելի ազատության մակարդակը /օրինակ՝ բռնապետական ու տոտալիտար պետություններում/, ապա դրանով ոչ մի կերպ չի ապահովվում դրա զարգացման կայունությունը: Դինամիկ համակարգը չի կարող կանգնել հավասարակշռված վիճակում, ուստի ինքնակազմակերպման /զարգացման/ համար հնարավորությունների բացակայության ժամանակ այլընտրանք է միայն էնտրոպիան /դեգրադացում/:

Այսպիսով, ազատությունը փոխանակման կատեգորիաներում կարող է դիտարկվել իբրև փոխանակման հարաբերությունների անսահմանափակ շրջանառություն, որը կարգավորված է իշխանության կողմից, ազատությունն առանց իշխանական կարգավորման պատկերացնել չի կարելի, այն անհնարին է իբրև սոցիալական փաստ⁹:

Իրավաբանական ազատությունը գոյություն ունի նրա համար, որպեսզի օգտագործվի, իսկ ազատ վարքագծի բուն ակտն ուղղված է որոշակի սոցիալական բարիքների նվաճմանը: Ազատությունն անսահմանափակ չէ, այլ սահմանափակված է հասարակայնորեն թույլատրելի նպատակներով, այլ կերպ ասած, դրա որոշակի ծավալը սահմանվում է այլ սոցիալ-իրավական արժեքներով:

ԱՄՓՈՓՈՒՄ

Պետության և իրավունքի ծագումից ի վեր «իրավունք» և «ազատություն» գաղափարները մշտնջենական, անխզելի կապի մեջ են: Հայտնի է, որ ժողովրդավարական, իրավական պետություններում գործում է «չկան իրավունքներ առանց ազատությունների և ազատություններ առանց իրավունքների» հայեցակարգը: Տվյալ գիտական հոդվածում հեղինակը համակողմանի քննարկում է իրավունքի և ազատության փոխհարաբերության հիմնահարցերը: Ավելին, հեղինակը, դիտարկելով իրավունքը ազատության, արդարության և ձևական (իրավաբանական) հավասարության տեսանկյունից, մատ-

⁹ См'у Честнов И. Л. Постклассическая теория права. М., 2012, с. 296-297.

նանշում է, որ իրավունքն օրինականացված ազատություն է, ազատության չափ:

Քանալի բաներ – իրավունքներ, ազատություններ, արդարություն, պետություն, ազատության արժեք, բարիք, սոցիալական հնարավորություն:

ПРАВО И СВОБОДА

АРМЕН ШУКУРЯН

Понятия «право» и «свобода» находятся в вечной неразрывной связи с начала происхождения государства и права. Известно, что в демократическом, правовом государстве действует концепция: «нет прав без свобод и свобод без прав». В данной статье автор всесторонне рассматривает проблемы взаимодействия прав и свобод. Более того, автор, рассматривая право с точки зрения свободы, справедливости и формального (юридического) равенства, указывает на то, что право является легализацией, мерилем свободы.

Ключевые слова – права, свободы, справедливость, государство, ценность свободы, благо, социальная возможность.

RIGHT AND FREEDOM

ARMEN SHUKURYAN

Since the origins of government and law there is an eternal indissoluble bond between the concepts of "rights" and "freedom". It is known that in a democratic, legal state, the concept of "no rights without freedom and no freedom without rights." functions. The author in this scientific article thoroughly examines the correlation between rights and freedoms. Moreover, the author, considering the rights in terms of formal (legal) equality, freedom and justice specifies that rights represent legalized freedoms, its measure of freedom.

Key words – rights, freedoms, justice, a nation, the value of freedom, products, social opportunity.

ԱՐՎԵՍՏԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԳՐԱՖԻԿԱԿԱՆ ԴԻԶԱՅՆԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ԱՐՏԱԿ ԱՂԱՄԱԶՅԱՆ

Գրաֆիկական դիզայնի ստեղծման մեթոդաբանությունը, ըստ էության, ստեղծագործությունների նախագծումն ու իրականացումն է: Մի շարք ուսումնասիրություններում (Դեմիդովա Ա., Ջենկովիչ Ս.) գրաֆիկական դիզայնի ստեղծման մեթոդաբանության հիմքում հեղինակները տեսնում են նախ և առաջ նախագծումը: Ս.Ջենկովիչի գիտական աշխատությունը¹ կարևոր է ուսումնասիրման մի քանի դիտարկումներով: Հեղինակի կարծիքով գրաֆիկական դիզայնի մեթոդաբանությունը դեռ գոյություն չունեցող ստեղծագործության կամ «օբյեկտի» նկարագրությունն է, քանի որ մտահղացման ժամանակ արվեստագետն ապագա ստեղծագործության հատկանիշների մասին պատկերացում ունի: «Դիզայներական նախագծման հիմնական փուլն ընթանում է դիզայների գիտակցության մեջ... Դիզայներական նախագծման ընթացքում համադրվում են գիտելիքն ու երևակայությունը, ինտուիցիան և հաշվարկը, գիտությունն ու արվեստը, տաղանդն ու վարպետությունը: Նախագծումը կապված է ստեղծագործման հոգեբանության հետ. այդ է պատճառը, որ նախագծման ինտենսիֆիկացման (կամ մտահղացման համակարգման գործընթացի – Ա.Ա.) համար դիզայներին անհրաժեշտ է հաշվի առնել և կիրառել էվրիստիկայի մեթոդներ, որոնք կնպաստեն ֆանտազիայի և երևակայության զարգացմանն ու նախագծային խնդրի լուծման նոր չեզոք ուղիներ գտնելուն»²:

Նախագծային մտահղացումը «նյութականացվում է» ավարտուն ստեղծագործության մեջ՝ մակետների ստեղծում, մոդելավորում և այլն: Նոր արտադրանքի նախագծման սկզբնական փուլն էսքիզի ստեղծումն է: Սկզբնական էսքիզում դիզայներն արտահայտում է իր երևակայության մեջ ծագած ապագա ստեղծագործության մտահղացումը: Միևնույն ժամանակ գրաֆիկ դիզայները հաշվի է առնում նաև նախագծային մտահղացումներ, տեխնոլո-

¹ **Зенькович С.** Теория и методология проектирования в дизайне. 2015-01-24. <http://studopedia.org/8-50306.htm>

² Նույն տեղում:

գիաներ, ստեղծման կամ արտադրման տնտեսման հարցեր, գեղարվեստական մշակույթի ձեռքբերումներ ճարտարապետության, գեղանկարչության, քանդակագործության բնագավառներում: Գեղարվեստական մտահղացման էսքիզին հաջորդում է ավարտուն ստեղծագործությունը:

Գրաֆիկական դիզայնի բազմաթիվ ճյուղերից յուրաքանչյուրին բնորոշ առանձնահատկություններից են պայմանականորեն «օբյեկտներ» անվանվող գեղարվեստական մտահղացումները՝ գրաֆիկայի, առարկաների, ճարտարապետական շինությունների, միջավայրի՝ էքստերիերի, ինտերիերի նախագծումը, որոնք ուղղակիորեն արտացոլում են մարդու այս կամ այն ապրելակերպը: Արդյունաբերական դիզայնի նպատակը մարդու գործունեության տարբեր բնագավառների կամ առարկաների ներդաշնակ ձևավորումն է: Միջավայրի դիզայնն օգտագործում է ճարտարապետության հնարավորությունները՝ իրականացնելով ստեղծագործական մտահղացումներ ոչ միայն ֆունկցիոնալության կարևորման տեսակետից, այլև ամբողջական գեղարվեստական լուծումներ, որոնք ունակ են արտահայտելու ապրելակերպի իմաստն ու բնույթը: Յանկացած դիզայնեռական նախագծում ենթադրում է նոր ստեղծագործության («օբյեկտի») ստեղծում, որում համադրվում են հասարակական անհրաժեշտ հատկանիշները՝ սպառման հատկությունները գեղագիտական ասպեկտի հետ: Գրաֆիկական դիզայնի բոլոր բնագավառները, լինելով գեղարվեստական ստեղծագործություն, պետք է նաև օժտված լինեն գեղարվեստական, գեղագիտական հատկանիշներով: «Դիզայնում նախագծումն ուղղված է վերջնական նախագծային իրավիճակի փոփոխմանը և բաժանվում է երկու մասի՝ անալիտիկ և սինթետիկ, զարգացում ունենալով առաջադրանքի ուսումնասիրումից, նախագծային աշխատանքի օբյեկտի որոշելուց դեպի նոր ձևի (ֆորմայի) սինթեզ, որտեղ ձևը զուրկ կլինի թերություններից, որոնք բնորոշ էին նրա նախատիպերին ուսումնասիրված աշխատանքի սկզբնական փուլերում: Նախնական նախագծման նման վերլուծությունն ըստ էության դիզայնեռական գործունեության մեթոդաբանական ասպեկտի ապահովում է: Փաստորեն, դրա հիմքում աստիճանաբար կազմավորվում է խնդրո առարկա օբյեկտը, իսկ հետո ամբողջական հորինվածքով ավարտին է հասցվում գործընթացը, այդ պատճառով էլ ձևագոյացումը (մորֆոլոգիան) երբեմն նախագծվող օբյեկտի գեղագիտական արժեքի միակ չափանիշ է համարվում»³:

³ Նույն տեղում:

Դիզայնի ուսումնասիրության մեթոդաբանական հիմունքներին է նվիրված Ռ. Օվչիննիկովայի գիտական ուսումնասիրությունը: Հեղինակն այս գիտական մոտեցման հիմքում տեսնում է Գ.Շչեդրովիցկու տեսակետը, ով համարվում է դիզայնի տեսական ուսումնասիրությունների և մեթոդաբանության ժամանակակից դպրոցի հիմնադիրը: «Գիտելիքներն անհրաժեշտ են յուրաքանչյուր դիզայների, ով ցանկանում է ոչ միայն ստեղծագործել, այլև գիտակցել իր գործունեության իմաստը, նշանակությունն ու արժեքը համամարդկային տեսակետից: Սա դիզայներական ինքնագիտակցության և դիզայներական գաղափարախոսության առաջին և անհրաժեշտ էլեմենտն է»⁴:

Դիզայնի բնագավառի ուսումնասիրության համար շատ կարևոր են տեսական ուսումնասիրությունները, նաև՝ դիզայն-օբյեկտի պրակտիկ մշակումները, որոնք ներգրավում են էքսպերիմենտալ ուսումնասիրություններ, հաշվարկներ, գծագրեր (իրականացման նպատակահարմարության տեխնիկական-տնտեսական հիմնավորմամբ և հաշվարկային-կոնստրուկտորական տվյալներով): Մեթոդաբանական ուսումնասիրման տեսակետից դիզայնի բնագավառի տեսական ուսումնասիրություններն ու պրակտիկ մշակումներն ունեն ուսումնասիրողական բնույթ, որոնց նպատակն է համակարգել, նախագծվող օբյեկտի վերաբերյալ ընդհանրացնել հատուկ տեսական գիտելիքներ: «Այսպես, ցանկացած դիզայն-նախագիծ ընդգրկում է խնդրի տեսական ուսումնասիրություն դիզայն-օբյեկտների պրակտիկ մշակմամբ: Պրակտիկայի և ուսումնասիրության տարանջատումը պայմանական է, քանի որ «տեսության» ուսումնասիրությունը պրոֆեսիոնալ խնդիրների լուծման միջոց է և ուղղորդում է դիզայն-օբյեկտի մշակումը: Դիզայնի բնագավառի ուսումնասիրություններն օբյեկտի նախագծման գործում կարող են հետապնդել որոշակի-գործնական նպատակ և ուղղորդվել նախագծային իրավիճակի, անալոգների և այլ վերլուծություններով: Ուսումնասիրության նպատակը կարող է լինել նաև համակարգման, մշակույթում առկա գործընթացների օրինաչափությունների բացահայտումը»⁵: Ուսումնասիրության նպատակի իրականացումն իր արտահայտությունն է գտնում դիզայն-նախագծման հետևյալ խնդիրներում.

1. գիտելիքների ընդլայնումը հումանիտար, սոցիալ-տնտեսական բնագավառում, դրանց համակարգումը:

⁴ **Овчинникова Р.** Методологические основы дизайн-исследования // Омский научный вестник, 2013, N1 (115), <http://cyberleninka.ru/article/n/metodologicheskie-osnovy-dizayn-issledovaniya>

⁵ Նույն տեղում:

2. Անալիտիկ և նախագծային գործունեության մեթոդների ավելի խոր յուրացում և գիտահետազոտական ունակությունների կատարելագործում⁶:

3. Գեղարվեստական կերպարի ստեղծման ունակությունների մշակում ստեղծագործական պրոցեսի կազմակերպման մեթոդներին տիրապետելու դեպքում⁷:

4. Բարձր մակարդակի կոմպետենտության, ինքնուրույնության և պատասխանատվության ցուցադրումը դիզայներական արտադրանքի ժամանակակից արտադրման պայմաններում⁸:

Ընդհանուր առմամբ տեխնոլոգիաների, տեխնոլոգիական պրոցեսների և նյութերի հատկությունների իմացությունը թույլ է տալիս դիզայներներին հասնել նախագծային լուծման օպտիմալության և առավելագույն տեսողական էֆեկտի:

«Այսպիսով, աշխատանքը դիզայն-նախագծի վրա իմացություն է (գիտություն), գիտելիքների խորացման և որոշակի հմտությունների և փորձառությունների մշակման շնորհիվ՝ փորձ պրոֆեսիոնալ հարցերի կամ երևույթների շրջանում: Ցանկացած դիզայն-նախագծի համար սկզբնական շրջանում կարևոր է նյութ հավաքելը կամ դիզայնի տեսական ուսումնասիրությունը, ընդ որում՝ հավաքված տեղեկատվական աշխատանքն ուղղորդում է նախագծման ողջ ընթացքը: Չի՛ կարելի թերագնահատել տեսական աղբյուրների նշանակությունն աշխատանքի ընթացքում: Նյութ հավաքելը ենթադրում է աշխատանք գրաֆիկական (տեսողական) և տեսական աղբյուրների հետ, որոնք վերաբերում են թեմային, և որոնց հիման վրա էլ կազմվում է բիրլիոգրաֆիան»⁹:

⁶ Նույն տեղում:

⁷ Գեղարվեստական մտահղացման համար ստեղծվում են մի քանի էսքիզներ, որոնց մշակման ունակությունը և ճեպանկարների կատարումը նախագծի մշակման պրակտիկայի ընթացքում հնարավորություն են ընձեռում իրականացնելու գեղարվեստական մտահղացումը պրակտիկ աշխատանքի միջոցով:

⁸ Տվյալ խնդրի իրականացման համար պայմանները ստեղծվում են դեռևս ուսումնական շրջանում, միևնույն ժամանակ նախագծի նպատակահարմար լինելը տեխնիկական, կոնստրուկտորական լուծման կամ տնտեսական հիմնավորման տեսակետից ապահովում է գիտելիքների խորացումը գեղարվեստական-արդյունաբերական արտադրության և պոլիգրաֆիկական տեխնոլոգիաների պրոցեսի մասին:

⁹ **Щедровицкий Г.** Наука и методология науки дизайна // Основные области теоретического исследования дизайна / <http://cyberleninka.ru/article/n/metodologicheskie-osnovy-dizayn-issledovaniya#ixzz3j097QItX>

Հեղինակն առանձնացնում է մի քանի աղբյուր, որոնք ձևավորում են տեսական և պրակտիկ մշակումների ուսումնասիրումը.

1) դիզայնի տեսության աշխատանքները (մենագրություններ, հոդվածներ), որոնք որոշակի են դարձնում ուսումնասիրության մեթոդաբանությունը:

2) մյուս աղբյուրներն ուսումնասիրում են մասսայական մշակույթին, սպառողական կողմին, առարկայական միջավայրի գեղագիտությանը վերաբերող խնդիրներ: Նման աղբյուրները նախագծային իրավիճակներում թույլ են տալիս ճշգրտություն մտցնել սպառողի և օբյեկտի փոխհարաբերությունների մեջ:

3) Գրաֆիկական դիզայնի որոշակի-գործնական ուսումնասիրությունները ռուս և արտասահմանյան հեղինակների կողմից: Դրանք այն աշխատանքներն են, որոնցում իլյուստրատիվ մասը գերակշռում է տեքստի համեմատ: Որպես կանոն՝ նման ուսումնասիրությունները վերաբերում են դիզայն-գրաֆիկայի որոշակի ուղղության՝ պլակատին, պերսոնաժին, առևտրանշանին, հրապարակմանը և այլն: Այդ հրապարակումներն ունեն առանձնահատուկ նշանակություն, քանի որ կարող են պատկերացում տալ գրաֆիկական դիզայնի միտումների, օգտագործվող հնարների, տեխնոլոգիաների, նյութերի մասին և այլն: Գիտական ուսումնասիրության համար նախ և առաջ դասակարգվում են դիզայնին վերաբերող տպագրված նյութը կամ դրա հիման վրա ստեղծված գրքերի և ամսագրերի էլեկտրոնային տարբերակները: Միևնույն ժամանակ կարևոր դեր ունի համացանցը, որի շնորհիվ մատչելի են դառնում բազմաթիվ հոդվածներ, գիտական ուսումնասիրություններ և այլն:

Գիտական ուսումնասիրության համար կարևոր են նաև էմպիրիկ բնույթի աղբյուրներն ու տեղեկությունները, որոնք հնարավոր է ստանալ մարքեթինգային ուսումնասիրությունների արդյունքում.

ա) սինթեզի և ընդհանրացման մեթոդը,

բ) դասակարգման մեթոդը, համեմատությունների և տիպաբանական մեթոդները,

գ) ռճական վերլուծության մեթոդը,

դ) անհատական հարցազրույցները, համացանցային հարցումները և այլն,

ե) պատմական մեթոդը. աշխատանքի ընթացքում ժամանակագրական կամ ժամանակաշրջանների բաժանումը¹⁰:

¹⁰ Նույն տեղում:

Հեղինակը համոզված է, որ ժամանակակից դիզայնի առանձնահատկությունն առաջնայնորեն այն է, որ ուժեղ զարգացած է նախագծային ասպեկտը, իսկ մեթոդաբանական կողմն ավելի թույլ է զարգացած: Նրա խորին համոզմամբ դիզայնի հետագա զարգացման հիմնական նախապայմանը դիզայն-գիտություն հասկացության զարգացումն է, որն, ըստ ուսումնասիրողի, նոր է սկսում զարգանալ: Հեղինակը ձևակերպում է «դիզայնի գիտություն» հասկացությունը. «Դիզայնի գիտությունը պետք է կառուցվի մոտավորապես այնպես, ինչպես ինժեներ-կոնստրուկտորը կառուցում է մեքենան»:

«Ինչպես ցանկացած այլ գործունեություն, մեթոդաբանական աշխատանքը պետք է ունենա իր յուրահատուկ միջոցները: Տվյալ ժամանակ մենք ունենք նման միջոցների (հնարների) հինգ հիմնական բնագավառներ կամ «առսենալներ»¹¹ (Շչեդրովիցկի Գ.).

1. համակարգային-ստրուկտուրային վերլուծության մեթոդաբանություն, որը նկարագրում է ցանկացած համակարգային-ստրուկտուրային օբյեկտի ուսումնասիրության հնարներն ու մեթոդները,

2. գործունեության տեսությունը, որը ներգրավում է հասկացություններ, որոնք նկարագրում են մարդկային գործունեության ցանկացած բնագավառ,

3. մտածողության տեսությունը, որը նկարագրում է մտային գործունեության միջոցներն ու ընթացակարգը,

4. սեմիոտիկան, որը նկարագրում է նշանների համակարգը,

5. գիտության տեսությունը, որը նկարագրում է գիտության համակարգում գոյություն ունեցող բոլոր տարրերի կառուցվածքն ու ֆունկցիոնալությունը:

«Միջոցների այս հինգ բնագավառներն անհրաժեշտ են մեքենայի նախագծման և դիզայներական գործունեության բնագավառի մեթոդաբանական նկարագրության համար, որն էլ անհրաժեշտ է դիզայնին: Կարևոր է ուշադրություն դարձնել երկու «հարաբերումների», որոնցում ընդգրկված է դիզայնի մեթոդաբանական նկարագրությունը: Մի կողմից այն պատկերում և արտացոլում է այսօր գոյություն ունեցող դիզայնի ձևերը, նրանում ձևավորված տեսակներն ու դրանք «մատակարարող» գիտելիքները, իսկ մյուս կողմից՝ նախագծում է մեքենան, որը դրանք կարտադրի»¹²:

¹¹ Նույն տեղում:

¹² Նույն տեղում:

Շշեղրովից կին առանձնացնում է դիզայնի տեսական ուսումնասիրության երեք հիմնական բնագավառներ¹³.

ա) դիզայն, որը սոցիալական գործունեության սֆերա է և սոցիալական ինստիտուտ. «Այս օրգանի ֆունկցիան ամեն տեսակի սոցիալական ամբողջականության նկատմամբ, նրա նշանակումը և ստրուկտուրան այդ նշանակմանը համապատասխան. ահա թե ինչը պետք է դառնա նման մոտեցման ուսումնասիրության օբյեկտ»:

բ) Դիզայներների գործունեությունը, որոշակի նախագծերի ստեղծումը: Նախագծային գործունեության մեխանիզմների և օրինաչափությունների իմացությունն անհրաժեշտ է դիզայներական նախագծման գիտականորեն հիմնավորված մեթոդիկայի ստեղծման համար:

գ) Դիզայնի բնագավառի պրակտիկ «մատակարարման» համար գիտական ուսումնասիրության երրորդ կարևոր ասպեկտը մարդուն շրջապատող առարկայական աշխարհի ուսումնասիրությունն է, որը վերածվում է գիտական կարգապահության կամ ավելի ստույգ՝ «առարկայական համակարգի» մարդու կյանքում:

ԱՄՓՈՓՈՒՄ

Գրաֆիկական դիզայնի ստեղծման մեթոդաբանությունը, ըստ էության, ստեղծագործությունների նախագծումն ու իրականացումն է: Գիտական ուսումնասիրության համար նախ և առաջ դասակարգվում են դիզայնին վերաբերող տպագրված նյութը կամ գրքերի և ամսագրերի էլեկտրոնային տարբերակները: Միևնույն ժամանակ կարևոր նշանակություն ունի համացանցը, որի շնորհիվ մատչելի են դառնում շատ հոդվածներ, գիտական ուսումնասիրություններ և այլն:

Գիտական ուսումնասիրության համար կարևոր են նաև էմպիրիկ բնույթի աղբյուրներն ու տեղեկությունները, որոնք հնարավոր է ստանալ մարքեթինգային ուսումնասիրությունների արդյունքում.

ա) սինթեզի և ընդհանրացման մեթոդը,

բ) դասակարգման մեթոդը, համեմատությունների և տիպաբանական մեթոդները,

գ) ոճական վերլուծության մեթոդը,

դ) անհատական հարցազրույցները, համացանցային հարցումները և այլն,

¹³ Նույն տեղում:

ե) պատմական մեթոդը. աշխատանքի ընթացքում ժամանակագրական կամ ժամանակաշրջանների բաժանումը:

Քանալի բաներ – մեթոդաբանություն, գրաֆիկական դիզայն, գիտական ուսումնասիրություն, ստեղծագործություն, համացանց, մարքեթինգային ուսումնասիրություն, սինթեզ, ընդհանրացում, դասակարգում, ոճական վերլուծություն:

МЕТОДОЛОГИЯ СОЗДАНИЯ ГРАФИЧЕСКОГО ДИЗАЙНА

АРТАК АГЛАМАЗЯН

Методологией создания графического дизайна по сути является проектирование и создание произведений. Для научного исследования прежде всего классифицируется изданный материал, относящийся к дизайну, или электронные варианты книг и журналов. В то же время важное значение имеет Интернет, благодаря которому доступными становятся многие статьи, научные исследования и т.д.

Для научного исследования важны также письменные источники и информация эмпирического характера, которые возможно получить в результате маркетинговых исследований:

- а) метод синтеза и обобщения,
- б) метод классификации, методы сравнений и типологии,
- в) метод стилистического анализа,
- г) индивидуальные интервью, Интернет – опросы и т. д.,
- д) исторический метод: хронологическое разделение материала.

Ключевые слова – методология, графический дизайн, научное исследование, произведение, Интернет, маркетинговое исследование, синтез, обобщение, классификация, стилистический анализ.

GRAPHIC DESIGN CREATION METHODOLOGY

ARTAK AGHLAMAZYAN

The methodology for creating graphic design is in its essence the design and realization of creative works. For scientific research, first of all, different publications, or electronic versions of books and magazines about design are

categorized. Besides with the Internet at our disposal many articles, scientific studies and other works are as well available.

Empirical written sources and information are also important for the investigation. These can be acquired as a result of marketing research:

- a. the synthesis and generalization method,
- b. the classification method, the comparison and typology methods,
- c. the stylistic analysis method,
- d. individual interviews, Internet polls, etc.,
- e. historical method: chronological division of material.

Key words - methodology, graphic design, scientific studies, creative work, Internet, marketing research, synthesis, generalization, classification, stylistic analysis.

**«BACKBONE. BRANDING» ԳՐԱՖԻԿԱԿԱՆ ԴԻԶԱՅՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ՆՐԱՆՑ ԳԵՂԱՐԿԵՍԱԿԱՆ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

ԱՐՏԱԿ ԱՂԼԱՄԱՋՅԱՆ

Ժամանակակից հայկական գրաֆիկական դիզայնի դրսևորումներից է «Backbone. BRANDING» անվանումն ունեցող ստեղծագործական ընկերությունը, որի աշխատանքները «Yerevan International Communications Biennale»-ում գրաֆիկական դիզայնի համար արժանացել են մրցանակների՝ «Louis Charden» (ոսկի, 2014թ.), «Gawatt» (արծաթ, 2014թ.), «Gawatt Emotions» (բրոնզ, 2014թ.), «Prometey bank annual report» (արծաթ, 2012թ.):

«Backbone. BRANDING» գրաֆիկական դիզայնի ընկերությունը հիմնադրման օրից ի վեր ստեղծագործում է գրաֆիկական դիզայնի բնագավառում՝ նախապատվություն տալով համակարգչային տեխնիկայի ժամանակակից հնարավորություններին: Դիզայնեական ընկերության աշխատանքներում կարելի է նկատել հեղինակների ստեղծագործական մտածողության, ոճական առանձնահատկությունների զարգացումը, գովազդային բնույթից ելնելով՝ ստեղծագործական մտահղացումների յուրահատուկ առանձնահատկությունները: Տվյալ հոդվածում դիտարկվում է «Backbone. BRANDING» դիզայնեական ընկերության ստեղծագործական գործունեությունը՝ ստեղծագործական մտահղացումները, հորինվածքները, ոճական առանձնահատկությունները, որը ժամանակակից հայկական գրաֆիկական դիզայնի դրսևորումներից մեկն է: Հոդվածում վերլուծվող կարևորագույն գործերն են՝ Louis Charden, MOO GOO Syrop, Bzzz Premium, MOJO yogurt, GAWATT, Mark Sevouni, POPOK 3, Identity:

Louis Charden, MOO GOO Syrop, Bzzz Premium, MOJO yogurt, GAWATT, Mark Sevouni, POPOK 3, Identity. հոդվածում օգտագործված վերլուծության մեթոդը հորինվածքի կառուցողական հաջորդականությունն է, որ ներառում է տվյալ գրաֆիկական դիզայնի համատեքստի և տարրի մշակման հարմոնիան, հատկանիշները, ինչպես նաև ձևի և բովանդակության միահյուսման օրինաչափությունները:

«Backbone. BRANDING» ստեղծագործական ընկերության «Louis Charden» գրաֆիկական ձևավորումները բրենդային բնույթ ունեն: (նկ.1) Առանձին

էջերի հորինվածքներում հեղինակները համադրել են «սրճարան-խանութի» և «հացի խանութի» բնույթն արտահայտող գովազդային ստեղծագործական լուծումներ, որոնց հորինվածքներում գրաֆիկական ֆիգուրատիվ կերպարներ ու հացի ծավալային պատկերներ են: Տեխնիկական առաջադրանքում առկա են գրաֆիկական գծանկարի ժանրային մեկնաբանումներ, որոնց համադրված են համակարգչային գրաֆիկական դիզայնի միջոցով ծավալային պատկերներ: Ստեղծագործությունների ընտրված համատեքստը գեղարվեստական մտահղացման յուրօրինակ մեկնաբանում ունի, որը բացահայտվում է երեխայի անմիջական, ժանրային պատկերներով, որոնցում նա պատկերված է հեծանվով: Թեմայի գլխավոր տարրերն առօրեական ժանրային տարրերն են, որոնցով հացի վաճառքի գովազդային բնույթը հաղորդելու գաղափարը պատկերային տարրերով արտահայտվում է կենցաղային անմիջական պատկերների միջոցով: Տեխնիկական առաջադրանքը համակարգչային գրաֆիկական դիզայնի տեխնիկական հնարավորությունների միջոցով գեղարվեստական արտահայտչականության հասնելն ու գովազդային բնույթի խնդիրներն արտահայտելն է: Գրաֆիկական դիզայնի հարմոնիան ստեղծագործության ներդաշնակության արտահայտումն է, որի համար կարևոր նշանակություն ունեն հորինվածքի կենտրոնը և դոմինանտը (և նրանց առանցքները): Ստեղծագործական մտահղացումը «Backbone. BRANDING» ընկերության կողմից կատարված է առանձին մի քանի հորինվածքային էջերում, որոնցում նախապատվություն է տրված գրաֆիկական գծանկարին, որը պլաստիկ արտահայտչականության իմաստով զուրկ է տոնային մշակումներից և լույս ու ստվերից: Այս ստեղծագործական աշխատանքում հացի մոտիվի արտահայտությունը ծավալային և գունային առումով ստեղծում է հորինվածքում, ինչպես ֆակտորային, այնպես էլ տեքստուրային հակադրություն գրաֆիկական գծանկարի հետ: Դրանով իսկ շեշտվում է մտահղացման գովազդային բնույթը: Այսպիսով, տվյալ ստեղծագործական աշխատանքում, մի քանի հորինվածքային առանձին էջերում մտահղացման օրինաչափություններից մասշտաբը, համաչափությունները, ռիթմը, դինամիկան ունեն որոշակի արտահայտչականություն, ինչը նպաստում է գեղարվեստական լուծման բացահայտմանը:

Ստեղծագործական ընկերության աշխատանքներից են նաև հյութի, մեղրի ամանների ձևավորումները: Հյութի ձևավորման հորինվածքում տեղ են գտել «MOO GOO Syrop» գրառումն ու թիկնոցով կովի ռճավորված պատկերը: (նկ.2) Հորինվածքում մեծ արտահայտչականություն ունեն գույնը, կերպա-

րային ու տառատեսակի ոճավորումները, որոնք մանկական սննդատեսակը հրապուրիչ են դարձնում երեխաների համար:

«Bzzz Premium» բրենդային ձևավորումները ֆիրմային ամբողջական ոճ են, որի համար հեղինակները ստեղծել են անվանման, լոգոյի և փաթեթավորման ձևավորումները: (նկ.3) Մեղրի համար նախատեսված ամանների ձևավորումն ունի անսովոր լուծում: Հեղինակները ստեղծել են բրենդային ամբողջական հավաքածու. «Մեր նոր մտահղացումն էր՝ ստեղծել մեղրի ապակե ամանների համար փաթեթների ձևավորում, որն իրենից կներկայացներ բիզնես ընձանների հավաքածու»¹: Անվանատառերի ուրվագծերը, որ ստեղծվել են գրաֆիկ դիզայների կողմից, արտահայտում են հեղինակի մտահղացումը ինչպես գեղարվեստական լուծման, այնպես էլ տեխնիկական իրականացման իմաստով: Դիզայն գեղարվեստական մտահղացումը կապված է մեղրի փեթակ հիշեցնող ձևի հետ, որն իրականացված է փայտից և ունի ընդհանրացված մոդելավորում. «Ոչինչ չի կարող ավելի անհաղթահարելի լինել, քան բնությունից ոգեշնչված դիզայնը»²: Հեղինակները մեղրի փեթակի ձև հիշեցնող բեռնարկը-տուփի բրենդային դիզայնով ցանկացել են մեղրի գաղափարն արտահայտել պատկերավոր ձևով: Բրենդային անվանման և լոգոյի իրականացման համար հեղինակներն օգտագործել են բնությունից ստացած իրական տպավորությունները՝ մեղրի բզզոցն ու թռիչքը՝ դիզայներական լուծումներում հասնելով պատկերավոր նմանության: Մի շարք գրաֆիկական էսքիզներում գործառության խնդիրների հետ մեկտեղ կարելի է տեսնել նաև հեղինակների մտահղացումների պատկերավոր արտահայտություն: «Մենք շատ հպարտ ենք այս նախագծով մի շարք նկատառումներով: Ոչ միայն այն փաստը, որ նախագիծն արժանացել է աննախադեպ քանակի պարգևատրումների դիզայներական և գովազդային բնագավառներում, այլև ստացել է հնարավորինս ավելի պոզիտիվ արձագանք ամբողջ աշխարհից»³:

«Backbone. BRANDING» ստեղծագործական ընկերության աշխատանքներից է բնական մեղրի համար բրենդային ոճի ստեղծումը, որն ընդգրկում է նաև անվանման, լոգոյի, փաթեթավորման տուփի դիզայնը: Պատվիրատուի կողմից միակ պահանջը կապվում էր բրենդային աշխատանքում հայկական բնական մեղրի ստեղծման համար օգտագործվող միկրոֆլորայի (ավելի քան

¹<http://www.backbonebranding.com/#/bzzz-premium/>

²<http://www.backbonebranding.com/#/bzzz-premium/>

³Նույն տեղում:

600 ծաղկատեսակների) օգտագործման փաստը նշելու, նաև՝ բնական մեղրի տեսակը նշելու հետ (A տեսակը, որի արտադրանքը տարբերող նշանն է): Անվանման գրաֆիկական դիզայնի ձևավորումներում օգտագործված են «Bzzz Premium» և «Bzzz. ARMENIAN HONEY» գրառումները: Գրաֆիկ դիզայներների խոստովանությամբ նրանց մտահղացումների հիմքում ընկած էր մեղրին և մեղվին առնչվող տեղեկատվական, կերպարային նյութի ուսումնասիրությունը, ինչպես նաև գեղարվեստական լուծումներում բնության իրական ձևերի ուսումնասիրությունը, ինչն արտահայտվեց էսքիզներում, այնուհետև ավարտուն դիզայներական աշխատանքում: «Արտադրանքի մոլտիֆլորային օրիգինալը օգտագործվեց որպես դիզայնի կոնցեպտի բանալի: Այդքանով կանգ չառանք: Մենք թղթի մեջ փաթեթավորեցինք ամբողջական ապակե ամանն ու նախընտրեցինք վեցանկյուն ձև ունեցող ոսկով պատված գավաթների բեռնարկները՝ տուփերը: Դրանք, տեղադրվելով կողք կողքի, ստեղծեցին մեղրաբջիջների տպավորություն»⁴: Տուփերի արտաքին ձևավորման մեջ օգտագործված է բուսական մոտիվի նուրբ գրաֆիկական լուծում: Փաթեթավորման և լոգոյի գրաֆիկական ձևավորումները դիզայնի համար արժանացել են մեծ գնահատանքի:

«Backbone. BRANDING» ստեղծագործական ընկերության աշխատանքներից է «MOJO yogurt» սննդատեսակի դիզայն ձևավորումը, որի նպատակն էր MOJO շշերի արտաքին տեսքն ավելի գրավիչ դարձնելը: (Նկ.4) Ստեղծագործական աշխատանքի սկզբնական փուլում գրաֆիկ դիզայներների ուշադրության կենտրոնում ոճական նոր լուծումների որոնումն էր, ինչը սննդատեսակի «փաթեթավորմանը» սկզբունքայնորեն նոր հնչեղություն կհաղորդեր: Ստեղծագործական խմբի մտահղացմամբ դիզայն աշխատանքը պետք է կատարվեր երկու փուլով՝ 1. հաստ տառատեսակի և էքսպրեսիվ տեսողական (վիզուալ) արտահայտչականություն ունեցող պատկերային ընդհանուր հորինվածքի ստեղծում, 2. սննդատեսակի շշի ուրվապատկերի հետ համադրում: Այս ստեղծագործական մտահղացումն իրականացնելու համար դիզայներներն օգտագործել են մրգատեսակների և կաթի լուսանկարներ, որոնց համար գերակշռորեն օգտագործվել են սպիտակ ֆոն և համակարգչային գրաֆիկայի համադրում: Հորինվածքներում մրգատեսակների ու գրառումների հետ միասին կան լոկալ գունային գծեր, որոնք կարևոր նշանակություն ունեն ընդ-

⁴<http://www.backbonebranding.com/#/bzzz-premium/>

⁵Նույն տեղում:

հանուր արտահայտչականության համար:

«Backbone. BRANDING»-ի «GAWATT» աշխատանքը ստեղծագործական մտահղացմամբ կոնցեպտուալ բնույթ ունի. (նկ.5) «Երբ տեսնում եք պատ-րաստի արտադրանքը, հազվադեպ եք մտածում ստեղծման ընթացքի ման-րամասների մասին: Սա չի վերաբերում GAWATT բրենդինգին»⁶: GAWATT սուրճի խանութը ֆունկցիոնալ և ձևավորման բնույթով արտահայտում է հե-ղինակների նախասիրությունը «steampunk» ոճին⁷, որն իր ընդհանուր հատ-կանշական գծերով միտում ունի դեպի ռետրո՝ հնաոճ մոտիվներ ու տարրեր՝ հատկապես «վիկտորիական» Անգլիայի ժամանակաշրջանին վերաբերող: Հաճախ այս ոճի ստեղծագործական դրսևորումներում հնչում է հոռետեսական կամ հեգնական, իրոնիկ տրամադրություն, որի հետ կողք կողքի կարող է ար-տահայտվել ֆենտեզի (երևակայական) աշխարհը⁸: «Backbone. BRANDING» ստեղծագործական ընկերության կողմից «GAWATT»-ի ձևավորման մեջ «steampunk» ոճին նախընտրություն տալը վկայում է այն մասին, որ հայկական ժամանակակից գրաֆիկական դիզայնի բնագավառում արտահայտվում են այսօր ամենամեծ տարածում ունեցող կերպարվեստի ուղղություններն ու ոճե-րը: «Steampunk»-ի ձևամտածողությունն արդեն մի քանի տասնամյակ է՝ վե-րածվել է սուբմշակույթի, որը բնորոշվում է «նեո-վիկտորիականություն» եզ-րույթով: Կերպարվեստի, հատկապես դիզայնի բնագավառում «Steampunk» արտահայտությունն օգտագործվում է մի քանի դրսևորումներով՝ ինչպես ալ-տերնատիվ-պատմական, վեստերն, ֆենտեզի, պոստապոկալիպտիկ: «Backbo- ne. BRANDING»-ի ստեղծագործական աշխատանքում արտահայտվել է ավտեր-նատիվ-պատմական «steampunk»-ի ոճը, որն, ինչպես վերը նշվեց, ոճավորում է պատմական անցյալի կենցաղային առարկաները, ատրիբուտները, աք-սեսուարները և հազուադեպ՝ ստեղծելով այսպես կոչված «մոդդինգներ», նաև ռետրո ոճավորումների արդյունքում արտահայտում է առանձնահատկություն-

⁶ <http://www.backbonebranding.com/#/gawatt/>

⁷ Եզրույթը գործածության է դրվել 1980-ականներից, իբրև «կիբերպանկ» հասկացու-թյան դեմ ուղղված հեգնական տարբերակ: Եզրույթի հեղինակ է համարվում գրող Քևին Ջեթերը, ով փորձում էր համապատասխան եզրույթ գտնել Տիմ Պաուերսի «The AnubisGates»/19832./, Ջեյմս Բլեյլոքի «Homunculus» /1986թ./ և իր հեղինակության «Մոր-լոքների գիշերը» /1979թ./ և «InternalDevices» /1987թ./ ստեղծագործությունների համար: <https://ru.wikipedia.org/wiki/%D0%A1%D1%82%D0%B8%D0%BC%D0%BF%D0%B0%D0%BD%D0%BA>

⁸ Steampunk ոճն այսօր լայնորեն կիրառվում է գրաֆիկայում, գրքերի ձևավորման մեջ, դիզայնում, համակարգչային խաղերում:

ներ, որոնք պայմանավորված են առարկայական լայն սպեկտրի ռեդիզայն ստեղծագործական գործունեությամբ⁹: «Steampunk»-ի ոճական արտահայտմամբ ստեղծագործությունների հորինվածքների համար օգտագործվում են տարբեր առարկաներ, որոնք թույլ են տալիս խոսել այս ոճի «առարկայական աշխարհ» հասկացության մասին: Այդ առարկայական աշխարհն ինքնին արտացոլում է այն տեխնոլոգիաները, որոնք կապված էին մեխանիկայի և շոգեմեքենաների զարգացման հետ: Կերպարվեստի այս ստեղծագործական ուղղությունը սկսում է օգտագործել այն մեքենաների և սարքավորումների ամբողջական և ֆրագմենտային մասերը, որոնք աշխատում էին գոլորշու հիման վրա՝ շոգեքարշեր, շոգենավեր, շոգեկառքեր, շոգեմեքենաներ, դիրիժաբլներ, աէրոպլաններ, սարքավորումներ, ցիֆերբլատներ, սլաքներ, մետաղական խողովակներ, արդյունաբերական մեքենաներ, ինչպես նաև պոմպեր, սղոցներ, հաստոցներ, զինատեսակներ, որոնք օգտագործվել են արդյունաբերական հեղափոխության ժամանակաշրջանում, դրամարկղային ապարատներ և թերթերի կրպակներ հիշեցնող սարքավորումներ, հեռախոսներ, լուսանկարչական ապարատներ և այլն: «Backbone. BRANDING»-ի ստեղծագործական մտահղացումը յուրօրինակ մեկնաբանություն ունի ստեղծագործական խմբի կողմից. «Մեր կոնցեպտուալ մոտեցման համաձայն՝ ստեղծեցինք շաբլոն, որը գրաֆիկական ձևով պատկերում էր թեյի ստեղծման պրոցեսը: Շաբլոնի օգտագործումն արտահայտում է անհատի զարգացման գաղափարը: Ստեղծագործական մտահղացումն արտահայտվում է ինչպես հորինվածքում, այնպես էլ անվանման մեջ: «GAWATT» հայերեն նշանակում է բաժակ, սակայն եթե բառն օգտագործենք առանց առաջին երկու տառերի, անվանում ունիվերսալ շոգեշաբժիչի գյուտարարի կամ հզորության միավորի անունն է, որը կարելի է ստանալ մեկ գավաթ սուրճի հետ: Այս տրամաբանությամբ մենք ստեղծել ենք տարբեր մեծության բաժակներ՝ կախված նրանց պարունակության լիցքի հզորությունից՝ վատտ, կՎտ, ՄՎտ, տեռավատտ»¹⁰: Ստեղծագործական այս աշխատանքում կերպարվեստի «Steampunk»-ի ոճին բնորոշ արտահայտմամբ օգտագործվել են նաև հնաոճ իրեր՝ ինչպես տղամարդու ձեռքի ժամացույց,

⁹Steampunk-ի ոճին բնորոշ են եղել արդյունաբերական, տրանսպորտային և ֆանտաստիկ փոխադրամիջոցների և մեքենաների օգտագործումը, ինչպես շոգեքարշեր, շոգենավեր, դիրիժաբլներ և այլն, նաև գոլորշու օգտագործումը՝ որպես ստեղծագործական արտահայտչամիջոց: Բացի այդ այս ոճում այսօր ևս օգտագործվում են լծակներ, մետաղական այլ գործիքներ: Որպես նյութ՝ օգտագործվում են պղինձ, փայտ, կաշի և այլն:

¹⁰<http://www.backbonebranding.com/#/gawatt/>

գլխարկ, կաշվե պայուսակ, բլոկնոտ (նոթատետր), մատիտ, բանալիներ: Հորինվածքում առարկայական ընտրությունն արտահայտում է «steampunk»-ի ակտերնատիվ-պատմական դրսևորումը՝ ռետրո առանձնահատկություններով:

«Backbone. BRANDING» ստեղծագործական խմբի աշխատանքներից է «Mark Sevouni» շոկոլադի բրենդային դիզայնը, որը հեղինակների մտահղացմամբ կոնցեպտուալ բնույթ ունի: Հեղինակների դիզայներական աշխատանքն արտահայտվում է «chocolateria»-ի հիմնադրի՝ «МаркSevouni» անվանմամբ, ում ազգանունն ակնարկում է նրա հայկական ծագման մասին: (Նկ.6) «Backbone. BRANDING» ստեղծագործական խմբի դիզայն ձևավորման մտահղացման մի շարք առանձնահատկություններից է պատկերային, խորհրդանշական տարրերի ընտրությունը. «Փաթեթավորման դիզայնում քաղաքաշինական կոնցեպցիան արտահայտելու նպատակով մենք ընտրեցինք 6 քաղաքներ իրենց քաղաքային խորհրդանշաններով՝ հեծանիվ (Ամստերդամ), Volkswagen Beetle (Բեռլին), սկուտեր (Հոնդ), հեռախոսակրպակ (Լոնդոն), տաքսի (Նյու Յորք), Citroen (Փարիզ): Այնուհետև դրանք օգտագործեցինք վառ, հուզական և գունագեղ պալիտրա մերչենդայզինգի փաթեթներ ստեղծելու համար»¹¹: Դիզայներների համար այս պատկերային սիմվոլիկան պայմանավորված էր շոկոլադի արտադրանքի՝ արտահանման համար նախատեսված լինելով: Դիզայն աշխատանքն աչքի է ընկնում հորինվածքային լուծումներով, որոնցում առկա են լոկալ գունային ֆոն, առարկայական կամ կերպարային պատկերներ: Հորինվածքում կարևոր դեր ունի նաև արտադրանքի բրենդային բնույթն արտահայտող անվանումը՝ «Mark Sevouni. Urban Chocolatier»: Շոկոլադե տուփերի (բոնբոնների) ձևավորման մեջ սկզբունքայնորեն նույն գեղարվեստական լուծումն է օգտագործված դիզայներների կողմից: Հորինվածքներում նկատելի են նաև նոր տարրեր, որոնք հեղինակների կողմից ընտրված 6 քաղաքների ուրվապատկերներն են: Հորինվածքներում քաղաքային բնապատկերների միջավայրում կերպարները «նկարված են» ժանրային բնույթով, որոշակի սյուժետայնության տարրերով: Հեղինակների կողմից նախապատվություն է տրված ռետրո ոճական առանձնահատկություններին, որն արտահայտվում է առարկայական և կերպարային դրսևորումներում:

«Backbone. BRANDING» ստեղծագործական խմբի աշխատանքներից է «POPOK 3, Identity»-ն: (Նկ.7) «Popok 3» ստեղծագործության անվանումն

¹¹<http://www.backbonebranding.com/#/mark-sevouni/>

արտահայտում է Հայաստանում անցկացվող գովազդի ամենամյա միջազգային փառատոնը: Գովազդի այս փառատոնը ստեղծագործական մրցույթ է: Փառատոնի բրենդային գեղարվեստական լուծման համար հեղինակներն ընտրել են 30-ից ավելի ռազմական խորհրդանշաններ, որոնք օգտագործվել են տարբեր ժամանակներում տարբեր ազգությունների կողմից: Բրենդային հորինվածքներում, ռազմական խորհրդանշաններից բացի, հեղինակներն օգտագործել են ընկույզի մոտիվ: Ստեղծագործական մտահղացման համար հեղինակները փաթեթավորման ձևավորման մեջ օգտագործել են ռազմական սիմվոլիկա, նաև՝ շշեր, տուփեր, արկղեր: Ստեղծագործական մտահղացումը ստացել է անսովոր լուծում, ինչը զարմացրել էր ժյուրիի անդամներին: Նրանք ստացան հայկական կոնյակ փորձանոթում, քաղցր սուջուխ, ընկույզի շոկոլադե կոնֆետներ, չիր, մուրաբա՝ ռազմական փաթեթավորման մեջ:

«Backbone. BRANDING» ընկերությունը ժամանակակից հայկական գրաֆիկական դիզայնի դրսևորումներից է: Ստեղծագործական ընկերության աշխատանքները հիմնականում բրենդային բնույթի գեղարվեստական լուծումներ են, որոնցում, օգտագործելով գրաֆիկական դիզայնի համակարգչային տեխնիկա, հեղինակները ստեղծել են յուրահատուկ արտահայտչականություն ունեցող հորինվածքներ: «Backbone. BRANDING» ընկերության աշխատանքների հորինվածքային և ռճական առանձնահատկությունները պայմանավորված են նաև վերը նշված ստեղծագործական աշխատանքների գովազդային բնությամբ:

«Backbone. BRANDING» ստեղծագործական ընկերությունը գրաֆիկական դիզայնի իր աշխատանքներում տեխնիկական իմաստով նախապատվություն է տալիս համակարգչային գրաֆիկայի Photoshop, Illustrator ծրագրերին:

ԱՄՓՈՓՈՒՄ

«Backbone. BRANDING» ընկերությունը ժամանակակից հայկական գրաֆիկական դիզայնի դրսևորումներից է: Ստեղծագործական ընկերության աշխատանքները հիմնականում բրենդային բնույթի գեղարվեստական լուծումներ են, որոնցում, օգտագործելով գրաֆիկական դիզայնի համակարգչային տեխնիկա, հեղինակները ստեղծել են յուրահատուկ արտահայտչականություն ունեցող հորինվածքներ: «Backbone. BRANDING» ընկերության աշխատանքների հորինվածքային և ռճական առանձնահատկությունները պայմանավորված են նաև վերը նշված ստեղծագործական աշխատանքների գովազդային բնությամբ: «Backbone. BRANDING» ստեղծագործական ընկերությունը գրաֆիկական

դիզայնի իր աշխատանքներում տեխնիկական իմաստով նախապատվություն է տալիս համակարգչային գրաֆիկայի Photoshop, Illustrator ծրագրերին:

Բանալի բաներ - գրաֆիկական դիզայն, համակարգչային ծրագրեր, ստեղծագործություն, հորինվածք, դոմինանտ, ֆակտուրա, տեքստուրա, գեղարվեստական լուծում, բրենդ, գովազդային բնույթ:

ПРОИЗВЕДЕНИЯ ГРАФИЧЕСКОЙ ДИЗАЙНЕРСКОЙ КОМПАНИИ «BACKBONE. BRANDING» И ИХ ХУДОЖЕСТВЕННЫЕ ОСОБЕННОСТИ

АРТАК АГЛАМАЗЯН

Творческие работы современной армянской графической дизайнерской компании “Backbone BRANDING” в основном являются художественными решениями брендового характера. В произведениях дизайнерской компании использованы компьютерные технологии. Авторы создали композиции, имеющие особую выразительность. Композиционные и стилистические особенности компании “Backbone BRANDING” обусловлены также рекламным характером творческих работ. Творческая компания в своих работах графического дизайна в техническом смысле отдает предпочтение программам компьютерной графики Photoshop, Illustrator.

Ключевые слова – графический дизайн, компьютерные программы, художественные работы, состав, доминантная фактура, текстура, акт решения, бренд, рекламная политика.

THE CREATIONS & CHARACTERISTICS OF THE GRAPHIC DESIGN COMPANY, “BACKBONE. BRANDING”

ARTAK AGHLAMAZYAN

The company “BACKBONE BRANDING” is an Armenian modern graphic design manifestation. The works of the creative company are essentially brand type solutions, in which the artists by using graphic design techniques have created compositions of unique expressiveness. The compositional and stylistic features of “Backbone. BRANDING” artworks are also conditioned by advertising policy. This

creative company in terms of graphic design, gives preference to such graphic programs as Photoshop and Illustrator.

Key words – graphic design, computer programs, artistic work, composition, dominant, facture, texture, creative solutions, brand, the nature of advertisement.

Վերատպություններ



1



2



3



4



5



6



7

ԻՐԱՆԱՀԱՅ ԿՈՄՊՈԶԻՏՈՐԱԿԱՆ ԱՐՎԵՍ.
ԼՅՈՒԴՎԻԳ ԲԱԶԻԼ (1931-1990)

ՇՈՒՇԱՆ ԱՅՎԱԶՅԱՆ

Դարերի ընթացքում վառ ազգային դիմագիծ կերտած և հարուստ մշակութային ավանդույթներ ունեցող Իրանահայքը XX դարում արձանագրել է ակնառու հաջողություններ քաղաքականության, տնտեսության, գիտության և մշակույթի ասպարեզներում: Ըստ Վ. Բայբուրդյանի դիպուկ ձևակերպման՝ իրանահայությունը մշտապես հանդես է եկել որպես միջավայրի քաղաքակրթության զարգացմանը նպաստող ուժ¹: Դասական երաժշտարվեստը նույնպես Իրան է մուտք գործել XX դարի սկզբին՝ ի դեմս իրանահայ արվեստագետների: Իրանի կոմպոզիտորական արվեստի ուսումնասիրությունն ուղղակիորեն առնչվում է իրանահայ երաժիշտների գործունեությանը: Իրանահայ կոմպոզիտորների, մեր պայմանական տարբերակմամբ, առաջին սերնդի ներկայացուցիչներ Ա. Տեր-Հովհաննիսյանը (1870-1960), Ն. Գալանդեդյանը (1881-1944), Լ. Գրիգորյանը (1886-1957), Ա. Պատմազյանը (1898-1981) և Հ. Գրիգորյանը (1893-1975) հանդիսացան եվրոպական արվեստի և կրթության հիմնադիրներն Իրանում: Նրանք ճանաչված էին կոմպոզիտորի, դիրիժորի, խմբավարի ու մանկավարժի բազմակողմանի և արդյունավետ գործունեությամբ: Գրեթե բոլոր հեղինակներն անդրադարձել են իրանական երգերին, մշակել կամ բազմաձայնել դրանք՝ իրանական ազգային երաժշտությանն աստիճանաբար հաղորդելով բազմաձայն և սիմֆոնիկ հնչողություն: Նշված արվեստագետներն անուրանալի ավանդ ունեն Իրանի ժողովրդական երգարվեստի ուսումնասիրության և պրոֆեսիոնալ երաժշտությունը դրանով արգասավորելու գործում: Միևնույն ժամանակ նրանց ժառանգության մեջ կարևոր տեղ են զբաղեցրել հայկական ժողովրդական և հոգևոր երգերի մշակումներն ու փոխադրությունները. մասնավորապես անդրադարձը Կոմիտասի արվեստին, որ դրսևորվել է թե՛ ստեղծագործական մշակումների տեսքով և թե՛ պարտադիր մասն է կազմել նրանց բոլորի համերգային կատարողական գործու-

¹ Արևելագետ, պատմական գիտությունների դոկտոր Վ. Բայբուրդյանը 1992-1998թթ. եղել է Իրանի Իսլամական Հանրապետության՝ ՀՀ առաջին արտակարգ և լիազոր դեսպանը: Տե՛ս **Բայբուրդյան Վ.**, Իրանի հայ համայնքը, Արդի հիմնախնդիրներ, Երևան, 2013, էջ 9:

ներության: Այսպիսով, XX դարի սկզբին նրանք իրենց առաքելությունն իրականացրել են՝ դասական երաժշտարվեստի հիմքերը սերմանելով ինչպես իրանահայերի, այնպես էլ իրանցիների շրջանում: Այսուհանդերձ, նրանց ստեղծագործության ժանրային նախասիրությունները հիմնականում սահմանափակվում էին վոկալ՝ կամերային, խմբերգային, կամերային գործիքային շրջանակներում:

Երկրորդ սերնդի կոմպոզիտորները XX դարի կեսերից շարունակեցին պրոֆեսիոնալ արվեստի բազմակողմանի զարգացումը և այն բարձրացրին միջազգային հարթակներ: Ռուբեն Գրիգորյանը, Էմանուել Մելիք-Ասլանյանը, Հրանտ Բեկլարյանը, Ալֆրեդ Մարդոյանը, Լյուդվիգ Բազիլը, Ավետիս Զամբազյանը և այլք իրենց լայնածավալ գործունեությամբ նոր ազդակներ հաղորդեցին Իրանի մշակութային կյանքին, մասնավորապես պրոֆեսիոնալ երաժշտարվեստին՝ դառնալով դրա առաջատարները:

Անշուշտ, անհնար է այդ կոմպոզիտորներին ներկայացնել մեկ հոդվածով. առաջին սերնդի ներկայացուցիչների ստեղծագործության ամփոփ նկարագրին ու գործունեության ոլորտների քննությանն անդրադարձել ենք մեր հոդվածներից մեկում²: Կոմպոզիտորների այս շարքում, բնականաբար, հանդիպում են առավել շատ կամ քիչ ճանաչված արվեստագետներ: Հոդվածի նպատակն է ուրվագծել նրանցից մեկի՝ Լյուդվիգ Բազիլի (1931-1990) չուսումնասիրված և հետաքրքիր դիմանկարը՝ իր նշանակալից ստեղծագործությամբ: Ի տարբերություն մյուս պարսկահայ կոմպոզիտորների՝ Լ. Բազիլի երկերը հիմնականում հրատարակված են և հարուստ նյութ են ընձեռում հետազոտական աշխատանքի համար³:

Լ. Բազիլը (Բարսեղյանը) սերում էր ազնվական և հոգևորական տոհմից, որն Իրանում հաստատվել էր XVII դարի սկզբի հայերի բռնագաղթի ժամանակ: Նա ծնվել էր Համադանում, սակայն կրթվել Թեհրանում՝ ավարտելով Թեհրանի պետական երաժշտանոցը: Բարձրագույն կրթությունը կատարելագործելու նպատակով մեկնել է Հռոմ և 1954-ին ավարտել ջութակի, ապա

² Այվազյան Շ., Հայ երաժիշտների դերը Իրանի երաժշտական մշակույթի ձևավորման գործում, Երաժշտական Հայաստան, 1 (48), 2015, էջ 70:

³ Այս շարքում բացառություն է կազմում Ն. Գալանդեթյանը, որի ստեղծագործությունները նույնպես հրատարակված են լիակատար ժողովածուով: Նրան նվիրված հոդվածը տե՛ս Այվազյան Շ., Ն. Գալանդեթյանի երգերի լեզվաոճական բնութագիրը, Երիտասարդ հայ արվեստաբանների գիտական ութերորդ նստաշրջանի նյութերի ժողովածու, Երևան, 2014, էջ 180:

կամերային և հոգևոր երաժշտության դասարանները: Լայն հետաքրքրությունների տեր արվեստագետն ուսումնասիրել է հայ հոգևոր երգարվեստը՝ մասնավորապես Խորենացու, Շնորհալու, Նարեկացու տաղերն ու շարականները, հայ ժողովրդական երգն ու Կոմիտասի ժառանգությունը, ինչպես նաև Սայաթ-Նովայի խաղերը: Կոմպոզիցիայի հմտությունները լրացրել է իտալացի անվանի պրոֆեսոր Զիովաննի Զամերինիի մասնավոր դասընթացում⁴: Չունենալով որևէ հեռանկար՝ Բազիլը վերադառնում է Թեհրան 1959 թ.: Այստեղ նա ղեկավարում է «Արարատ» մշակութային միության երգչախումբը: 1961 թ. Վ. Խոջաբեանի և Ա. Աղաբեգեանի հետ, որոնք նույնպես Ս. Չեչիլիա կոնսերվատորիայի շրջանավարտներ էին, հիմնում է «Հայ երգ» երիտասարդական երաժշտական ընկերությունը: Կարճ ժամանակահատվածում Իրանի հայաշատ քաղաքներում նրանք հայտնի են դառնում «Կոմիտասյան շաբաթ» խորագիրը կրող համերգներով:

Լ. Բազիլն այդ տարիներին զուգահեռաբար ղեկավարում էր Թեհրանի օպերային երգչախումբն ու վարում ջութակի դասարանը: Սակայն առավել նպաստավոր ստեղծագործական միջավայր փնտրելու նպատակով 1964-ին Բազիլն այնուամենայնիվ մեկնում է Թեհրանից, հաստատվում Մյունխենում և շարունակում իր ակտիվ գործունեությունը: Երկար տարիներ նա Մյունխենի օպերային նվագախմբերից մեկի կոնցերտմայստերն էր: Ի. Զեմանի (թավջութակ) և Վ. Նոյմանի (ֆագոտ) հետ Musikam եռյակով հանդես է եկել Եվրոպայի բազմաթիվ քաղաքներում: Ժամանակի գերմանական մամուլը մշտապես արձագանքել է նրանց ելույթներին: Համերգային կյանքին զուգահեռ նա աստիճանաբար ավելի մեծ տեղ է հատկացրել ստեղծագործությանը և հայրենասիրական-հասարակական գործերին. Բազիլը տիկնոջ՝ երգչուհի Յոդիկի հետ միասին մի շարք միջոցառումներ է իրականացրել Մյունխենի «Հայ տուն» միությունում, պատրաստել հայկական երաժշտության ռադիոհաղորդումներ: Նա մահացավ 59 տարեկանում 1990-ին Գերմանիայում⁵: Վաղաժամ մահկանացուն կնքած արվեստագետի մասին «Ալիք» օրաթերթում գրվեց. «Լիուփկ Բա-

⁴ Կոմպոզիտորի կենսագրությանն առնչվող որոշ տեղեկատվական տվյալներ վերցված են Թեհրանի «Արարատ» միության արխիվներում պահվող նյութերից, որոնք բովանդակում են թերթային հոդվածներ, համերգային հայտագրեր, հարցազրույցներ և այլն:

⁵ Այժմ այնտեղ ապրում և գործում է նրա միակ որդին՝ ճանաչված բանաստեղծ, փիլիսոփա Վազրիկ Բազիլը:

զիլը ապրեց հայ երաժշտության եւ օտար ազդեցություններից նրա մաքրագործման համար»⁶:

Լ. Բազիլի բազմատեսակ գործունեության նշանակալից ոլորտը նրա ստեղծագործությունն է, որ ընդգրկում է շուրջ չորս տասնյակ տարբեր ժանրերում գրված կամերային-գործիքային, վոկալ-կամերային, խմբերգային երկեր: Դրանք հրատարակված են «Արարատ» ժողովածուում՝ լույս ընծայված 1977 թ. Միլանում: Այդ տարիներին Միլանի «Արարատ» մշակութային միության հովանու ներքո գործում էին լարային քառյակ, երգչախումբ: Միության նպատակային ծրագրերից էր երաժշտական մատենաշարերի հրատարակումը, որը պետք է ներկայացներ հանրությանն անծանոթ, մինչև XIX դ. վերջին տասնամյակներն ընդգրկող հայ երաժշտության անտիպ երկերը: Հետաքրքրական ժողովածուն հավանաբար նախատեսված է եղել ոչ միայն հայ, այլև օտար կատարողների և արվեստասերների համար: Լ. Բազիլի ստեղծագործություններից բացի, ժողովածուն ընդգրկում է միության գործունեությանը, հայկական միջին և նոր պոեզիայի լուսաբանմանը նվիրված իտալերեն և անգլերեն հոդվածներ, ինչպես նաև Հերման Վահրամյանի նկարազարդումները: Հետաքրքիր գրաֆիկական պատկերները՝ կոմպոզիտորի անվանատառերն ակնարկող ուրվագծերով և սև ու սպիտակ գունավորումով, որոշակի տրամադրություն են ստեղծում և մտազուգորդվում Վ. Կանդինսկու արքայական ցիոնիստական գրաֆիկաների հետ⁷: Նույնատիպ նկարազարդումներ են օգտագործված նաև Լ. Բազիլի առանձին երկերի հատորյակներում: Հստակ ձևեր և գունային գամմա չպարունակող նկարները լիովին համահունչ են Լ. Բազիլի փոքրակտավ և դասական ձևակառուցման օրենքները խախտող երկերին: Նշենք, որ մեր հիշատակած տեսողական-հնչյունային զուգահեռներին առնչվող որևէ հեղինակային մեկնաբանություն չկա:

Լ. Բազիլի մեզ հայտնի ստեղծագործությունների այն մասը, որ գրվել է մինչև 1976 թվականը, զետեղված է «Արարատ» ժողովածուում. դրանք են Սայաթ-Նովայի, Կոմիտասի, Գ. Նարեկացու երգերի և տաղերի մշակումները, Դ. Վարուժանի բանաստեղծություններով երգաշարը, Սիամանթոյի խոսքերով գրված «Ծարաւ» երգը՝ բոլորը ձայնի և լարային քառյակի համար: Ժողովածուն

⁶ «Րաֆֆի» օրացույց, Թեհրան, 2012 («Րաֆֆի» օրացույցը տպագրվում է շուրջ 75 տարի և իր էջերում գիտալուսավորչական նպատակով զետեղում է պարսկահայ տարբեր արվեստագետների կյանքին ու գործունեությանը նվիրված ամփոփ հոդվածներ):

⁷ Տե՛ս **Կանդինսկի Վ.**, Հոգևորն արվեստում, Էսսեներ (գերմ. թարգմ.՝ Ա. Գուրզադյան, Ս. Խաչիկոյան), Երևան, 2000, Գրաֆիկաների շարք:

ընդգրկում է նաև հեղինակի 3 լարային կվարտետները և Գ. Նարեկացու «Մատյան ողբերգության» պոեմի մասերից մեկի հիման վրա ստեղծած խմբերգը:

Մեզ հասանելի նյութերը հնարավորություն են տալիս հետևելու հեղինակի ժանրային նախասիրությունների ձևավորման հիմնական միտումներին: Հայտնի է, որ Լ. Բազիլը սկսել է ստեղծագործել երգի ժանրում: Սայաթ-Նովայի ծննդյան 250-ամյակին նվիրված Թեհրանի միջոցառումներում նա ներկայացրել է Սայաթ-Նովայի 13 երգերի մշակումները ձայնի և լարային եռյակի համար (1963թ.): «Արարատ» ժողովածուում հրատարակված են «Դուռն էն գըլխէն իմաստուն իս», «Թէգուզ քու քաշըն մարքրիտ տան», «Շատ սիրուն իս, շախաթայի» երգերը: Հարազատ մնալով մեղեդու ընդհանուր բնույթին՝ նա կատարել է աննշան դիֆմիկ և մետրական փոփոխություններ, որ կոմպոզիտորի մշակումների հիմնական սկզբունքն է: Վոկալ գիծը լրացնում է ժամանակակից երաժշտության շունչ հաղորդող գործիքավորումը: Ներդաշնակումն ունի դասական տոնայնական նշանադրում. հաճախ կիրառվող դիատոնիկ ձայնակարգի հարմոնիկ և մելոդիկ հնչյունները հարմոնիային հաղորդում են ազգային լադերին բնորոշ հնչողություն: Որոշ երգեր հիմնված են ատոնալ երաժշտության սկզբունքների վրա: Նվագակցության ընդհանուր ֆակտուրան բավական թափանցիկ է, քնարական բնույթ ունի: Երգերի համար գրեթե միշտ օգտագործված է բանաստեղծական տեքստի մեկ կամ երկու քառյակը, ինչի հետևանքով դրանք ստանում են բավական լակոնիկ ձև և ծավալ: Ուշադրության է արժանի հրատարակված նյութի անսովոր գեղարվեստական լուծումը՝ գրաֆիկական և երաժշտական մեջընդմեջված պատկերների զուգորդումը: Երբեմն երաժշտական շարադրանքը տակտի կեսից ընդհատվում է գրաֆիկական գծաշարադրանքով: Զուգահեռ շարադրանքը չի պարփակվում ոչ միայն ձևականության, այլև տպագրական էջի սահմաններում: Նույն սկզբունքով են տպագրված նաև Լ. Բազիլի մյուս երկերը:

Հեղինակի ձայնի և լարային եռյակի համար գրած երկերին բնորոշ արտահայտչական միջոցները, մասնավորապես մեղեդու գերակայությունը, հանդիպում են նաև լարային քառյակի համար ստեղծած երկերում: Շուտով կվարտետը դառնում է նրա նախասիրած ժանրը: 1963 թվականին են ստեղծվել նաև Գ. Նարեկացու «Մեղեդի Նարեկացի» և «Վարդավառին» տաղերի մշակումները՝ ձայնի և լարային քառյակի համար: Դրանցում գործիքային մասը հանդես է գալիս որպես նվագակցություն: Սահուն ֆակտուրան առանձնանում է ժամանակակից լեզվաոճական հնարներով, հագեցած է դիստանս

ինտերվալներով, որոնք առավել լարված հնչում են բանաստեղծական հանգիստ մտքի ավարտին: Վերջին տաղն ընկած է նաև համանուն կվարտետի հիմքում, որին կանդրադառնանք ստորև:

Եթե Սայաթ-Նովայի խաղերի մշակումներում պահպանված են աշուղի մեղեդիական մտածողության լեզվաոճական առանձնահատկությունները, ապա Դ. Վարուժանի «Հացին երգը» շարքի բանաստեղծություններով գրված երգաշարը (1973թ.) և Սիամանթոյի «Ծարավ» բանաստեղծության տեքստով գրված երգը (1974թ.)՝ ծայնի և լարային քառյակի համար, աչքի են ընկնում ժամանակակից հնչողությամբ: Շուրջ մեկ տասնամյակ հետո գրված այս երգերում ակնհայտ է Լ. Բազիլի գրելաոճի ու երաժշտական լեզվի փոխակերպումը՝ ձգտումը դեպի ժամանակակից, ոչ տոնայնական մտածողություն՝ ցրված դիստանս ակորդների և ազգային մելոսի տարրերի համադրությամբ: Լեզվամեղեդային այդօրինակ համադրությունը՝ ամփոփված սեղմ ծավալների և լողացող ձևերի մեջ, շարունակում է մնալ հեղինակի հատկանշական ստեղծագործական սկզբունքը: «Հացին երգը» շարքի երգերից երկուսի համար, ինչպես նշում է Յ. Բրուսյանը, հեղինակն օգտագործել է ժողովրդական մեղեդիներ⁸:

Լ. Բազիլի երաժշտական ժառանգության կարևոր մասն են կազմում 3 լարային կվարտետները: 1967-ին, ազգային ճարտարապետական կոթողների տարաբախտ ճակատագրով մտահոգ, նա գրում է «Անիի լքված եկեղեցիները» առաջին լարային կվարտետը, որը բազմիցս հնչել է Գերմանիայի քաղաքներում: Ջուսպ արտահայտչամիջոցներով է առանձնանում հավասարակշիռ բաշխված ձայների ընդգծված անհատականացման սկզբունքով կերտված պոլիֆոնիկ հյուսվածքը: Այն կազմված է 3 մասից: Առաջին մասը բուռն է, լարված, բայց սահուն ձայնատարությամբ: Զանգերի ղողանջ հիշեցնող երկրորդ մասն ունի դրամատիկ արտահայտչականություն: Երրորդ մասը, ալտի մենանվագից զարգանալով, անցնում է առաջին մասի թեմային և ամփոփում ստեղծագործության գաղափարական բովանդակությունն ամբողջական կառույցի մակարդակում:

Երկրորդ կվարտետում՝ «Վարդավառին» (1971թ.) նույնությամբ պահպանված է սկզբնաղբյուրը, ինչպես վերը նշված համանուն մշակման մեջ: Սակայն թեմայի հետագա զարգացումն ընթանում է հեղինակի ստեղծագոր-

⁸ Տե՛ս **Բրուսյան Յ.**, Իրանահայ երաժշտական մշակույթը, Գիտական աշխատությունների միջբուհական ժողովածու: Արվեստագիտություն 2, Երևան, 1975, էջ 43:

ծության մեջ արդեն հստակորեն բյուրեղացած սկզբունքով՝ ազգային երաժշտական ինտոնացիայի և ատոնալ երաժշտության ինքնատիպ համադրումներով, հակիրճ ձևակառուցմանը համահունչ մեղեդիական և հարմոնիկ տարրերի զուսպ կիրառումներով: Երաժշտական միտքը, ըստ Ց. Բրուտյանի, տրամաբանորեն զարգանում է մերթ մեղեդային ընթացքի մեջ, մերթ հարմոնիկ հյուսվածքում⁹: Այս կվարտետը ստեղծվել է 1970-ին՝ Հայաստան այցելելուց և առաջին կվարտետը Հայֆիլհարմոնիայի պետական քառյակի կատարմամբ ունկնդրելուց հետո:

3-րդ կվարտետը (1976թ.) չունի ծրագրային անվանում: Հեղինակն առանձնացրել է 2 մաս. առաջինը համեմատաբար դանդաղ, պատմողական բնույթի փոքրածավալ կառույց է, իսկ երկրորդը՝ դինամիկ ու փոփոխական տրամադրություններով: Զուսպ արտահայտչամիջոցներ և թափանցիկ ֆակտուրա ունեցող այս կվարտետը գրավում է իր կուռ կառույցով և ինտոնացիոն ամբողջականությամբ: Կվարտետում ծայները համազոր գործառույթ ունեն և հաճախ համադրվում են պոլիֆոնիկ շարադրանքում: Հայտնի է, որ հեղինակն իր համերգների ժամանակ հաճախ է կատարել այս ստեղծագործությունը:

Լ. Բազիլի վերջին շրջանը ներկայացնում են խմբերգերն ու խմբերգային մշակումները: Առաջին խմբերգը գրվել է 1976-ին՝ Գ. Նաբեկացու «Մատենա ողբերգութեան» աղոթագրքի երկու աղոթքի հիման վրա: «Արարատ» ժողովածու ընդգրկված խմբերգը քառածայն երգչախմբի համար է: Մյուս խմբերգերը ստեղծվել և առանձին հատորներով լույս են տեսել 1980-1990-ականներին¹⁰: «Հայ դասական երաժշտություն» և «Արդի հայ երաժշտություն» խորագրերով տեսրերում ներկայացված են նրա հետևյալ ստեղծագործությունները. տարբեր հեղինակների 4 շարականների մշակումներ («Սաղմոս»՝ անհայտ հեղինակ, «Այսօր կանգնեցա» և «Այս խորհուրդ լցա»՝ Ս. Պարթև, «Սիրտ իմ սասանի» և «Աստուածն ամէնի»՝ Մ. Այրիվանեցի, «Այսօր անճառ»՝ Ն. Շնորհալի), 4 երգ՝ Վահագն Դավթյանի տեքստերով, «Շարական»՝ Խորենացու շարականների հիման վրա. բոլոր թվարկված երկերը գրված են քառածայն երգչախմբի համար: Մանրամասն չանդրադառնալով առանձին խմբերգերի վերլուծությանը՝ նշենք, որ դրանցում հեղինակը հավատարիմ է մնացել սկզբնաղբյուրներին՝ խուսափելով անհատական միջամտություններից:

⁹ Տե՛ս նույն տեղում, էջ 49:

¹⁰ **Լյուվիկ Բազիլ**, Հայ դասական երաժշտություն 1, Միլան, 1980, Արդի հայ երաժշտություն 1, Միլան, 1989, Արդի հայ երաժշտություն 7, Միլան, 1991: Ժողովածուներում ամփոփված խմբերգերի ստեղծման ստույգ տարեթվերն առայժմ մեզ հայտնի չեն:

Խմբերգերը չունեն գործիքային ներդաշնակում և, ինչպես լարային կվարտետներում, կառուցվում են մեղեդային ձայնի առաջնային նշանակության սկզբունքով: Բնորոշ լեզվակառուցողական միջոցները՝ ձայների զուգահեռ զարգացումն ու համադրումը, տեմպային բազմազանությունը և ինտոնացիոն կորիզների դինամիկ կոլմինացիաները, Լ. Բագիլի լեզվաոճի բնութագրական տարրերն են:

Հասնցիկ ներկայացված այս ստեղծագործությունները կազմում են կոմպոզիտորի հիմնական ժառանգությունը: Առայժմ մեզ հասու չեն հեղինակի կյանքի վերջին շրջանի գործունեությանը վերաբերող տվյալները: Ընդհանուր առմամբ կարող ենք ասել, որ Լյուդվիգ Բագիլն իր անսովոր մտահղացումներով հայ երաժշտարվեստ ներմուծեց յուրատեսակ երաժշտական մտածողություն և որակ: Տարաբնույթ տեքստերի մշակումներում կոմպոզիտորն ասես ներկայացնում է ազգային երաժշտության «պատմությունը» նոր, արստրակտ ոճով՝ անխաթար պահպանելով երաժշտական սկզբնաղբյուրները: Նրա երկերն իրենց հիմքում ազգային են, միևնույն ժամանակ՝ ինքնատիպ և ժամանակակից:

ԱՄՓՈՓՈՒՄ

Իրանի կոմպոզիտորական արվեստի ուսումնասիրությունն ուղղակիորեն առնչվում է իրանահայ երաժիշտների գործունեությանը, որոնք անուրանալի ներդրում ունեն Իրանի մշակութային կյանքի, մասնավորապես պրոֆեսիոնալ երաժշտարվեստի ձևավորման խնդրում:

Հոգվածում փորձ է արվում ուրվագծելու իրանահայ կոմպոզիտոր Լյուդվիգ Բագիլի ստեղծագործական դիմանկարը: Իր ինքնատիպ մտահղացումներով, հայ երաժշտության բնութագրական առանձնահատկությունների նորովի՝ արստրակտ մեկնաբանումներով նա որոշակիորեն ընդլայնեց սփյուռքահայ երաժշտարվեստում գերակշռող ազգային ընկալման ավանդական շրջանակները:

Բանալի բաներ – իրանահայ պրոֆեսիոնալ արվեստ, Լյուդվիգ Բագիլ, ազգային լեզվաոճ, մեղեդի և գծանկար:

**КОМПОЗИТОРСКОЕ ИСКУССТВО ИРАНСКИХ АРМЯН:
ЛЮДВИГ БАЗИЛЬ (1931-1990)**

ШУШАН АЙВАЗЯН

Исследование композиторского искусства Ирана непосредственно связано с музыкальной деятельностью ирано-армянских композиторов, которые имеют неоспоримое влияние на формирование культурной жизни, в частности, профессионального музыкального искусства Ирана. В статье сделана попытка воссоздать творческий портрет ирано-армянского композитора Людвиг Базиль. Своими оригинальными идеями, свежими, абстрактными интерпретациями характерных особенностей армянской музыки, он определенно расширяет традиционные рамки восприятия национального, имеющегося в изытке в музыке армян диаспоры.

Ключевые слова – профессиональное искусство иранских армян, Людвиг Базиль, национальный стиль, мелодия, рисунок.

**THE ART OF LUDWIG BAZIL, THE IRANIAN-ARMENIAN COMPOSER
(1931-1990)**

SHUSHAN AYVAZYAN

The study of the art of Iranian composers is directly related to the activities of the Armenian community in Iran, that has undeniable contribution to the cultural life of Iran, especially to the formation of Iranian professional music.

This article is to outline the compact portfolio of Ludwig Bazil, the Iranian composer of Armenian origin. Bazil, with his unique ideas, new and abstract interpretations of the characteristic features of Armenian music, definitely enlarged the traditional perception aspect of the national music prevailing in the music of the Diaspora.

Key words – Iranian-Armenian professional art, Ludwig Bazil, National stylistic features, Melody and drawings.

ՄԱՐԳԱՐԻՏ ԲԱՔԱՅԱՆԸ ԵՎ ԿՈՄԻՏԱՍԻ ԵՐԿԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒԻ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ

ՆԻԿՈԼԱՅ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

«Ձեր՝ արժանավոր աշակերտուհու անկեղծ նվիրվածությունը արժանավորագույն ուսուցչին շատ օգուտներ է բերել մեր երաժշտական մշակույթին, Կոմիտասի՝ այսօր մեզ մատչելի ժառանգության համար մենք շատ բանով Ձեզ ենք պարտական...»¹:

Այս տողերի հեղինակն է կոմիտասագետ Ռոբերտ Աթայանը: Իսկ ուղղված են դրանք հայ դաշնակահարուհի, երգչուհի (մեցցո-սոպրանո), երաժշտագետ և մանկավարժ Մարգարիտ Բաբայանին (1874-1968), ով ծանոթացել է Կոմիտասի հետ 1895-ին: Այս առիթով ուզում ենք մեջքերել էջմիածնի Գևորգյան ճեմարանի տեսուչ Կարապետ Կոստանյանին հասցեագրված 1895թ. հոկտեմբերի 9-ի նամակը, որտեղ Կոմիտասը գրում է. «Յարգոյ Տէր,

Ողջ հասանք Տիխիս. Ձեր տուած նամակը յանձնեցի պ. բժիշկ Բաբայանցին և յիշեցրի բժշկի մասին. ասաց, որ նամակ է գրել և կգրէ մի երկրորդն ևս: Շնորհակալ եմ, աջակցութիւն խոստացաւ իմ գործիս համար, որի մանրամասնութիւնը գրել եմ Հ. Յուսիկին, երևի կպատմէ, իսկ վերջնականը կգրեմ Ձեզ»²:

Ի դեպ, նամակում հիշատակված բժիշկ Բաբայանցը, ամենայն հավանականությամբ, Մարգարիտ Բաբայանի հայրն է՝ բժիշկ Ավետիք Բաբայանը, իսկ Կարապետ Կոստանյանը Մարգարիտ Բաբայանի հորաքրոջ ամուսինն էր:

Հետագայում, ինչպես գիտենք, Մ. Բաբայանը դարձել է Կոմիտասի «մերձավոր բարեկամը, 1906-ին և 1914-ին Փարիզում մասնակցել նրա համերգներին: Եռանդուն աջակցել է կոմիտասյան խնամատար հանձնաժո-

¹ Ռ.Աթայանի՝ 1960թ. մարտի 6-ի նամակը՝ ուղղված Մարգարիտ Բաբայանին, ԳԱԹ, Մարգարիտ Բաբայանի ֆոնդ, N 62:

² Կոմիտաս, Նամակներ, Երևան, 2000, էջ 79:

ղովին: Հավաքել է Կոմիտասի ձեռագրերը, հրատարակել որոշ գործեր, նրա մասին գրել հոդվածաշար»³:

Ինչպես գիտենք, 1949 թվականի սեպտեմբերի 26-ին՝ Կոմիտասի ծննդյան 80-ամյակի օրը, Հայկական ԽՍՀ Մինիստրների խորհուրդը որոշում է ընդունում Կոմիտասի երկերի ժողովածուի ակադեմիական հրատարակության մասին, որի իրագործումը հանձնարարվում է ՀԽՍՀ գիտությունների ակադեմիային: Ակադեմիայի նախագահությունը 1950թ. հունվարի 25-ի N 4 նիստում որոշում է 1950-ին սկսել Կոմիտասի երկերի ժողովածուի ակադեմիական հրատարակությունը: Խմբագրական հանձնախումբ են ընդգրկվում Ռոբերտ Աթայանը, Մուշեղ Աղայանը, Սամսոն Գասպարյանը, Քրիստափոր Քուշնարյանը, Մաթևոս Մուրադյանը⁴:

Հետագա տասնամյակների ընթացքում ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի երաժշտագետների մի քանի սերունդների, մասնավորապես Ռոբերտ Աթայանի և Գևորգ Գյոդակյանի քրտնաջան աշխատանքի շնորհիվ հրատարակվում են Կոմիտասի ժառանգության 14 հատորները (1960-2006): Բնականաբար, այդ գործում կարևոր դեր է ունեցել Մարգարիտ Բաբայանը. նրա՝ Փարիզի կոմիտասյան հանձնաժողովի փոխնախագահի, իսկ Արշակ Չոպանյանի մահից հետո՝ նախագահի շնորհիվ են Երևան հասել կոմիտասյան ձեռագրերը:

Մեր պրպտումների ընթացքում Երևանի Եղիշե Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանում գտնվող Մարգարիտ Բաբայանի արխիվում հայտնաբերված վավերագրերը նոր լույս են սփռում այդ իրողության վրա:

Ակադեմիայի նախագահության՝ 1953թ. դեկտեմբերի 23-ի N 23 նիստում Հայաստանի գիտությունների ակադեմիայի Արվեստի պատմության և տեսության սեկտորի վարիչ է հաստատվում Ռուբեն Զարյանը⁵. շուտով նամակագրական կապ է հաստատվում վերջինիս և Մ.Բաբայանի միջև: Այդ կապի արդյունքում, ինչպես հետագայում կխոստովանի Ռուբեն Զարյանը. «ստացվեց Կոմիտասի արխիվի նշանակալի մասը, որ այդ հանձնաժողովի («Կոմիտաս»

³ Աթայան Ռ., Բաբայան Մարգարիտ Ավետիքի, «Հայկական սովետական հանրագիտարան», հ. 2, Երևան, 1976, էջ 187:

⁴ Տե՛ս Ասատրյան Ա., ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտ – 50, Երևան, 2010, էջ 29:

⁵ Նույն տեղում, 2010, էջ 31:

խնամատար հանձնաժողով – Ն.Կ.) տրամադրության տակ էր»⁶:

Ի դեպ, ինչպես հետագայում կխոստովանի Մ. Բաբայանը, Փարիզի սովետական դեսպանատան մշակութային կապի ներկայացուցիչ Վասիլի Վլասովը «այնքան դիրությունամբ եւ անկեղծ հետաքրքրությամբ յարաբերություն ստեղծեց Երեւանի հայկական Գիտությունների Ակադեմիայի Արուեստների Պատմության եւ տեսաբանության բաժնի եւ Փարիզի Կոմիտասեան Յանձնախումբի միջեւ»⁷:

ԳԱԹ Մ. Բաբայանի դիվանում հայտնաբերեցինք նրան ուղղված՝ Հայաստանի գիտությունների ակադեմիայի արվեստների պատմության և տեսության սեկտորի վարիչ, բանասիրական գիտությունների թեկնածու Ռուբեն Զարյանի և գիտական քարտուղար, արվեստագիտության թեկնածու Մաթևոս Մուրադյանի նամակը, որը ներկայացնում ենք ստորև՝

«Փարիզի Կոմիտասյան հանձնաժողով,

Օրիորդ Մարգարիտ Բաբայանին

Հարգելի օրիորդ.

Երախտագիտության խորին զգացմունքով ստացանք Կոմիտասյան հանձնաժողովի և անձամբ Ձեր կողմից ուղարկված Կոմիտասի ձեռագիր և տպագիր նյութերը, ինչպես և Ձեր հրատարակություններից մեկական օրինակ: Ստացված նյութերը բացառիկ արժեք են ներկայացնում մեր դարավոր երաժշտական կուլտուրայի պատմության համար:

Ձեզ հայտնի է, որ Սովետական Հայաստանում հետաքրքրությունը Կոմիտասի ժառանգության նկատմամբ չափազանց մեծ է և մենք անում ենք մեզանից կախված ամեն բան, որպեսզի բավարարենք ժողովրդի այդ կենդանի հետաքրքրությունը: Ձեր ուղարկած նյութերը մեր աշխատանքի համար ներկայացնում են բացառիկ կարևորություն: Այդ պատճառով էլ այժմ մեր խմբագրական հանձնաժողովի բոլոր անդամները մանրամասնորեն ուսումնասիրում են Ձեր ուղարկած ձեռագրերը, որպեսզի կարողանանք հայտնաբերված ստեղծագործությունները զետեղել Կոմիտասի երկերի ժողովածուի ակադեմիական հրատարակության համապատասխան հատորներում: Բացի այդ, Կոմիտասի մահվան 20-ամյակի կապակցությամբ մենք կազմակերպեցինք գիտական հաղորդումների հատուկ երեկո, որի ընթացքում մանրամասնորեն

⁶ **Զարյան Ռ.**, Մարգարիտ Բաբայան, Մայրամուտից առաջ, Ինքնապատում, հ. երրորդ, Երևան, 2012, էջ 335:

⁷ Կորտուկներ Մ.Բաբայանի գրածների, ԳԱԹ, Մարգարիտ Բաբայանի ֆոնդ, N 234:

ծանոթացրինք ունկնդիրներին նոր ստացված նյութերին: Այս նամակի հետ ուղարկում ենք մեր երեկոյի ծրագիրը և Կոմիտասի գերեզմանին դրված մահարձանի լուսանկարը:

Անհրաժեշտ ենք համարում նշել, որ մեր կողմից անպայման հաշվի կառնվեն Ձեր նամակում շարադրված ցանկությունները:

Անչափ երախտապարտ կլինենք, եթե Դուք կարողանայիք իրագործել Ձեր խոստումը՝ հավաքել Կոմիտասի մասին եվրոպական, մասնավորապես ֆրանսիական մամուլում տպագրված հոդվածները: Մեզ հատկապես շատ են հետաքրքրում Ձեր անձնական հուշերը Ձեր մեծ ուսուցչի՝ Կոմիտասի մասին: Եթե դրանք տպագրված են, ապա խնդրում ենք մեկ օրինակ ուղարկել մեզ: Իսկ եթե ձեռագիր են, ապա կխնդրեինք ուղարկել նրանց պատճենը:

Մեզ հայտնի է, որ Ձեր և Կոմիտասի միջև երկար տարիներ շարունակ եղել է նամակագրական կապ: Մենք, դժբախտաբար, այդ նամակագրության վերաբերյալ ոչ մի փաստական նյութ չունենք: Եթե Ձեզ մոտ պահպանվել են այդ նամակները, ապա մեծապես խնդրում ենք ընկ. Վլասովի միջոցով ուղարկել մեզ կամ դրանց ձեռագրերը և կամ վավերացված պատճենները: Մեծապես ցանկալի է ստանալ նաև այլ անձանց ուղղված նամակները: Դրանք չափազանց անհրաժեշտ են մեր հրատարակության վերջին հատորի համար:

Ընդհանրապես Ձեզնից կխնդրեինք շարունակել այն շնորհակալ աշխատանքը, որին նվիրել եք Ձեր ամբողջ կյանքը, և այսուհետև նույնպես օգնել մեզ՝ Կոմիտասի ժառանգության բեկորների հավաքման ու Երևանում կենտրոնացնելու գործում:

Եթե դժվար չէ Ձեզ համար, խնդրում ենք ուղարկել մեզ օրիորդ Գոհարիկ Ղազարոսյանի ստեղծագործություններից մեկական օրինակ: Մենք շատ կցանկանայինք մոտիկից ծանոթանալ նրա ստեղծագործությանը:

Ընդունեք մեր խորին հարգանաց հավաստիքը և նույնը հաղորդեցեք պ. Հարենցին: Ձեր անձնվեր աշխատանքը Կոմիտասի ժառանգության պահպանման գործում մենք շատ բարձր ենք գնահատում: Մեր ողջույնները հաղորդեցեք նաև Կոմիտասյան հանձնաժողովի բոլոր անդամներին»⁸:

Ռ. Զարյանի և Մ. Մուրադյանի մյուս նամակը գրվել է 1955 թվականի փետրվարին:

«Կոմիտասյան խնամատար հանձնաժողով,

⁸ Ռուբեն Զարյանի նամակը՝ ուղղված Մարգարիտ Բաբայանին, մեքենագիր 3 թերթ, ԳԱԹ, Մարգարիտ Բաբայանի ֆոնդ, N 83:

Օրիորդ Մարգարիտ Բաբայանին

Ֆրանսիա, Փարիզ

Հարգելի օրիորդ Բաբայան.

Փարիզից վերջերս ստացված մի նամակից իմացանք, որ Դուք ցանկություն եք հայտնել տեղեկություններ ստանալ Սովետական Հայաստանի կոմպոզիտորների մասին և նմուշներ նրանց ստեղծագործություններից: Հայկական ՍՍԴ Գիտությունների Ակադեմիայի Արվեստների պատմության և տեսության սեկտորը հաճույքով կատարում է Ձեր ցանկությունը: Սույն նամակի հետ ուղարկում ենք Ձեզ հետաքրքրող տեղեկություններն ու նոտային հրատարակությունների նմուշները: Դրանց հետ միաժամանակ ուղարկում ենք մեր Սեկտորի կողմից վերջին տարիների ընթացքում հրատարակված երաժշտական գործերը, որոնք, անշուշտ, կհետաքրքրեն Ձեզ: Այդ հրատարակությունների համար որպես հիմք են ծառայել Գրականության և արվեստի թանգարանում կենտրոնացված արխիվային ձեռագրերը:

Օգտվելով աղթից հայտնում ենք մեր գոհունակությունն ու երախտագիտությունն այն հոգատարության համար, որ Դուք տարիներ շարունակ ցուցաբերել եք Կոմիտասի ձեռագրերի պահպանման, հրատարակման և Սովետական Հայաստան փոխադրելու ուղղությամբ: Կոմիտասյան խնամատար հանձնաժողովի հրատարակած տետրակները, որոնց մի մասը մեր կողմից ձեռք է բերված և օգտագործվում է, Ձեր ուղարկած ձեռագրերը և այն նյութերը, որոնք հավաքված են տեղում, մեզ հնարավորություն են տալիս ձեռնամուխ լինել Հայաստանի կառավարության կողմից մեզ վրա դրված պարտականության իրագործմանը՝ ակադեմիական հրատարակության համար նախապատրաստել Կոմիտասի երկերի բազմահատոր ժողովածուն: Այս գործի հաջող կատարումը բոլորիս սրբազան պարտականությունն է: Ուրախ ենք տեղեկացնելու, որ այդ ժողովածուի առաջին հատորը, որն իր մեջ ամփոփում է Կոմիտասի բոլոր մեներգերը, արդեն հանձնված է տպագրության և լույս տեսնելուն պես անմիջապես կուղարկվի Ձեզ:

Սակայն ցավ ի սիրտ պետք է արձանագրենք, որ մեր Սեկտորը և մասնավորապես Կոմիտասի երկերի ժողովածուն խմբագրող հանձնաժողովը հնարավորություն չունեն օգտագործելու Հայաստանից դուրս գտնվող նյութերը: Այս հանգամանքը անկասկած մեծ դժվարություններ է ստեղծում մեր աշխատանքում և մեզ զրկում է հիշյալ ժողովածուն լիակատար դարձնելու հնարավորությունից:

Նկատի ունենալով այս՝ ի դեմս Ձեզ խնդրում ենք հանձնաժողովիդ օգնել մեզ՝ Երևան ուղարկելով այդտեղ գտնվող ձեռագրերը և կամ գոնե դրանց վավերացված պատճենները: Դրանով Դուք մեծապես օժանդակած կլինեք վերոհիշյալ հրատարակության լիակատարության ապահովմանը:

Հուսով ենք, որ չեք զլանա մեր խնդրանքի կատարման մեջ և վաղորդք հայտնում ենք խորին շնորհակալություն:

ԱՌԴԻՐ՝ Նամակում հիշված տեղեկությունները հայ կոմպոզիտորների մասին, ինչպես և նրանց ստեղծագործությունների նմուշներն ու հրատարակությունները առանձին ցուցակով:

Խորին հարգանքներով՝

Ռ.ԶԱՐՅԱՆ

Արվեստների պատմության և տեսության սեկտորի վարիչ, բանասիրական գիտությունների թեկնածու:

Մ.ՄՈՒՐԱԴՅԱՆ

Սեկտորի գիտական քարտուղար, արվեստագիտության թեկնածու»⁹:

Նամակին կցված «Կենսագրական համառոտ տեղեկություններ Սովետական Հայաստանի մի քանի կոմպոզիտորների մասին» տեղեկանքում ներկայացված են Առոտ Բաբաջանյանի, Ալեքսանդր Հարությունյանի, Գրիգոր Եղիազարյանի, Կարո Զաքարյանի, Աշոտ Սաթյանի, Հարո Ստեփանյանի, Վարդգես Տալյանի, Անուշավան Տեր-Ղևոնդյանի, Արմեն Տիգրանյանի և Արամ Խաչատրյանի մասին համառոտ կենսագրական տեղեկություններ¹⁰:

Նամակի հետ Մ. Բաբայանին ուղարկվել է հետևյալ գրականությունը՝

1. Կոմիտաս – Ազգագրական ժողովածու. Հայ ժողովրդական երգեր և պարեր, հ. 2
2. Ալ.Սպենդիարյան – Երկերի լիակատար ժողովածու, հատոր 3
3. Ալ.Սպենդիարյան – Երկերի լիակատար ժողովածու, հատոր 4
4. Ալ.Սպենդիարյան – Երկերի լիակատար ժողովածու, հատոր 9
5. Ալ.Սպենդիարյան – Ռուսական և ուկրաինական երգեր
6. Ռ.Մելիքյան – Չառ-վառ
7. Սպ. Մելիքյան – Հայ ժողովրդական երգեր և պարեր, հատոր 1

⁹ Ռուբեն Զարյանի նամակը՝ ուղղված Մարգարիտ Բաբայանին, մեքենագիր 2 թերթ, ԳԱԹ, Մարգարիտ Բաբայանի ֆոնդ, N 83:

¹⁰ Կենսագրական համառոտ տեղեկություններ Սովետական Հայաստանի մի քանի կոմպոզիտորների մասին, մեքենագիր 10 թերթ, ԳԱԹ, Մարգարիտ Բաբայանի ֆոնդ, N 83:

8. Սպ. Մելիքյան – Հայ ժողովրդական երգեր և պարեր, հատոր 2
9. Ա. Տեր-Ղևոնդյան – Պարային սյուիտա (պարտիտուրա)
10. Ս. Բարխուդարյան – Սյուիտ «Անուշ» սիմֆոնիկ պոեմից
11. Ա. Բաբաջանյան – Հերոսական բալլադ (պարտիտուր)
12. Ա. Բաբաջանյան – Չորս պիես դաշնամուրի համար
13. Ա. Հարությունյան – Տոնական նախերգանք (պարտիտուր)
14. Ա. Հարությունյան – Կոնցերտինո դաշնամուրի համար
15. Ա. Հարությունյան – Պարային սյուիտա (պարտիտուր)
16. Գ. Եղիազարյան – Հայաստան (սիմֆոնիկ պոեմ, պարտիտուր)
17. Թ. Ալթունյան – Հայկական ժողովրդական երգեր և պարեր
18. Ա.Սաթյան – Արարատյան հովտի երգեր
19. Գ. Չեքոտարյան – Պրեյլուդներ
20. Ս. Գասպարյան, Մ.Մուրադյան – Սովետական Հայաստանի երաժշտական կուլտուրան
21. Ա. Տիգրանյան – «Անուշ»¹¹:

Ռ. Զարյանի և Մ. Մուրադյանի՝ Մ. Բաբայանին հասցեագրված մեր հայտնաբերած վերջին նամակը թվագրված է 1956 թվականի հունիսի 25-ով:

«ՓԱՐԻԶԻ ԿՈՄԻՏԱՍՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

Օր. ՄԱՐԳԱՐԻՏ ԲԱԲԱՅԱՆԻՆ

ՆՈՒՅՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ Վ.ԱՏԵՆԱԴՊԻՐ

Պ. Ա. ՀԱՐԵՆՑԻՆ

Ձեր սույն թվի մայիսի 26-ի նամակն ստացանք: Մեծապես շնորհակալ ենք մեր հարցերի այնքան մանրամասն և սպառիչ լուսաբանությունների համար: Ժամանակի պարբերական մամուլի ուսումնասիրության հիման վրա մենք արդեն հիմնականում պարզել էինք այդ հարցերը, բայց Ձեր տված հեղինակավոր լուսաբանություններն ու փաստական տվյալներն եկան ավելի ամրապնդելու մեր համոզմունքը: Այժմ մենք լիովին համոզված ենք, որ մեզ ներկայացված հուշերը, որոնց հեղինակը Եգիպտոսից ներգաղթած մի պրոֆեսոր է, չեն համապատասխանում իրականությանը, բացի այն հատվածից, որը վերաբերում է Կոմիտասի՝ Ալեքսանդրիայում և Կահիրեում 1911 թվին տված համերգներին:

Ձեր նամակում մատնանշված Թորոս Ազատյանի գիրքը թեև մեզ ծանոթ

¹¹ Տե՛ս Ցուցակ Փարիզ, օրհորդ Մարգարիտ Բաբայանին ուղարկող գրականության, մեքենագիր 1 թերթ, ԳԱԹ, Մարգարիտ Բաբայանի ֆոնդ, N 83:

էր և մենք համոզված էինք նրա մեջ եղած փաստական նյութի ճշմարտացիությանը, բայց և այնպես գտանք անհրաժեշտ Ձեր հեղինակավոր վկայությունն ունենալ՝ այդ կարևոր հարցերի պարզաբանման համար:

Անչափ երախտապարտ ենք այն բանի համար, որ Դուք, ընդառաջելով մեր խնդրանքին, հավաքում և մեզ եք ուղարկում նոր նյութեր Կոմիտասի վերաբերյալ, ինչպես և հանգուցյալ Թորոս Ազատյանի վերոհիշյալ գիրքը: Այդ կապակցությամբ անհրաժեշտ ենք համարում ընդգծել, որ մեր արխիվում իհարկե շատ նյութեր կան Կոմիտասի մասին, բայց քանի որ տարիներ են անցել, իսկ երաժշտագիտությունը շարունակում է իր առաջընթացը, և հետևապես կարող են նոր ու արժեքավոր հոգվածներ երևալ նաև Կոմիտասի մասին, մենք անհրաժեշտ համարեցինք դիմել Ձեր օգնությանը:

Մեծ հետաքրքրությամբ մենք ծանոթացանք այն նամակներին, որոնք Դուք, հարգելի օրիորդ Բաբայան, այնքան ջերմ սիրով ու նվիրվածությամբ պահպանելուց հետո հրապարակել էիք «Մշակույթ»-ի մեջ: Բայց քանի որ Ձեր խոստովանությամբ դրանք հատվածներ են միայն և իրոք այդպիսի տպավորություն էլ գործում են ընթերցողի վրա, իսկ մեզ Կոմիտասի երկերի լիակատար ժողովածուի վերջին հատորի համար անհրաժեշտ են նամակների լրիվ տեքստերը, ուստի և մենք ստիպված ենք դարձյալ դիմել Ձեզ և խնդրել ուղարկել մեզ այդ նամակների ամբողջական տեքստը կամ լուսանկարված և կամ Ձեր կողմից վավերացված պատճեններով: Ձեր նամակները մեծ արժեք են ներկայացնում և անհրաժեշտ է դրանք հրապարակել առանց հապավումների: Բացի այդ, ստիպված ենք Ձեզ նեղություն պատճառել մի նոր խնդրանքով: Մեզ հայտնի է, որ Կոմիտասը երկար տարիներ նամակագրական կապ է պահպանել հանգուցյալ Արշակ Չոպանյանի հետ: Հնարավոր չէ արդյոք ձեռք բերել և մեզ ուղարկել Կոմիտասի՝ նրան հասցեագրած նամակները: Համոզված ենք, որ այդ նամակները նույնպես կարևոր արժեք են ներկայացնում:

Մեծապես շնորհակալ ենք Ձեզնից, որ մեզ հնարավորություն տվեցիք կապվելու օր. Գոհարիկ Ղազարոսյանի հետ: Օրերս մենք նրանից նամակ ստացանք և ներկա նամակի հետ միաժամանակ պատասխանում ենք նաև նրա նամակին:

Առայժմ այսքան:

Ընդունեցեք սրտագին ողջույններ և հաղորդեցեք նույնը Կոմիտասյան հանձնաժողովի մեծարգո բոլոր անդամներին:

Արվեստների պատմության և տեսության Սեկտորի վարիչ՝

Ռ.Վ. ԶԱՐՅԱՆ

Գիտական քարտուղար՝

Մ.Հ. ՄՈՒՐԱԴՅԱՆ

25.VI.1956

Երևան»¹²:

Մ. Բաբայանի արխիվում հայտնաբերեցինք նրան ուղղված Ռոբերտ Աթայանի 13 նամակները (1960-1963թթ.), 6 մարտի 1960, 15 սեպտեմբերի 1960, 14 հոկտեմբերի 1960, 11 նոյեմբերի 1960, 15 նոյեմբերի 1960, 14 հունվարի 1961, 14 ապրիլի 1962¹³, 31 մայիսի 1962, 24 օգոստոսի 1962, 30 սեպտեմբերի 1962, 21 նոյեմբերի 1962, 14 սեպտեմբերի 1963 և 1 անթվակիր:

Այդ նամակներում ուրվագծվում է, թե ինչպես է հավաքվել Կոմիտասի արխիվը Երևանում. «Այն բոլորը Կոմիտասի ձեռագրերից, ինչ ուղարկված է Երևան, անշուշտ, միանգամայն ապահով վիճակում պահպանվում է Գիտ. Ակադեմիայի Արվեստի թանգարանում և ուսումնասիրվում է հրապարակման համար»¹⁴:

Նամակներից պարզ է դառնում, թե ինչպես են իրականացվել աշխատանքները Կոմիտասի երկերի ժողովածուի ակադեմիական հրատարակության ուղղությամբ:

Իր առաջին նամակում՝ թվագրված 1960թ. մարտի 6-ով, Ռ.Աթայանը խոստովանում է. «Նրա (Կոմիտասի – Ն.Կ.) երկերի ակադեմիական՝ մանրամասն ծանոթագրված հրատարակությունը ես իմ կյանքի կարևորագույն նպատակն եմ համարում»¹⁵: Այդ միտքը կարմիր թելի պես անցնում է նրանց նամակագրության միջով: Այսպես, տարիներ անց՝ 1963թ. սեպտեմբերի 14-ի նամակում կարդում ենք. «Չնայած այս բազմապիսի գործերիս, ամենակարևո-

¹² Ռոբերտ Զարյանի և Մաթևոս Մուրադյանի՝ 1956թ. հունիսի 25-ի նամակը՝ ուղղված Մարգարիտ Բաբայանին, մեքենագիր 2 թերթ, ԳԱԹ, Մարգարիտ Բաբայանի ֆոնդ, N 83:

¹³ 1962թ. ապրիլի 12-ի նամակը չի պահպանվել:

¹⁴ Ռ. Աթայանի՝ 1960թ. սեպտեմբերի 15-ի նամակը՝ ուղղված Մարգարիտ Բաբայանին, ԳԱԹ, Մարգարիտ Բաբայանի ֆոնդ, N 62:

¹⁵ Ռ. Աթայանի՝ 1960թ. մարտի 6-ի նամակը՝ ուղղված Մարգարիտ Բաբայանին, ԳԱԹ, Մարգարիտ Բաբայանի ֆոնդ, N 62:

րը ինձ համար համարում եմ Կոմիտասի ժառանգությունը հրատարակելու աշխատանքը»¹⁶:

Իր առաջին նամակում Ռ.Աթայանը գրում է, որ «այդ հրատարակությունը պետք է ընդգրկի այն բոլորը, ինչ որ մինչև այժմ հաջողվել է և ընթացքում կհաջողվի հավաքել Կոմիտասի ժառանգությունից: Գործը, ճիշտ է, դանդաղ է առաջ գնում, որովհետև նյութերն, ինչպես գիտեք, լրիվ բարեկարգ վիճակում չեն և ինքնըստինքյան էլ մի դժվարին գործ է, որին շտապողականությունը կարող է վնասել: Բայց տարվում է գործը հիմնովին: Մենք ձգտում ենք Կոմիտասի ժառանգությունը երևան հանել հնարավորին չափ լրիվ և ամենակարևորը՝ հարազատորեն, այնպես, ինչպես գրել է մեծ վարպետը: Հույս ունեմ, որ այս տարվա մեջ լույս կտեսնի I հատորը, որ վաղուց արդեն, ինչպես ասում են, «մամուլի տակ է»¹⁷:

1960թ. հոկտեմբերի 14-ի նամակում կարդում ենք.

«Հարգելի օր. Մարգարիտ Բաբայան.

Ձեր 28 սեպտեմբերի նամակը ստացել եմ. խորին շնորհակալություն եմ հայտնում: Չափազանց ուրախ եմ, որ գտել եք Կոմիտասի մի շարք նամակներ և պոստ-քարտեր: Մեծ անհամբերությամբ կսպասեմ այդ թանկարժեք ձեռագրերը ստանալու և, եթե հնարավոր է, շուտով հրատարակելու համար:

Առավել ուրախություն է պատճառում այն, և Ձե՛զ էլ պետք է ուրախացնեմ, որ Կոմիտասի ակադեմիական հրատարակության I հատորը արդեն լույս տեսավ: Երկար տարիների նվիրված աշխատանքը իր արժանի պտուղը տվեց: Ներեցեք անհամեստությունս, բայց պետք է ասեմ, որ անկողմնակալ դիտելով, ես գոհ եմ մնում հատորից թե՛ իր պարունակության և գիտական կողմով, թե՛ արտաքին գեղարվեստական տեսակետից: Ուզում եմ հավատալ, որ Դուք ևս գոհ կմնաք:

Ի մեծ հաճույս այսօր պատվիրված փոստով ուղարկում եմ Ձեզ այդ կանաչադալար հատորի առաջին իսկ օրինակը, որն ի դեպ, զարդարված է նաև մեր ազգային մյուս խոշոր տաղանդի՝ մեծ գեղանկարիչ Մարտիրոս Սարյանի՝ հայրենի բնանկարը նուրբ պատկերող գործով:

Ընդունեցեք այդ հատորը որպես մի համեստ նվեր ինձնից Ձեզ՝ որ

¹⁶ Ռ. Աթայանի՝ 1963թ. սեպտեմբերի 14-ի նամակը՝ ուղղված Մարգարիտ Բաբայանին, ԳԱԹ, Մարգարիտ Բաբայանի ֆոնդ, N 62:

¹⁷ Ռ. Աթայանի՝ 1960թ. մարտի 6-ի նամակը՝ ուղղված Մարգարիտ Բաբայանին, ԳԱԹ, Մարգարիտ Բաբայանի ֆոնդ, N 62:

այնքան շատ բան եք արել մեր մեծ երաժշտագետի երկերը հայտնաբերելու, և հրատարակելու միջոցով ժողովրդի սեփականություն դարձնելու համար»¹⁸:

Չի ուշանում Մ.Բաբայանի պատասխան նամակը առաջին հատորի վերաբերյալ, որով նա հավանություն է տալիս հատորին: Դրա վկայությունն են Ռ.Աթայանի՝ նոյեմբերի 11-ի նամակի հետևյալ տողերը. «Ձեր հավանությունը Կոմիտասի հատորի նկատմամբ ինձ քաջալերում է հետագա աշխատանքի համար»¹⁹:

Այդ նույն նամակում Ռ.Աթայանը գրում է. «Ստացա Ձեր ուղարկած Կոմիտասի նամակներն ու պոստ-քարտերը, որ թվով 22 հատ են:

Հիրավի թանկարժեք գանձ է դա. չեք կարող պատկերացնել՝ որքան մեծ է մեր ուրախությունը և որքան երախտապարտ ենք Ձեզ:

Նամակները ես տպագրել կտամ Հայաստանի Ակադեմիայի «Բանասիրական հանդես»-ում, որից հետո կհանձնեմ Գրականության և արվեստի մեր թանգարանին, որ պահվեն Կոմիտասի արխիվում որպես ազգային-ժողովրդական սեփականություն:

Ստացել եմ նաև Կոմիտասի մասին Ձեր ուղարկած հոդվածը և Ձեր նամակը»²⁰:

Իսկ չորս օր անց՝ նոյեմբերի 15-ին, Ռ. Աթայանը գրում է.

«Հարգելի օր. Մարգարիտ

Երկու օր առաջ ուղարկեցի վերջին շնորհակալական նամակս այն մեծարժեք նվիրատվության համար, որ Դուք այնքան սիրահոժար կերպով արեցիք մեզ, Կոմիտասի բոլոր երկրպագուներին, մեր ժողովրդին, Ձեր ուղարկած՝ Կոմիտասի նվիրական նամակներով: Ավելորդ է ասել, որ նամակները շատ մեծ տպավորություն թողեցին և թողնում են ամենուր, որտեղ լսում են դրանց մասին կամ տեսնում են դրանք: Մասնավորապես, ես ներկայացրի դրանք Կոմպոզիտորների միության վարչությանը, բոլոր ընկերները երախտագիտության մեծ զգացում արտահայտեցին: Արդեն պայմանավորվել ենք «Հանդես»-ի խմբագրության հետ, հրատարակելու համար: Հետագայում, Կոմիտասի պահպանված բոլոր նամակների ժողովածուն պետք է լույս տեսնի

¹⁸ Ռ. Աթայանի՝ 1960թ. հոկտեմբերի 14-ի նամակը՝ ուղղված Մարգարիտ Բաբայանին, ԳԱԹ, Մարգարիտ Բաբայանի ֆոնդ, N 62:

¹⁹ Ռ. Աթայանի՝ 1960թ. նոյեմբերի 11-ի նամակը՝ ուղղված Մարգարիտ Բաբայանին, ԳԱԹ, Մարգարիտ Բաբայանի ֆոնդ, N 62:

²⁰ Ռ.Աթայանի՝ 1960թ. նոյեմբերի 11-ի նամակը՝ ուղղված Մարգարիտ Բաբայանին, ԳԱԹ, Մարգարիտ Բաբայանի ֆոնդ, N 62:

առանձին գրքով, որը կցվելու է նրա երկերի ժողովածուին, ավելի ճիշտ կազմելու է դրա մեկ (վերջին) հատորը»²¹:

«Մի խոսքով, ես նամակները արտագրում եմ և անհրաժեշտ ծանոթագրություններով պատրաստում եմ տպագրության»²²:

Նախատեսված էր, որ «Կոմիտասի երկերի ժողովածուի վերջին հատորը պետք է ընդգրկի նրա ինքնակենսագրությունը, նամակները և այլ նման գրություններ: Սակայն վերջին հատորը (դա երևի 12-րդը կլինի) դեռ շատ ուշ լույս կտեսնի: Այդ պատճառով ես մտադրվել եմ առանց վերջին հատորին սպասելու մի գեղեցիկ գրքույկով տպագրության ներկայացնել Կոմիտասի մինչ այժմ հայտնաբերված ու հավաքված բոլոր նամակները: Երևանում ունենք հետաքրքրական նամակներ, գրված Հովհ. Թումանյանին, ճեմարանի տեսուչ Կարապետ Կոստանյանին, դերասանուհի Սիրանույշին, այստեղ են Արշակ Չոպանյանին գրված նամակների մեծ մասը, վերջապես, Ձեզ գրված նամակները և այլն: Բայց, իհարկե, դա դեռ բոլորը չէ: Կոմիտասի նամակները երբեմն հայտնվում են նույնիսկ պատահական մարդկանց մոտ, ուստի բուն հասցեատերերի մոտ փնտրելը միանգամայն օրինական է»²³:

Ռ.Աթայանի՝ 1961-ի հունվարի 14-ի նամակից տեղեկանում ենք, որ Մ. Բաբայանի ուղարկած՝ Կոմիտասի 22 նամակներն արդեն հանձնել է Ակադեմիայի Գրականության և արվեստի թանգարանին, պահվում են Կոմիտասի արխիվում: «Մեզ բավական ուրախացրեց նաև Գոհարիկ Ղազարոսյանը, որի համար դարձյալ Ձեզ ենք պարտական: Նա Երևան ուղարկեց Կոմիտասի երկու ինքնագիր էջեր. մեկը «Անձինք նվիրյալ» շարականի կոմիտասյան ծայնագրությունն ու ներդաշնակումը, մյուսը «Կռունկ»-ի մի մշակում, որ թեև պարզ է, բայց կատարյալ և ամբողջացած (ի տարբերություն մեզ մոտ եղած Կոմիտասի մյուս մշակումների, որոնք այս կամ այն չափով թերավարտ են): Դրանցից առաջինը՝ «Անձինք նվիրյալ»-ը, փետրվարին լույս կտեսնի մեր ամսագրերից մեկում-ֆոտո-պատճենը և լրիվ վերականգնված (մաքուր արտագրված) երկը: Երկրորդը՝ «Կռունկ»-ը, քիչ ուշ հասավ, այլապես ես կգետնեղեի և հատորի մեջ որպես մի հետաքրքիր variante (տարբերությունը մեծ

²¹ Ռ.Աթայանի՝ 1960թ. նոյեմբերի 15-ի նամակը՝ ուղղված Մարգարիտ Բաբայանին, ԳԱԹ, Մարգարիտ Բաբայանի ֆոնդ, N 62:

²² Ռ.Աթայանի՝ 1960թ. նոյեմբերի 15-ի նամակը՝ ուղղված Մարգարիտ Բաբայանին, ԳԱԹ, Մարգարիտ Բաբայանի ֆոնդ, N 62:

²³ Ռ.Աթայանի՝ 1962թ. ապրիլի 14-ի նամակը՝ ուղղված Մարգարիտ Բաբայանին, ԳԱԹ, Մարգարիտ Բաբայանի ֆոնդ, N 62:

չէ): Հիմա երևի կմնա զետեղելու երկերի ժողովածուի վերջին հատորում, ուր պետք է տեղ գտնեն այն բոլոր նյութերը, որոնք ժամանակի ընթացքում աստիճանաբար կհայտնաբերվեն»²⁴:

Իսկ մեկ այլ նամակից տեղեկանում ենք. «Ուղարկում եմ Ձեզ մեր «Սովետական արվեստ» և «Էջմիածին» ամսագրերի վերջին թվերը, որոնց մեջ հրատարակվել են Կոմիտասի երկու ձեռագիր-պատառիկները իմ փոքր բացատրական հոդվածներով հանդերձ: Ինչպես գրել էի, այդ ձեռագրերը Երևան ուղարկեց Գոհարիկ Ղազարոսյանը: Այսպիսով քիչ առ քիչ լրանում է Կոմիտասի բազմահարուստ ժառանգությունը, որի ամեն մի նոր հայտնաբերվող պատառիկն անգամ անգին գանձ է մեր ժողովրդի համար»²⁵:

Աթայանը շարունակում է իր քայլերը Կոմիտասի Նամականու հրատարակության ուղղությամբ. «Ինչպես ասել եմ Ձեզ, տպագրության եմ պատրաստում Կոմիտասի նամակների ժողովածուն»²⁶: Ապա՝ «Բոլոր գործերիս զուգահեռ, շարունակում եմ հավաքել Կոմիտասի նամակները, եկող տարի տպագրության հանձնելու համար նրա նամակների ժողովածուն: Սա ևս շատ հետաքրքիր է լինելու: Մոտ 120 նամակ հավաքել եմ:

Երբ այդ նամակները դասավորում եմ խրոնոլոգիկ կարգով, Կոմիտասի հետաքրքրական, թեև ողբերգական, բայց շատ ուսանելի կյանքի ողջ պատկերն է ստացվում»²⁷:

Կոմիտասյան ժառանգության երկրորդ հատորը հրատարակության հանձնելուց հետո Ռ.Աթայանն այդ մասին տեղեկացնում է Մ.Բաբայանին: «Վերջապես տպագրության հանձնեցի Կոմիտասի երկերի ժողովածուի Բ հատորը, որ նրա խմբերգերի առաջին գիրքն է, այդպիսի խմբերգային հատորներ լինելու են չորսը: Պետք է ասեմ, որ այս գործը շատ աշխատանք և մեծ համբերություն է պահանջում, դրա պատճառով էլ դանդաղ է առաջ գնում: Այս Բ հատորում զետեղել եմ իր՝ Կոմիտասի հրատարակած խմբերգերը, որ 28 հատ են և մի անտիպ խմբերգ՝ Հովհաննես Հովհաննիսյանի խոսքերով

²⁴ Ռ.Աթայանի՝ 1961թ. հունվարի 14-ի նամակը՝ ուղղված Մարգարիտ Բաբայանին, ԳԱԹ, Մարգարիտ Բաբայանի ֆոնդ, N 62:

²⁵ Ռ.Աթայանի՝ անթվակիր նամակը՝ ուղղված Մարգարիտ Բաբայանին, ԳԱԹ, Մարգարիտ Բաբայանի ֆոնդ, N 62:

²⁶ Ռ.Աթայանի՝ 1962թ. նոյեմբերի 21-ի նամակը՝ ուղղված Մարգարիտ Բաբայանին, ԳԱԹ, Մարգարիտ Բաբայանի ֆոնդ, N 62:

²⁷ Ռ.Աթայանի՝ 1963թ. սեպտեմբերի 14-ի նամակը՝ ուղղված Մարգարիտ Բաբայանին, ԳԱԹ, Մարգարիտ Բաբայանի ֆոնդ, N 62:

գրված, որ կոչվում է «Գարուն» և բոլորովին հայտնի չէ, միայն մեկ անգամ, 1902-ին էջմիածին է երգվել, բայց շատ լավն է: Իր հրատարակած խմբերգերը հատորում կունենան բազմաթիվ հետաքրքիր վարիանտներ, որոնք հսկայական գիտական և գեղարվեստական նշանակություն ունեն: Այս հատորում ավելի մանրամասն ծանոթագրություններ կան, պարզաբանված է ամեն մի խմբերգի ստեղծման պատմությունը և նրա համերգային կյանքը: Հույս ունեմ, որ գոհ կմնաք, այդ գիրքը լույս կտեսնի հազիվ 1964-ի սկզբին, որովհետև դրա տպագրությունն էլ բավական դժվար է և շատ աշխատանք պահանջող: Անշուշտ, Ձեզ կուղարկեմ անմիջապես»²⁸:

Ավաղ, սա պահպանված վերջին նամակն է, և դրանով խզվում է նամակագրությունը: Ցավոք, դեռևս մեր ձեռքի տակ չեն Մարգարիտ Բաբայանի՝ Ռոբերտ Աթայանին հասցեագրված նամակները ևս: Սակայն պահպանված նամակները բացահայտում են այն մեծ դերը, որ ունեցել է Մարգարիտ Բաբայանը Կոմիտասի երկերի ժողովածուի ակադեմիական հրատարակության գործում (խոսքը Կոմիտասի ձեռագրերը Երևան փոխադրելու մասին է), որն իրականացրեց ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտը (1960-2006):

ԱՄՓՈՓՈՒՄ

Հոգվածում հեղինակը գիտական շրջանառության մեջ է դնում դաշնակահարուհի, երգչուհի, երաժշտագետ, մանկավարժ Մարգարիտ Բաբայանին ուղղված՝ Ռուբեն Զարյանի և Մաթևոս Մուրադյանի 3 նամակները, ինչպես նաև Ռոբերտ Աթայանի 13 նամակները, որոնք գտնվում են Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանում, Մարգարիտ Բաբայանի ֆոնդում:

Հեղինակը բացահայտում է այն մեծ դերը, որ ունեցել է Մարգարիտ Բաբայանը Կոմիտասի երկերի ժողովածուի ակադեմիական հրատարակության գործում (խոսքը Կոմիտասի ձեռագրերը Երևան փոխադրելու մասին է), որն իրականացրել է ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտը (1960-2006):

Բանալի բաներ - Մարգարիտ Բաբայան, Հայաստանի գիտությունների ակադեմիայի արվեստի ինստիտուտ, Կոմիտաս, Ռոբերտ Աթայան, Ռուբեն Զարյան, Մաթևոս Մուրադյան:

²⁸ Ռ.Աթայանի՝ 1963թ. սեպտեմբերի 14-ի նամակը՝ ուղղված Մարգարիտ Բաբայանին, ԳԱԹ, Մարգարիտ Բաբայանի ֆոնդ, N 62:

**МАРГАРИТ БАБАЯН И АКАДЕМИЧЕСКОЕ ИЗДАНИЕ СОБРАНИЯ
СОЧИНЕНИЙ КОМИТАСА**

НИКОЛАЙ КОСТАНДЯН

В статье автор вводит в научный оборот три письма Рубена Заряна и Матевоса Мурадяна, отправленные пианистке, певице, музыковеду, педагогу Маргарит Бабаян, а также 13 писем Роберта Атаяна, находящихся в ереванском Музее литературы и искусства имени Е. Чаренца, в фонде Маргарит Бабаян.

Автор раскрывает большую роль, которую имела Маргарит Бабаян в деле издания собрания сочинений Комитаса (речь идет о пересылке рукописей Комитаса в Ереван), осуществленного Институтом искусств НАН РА (1960-2006 гг.).

Ключевые слова – Маргарит Бабаян, Институт искусств Академии Наук Армении, Комитас, Роберт Атаян, Рубен Зарян, Матевос Мурадян.

**MARGARET BABAYAN & THE ACADEMIC PUBLICATION OF THE COMPILED
WORKS OF KOMITAS**

NICHOLAY KOSTANDYAN

Nicholay Kostandyan with this article communicates to scientific circles three letters written by Ruben Zaryan, Matevos Muradyan as well as 13 of Robert Atayan's addressed to Margaret Babayan, the pianist, singer, musicologist and music teacher. These letters are in Margaret Babayan's fund at the Charents Museum of Literature and Arts.

Kostandyan reveals the major role that Babayan has had in the academic publication of the compiled Works of Komitas (organization of Komitas' manuscripts transfer to Yerevan) accomplished by the Institute of arts of Armenian Academy of Sciences (1960-2006).

Key words – Margaret Babayan, Institute of arts of Armenian Academy of Sciences, Komitas, Robert Atayans, Ruben Zaryan, Matevos Muradyan.

ԻՐԱՆԻ ԺԱՅՌԱՔԱՆԴԱԿՆԵՐԸ ՍԵԼԵՎԿՅԱՆՆԵՐԻ ԵՎ ՊԱՐԹԵՎՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ

ՄԱՋԻԴ ՅԱԶԴԱՆՓԱՆԱՀ (ԻՐԱՆ)

Աքեմենյան կայսրությունը՝ հինարևելյան տիպի վերջին տերությունը, կործանվեց, ընկավ սոցիալական, տնտեսական և մշակութային առումներով առավել զարգացած հունական աշխարհի ուղղակի ճնշման ու ներգործության տակ: Մակեդոնական նվաճումներից հետո՝ մ. թ. ա. IV դարի վերջում, Առաջավոր Ասիայի տարածքում կազմավորվեցին նոր տիպի մի շարք պետություններ, որոնց պատմագիտության մեջ ընդունված է անվանել «հելլենիստական»:

Ալեքսանդր Մակեդոնացու հաղթանակը և Աքեմենյանների կործանումն Իրանի քաղաքակրթության և մշակույթի վիճակն արմատապես փոխեցին: Մեծ շրջադարձ կատարվեց բոլոր բնագավառներում, հունարենն ու հունական մշակույթը լայն տարածում գտան: Իրանի համաստվածության շարքի մեջ մտան հունական դիցարանի աստվածները: Ահուրամազդան նույնացվեց Զևսի, Անահիտը՝ Աթենասի և Արտեմիսի, իսկ Միհրը՝ Ապոլլոնի ու Հելիոսի հետ:

Հելլենիզմն այնքան խոր արմատներ գցեց, որ պարթև արքաներից ոմանք մետաղադրամների և կնիքների վրա՝ իրենց պատկերի ու անվան կողքին, դաջում էին նաև «հունասեր» բառը: Իրանում իշխանության եկած Սելևկյանները երկիրը հնարավորինս հունականացնելու, հելլենացնելու նպատակ ունեին: Դա վերաբերում էր նաև Իրանի գեղարվեստական մշակույթին, այդ թվում նաև կերպարվեստին: Բայց, ըստ էության, Սելևկյաններին չհաջողվեց իրագործել իրենց ծրագրերը: Կարճ ժամանակ անց նրանք հասկացան, որ ստիպված են հաշվի նստել նվաճված երկրում դարեր շարունակ ապրած ժողովուրդների ազգային ավանդույթների, սովորությունների ու հակումների, նրանց կրոնական պատկերացումների, գեղարվեստական ընկալումների, մշակույթի հետ և բավարարվել փոխգիշումներով: Ռոման Գիրշմանի կարծիքով. «Սելևկյանների տիրապետության օրոք Իրանում գոյություն ուներ գեղարվեստական երեք ուղղություն կամ երեք դպրոց՝ հելլենիստական (հունամետ,

հունասեր), հունա-պարսկական և զուտ պարսկական (ավանդական, ազգային)»¹:

Ինչպես Ալեքսանդր Մակեդոնացու հսկայական, սակայն անկայուն կայսրությունը, այնպես էլ Սիրիայից մինչև Հնդկաստան ընկած Սելևկյանների բազմազգ տերությունն աստիճանաբար թուլացավ, քայքայման ենթարկվեց ու կազմալուծվեց: Արդեն մ. թ. ա. III դարում Սելևկյանների պետությունից անջատվում, առանձնանում են արևելյան մի քանի մարզեր, որոնք շուտով միավորվում են և հունա-բակտրիական ինքնուրույն թագավորություն դառնում: Գրեթե միևնույն ժամանակ առաջանում է պարթևների արքայությունը, որոնց մինչև այդ ենթակա էին միայն Կասպից ծովի արևելյան և հարավարևելյան կողմերի մարզերը: Մեր թվարկությունից առաջ՝ III դարի վերջում, Սելևկյանների դեմ կատաղի պայքարի արդյունքում պարթևներին հաջողվում է նվաճել ամբողջ Իրանը և ստեղծել մի զորեղ տերություն, որը գոյատևեց շուրջ 500 տարի՝ մինչև մ. թ. III դարը:

Մշակույթի և արվեստի բնագավառում, հատկապես խոշոր քաղաքներում, աստիճանաբար տարածում են գտնում գեղարվեստական սինկրետիկ՝ համադրական ձևերն ու տեսակները, որոնց հիմքում ընկած էին տեղական, ազգային ավանդույթները, բայց որոնք զգալի չափով ազդված էին Միջերկրական ծովի արևելյան ափերում ծնունդ առած, ձևավորված ու մշակված և ապա Իրան թափանցած՝ տվյալ դարաշրջանի համար առաջադիմական համարվող գաղափարներից և կերպարներից: Մինչդեռ տերության մյուս մարզերում ու շրջաններում դեռ երկար ժամանակ շարունակում էին գոյատևել մշակույթի և արվեստի հնավանդ ձևերը:

Մեր թվարկությունից առաջ՝ I դարից ի վեր՝ մինչև մ. թ. 220-ական թվականները, պարթևական պետության հասարակական կյանքում շոշափելի փոփոխություններ են կատարվում: Նվազում է պոլիսատիպ ինքնավար քաղաքների նախկինում խաղացած նշանակալից դերը, և հակառակը՝ ուժգնանում է կառավարման կենտրոնահակ, բռնապետական՝ դեսպոտիկ ձևը: Մշակույթի ասպարեզում հունական ազդեցությունը չեզոքացնելու և նույնիսկ դրան հակադրվելու միտում է նկատվում: Սահմանափակվում է հունարենի գործածության ոլորտը՝ որպես միջազգային կամ ազգամիջյան հարաբերակցման ու

¹ Տե՛ս **Գիրշման Ռոման**, Իրանի արվեստը Սելևկյանների և պարթևների ժամանակաշրջանում, թարգմանիչ՝ Իսա Բեհնամ, Թեհրան, «Դոնյայե քեթաբ» հրատարակչություն, 1971, էջ 18:

շվման միջոց: Զրադաշտականությունը հետզհետե վերածվում է դոգմատիկ կրոնի և Պարթևական թագավորության մեջ իշխող դիրքեր գրավում:

Սելևկյանների և պարթևների դարաշրջանի իրանական կերպարվեստի և մասնավորապես քանդակագործության աչքի ընկնող հատկանիշներից էր պատկերված մարդկանց դեմքերի և մարմինների, նրանց արտաքին տեսքի ու հանդերձանքի, ազգային տարազների հանդեպ առանձնահատուկ ուշադրությունը: Այդ ժամանակվա դիմաքանդակներում, սյուժետային քանդակներում և ռելիեֆներում հաճախ ենք տեսնում ուղիղ փեշերով, մինչև ծնկները հասնող վերնազգեստներ ու տոպրակաձև լայն տաբատներ կրող տղամարդկանց և կանանց կերպարներ: Երկու մասերից կազմված այդ նոր տարազը շատ տարածված էր Իրանի տարբեր ժողովուրդների մոտ, գուցե նաև այն պատճառով, որ հարմար էր ոչ միայն ազատ շարժվելու, այլև նժույգ հեծնելու համար²: Զգեստների գեղեցկությունը կարևորելուց զատ, պարթև արվեստագետը կարևորում էր նաև դրանք լրացնող դեկորատիվ մանրամասները՝ զարդանախշերն ու զարդարանքները:

Թեև Սելևկյանների և պարթևների ժամանակաշրջանից մեզ հասած քանդակների թիվն այնքան էլ մեծ չէ, սակայն դրանց արժեքը, տեղն ու նշանակությունն իրանական արվեստում ակնհայտ են: Դրա խոսուն վկայություններից է Հերակլեսի արձանը, որը պեղվել է 1958 թվականին, երբ շինարար բանվորները Բեհիսթուն լեռան ստորոտում Համադանից Քերմանշահ տանող նոր մայրուղի էին գցում: Քանդակն ստեղծվել է Արևմտյան Իրանում Սելևկյանների իշխանության ամենավերջին, անկումային շրջանում՝ պարթև թագավոր Միհրդատ Առաջինի կառավարման օրոք՝ մ. թ. ա. 148 թվականին, ինչպես հուշում է Հերակլեսի ֆիգուրի հետևում, լերկ ժայռի վրա փորագրված, յոթ տողից բաղկացած ու մասամբ վնասված հունարեն գրությունը, որը մեզ ևս մի քանի կարևոր տեղեկություններ է տալիս: Մասնավորապես հիշատակվում է Միհրդատ Առաջինի դեմ մղված կռիվներին մասնակցած մի զորավար, որի հրամանով էլ ծագումով հույն քանդակագործ Հիացինտը կերտել է այս մոնումենտալ հուշակոթողը: Սակայն դրան անդրադառնալուց առաջ հարկ է նշել հետևյալը:

Մեր թվարկությունից առաջ՝ II դարի կեսերին, կրոնական զանազան պաշտամունքների ու դավանանքների, ուսմունքների ու դպրոցների խայտա-

² Տե՛ս **Kale A.** Parthian Art in Iran's art, London, London University Publication, 1993, p. 56:

բղետ համապատկերում աստիճանաբար ինչ-որ մերձեցում, նմանություն է նկատվում: Տարբեր կրոններ ներկայացնող աստվածներ ու աստվածություններ միմյանց հետ կարծես «դինաստիական կապեր» են հաստատում և միավորվում, միախառնվում են: Պարսկական հին աստվածների՝ Անահիտի, Միհրի, Բահրամի կամ Վարահրամի (համապատասխանում է հայկական Վահրամին) և այլոց պատվին կառուցվող տաճարներում և սրբավայրերում հույներից ու մակեդոնացիներից փոխառած արձաններ են դրվում և բարձրաքանդակներ արվում: Պատկերագրական այդ փոխակերպումների ու կերպաձևության արդյունքում նույնացվում են նաև հին հունական դիցարանի հերոս Հերակլեսի և զրադաշտականների հուր-աստված Բահրամի կերպարները: Հավանաբար դա բացատրվում է նրանով, որ առասպելական պատմություններում նրանց արտաքին տեսքի նկարագրությունները շատ չեն տարբերվում իրարից, և որ Հերակլեսի պես Բահրամը ևս մարմնավորում էր ֆիզիկական ուժն ու արիությունը և մարդկանց փրկում դժբախտությունից:

Իրանում հելլենիստական հերոսի և պարսկական աստծո նույնականացման ամենահայտնի օրինակներից է Բեհիսթուն լեռան ստորին մասում Դարեհի հայտնի արձանագրության և ժայռաքանդակի մոտ տեղակայված Հերակլեսի սրբարանը: Մասնագետների կարծիքով այն օգտագործվել է առևտրական բանուկ մայրուղով ընթացող ինչպես իրանցի, այնպես էլ հույն վաճառականների ու ճանապարհորդների կողմից, որոնք այստեղ աղոթել են իրենց աստվածներին: Սա ոչ միայն Բեհիսթունի պատմամշակութային համալիրի մեջ մտած և 2006 թվականին ՅՈՒՆԵՍԿՕ-ի Համաշխարհային ժառանգության ցուցակում ընդգրկված, այլև Իրանի ողջ տարածքում պահպանված հելլենիստական ամենահայտնի և արժեքավոր կոթողներից է: Ռոման Գիրշմանը համոզված էր, որ Հերակլեսի սրբարանի մոտակայքում հունական տաճար է եղել³, սակայն մինչ այսօր գիտնականի կարծիքը հավաստող որևէ փաստարկ մեջտեղ չի բերվել:

Անպարտելի, հաղթական, սխրագործ հերոսն այստեղ պատկերված է հանգստի պահին՝ ամբողջապես մերկ, առյուծի մորթու վրա թիկնած դիրքում, կիսագնդաձև գավաթը ձեռքին: Արձանի պատվանդանը՝ քարե հարթակը, 220 սանտիմետր է, բարձրությունը՝ 150 սանտիմետր, իսկ ինքը՝ արձանը, շուրջ 145 սանտիմետր երկարություն ունի: Թիկունքից այն կպած է լեռանը, այսինքն՝

³ Տե՛ս **Գիրշման Ռոման**, Իրանի արվեստը Սելևկյանների և պարթևների ժամանակաշրջանում, էջ 97:

տաշվել է տեղում, նույն ժայռաքարից: Հերակլեսի սրբարան-կոթողում օրգանապես համադրվել են Հին Պարսկաստանի կերպարվեստին հատուկ ժայռափոր խորաքանդակի և հին հունական կլոր քանդակի ոճական ու տեխնիկական հատկանիշները և սկզբունքները:

Հունարեն արձանագրության կողքին ծիթենու ծառ է պատկերված, որի ճյուղերից կախված են հերոսի աղեղն ու նետերով լի նետապարկը: Ծառի տակ կոնաձև հանգուցավոր մահակ է դրված: Արձանագրությունը պատճենահանած նկարիչ-հնագետ Ալի Հաքեմին համոզված է, որ թե՛ Հերակլեսի արձանը, թե՛ առյուծի մորթին և թե՛ պեյզաժային կամ առարկայական մանրամասները՝ հարթաքանդակներն ու բարձրաքանդակները, կատարվել են միևնույն ժամանակ⁴:

Բեհիսթունում պարթևների ժամանակներից մեզ հասած ևս մի քանի նշանակալից, թեև վնասված կոթողներ կան: Դարեհ Առաջինի արձանագրության և ժայռաքանդակի ներքևում է գտնվում պարթևական ամենահին խորաքանդակը, որն ստեղծվել է մոտավորապես մ. թ. ա. 100 թվականին և ցույց է տալիս Միհրդատ Երկրորդին (մ. թ. ա. 123-87 թթ.), որին հարգանքի տուրք են մատուցում և նրան արքայական գահը վստահում «սատրապների սատրապ» մարզպան Գուդարզը և ավագանու երեք անդամներ: Դարեհի հուշարձանի ներքևում այս ժայռաքանդակի գտնվելը պատահական չէ: Դրանով պարթև թագավորը կամեցել է ճանաչվել որպես Աքեմենյան «արքայից արքայի» փառահեղ հարստության ժառանգորդ: Պատկերված անձանց անունները բերված են հունարեն հակիրճ, մասամբ քայքայված արձանագրության մեջ, որտեղ, եթե վստահենք էռնեստ Հերցֆելդի վերծանությանն ու թարգմանությանը, գրված է. «Միհրդատ Մեծ, սատրապ Գուդարզ, ավագանիներ՝ Պեպիս Տոմինուս, Գուպաստիս և...»⁵: Ավագանիներից երրորդի անունն այդպես էլ անհայտ է մնացել, քանի որ պարզապես անընթեռնելի է:

Միհրդատի ժայռաքանդակում ևս հելլենիստական որոշ ազդեցություններ և արձագանքներ կան, ինչի մասին է վկայում թեկուզ Գուպաստիսի ձեռքին երևացող հաղթանակի աստվածուհի Նիկեի արձանիկը: Ճիշտ է, ժայռաքանդակի այդ հատվածն այսօր գրեթե ամբողջապես քայքայվել է, բայց

⁴ Տե՛ս **Հաքեմի Ալի**, Հերակլեսի արձանը Բեհիսթունում // «Հնագիտական հանդես», Թեհրան, 1959, թիվ 3-4, էջ 11:

⁵ Տե՛ս **Herzfeld Ernest**. Am Tor von Asian, Berlin, Universität zu Berlin, 1920, S. 39:

բարեբախտաբար պահպանվել են դեռ XVII դարում՝ 1671 թվականին, ֆրանսիացի անվանի ճանապարհորդ ժան Շարդենին (1643-1713) ուղեկցող գծանկարիչ Գիյոմ-ժոզեֆ Գրիլոյի (1630-1680)՝ Բեհիսթունի ժայռափոր կոթողներն ընդօրինակող մատիտանկարները, որոնք առավել հստակ և ամբողջական պատկերացում են տալիս նաև Միհրդատի տվյալ կոթողի մասին: Միհրդատի ժայռաքանդակը, ինչպես և Բեհիսթունի մի շարք այլ ժայռակուփ կոթողներ, վնասվել կամ ոչնչացվել են Շարդենի ճամփորդությունից քիչ անց՝ 1680-ական թվականներին՝ պարսից շահ Սեֆի Երկրորդ Սուլեյմանի (1666-1694 թթ.) օրոք, Քերմանշահի նահանգապետ շեյխ Ալիխան Զանգանեի հրամանով:

Միհրդատ Երկրորդի պատկերի արևելյան ուղղությամբ երևում է մեկ այլ պատկեր, որտեղ ներկայացված է պարթևների թագավոր Գուդարգես Երկրորդի (մ. թ. 38-51 թթ.) հաղթանակն իր ախոյանի՝ Միհրդատի նկատմամբ: Երկու հեծյալներն էլ նիզակներով են զինված: Դրանցից մեկը (Գուդարգեսը) մյուսին (Միհրդատին) գետնին է տապալում: Պատկերը պարզաբանող հունարեն արձանագրության մեջ ասված է. «Փարսի Միհրդատը և Գուդարգեսը՝ արքայից արքան»: Ինչպես և նախորդ ժայռաքանդակը, այս մեկը նույնպես լուրջ վնասվել է, թեպետ պատմական երկու հերոսներն էլ դեռևս միանգամայն տեսանելի են: Հեծյալների գլխավերևում մի հրեշտակ է սավառնում, որի ձեռքում դափնեպսակ կա: Բացառված չէ, որ սա ևս Նիկե աստվածուհին է: Նիզակավոր հեծյալների թիկունքում՝ պատկերի խորքում, հագիվ նշմարվող ևս երկու հեծյալներ կան: Քանդակը կատարված է ուրվագծային հարթեցված ոճով, առանձնահատուկ ուշադրություն է դարձված մարդկանց զգեստներին, սանրվածքներին, զենք ու զրահին և առարկայական այլ մանրամասներին: Ժայռաքանդակը մեջտեղից մասամբ ծածկված է շատ ավելի ուշ՝ XVII դարում, վերոհիշյալ շեյխ Ալիխան Զանգանեի նվիրաբերության մասին վկայող արձանագրությամբ: Հենրի Ռոուլինսոնը, իսկ հետագայում նաև Ալֆրեդ Գուլշմիդն ու Էռնեստ Հերցֆելդը քանդակի ստեղծման ժամանակը համարում են պարթևների դարաշրջանի ավարտը:

Բեհիսթուն լեռան արևելյան կողմում՝ Գուդարգես Երկրորդի բարձրաքանդակից շուրջ 400 մետր հեռավորության վրա՝ ժայռի ստորին մասում է գտնվում Վաղարշ արքայի բարձրաքանդակը: Այս կոթողն ավելի քան 2,5 մետր բարձրություն և 6 մետր լայնություն ունի: Մեջտեղում պատկերված տղամարդու հասակը 180 սանտիմետր է, այսինքն՝ մոտ է բնական չափսերին: Նա կիսակլոր մորուք ու երկար վարսեր է կրում, իսկ գլխի շուրջը ժապավեն է կապել: Նրա երկայնափեշ զգեստի լայն գոտեկապը զարդարված է օղակավոր

նախշերով: Ձախ ձեռքում մի գավաթ կա, աջ ձեռքում՝ բարսմունք: Քանդակը մասամբ վնասված է, եղած արձանագրության մեծ մասը ոչնչացել կամ գրեթե անընթեռնելի է դարձել: Դրանից ընդամենը ինը բառ է վերծանել Համբուրգի համալսարանի պրոֆեսոր Գերդ Գրովը: Արձանագրության վերծանված տեքստն առաջին անգամ տպագրվել է Գերմանիայի հնագիտական ընկերության կողմից 1970 թվականին ու հետագայում ևս հրատարակվել: Ահա դրա բովանդակությունը. «Այս Վաղարշ արքայի քանդակը, Վաղարշ արքայի որդին, Փ-ի թողը...»⁶: Արձանագրությունից պարզվում է, որ ժայռաքանդակի կենտրոնում պատկերված մորուքավոր տղամարդը Գուդարգես Երկրորդի հետնորդներից մեկն է՝ Վաղարշ արքան: Պարթևական դինաստիայում մ. թ. 51-ից մինչև 223 թվականները Վաղարշ անունով հինգ արքաներ են եղել: Գերդ Գրովին այդպես էլ չի հաջողվել պարզել, թե տվյալ դեպքում այդ Վաղարշներից որ մեկն է պատկերված, մինչդեռ Վիլյամ Ջաքսոնի կարծիքով այստեղ ներկայացված տղամարդը ոչ թե արքա է, այլ զրադաշտական քուրմ, գերագույն մոգ, բարձրաստիճան հոգևորական⁷:

Վաղարշի պատկերից ոչ հեռու՝ լեռան ձախ կողմում ևս երկու ժայռաքանդակներ կան, որոնք նախորդ քանդակների համեմատությամբ ավելի արխաիկ, հնաոճ են թվում: Այստեղ ճակատային դիրքով պատկերված մարդկանց մարմիններն անհամաչափ են և գրեթե անմշակ: Այդ պատկերներն ուղեկցող արձանագրությունների բացակայության պատճառով դժվար է խոսել դրանցում ներկայացված տեսարանների, որոշակի իրադարձության, սյուժեի մասին, պարզել գործող անձանց անունները, նրանց ինքնությունը: Միայն ելնելով տվյալ քանդակների ոճական և տեխնիկական առանձնահատկություններից, ինչպես նաև ազգագրական որոշ մանրամասներից՝ կարելի է զգուշավոր ենթադրություններ անել այդ կոթողների ստեղծման ժամանակաշրջանի, կերպարային բովանդակության և պատկերագրության վերաբերյալ: Այսպես, օրինակ, Վիլյամ Ջաքսոնը միանգամայն հավանական է համարում, որ վերոհիշյալ ժայռաքանդակները պատկանում են ոչ թե Սելևկյանների կամ պարթևների, այլ Աքեմենյանների դարաշրջանին⁸: Իր կարծիքը նա հիմնավորում է նրանով, որ Բեհիսթունի այդ երկու քանդակներում պատկերված մարդկանց կարճափեշ զգեստները, նրանց գլխարկները, կիսաճոքավոր կոշիկները

⁶ St'u **Gropp Gerd**. Die parthische Inschrift von Sarppol-e-Zahab, Berlin, 1986, S. 119:

⁷ St'u **Ջաքսոն Վիլյամ**, Ջաքսոնի ուղևորագիրը, թարգմանիչ՝ Մանուչեհր Ամիրի, Թեհրան, «Դոնյայե քեթաբ» հրատարակչություն, 1970, էջ 243-244:

⁸ Նույն տեղում, էջ 244:

խիստ տարբերվում են Սելևկյանների և պարթևների ժամանակներում ընդունված տարազներից, գլխարկներից ու ոտնամաններից և հակառակը՝ բացահայտ նմանություններ ունեն Աքեմենյանների օրոք Պերսեպոլիսի բարձրաքանդակներում եղած համապատասխան դետալների հետ, թեև ակնհայտ է, որ Պերսեպոլիսի քանդակները գեղարվեստական ու տեխնիկական առումներով առավել բարձրարժեք են:

Պարթևական շրջանի բարձրաքանդակներից մեկը գտնվում է Սարփու-Ջահաբում: Քանդակը պահպակերտով գրված արձանագրություն ունի, որը կարևոր վավերագիր է: Բարձր ժայռի գագաթին՝ Հոլվան գետի ձախ ափին է գտնվում այս բարձրաքանդակը, որը տեսանելի է միայն օրվա այն ժամին, երբ արևի թեքությամբ ընկնող ճառագայթները լուսավորում են լեռան կատարը: Ժամանակի ընթացքում քանդակը լրջորեն վնասվել է: Բնության պատճառած վնասներից բացի, այն տուժել է նաև Իրաքի կողմից Իրանին պարտադրված ութամյա պատերազմի ընթացքում՝ 1980-1988 թվականներին, Սարփու-Ջահաբի ռմբակոծության հետևանքով: Պատկերը քանդակվել է գետնից շուրջ 6,5 մետր բարձրության վրա և քառանկյուն շրջագիծ ունի: Բարձրաքանդակի ընդհանուր մակերեսի մեծ մասը հատկացված է ձախից աջ շարժվող ձիավորի՝ թիկնոցն ուներին զգած, լայն տաբատ հագած տղամարդու կերպարին, որը պարթևական արքաներին և սատրապներին բնորոշ երիզավոր թագ կամ թագանման կլոր գլխակապ ունի, իսկ գոտկատեղից թեք դաստակով մի թուր է կախված: Հեծյալն աջ արմունկը ծալել և ձիու սանձն է բռնել: Կենդանու, ինչպես և մարդկանց մարմինները, մոտ են բնական չափերին: Ձիավորին ընդառաջ եկող ու նրան օղակաձև թագ կամ պսակ հանձնող տղամարդու հասակը 180 սանտիմետր է, իսկ ձիու մարմնի երկարությունը՝ 215 սանտիմետր:

Հեծյալին դիմավորող, նրան ընդառաջ եկած սրածայր մորուքով տղամարդը գոտևորված կարճ վերնագգեստ ու ծալքավոր տաբատ է հագել և ազդրին հպված մի դաշույն ունի: Նրա գլուխը և դեմքը ժամանակի ընթացքում այնպես են քայքայվել, որ այլևս ենթակա չեն վերականգնման:

Հենրի Ռոուլինսոնը, ով առաջինն է նկարագրել այս ժայռաքանդակը, ինչպես և պարսկական հին հուշարձաններից շատերը XIX դարի կեսերին պատճենահանած ֆրանսիացի հնագետ և արևելապաշտ գեղանկարիչ Էժեն Ֆլանդենը (1809-1889) հավատացած էին, որ տվյալ քանդակն ստեղծվել է

Սասանյանների ժամանակներում⁹: Քանդակի առաջին լուսանկարը տպագրել է ֆրանսիացի հնագետ, արևելագետ և հայագետ Ժակ դը Մորգանը (1857-1924) Փարիզում 1904 թվականին լույս տեսած «Լեզվաբանական ուսումնասիրությունների» 5-րդ պրակում¹⁰:

Նույն ժայռաքանդակի և դրան կցված արձանագրության ուսումնասիրության ու վերծանման գործում է՛լ ավելի մեծ ներդրում ունի Էռնեստ Հերցֆելդը, որի կարծիքով մեզ հետաքրքրող կոթողը կերտել են ոչ թե Սասանյանների, այլ պարթևների ժամանակ¹¹: Հերցֆելդի նախնական տեսակետի համաձայն՝ հեծյալ տղամարդը պարթևների արքա Գուդարգես Երկրորդն է, որը մարզպանի կամ հրամանատարի պաշտոն է շնորհում իր առջև կանգնած տղամարդուն: Այդ տեսակետին է հանգում նաև Գերդ Գրոփը¹², այնինչ Վալտեր Հենինզը գտնում է, որ ժայռաքանդակին վերաբերող արձանագրությունն առնչվում է Միհրդատ Չորրորդի (128-147 թթ.) դեմ Վաղարշ Երկրորդի (Պարթև, 105-147 թթ.) տարած հաղթանակին¹³:

Սակայն որոշ ժամանակ անց, երբ Հերցֆելդը փորձեց վերծանել արձանագրությունը, նա փոխեց իր կարծիքը և ձիավորին ներկայացրեց որպես «Արտաբան արքա»՝ նրան նույնացնելով պարթևների վերջին թագավոր Արտավան Հինգերորդի (216-224 թթ.) հետ¹⁴: Ընդունելով, որ Սարփոլ-Չահաբի այս ժայռաքանդակում պատկերված հեծյալը, ամենայն հավանականությամբ, Գուդարգես Երկրորդն է, Ալֆրեդ Գուլշմիդը նկատում է, որ վերջինս արյունակցական որևէ կապ չունի պարթևների հետ, այլ Արտավան Երրորդի (12-38 թթ.) որդեգրած տղան էր, որ սերում էր իշխանական այլ գերդաստանից¹⁵:

⁹ Տե՛ս **Rawlinson Henry Creswicke**. The Persian cuneiform Inscriptions at Behistun, London, John W. Parker, 1846, p. 280, **Flandin Eugène et Coste Pascal**. Voyage en Perse, vol. 2, Paris, 1851, p. 147:

¹⁰ Տե՛ս **De Morgan Jacques Jean Marie**. Mission scientifique en Perse – Études linguistiques, t. V, Paris, 1904, p. 151:

¹¹ Տե՛ս **Herzfeld Ernest**. Am Tor von Asian, S. 53:

¹² Տե՛ս **Gropp Gerd**. Die parthische Inschrift von Sarppol-e-Zahab, S. 200:

¹³ Տե՛ս **Henning W. B.** The Monuments and Inscriptions of Tang-i-Sarwak, Michigan university publication, 1952, p. 41:

¹⁴ Տե՛ս **Herzfeld Ernest**. Am Tor von Asian, S. 328:

¹⁵ Տե՛ս **Գուլշմիդ Ալֆրեդ**, Իրանի պատմությունը, թարգմանիչ՝ Քեյքավուս Զահանդարի, Թեհրան, «Ղողնուս» հրատարակչություն, 2003, էջ 186:

ԱՄՓՈՓՈՒՄ

Հոդվածը նվիրված է Իրանում և մասնավորապես, Քերմանշահի տարածքում Սելևկյանների ու պարթևների ժամանակ ստեղծված ժայռաքանդակների պատկերագրությանը և գեղարվեստական առանձնահատկություններին: Դրանցից առավել ուշագրավ են Բեհիսթուն լեռան ստորին մասում՝ Դարեհի հայտնի արձանագրության մոտ տեղակայված, 1958 թվականին պեղված Հերակլեսի արձանը, որն ստեղծվել է Միհրդատ Առաջինի կառավարման օրոք՝ մ. թ. ա. 148 թվականին, ինչպես նաև Միհրդատ Երկրորդին, նրա սատրապներին ու ավագանու անդամներին պատկերող ժայռափոր քանդակը, Միհրդատի դեմ Գուդարզես Երկրորդի տարած հաղթանակի տեսարանը և Վաղարշ արքայի բարձրաքանդակը:

Բանալի բառեր – Հին Պարսկաստան, Քերմանշահ, պարթևներ, Հերակլես, արձան, ժայռաքանդակ, պատկերագրություն, Միհրդատ, Վաղարշ արքա:

СКАЛЬНЫЕ РЕЛЬЕФЫ ИРАНА ВРЕМЕН ПРАВЛЕНИЯ СЕЛЕВКИДОВ И ПАРФЯН

МАДЖИД ЯЗДАНПАНАХ

Статья посвящена пиктографии и художественным особенностям скальных рельефов, созданных в Иране, в частности в районе Керманшаха во времена правления Селевкидов и парфян. Из них наиболее интересны установленная у подножия Бехистунской скалы, вблизи известной клинописи Дария, открытая в 1958 году статуя Геракла, созданная во времена правления Митридата I в 148 году до н.э., барельеф, изображающий Митридата II, его сатрапов и старейшин, а также барельеф со сценой триумфа Гударзеса II над Митридатом и барельеф царя Вагарша.

Ключевые слова – Древняя Персия, Керманшах, парфяне, Геракл, статуя, скальный рельеф, пиктография, Митридат, царь Вагарш.

IRANIAN ROCK RELIEFS OF THE SELEUCID & PARTHIAN ERA**MAJID YAZDANPANAH**

The article is devoted to rock reliefs, created in Iran and especially in the Kermanshah territory

during the Seleucid and Parthian empires. Majid Yazdanpanah reviews the inscriptions accompanying the reliefs and the artistic features of these rock carvings. One of the most prominent of these is the Hercules Statue dated back to 148 BC in the era of Mihrtad I, excavated in 1958 at the base of Mount Bisotoun, not far from the famous Behistun Inscription in 3 languages by Darius. Others are rock relief statues of Mihrdat the second with his sadrabs and council of elders carved into a cliff and scenes of the victory of Gudarzes II against Mihrdat and the colossal statue of King Vagharsh.

Key words – old Perssia, Kermanshah, Parthian, Hercules, statue, rock relief, inscription, Mihrdat, King Vagharsh.

ՀԻՆ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԸ ՍԱՍԱՆՅԱՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿՆԵՐՈՒՄ (ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ)

ՄԱՋԻԴ ՅԱԶԴԱՆՓԱՆԱՀ (ԻՐԱՆ)

Մինչև մ. թ. 651 թվականը Հին Պարսկաստանում իշխանության ղեկի մոտ կանգնած Սասանյանների արքայական տոհմն Իրանին 35 թագավորներ ու թագուհիներ տվեց, որոնցից շատերին նախապես ընտրում, նշանակում ու թագադրում էին բարձրագույն հոգևորականությունը ներկայացնող քրմապետերը և ազնվականության վերնախավի՝ ավագանու անդամները, ինչն իրար հետ մրցակցող իշխանատենչ խմբավորումների միջև անվերջ պայքարի պատճառ էր դառնում:

Պարթևների վերջին թագավոր Արտավան Հինգերորդին (մ. թ. 216-224 թթ.) հաղթելուց հետո Արտաշիր Առաջին Պապականը (մ. թ. 227—241 թթ.) պաշտոնապես թագադրվեց և դարձավ Իրանի առաջին շահնշահը: Երկրի գահն ու թագն ազգային արքաների ձեռքն անցավ, որոնք պարթևներին նման իրավունքի տեր չէին համարում ու միայն իրենց էին դիտում որպես Աքեմենյանների հարստության և Իրանի թագավորության ճշմարիտ, օրինական ժառանգներ: Իշխանության գալուց ու երկարատև պատերազմից հետո նրանք մի ամուր պետականություն կազմավորեցին, որի հիմքում ընկած էին ազգային առաքինությունը, բարեպաշտությունը և քաղաքակրթությունը: Ծանր պարտություն կրելով՝ պարթևներն Իրանի քաղաքական ասպարեզից դուրս մղվեցին, և Սասանյան Արտաշիր Պապականը պարսկական մի նոր, ոչ պակաս հզոր ու ամբողջական տերություն ստեղծեց:

Արտաշիրն ու նրա հաջորդները կառավարման այնպիսի համակարգ հաստատեցին, որտեղ զրադաշտականների քրմապետը՝ գերագույն մոգը, թագավորության բարձրագույն ազնվականներից էր: Սեփական իշխանությունն ամրապնդելուց հետո Արտաշիր Պապականը զրադաշտականությունը դարձրեց երկրի պաշտոնական կրոնը: Ահուրամազդան՝ աշխարհի արարիչը՝ բարու կրողը և իմաստության տերը, ճանաչվեց որպես միակ, բացառիկ աստվածություն, որին էլ պետք էր պաշտել, ի հակադրություն հնադարյան Իրանի այլ աստվածների:

Մ.թ. 241 թվականին Արտաշիրը կնքեց իր մահկանացուն, սակայն մինչև այդ նա արդեն հրաժարվել էր գահից և իր տեղը զիջել որդուն՝ Շապուհ Առաջինին (մ. թ. 241-272 թթ.): Հենց դա է պատճառը, որ այն ժամանակվա մետաղադրամների վրա Արտաշիր Առաջինի և Շապուհ Առաջինի պատկերները միասին են դրոշմված: Պերսեպոլիսից ոչ հեռու ընկած Նադշի-Ռաջաբում գտնվող քանդակներից մեկում ներկայացված է Շապուհ Առաջինի թագադրման տեսարանը, որին արքայական պսակ է շնորհում Ահուրամազդան:

Շապուհ Առաջինը շարունակեց Հռոմի դեմ իր հոր վարած պատերազմները և նրա զավթողական քաղաքականությունը: Հռոմեական զորքերից պարտություն կրելուց հետո Շապուհին, այնուամենայնիվ, հաջողվեց հաշտության նպաստավոր պայմանագիր կնքել (մ. թ. 244 թ.), իսկ մ. թ. 260 թվականին նա վճռական հաղթանակ տարավ Հռոմի կայսր Վալերիանոսի 70-հազարանոց բանակի հանդեպ՝ Եդեսիայի (ներկայումս՝ Ուռհա, Թուրքիա) մոտակայքում¹: Պարտությունից հետո Վալերիանոսը փորձեց Շապուհի հետ բանակցություններ վարել, բայց Շապուհը նրան դավադրորեն ձերբակալեց և ցմահ կալանքի ենթարկեց: Վալերիանոսի գերության փաստը հետագայում տարածված թեմա և կարևոր նյութ դարձավ Շապուհ Առաջինի հաղթանակներին նվիրված ստեղծագործությունների, մասնավորապես ժայռաքանդակների համար:

Շապուհին այլևս չէր բավարարում «արքայից արքա» տիտղոսը, և նա իր համար ավելի փառավոր և տիեզերական իմաստ ունեցող տիտղոս ընտրեց՝ «արյաց և անարյաց արքայից արքա»՝ շեշտելով նաև ոչ արիական, այն է՝ ոչ իրանական ազգերի վրա իր իշխանության տարածման փաստը: Թեև Արտաշիր Պապականին է պատկանում Սասանյան կայսրությունը հիմնադրելու փառքը, սակայն Շապուհն էր, որ կենտրոնացրեց և ամրապնդեց այդ պետության կառավարման ապարատը, ընդլայնեց երկրի տարածքը և ապահովեց նրա սահմանները: Նա այդ նոր տերությունը պատկերացնում էր որպես բազմազգ պետություն, որտեղ մանիքեականությունը կարող էր միավորող գործոն ծառայել: Դա, իհարկե, չիրականացվեց, և զրադաշտականությունը պահպանեց, իսկ հետագայում է՛լ ավելի ամրապնդեց իր դիրքերը Հին Պարսկաստանում՝ որպես պետական միակ կրոն: Երեսուն տարի կառավարելուց հետո Շապուհը վախճանվեց՝ ժառանգներին թողնելով մի հզոր

¹ St'iu Властелины Рима. Биографии римских императоров от Адриана до Диоклетиана. Москва, Наука, 1992, с. 218:

երկիր: Նրան հաջորդեց իր ավագ որդին՝ Որմիզդ Առաջին Արտաշիրը (մ. թ. 272-273 թթ.), որի կարճատև թագավորումը չնշանավորվեց պատմական կարևոր իրադարձություններով:

Անցան տարիներ, և Սասանյանների հարստությունն Իրանին տվեց Շապուհ անունով ևս մի զորեղ, փառահեղ արքա՝ Շապուհ Երկրորդին կամ Շապուհ Մեծին (մ. թ. 309-379 թթ.), որը լույս աշխարհ եկավ հոր՝ Որմիզդ Երկրորդի (մ. թ. 302-309 թթ.) մահից հետո ու գահին նստեց իր նախորդներից և հետնորդներից ավելի երկար՝ շուրջ յոթ տասնամյակ: Պատմական աղբյուրները տեղեկացնում են, որ մ. թ. 325 թվականին, երբ Շապուհն ընդամենը տասնվեց տարեկան էր, ռազմական խոշոր արշավներ ձեռնարկեց արաբական քոչվոր ցեղերի ու ցեղախմբերի դեմ՝ նպատակ ունենալով անվտանգություն ապահովելու և ամրապնդելու կայսրության արևմտյան և հարավային սահմանները²: Ոչնչացնելով թշնամիներից շատերին՝ նա կարգադրեց ավերել բոլոր քրիորերը և ստիպեց արաբներին ծարավից տառապել: Ռազմատենչ Շապուհի դաժանությունը նրա բնավորության վառ արտահայտված գծերից էր: Այդ արշավների արդյունքում արաբական ցեղերը քաշվեցին Արաբական թերակղզու խորքերը, և Պարսից ծոցի մերձակա շրջանները մնացին Սասանյանների ձեռքում:

Հայաստանի համար Հռոմեական կայսրության դեմ Շապուհ Երկրորդի սկսած սաստիկ արյունահեղ պատերազմները, թերևս Մերձավոր Արևելքի 4-րդ դարի պատմության առավել նշանակալից, եթե չասենք՝ հիմնական իրադարձություններն էին: Պարսից գահակալի՝ դեպի Արևելք մղված արշավանքները հանգամանորեն նկարագրել է անտիկ շրջանի ականավոր պատմիչ, այդ իրադարձությունների անմիջական մասնակից Ամմիանոս Մարցելիանոսը: Վերջինիս վկայությամբ Շապուհը հաճախ անձամբ էր գլխավորում այդ արշավանքները և բազմիցս է դրսևորել ռազմագետի ու զորավարի իր մեծ տաղանդը³:

Կենտրոնական Ասիայի քոչվոր ցեղերի ներխուժումն Իրան Շապուհի հայացքը դեպի Արևելք ուղղեց: Մոտավորապես այդ ժամանակներին են վերաբերում Սասանյանների տերության հանդեպ չարամիտ նկրտումներ

² Ст'ю **Дашков Сергей**. Цари царей – Сасаниды. История Ирана III-VII вв. в легендах, исторических хрониках и современных исследованиях, Москва, СМИ-АЗИЯ, 2008, с. 258-260:

³ Ст'ю **Frye Richard**. The History of Ancient Iran. München, C. H. Beck, Vesladsbuch-handlung, 1984, p. 315-317:

ունեցող և նույնիսկ առանձին ուսնձգություններ ձեռնարկած քիդարիստների կամ այսպես կոչված «սև հոների» մասին առաջին հիշատակումները: Շապուհը հաղթեց իր արևելյան թշնամիներին և Սասանյանների իշխանության տակ առավ քուշաններին:

Մ.թ. 363 թվականին Հռոմի կայսր Ֆլավիոս Կլավդիոս Հուլիանոսը, որը պատմության մեջ հայտնի է իբրև Հուլիանոս Ուրացող, պարսիկների դեմ հակահարձակում սկսեց: Հաղթահարելով բոլոր խոչընդոտները՝ նա մեծաթիվ զորքերով մոտեցավ Կոտեսիփոնին և պաշարեց այն: Միայն կռվում ընկած պարսիկ մարտիկների դիակների թալանով տարված իր զինվորների անկարգապահության պատճառով նրան չհաջողվեց միանգամից գրավել քաղաքը: Կենաց ու մահու պայքարի ելած Շապուհ Երկրորդը հռոմեացիների դեմ նոր ուժեր հանեց և նրանց ստիպեց թողնել դիրքերը: Հետզհետե մինչև Իրանի սահմանները նահանջած և պարսիկների հետ ընդհարումներից մեկի ընթացքում ծանր վիրավորված Հուլիանոսը շուտով վախճանվեց:

Հռոմի նոր, ըստ որում՝ քրիստոնեություն ընդունած կայսր հռչակվեց Հուլիանոսը: Ձգտելով հնարավորինս արագ հասնել Կոստանդնուպոլիս՝ նա համաձայնվեց Շապուհի բոլոր պահանջներին և նրա հետ երեսուն տարվա հաշտության պայմանագիր կնքեց, համաձայն որի այսուհետ Իրանին էին անցնում սահմանամերձ հինգ շրջաններ, շուրջ երկու տասնյակ ամրոցներ և ռազմավարական կարևոր նշանակություն ունեցող երեք քաղաքներ: Այդ պայմանագիրն ստորագրելով՝ հռոմեացիները դավաճանեցին իրենց դաշնակիցներին՝ հայերին, քանի որ պարտավորվում էին այլևս երբեք չօգնել նրանց: Հաշտության պայմանները չափազանց ծանր էին Հռոմի համար: Պատահական չէ, որ Ամմիանոս Մարցելլիանոսն այդ համաձայնագիրը բնութագրել է որպես «խայտառակ գործարք»⁴:

Շապուհ Երկրորդն Իրանի առաջին շահնշահն էր, որը լուրջ հալածանքների ենթարկեց քրիստոնյաներին: Նրա թագավորության օրոք քրիստոնեությունը Հռոմեական կայսրության մեջ պաշտոնապես ընդունված, իշխող կրոններից մեկը դարձավ, և հենց այդ պատճառով Սասանյանների տերության սահմաններում կտրուկ փոփոխվեց քրիստոնյաների նկատմամբ մինչ այդ եղած հանդուրժողական վերաբերմունքը: Այն ժամանակ, երբ քրիստոնյաներին հետապնդում ու հալածում էին Հռոմում, պարսից արքաները նրանց

⁴ Նույն տեղում, էջ 321:

սիրով ապաստան էին տալիս սեփական երկրում՝ մտածելով, որ այդպիսով Հռոմի թիկունքում իրենք հուսալի դաշնակիցներ ձեռք կբերեն: Բայց այժմ, երբ քրիստոնեությունը ճանաչվեց թշնամական Հռոմում, Իրանում տեղի ունեցավ հակառակը. պաշտոնական եկեղեցուն պատկանող քրիստոնյաներին հալածանքների ենթարկեցին, իսկ Հռոմեական կայսրությանն ընդդիմացող և իշխող եկեղեցուն հակադրվող տարբեր աղանդների կողմնակիցներին օժանդակեցին ու սատարեցին: Արդարացնելով քրիստոնյաների հանդեպ իր վարած դաժան քաղաքականությունը՝ Շապուհը հետևյալ հիմնավորումն է բերել. «Նրանք՝ քրիստոնյաները, ապրում են մեր հողի վրա, սակայն կիսում են մեր թշնամիների՝ Հռոմի քրիստոնեացած կեսարների մտքերն ու զգացումները»⁵:

Հանուն Քրիստոսի նահատակված հավատացյալների գլուխներն ի ցույց էին դրվում Անահիտ աստվածուհու տաճարներում: Արդի պատմագիտության տվյալների համաձայն՝ Շապուհ Երկրորդի գահակալության տարիներին սպանված, տանջամահ արված քրիստոնյաների թիվը շուրջ քսան հազարի է հասնում: Հալածանքները դադարեցին կամ, համենայն դեպս, մեղմացան միայն Շապուհի մահից հետո: Քրիստոնյաներին հետապնդելու պատճառներից մեկն էլ Իրանում զրադաշտականների դիրքերն ամրապնդելու և այն համապետական կրոն դարձնելու հեռահար ծրագրի իրականացումն էր:

Շապուհ Երկրորդը մի շարք քաղաքներ հիմնադրեց՝ հատուկ ուշադրություն դարձնելով Քուշեստանի վրա, որտեղ հռոմեացի ռազմագերիները բնակեցված էին արքայական նորակառույց Իրանշահր-Շապուր քաղաքում: Նրա կառուցած կամ վերակառուցած քաղաքներից էին Բիշապուրը, բժշկական կրթության կենտրոնի վերածված Գունդեշապուրը, Բաղդադի մոտակայքում՝ Տիգրիսի ափին գտնվող Վազուրգ-Շապուրը, ինչպես նաև Նիշապուրը, Պերոզ-Շապուրը (Անբար) և այլն:

Հենց այդ ժամանակներից Սասանյանների կերտած պատմամշակութային հուշարձանները, այդ թվում՝ նաև ժայռապատկերները, աստիճանաբար սկսում են պակասել Փարսում և ավելանալ Խուզիստանում ու Կտեսիփոնի մոտակայքում, որտեղ և անցել է Շապուհ Երկրորդի կյանքի մեծ մասը: Տվյալ կողողներն իրենց պատկերազրույթյամբ ու մասամբ նաև գեղարվեստական ոճով նկատելիորեն տարբերվում են Փարսում ստեղծված հուշարձաններից: Ահուրամազդայի կողքին ավելի մեծ տեղ է գրավում Միհրի կերպարը, առավել

⁵ Նույն տեղում, էջ 367:

հաճախ ենք հանդիպում Անահիտի կերպարին, որոնց հետ կապված սիմվոլիկ նշանները՝ զանազան պտուղներ (դեղձ, խնձոր, նուռ), ծաղիկներ (լոտոս, նունուֆար, արուսիկ), թռչուններ (աղավնյակ, սիրամարգ) և այլն, լայնորեն տարածվում են սասանյան արվեստում: Շապուհի օրոք ու հետագայում, հետևելով Աքեմենյան վերջին արքաների օրինակին, Սասանյանները հրաժարվեցին ժայռակոփ քանդակների կողքին և առհասարակ, լեռների վրա վիմագրություններ թողնելու հնավանդ սովորությունից:

Շապուհ Երկրորդի երկարատև իշխանությունից հետո Իրանի գահին կարճ ժամանակով տիրեցին Արտաշիր Երկրորդ Բարեգործը (մ. թ. 379-383 թթ.), Շապուհ Երրորդը (մ. թ. 383-388 թթ.) և Վահրամ Չորրորդը (մ. թ. 388-399 թթ.): Ապա գահ բարձրացավ Հազկերտ Առաջինը (մ. թ. 399-420 թթ.), որի կառավարումը հատկանշվեց քրիստոնյաների հանդեպ գթասիրտ վերաբերմունքով: Պատահական չէ, որ վերջիններս Հազկերտին «բարի» և «օրինյալ» էին կոչում, մինչդեռ զրադաշտականներն այդ նույն պատճառով նրան անվանում էին «Մեղավոր արքա»: Հազկերտի մեծահոգության դրսևորումներից մեկն այն էր, որ նա քրիստոնյաներին թույլատրեց թաղել, հողին հանձնել իրենց հանգուցյալներին, այնինչ զրադաշտականների պատկերացումներով դա նշանակում էր ապականել սրբազան հողը: Զրադաշտականների թաղման ծեսը շարունակում էր անփոփոխ մնալ. դիակները բաց երկնքի տակ դնելու կարգը տարածվում էր բոլորի վրա, արքայական ընտանիքի անդամներից բացի, որոնք իրենց ննջեցյալներին զմռսում և դամբարաններ էին տանում:

Ի տարբերություն սեփական հոր՝ կրոնական մոլեռանդությամբ էր տառապում նրա զավակը՝ Վահրամ Հինգերորդը (Վահրամ Գուր, մ. թ. 420-438 թթ.), որն այդ հարցերում ամբողջապես համամիտ էր Իրանի գերագույն քրմապետ Միհր-Շապուհի հետ: Հենց վերջինիս խորհրդով ու հրահանգով նա գետնի տակից փորեց հանեց Հազկերտի օրոք թաղված քրիստոնյաների դիակներն ու դրանք դետուղեն նետեց:

Վահրամի որդին՝ Հազկերտ Երկրորդը (մ. թ. 438-457 թթ.), քիչ ջանք չթափեց, որպեսզի քրիստոնեություն ընդունած Հայաստանում զրադաշտական հավատք հաստատի, սակայն հայերի համառ պայքարը՝ Վարդանանց պատերազմը (մ. թ. 450-451 թթ.), ի չիք դարձրեց նրա ծրագրերը: Հազկերտ Երկրորդի կառավարման ժամանակ Իրանին հյուսիս-արևելքից սկսեցին սպառնալ քոչվոր ցեղերի՝ Էփթալիտների կամ այսպես կոչված «սպիտակ

հոների» հորդաները, որոնց դեմ Հազկերտը մի շարք արշավանքներ ձեռնարկեց:

Հոր քաղաքականությունը շարունակեց Պերոզ Առաջինը (մ. թ. 459-484 թթ.): Լինելով բարեպաշտ զրադաշտական՝ նա ևս հետապնդում էր այլապրոններին: Քրիստոնյաների հալածանքները նա արդարացնում ու հիմնավորում էր որպես բյուզանդացիների դեմ պատասխան միջոց: Պերոզը բյուզանդացիներին մեղադրում էր նրանում, որ իրենց կայսրության մեջ վերջիններս ճնշում էին զրադաշտականներին, արգելում նրանց դավանանքը, ավերում սրբազան կրակարանները: Սակայն գահակալության վերջին շրջանում Պերոզը մեղմեց Իրանում ապրող քրիստոնյաների նկատմամբ իր վերաբերմունքը, քանի որ նրանց մեծ մասը բյուզանդական ուղղափառ եկեղեցու կողմից աղանդավորներ ճանաչված նեստորականներ էին:

Գրեթե կես դար թագավորած, ժողովրդի կողմից որպես արդար, անխաղախ արքա ճանաչված և Անուշիրվան՝ «Անմահ հոգու տեր» կոչված Խոսրով Առաջինը (մ. թ. 531-579 թթ.) Սասանյանների հարստության առավել փառավոր շահնշահերից էր: Նա զորեղ արքա էր, և նրա կառավարման շրջանի մասին գրավոր բազմաթիվ վկայություններ կան: Մագդակյան շարժման ու դրա հետ կապված ժողովրդական հուզումների և մասսայական խռովությունների ադիթով Խոսրովի ընդունած կտրուկ որոշումներն ու վճռական քայլերը ևս նպաստել են, որպեսզի նրա անունը մնա պատմության մեջ: Վերջապես, Անուշիրվանի տիրապետության ժամանակ՝ մ. թ. 570 թվականին է ծնվել Մուհամմադ մարգարեն, ինչը, անկասկած, չարագուշակ իրադարձություն էր զրադաշտականության համար, բայց ինչի շնորհիվ Խոսրով Առաջինի իշխանության տարիներն արժանացան նաև մահմեդական պատմիչների ու պատմաբանների ուշադրությանը: Անուշիրվանի կյանքի մեծ մասը մարտերում անցավ: Հռոմեական կայսրության վերջնական անկումից հետո Սասանյանների ավանդական թշնամիների տեղը գրավեց Բյուզանդական երիտասարդ կայսրությունը, որի հետ Պարսկաստանը բազմաթիվ պատերազմներ է վարել: Խոսրով Առաջինին հաջողվեց երկրի սահմաններն ապահով պահել, սակայն ինքը՝ արքան, նահատակվեց այդ պատերազմներից մեկում:

Արդարամիտ շահնշահ էր Անուշիրվանի որդին՝ Որմիզդ Չորրորդը (մ. թ. 579-590 թթ.), ով միանգամայն անկողմնակալ վերաբերմունք էր ցուցաբերում այլադավան իր հպատակների հանդեպ: Սակայն մ. թ. 590 թվականին նա լուրջ ընդհարում ունեցավ պարթև Միհրանների տոհմից սերված հրամա-

նատար, սպարապետ Վահրամ Չուբինի հետ, որը, արտահայտելով զինվորական բարձր խավերի շահերը, ապստամբել էր մանր ազնվականության և առևտրականների վրա հենվող Որմիզդի դեմ: Վահրամն սպանեց նրան, գերեց թագաժառանգին՝ Իրանի ապագա շահնշահ Խոսրով Երկրորդին, և իրեն հռչակեց «արքայից արքա» (մ. թ. 590-591 թթ.): Խոսրովն օգնություն խնդրեց Բյուզանդիայի կայսր Մավրիկիոսից (Մորիկ), և հայոց իշխան Մուշեղ Մամիկոնյանը բյուզանդական ու հայկական զորքերով ճնշեց Չուբինի ապստամբությունը:

Գահ ելավ Խոսրով Անուշիրվանի թոռը՝ Խոսրով Երկրորդը (մ. թ. 591-628 թթ.), Սասանյանների հարստության վերջին խոշոր ներկայացուցիչը, որի մականունը Փարվիզ էր (բառացի՝ «հաղթական», «անպարտելի»): Նրա գահակալության օրոք Իրանը հասավ իր քաղաքական, տնտեսական և մշակութային զարգացման գագաթնակետին ու կարճ ժամանակով արժանացավ Աքեմենյանների առաջվա փառքին⁶: Խոսրով Փարվիզի դղյակների, հարեմների ու պերճանքի առարկաների մասին հեքիաթներ են հյուսվել: Նրա հարեմում 3000 կին կար, որոնցից էին հայ իշխանուհի, արքայադուստր Շիրինը (Անուշ), Վահրամ Չուբինի քույրը՝ Քուրդիան, և Բյուզանդիայի հայագի կայսր Հերակլիոս Առաջինի դուստրերից մեկը՝ Մարիամը:

Նրա սիրեցյալ կինը՝ Շիրինը, որը Խուզիստանի նահանգից էր, հայ քրիստոնյա էր: Արթուր Քրիստիանսենը Խոսրով Փարվիզի արքունիքից առանձնացնում է հետևյալ «հրաշալիքները»՝ Կտեսիփոնի պալատը, արքայի կնոջը՝ Շիրինին, արքունիքի պարուհիներին ու երգիչներին, մասնավորապես Սարքեշին ու Հիրբադին, Ազարվանգ անունով մի սպասավորի, Խոսրովի ձիուն՝ Շաբդիզին, և սպիտակ փղին⁷:

Խոսրով Փարվիզը խելացի և կիրթ անձնավորություն էր, սակայն կամազուրկ ու թույլ ռազմագետ: Թեև մարտական մի քանի արշավների ընթացքում նա փաստորեն ջախջախեց Բյուզանդիային, սակայն Հերակլիոս

⁶ Տե՛ս **Մաջբուր Մոհամմադ Ջավադ**, Իրանի պատմությունը հնադարյան ժամանակներից մինչև Ղաջարների անկումը, Թեհրան, «Էշրադի» հրատարակչություն, 1978, էջ 101 և **Դարյայի Թուրաջ**, Սասանյանների կայսրությունը, Թեհրան, «Ղողնուս» հրատարակչություն, 2008, էջ 56:

⁷ Տե՛ս **Քրիստիանսեն Արթուր**, Իրանը Սասանյանների ժամանակաշրջանում, թարգմանիչ՝ Ռաշիդ Յասամի Ղոլամհոսեյն, Թեհրան, «Սեդայե մուասեր» հրատարակչություն, 1999, էջ 331-332:

Առաջինը թիկունքից հուժկու հարվածներ հասցրեց պարսկական զորքին: 627 թվականին Խոսրով Երկրորդի բանակը խորտակիչ պարտություն կրեց բյուզանդացիների դեմ Միջագետքում՝ Նինվեի մոտ տեղի ունեցած ճակատամարտում:

628 թվականին շահնշահը վախճանվեց՝ դառնալով ոչ միայն սեփական զորքի դավադիր հրամանատարների, այլև հարազատ զավակի զոհը: Խոսրով Երկրորդը Ֆիրդուսու «Շահնամե» պոեմի գլխավոր հերոսներից մեկն է: Բանաստեղծը նրան է նվիրել իր այդ հանճարեղ ստեղծագործության շուրջ մեկ երրորդ մասը՝ 4125 բեյթ, չափածո երկտող: Պոեմի՝ գրականագետների կողմից «պատմական» կոչված այդ մասի վերջում Ֆիրդուսին բանաստեղծական մեծ ներշնչանքով է նկարագրում այն պահը, երբ իր վերահաս բռնի վախճանը գուշակած Փարվիզը նախապես լվացվում, թարմ զգեստներ է հագնում, ապաշխարության աղոթքը կրկնում ու միայն այդպես՝ մաքուր մարմնով և խաղաղ հոգով ընդունում մահը: Սասանյան երբեմնի հզոր պետության փոխարեն նա իր հետևորդներին թողեց Բյուզանդական կայսրության ու միջինասիական թուրքալեզու ցեղերի դեմ արյունահեղ անհաջող պատերազմների հետևանքով միանգամայն ջլատված, քայքայված երկիր, որը սրընթաց և անդառնալի անկում էր ապրում:

Իրանի գահը ութ ամիս գրաված և հետո ժանտամահ եղած հայրասպան Կավադ Երկրորդը (մ. թ. 628 թ.), ինչպես և նրան հաջորդած, կարճ ժամանակով իշխանության գլուխ անցած մյուս թագավորներն ու թագուհիները՝ Արտաշիր Երրորդը (մ. թ. 628-629 թթ.), Փարուխան Շահրվարազը (մ. թ. 629 թ.), Խոսրով Երկրորդի դուստրեր Բորանդուխտը (Բորան, մ. թ. 629-631 թթ.) և Հազարեմդուխտը (մ. թ. 631 թ.), Փարուխադ Խոսրովը (մ. թ. 631-632 թթ.), բոլորն էլ պարսից սպարապետների կամակատարները, եթե չասենք՝ ձեռքի խաղալիքներն էին, մինչև որ Խոսրով Փարվիզի թոռը՝ Սասանյանների վերջին արքա Հազկերտ Երրորդը (մ. թ. 632-651 թթ.), երկրի կառավարման դեկն իր ձեռքը վերցրեց: Նրան հաջողվեց մի քանի տարով վերականգնել կենտրոնական իշխանությունը, սակայն դա բավական չէր պետությունը կործանումից փրկելու համար: Արաբական թերակղզուց դեպի հյուսիս էին ձգտում իսլամի մարտիկները՝ ռազմաշունչ արաբները: Առաջին ավերիչ հարվածը նրանք հասցրին մ. թ. 637 թվականին, երբ գրավեցին Կտեսիփոնը, երկրորդը՝ մ. թ. 642-ին՝ Նեհավենդի ճակատամարտի ժամանակ, իսկ մ. թ. 651-ին՝ Հազկերտի փախուստից և նրա սպանությունից հետո, Իրանը վերջնականապես հայտնվեց արաբների լծի տակ: Շուրջ 450

տարի թագավորելուց հետո Սասանյանների դինաստիան տապալվեց: Ավարտվեց Իրանի դարավոր պատմության մինչիսլամական շրջափուլը:

ԱՄՓՈՓՈՒՄ

Հին Պարսկաստանի պատմությանն ու մշակույթին նվիրված ակնարկում համառոտակի ներկայացված են Սասանյանների իշխանության օրոք՝ Արտաշիր Առաջին Պապականի (մ. թ. 227—241 թթ.) գահակալումից մինչև Սասանյանների վերջին արքա Հազկերտ Երրորդի (մ. թ. 632 - 651 թթ.) սպանությունը և արաբների կողմից թագավորության կործանումը, երկրի հասարակական-քաղաքական, կրոնական և մշակութային կյանքում տեղի ունեցած կարևոր իրադարձությունները:

Բանալի բաներ – Սասանյաններ, Արքայից արքա, Վալերիանոս, Շապուհ Երկրորդ, Հռոմեական կայսրություն, Բյուզանդիա, պատերազմներ, քրիստոնյաներ, արաբներ:

ДРЕВНЯЯ ПЕРСИЯ ВО ВРЕМЕНА ПРАВЛЕНИЯ САСАНИДОВ (КРАТКИЙ ИСТОРИКО-КУЛЬТУРНЫЙ ОЧЕРК)

МАДЖИД ЯЗДАПАНАХ

В посвященном истории и культуре древнего Ирана очерке вкратце представлены важные события, произошедшие при правлении Сасанидов, начиная от восхождения на престол Арташира Первого Папакана (227-241 н.э.) до убийства последнего правителя Сасанидов Азкерта Третьего (632-651 н.э.) и разрушения царства со стороны арабов, важные события, произошедшие в общественно-политической, религиозной и культурной жизни страны.

Ключевые слова – Сасаниды, Царь царей, Валериан, Шапух Второй, Римская империя, Византия, войны, христиане, арабы.

ANCIENT PERSIA IN THE SASANIAN ERA (AN ABRIDGED HISTORICAL & CULTURAL ARTICLE)

MAJIT IAZDANPANAH

This article is devoted to the history and culture of ancient Persia. It considers the Sasanian era starting with Ardeshir I papagan (227-241 AD), the

founder of the empire untill the death of the last king, Yazdegerd III (632–651 AD), and the demise of the empire by the Arabs. Important socio-political, religious and cultural events of the era are also considered in the article.

Key words – Sasanians, King of Kings, valerianus, Shapur II, The Roman Empire, Byzantine, wars, Christians, arabs.

ՀԱՅ ՀԻՄՆԵՐԳՈՒԹՅԱՆ ԾԱԳՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՄԵԿ ՏԵՍԱԿԵՏԻ ՇՈՒՐՋ

ՄՀԵՐ ՆԱՎՈՅԱՆ

Հայ հիմներգության ձևավորման հարցի առնչությամբ մեզանում երևացել է երկու տեսակետ, որոնցից առաջինը, թերևս, առավել հարմար է ասել՝ ավանդականը, իր առաջին ձևակերպումներից մեկը ստացել է դեռևս Կոմիտասի կողմից: Այն հաստատում է, որ հայ հոգևոր երգի առաջին հեղինակները ս. թարգմանիչներն էին կամ հետագա դարերի հեղինակներ, որոնց երկերը, V դարի հայրերի հսկա հեղինակությամբ պայմանավորված, վերագրվել են վերջիններին¹: Բացի այդ, Կոմիտասի կողմից առաջին անգամ առաջ քաշվեց թեզ այն մասին, որ հայ եկեղեցին վաղ փուլում պաշտոներգությունը կազմակերպում էր «հավանաբար ժողովրդական հին եղանակներով»²:

Սակայն հայ հիմներգության երգատեսակների առաջացմանն ու զարգացմանն առնչվող ուսումնասիրություններում այս տեսակետները մեզանում զարմանալիորեն չհարձան տիրապետող: Հայ հիմներգության ձևավորման վերաբերյալ շրջանառու հայեցակետը դարձավ արեղյանական մոտեցումն այն բանի մասին, որ հայ հոգևոր երգարվեստը, ավելի ճիշտ՝ հոգևոր բանաստեղծությունը, այնուամենայնիվ հետևել է «հունականին»³. պետք է հասկանալ՝ բյուզանդական հոգևոր երաժշտաբանաստեղծական արվեստին: Այսինքն՝ հայ հիմներգությունը դիտվել է որպես բյուզանդական արվեստի ազդեցությամբ ձևակերպված իրողություն, երբեմն էլ որպես դրա ուղղակի պատվաստ:

Հայ հիմներգության ձևավորման վերաբերյալ այսպես ասած «բյուզանդական» տեսակետին առիթ ունեցել ենք քանիցս անդրադառնալու⁴, ուստի այստեղ այն չենք քննարկի:

¹ Կոմիտաս, Հոդվածներ և ուսումնասիրություններ, Երևան, 1941, էջ 105 – 106:

² Նույն տեղում, էջ 105:

³ Աբեղյան Մ., Հայոց հին գրականության պատմություն, գիրք առաջին, Երկեր, հ. Գ, Երևան, 1968, էջ 528:

⁴ Նավոյան Մ., Բյուզանդական ազդեցության մեկ վարկած հայ միջնադարյան մասնագիտացված երգատեսակների համակարգում, «Մանրուսում» միջազգային երաժշտագիտական տարեգիրք, հ. Բ, Երևան, 2005, էջ 140 – 149: Նույնի՝ Բյուզանդական ազդեցության վարկածը Կարգ (կանոն) Ժանրի առնչությամբ, «Մանրուսում» երաժշտագիտական տարեգիրք, հ. Գ, Երևան, 2009, էջ 39 – 116:

Վերջին տասնամյակում հրապարակ բերվեց նոր հայեցակետ, որը մասամբ հարազատ է «բյուզանդականին», սակայն նաև էականորեն տարբերվում է նրանից: Խոսքը ֆրանսիացի հայագետ Շարլ Ռենուի կամ Խ. Աթանաս Ռենուի առաջարկած տեսակետի մասին է, որը հայ հիմներգությանը վերագրում է երուսաղեմյան ծագում: Այս տեսակետով քննարկվող մշակույթի ձևավորման փուլ է դիտվում IV – V դարերի սահմանագիծը, և շեշտվում է այն մշակույթային միջավայրը, որ դարձյալ կարող է կոչվել բյուզանդական կամ, ավելի ճիշտ՝ հունական: Մասնավորապես հիմք են դիտվում դեռևս անցյալ դարի վերջերին նույն հեղինակի կողմից առաջադրված Երուսաղեմի հայկական Ճաշոցի վերակազմությունը, վրացական Իսդգարի ժողովածուն, հայկական շարականների, վրացական և բյուզանդական հիմների միջև առկա որոշ բանաստեղծական ընդհանրությունները⁵:

Հատկանշական է, որ տեսակետն առաջ է քաշվել ծիսագիտության ոլորտում, և հետևորդներն էլ ծիսագետներ են: Ռենուի տեսակետին համահունչ մոտեցում ունի նաև Օսլոյի համալսարանի պրոֆեսոր Սթիգ Սիմեոն Ֆրոյշովը (Ֆրեյսով), ով թեև հայ հիմներգության հարցերին ուղղակի չի անդրադառնում, սակայն քննարկում է հիմներգական մշակույթի համար այնքան կարևոր Ութձայնի ծագման միջավայրի, մի շարք նախադրյալների և ժամանակի հարցերը⁶:

Տեսակետի հիմքը, ինչպես նշվեց, Երուսաղեմի հայկական Ճաշոցի վերակազմությունն է: Այն իրականացվել է երեք հայկական ձեռագրերի հիման վրա, և տասնամյակներ է արդեն, որ գտնվում է գիտական շրջանառության մեջ՝ որպես IV – V դարերի երուսաղեմյան Սահմանքի հայերեն թարգմանություն: Նկատի ունենալով այն հանգամանքը, թե Ճաշոցը ծիսական բազմաթիվ միավորների հետ հիշատակել է նաև հիմներգական միավորների գլխագրեր, երևի պետք է ենթադրել, որ ինչպես Երուսաղեմի հայկական Ճաշոցը կազմեց հայ եկեղեցու ծիսական համակարգի հնագույն շերտը,

⁵ **Renoux Charles**, Des Sources Greques du Šaraknoc‘ (Hymnaire) Arménien, Լևոն Խաչիկյան 90. Նյութեր Մատենադարանի հիմնադիր տնօրենի ծննդյան իննսունամյակին նվիրված միջազգային գիտաժողովի (9-11 հոկտեմբերի 2008 թ.), Երևան, 2010, էջ 213-225: Նշված հոդվածից բացի, մեր ձեռքին է նաև ելույթի հայերեն տեքստը:

⁶ **Stig Simeon R. Froyshov**, The Early Development of the Liturgical Eight - Mode System in Jerusalem, St. Vladimir's Theological Quarterly, 51. 2 – 3, 2007, p. 139 – 78.

այնպես էլ նրա միջոցով ներթափանցած հիմներգական միավորները դարձան հայ հիմներգության հիմքը⁷:

Զարմանալի է, որ հայ մատենագիտական այնպիսի կարևոր հուշարձան, ինչպիսին Երուսաղեմի հայկական ճաշոցն է, պատշաճ ուշադրության չի արժանացել մեզանում: Հիմնականում Ռենուի մոտեցումները չեն քննարկվել, հավանաբար նաև այն պատճառով, որ վերջին շրջանում ակտիվ զարգացող ծիսագիտությունը մեզանում պատշաճ զարգացման միտումներ չունի: Ինչևէ ...

Այստեղ թեև միտք չունենք անդրադառնալու Երուսաղեմի հայկական ճաշոցին վերաբերող բազմաթիվ հարցերին, սակայն մեր խնդրին առնչվող տեսանկյունից մի քանի դիտարկում ուղղակի անխուսափելի է:

Նախ, հատուկ շեշտենք, որ բնավ մտադիր չենք կասկածի տակ առնելու Շ. Ռենուի կատարած Երուսաղեմի հայկական ճաշոցի վերակազմության բանասիրական որակն ու մատենագիտական հավաստիությունը. այդ մեր խնդրից դուրս է: Մեզ հետաքրքրում են նրա առաջադրած տեսակետի այլ կողմեր՝ հենց Երուսաղեմի Սահմանքի առնչությամբ:

Իհարկե, ճաշոցի հայկական ձեռագրերի հիման վրա կարելի է դուրս բերել հնագույն շերտ, որ առնչակից է Երուսաղեմին, սակայն անպայման է, որ այն լինի Երուսաղեմի Սահմանքը, Երուսաղեմյան իրականությունն այն ժամանակ ունե՞ր այդպիսի մի ժողովածու, որն արտացոլում էր իր ծիսական ողջ համակարգը, այլ խոսքով՝ այդ Սահմանքը կա՞ր, թե՞ չկար: Եթե կար, ինչպիսի՞ն էր, ինչի՞ց իմացանք, որ այդ հնարավոր Սահմանքը բացարձակապես նույնական էր Երուսաղեմի հայկական ճաշոցին և այլն:

Ուզում ենք ասել, թե մեկ բան է փաստացի գոյություն ունեցող մատյաններից դրանց հնագույն, թող որ Երուսաղեմյան շերտի վերակազմությունն իրականացնելը, մեկ այլ բան՝ այդ վերակազմությունը չպահպանված, ենթադրելի հուշարձանի հետ նույնացնելը կամ նրանից արտածված համարելը:

Երուսաղեմի Սահմանքը, որի հայերեն թարգմանությունն է համարվում Երուսաղեմի հայկական ճաշոցը, չի պահպանվել. այն սոսկ ենթադրելի հուշարձան է: Առհասարակ, IV դարի Երուսաղեմի ծիսական համակարգի մասին կարելի է դատողություններ անել ըստ Կյուրեղ Երուսաղեմցու «Կոչումն ընծայութեան» երկի, Եգերիա կամ Եթերիա ուխտավորուհու հուշագրությունների: Այլ հուշարձաններն արդեն V դարի սկիզբն են ներկայացնում և հայկական

⁷ Ռենու Շ., նշվ. աշխ., Լևոն Խաչիկյան 90. նյութեր..., էջ 213:

Ճաշոցի համար հիմք չէին կարող համարվել, եթե նկատի ունենանք հենց Ռենուի կողմից այս հուշարձանի թվագրումը⁸:

Ինչ խոսք, V դարի սկզբին համաքրիստոնեական հուշարձանների թարգմանությունը հայերեն ո՛չ եզակի, ո՛չ էլ արտառոց կարող է համարվել հայ մշակույթի պատմության մեջ: Սակայն, եթե խոսում ենք Երուսաղեմի ենթադրելի Սահմանքի թարգմանության մասին, ապա նկատել ենք տալիս, որ Երուսաղեմի ծիսական իրականությունը կարգավորվում էր մեկ Սահմանքով, որն էլ հայերը թարգմանեցին: Այսինքն, ստացվում է, որ IV դարի երկրորդ կեսին Երուսաղեմի ծեսն արդեն ունիֆիկացված, համաձև մի համակարգ էր, որի կարգավորություններն ամփոփող միակ Սահմանքն էլ V դարի սկզբին թարգմանվեց հայերեն՝ որպես Երուսաղեմի հայկական Ճաշոց:

Եթե այսպես է, ապա Շ. Ռենուն հարկ է, որ նախ ապացուցեր այդ համաձև ծեսի առկայությունն այս վաղ շրջանում և հետո խոսեր դրա մեկեղեն Սահմանքի թարգմանության մասին: Այլապես հարց է առաջանում, թե Երուսաղեմում կամ դրան հարակից կենտրոններում, իմա՝ երուսաղեմյան ծիսական ավանդույթի ներսում ծիսական ինչպիսի՞ տարբերություններ կարող էին լինել տարբեր համայնքներում, այդ տարբերություններով պայմանավորված քանի՞ Սահմանք կարող էր գոյություն ունենալ, և արդյոք հայերը ո՞ր համայնքի ծիսական կարգավորությունն էին թարգմանել. միգուցե հենց հայկական համայնքի՞, որը, հեղինակի կարծիքով իսկ, արդեն IV դարում ակտիվ գործունեություն էր ծավալել Երուսաղեմում:

Այլ խոսքով, եթե ծեսի զարգացումը բազմապիսիությունից համաձևության է միտված հենց համեմատական ծիսագիտության՝ Ա. Բաումշտարկի ձևակերպած կարևոր հիմնադրույթներից մեկով⁹, ապա դա չի նշանակում, թե Արևելքում այդ բազմապիսիությունը ներկայացնող տարբեր եկեղեցական ավանդույթները վաղ փուլում իրենց ներսում արդեն ծիսական համաձևություն ունեին: Այսինքն՝ ծեսի նախնական բազմապիսիության սկզբունքը գործել է յուրաքանչյուր եկեղեցական ավանդույթի ներսում ևս:

Ի դեպ, տեղին է նկատել, որ արևելյան ծեսի բազմապիսիությունն ապահովող եկեղեցիների շարքում առաջիններից մեկը Բաումշտարկը հիշատակում

⁸ **Ռենու Շառլ**, «Ճաշոց» գրքի ծագումն ու զարգացումը (ֆրանսերենից թարգմանեց Ա. Ա. Բոգոյանը), «Պատմաբանասիրական հանդես», 1987, N2, էջ 28:

⁹ **Baumstark Anton**, On the Historical Development of the Liturgy, Foreword by Robert F. Taft, Introduction, Translation, and Annotation by Fritz West, by Order of Saint Benedict, Collegville, Minnesota, Liturgical Press, 2011, p. 89.

է Հայ «ազգային եկեղեցին»¹⁰: Ավելին, հ. Ռ. Թաֆթը, որպես այդ նախնական բազմապիսիության մասին վկայող արդի համաձայնությամբ պահպանված յոթ արևելյան ծիսական ընտանիքներից մեկը, առանձնացնում է Հայ ծեսը¹¹:

Այս նկատեցինք այն առումով, որ քննարկվող խնդրի շրջանակներում ծեսի զարգացման որոշ օրինաչափություններ չեն կարող շրջանցվել, իսկ Հայ ծեսն էլ այդ փուլում արդեն որոշարկված (կամ՝ գոնե որոշարկվող) իրողություն էր և պարզ լծորդ դիտվել չէր կարող:

Բարձրացվող հարցերը լիիրավ կարող են տրվել հենց ծիսագիտական հայեցակետից: Իրականում դրանք նույնիսկ տրվել են այլ աղիթներով: Օրինակ՝ հ. Վարդան Հացունին, որ բոլորովին էլ դեմ չէ հայկական ծիսական համակարգը նույն բյուզանդականից բխեցնելուն կամ նրա ազդեցությամբ ներկայացնելուն, ինքն իսկ հստակ նշում է, որ IV – V դարերի սահմանագծին միաձև ծես, հենց հիմներգական իմաստով, քրիստոնեական եկեղեցում չկար: Ահա ինչ է գրում՝ հենվելով վաղ շրջանի հեղինակներից մեկի վկայություններին. «Կասիանոս» դաստիարակուած Բեթղեհեմի մենաստանին մէջ, եւ ապա հիմնադիր երկու վանքերու ի Մարսիլիա՝ արեւելեան կարգով, մինչ 415-417 թուականին կգրէր իր սահմանադրութիւնները, կ'ըսէ թէ Պաղեստինի, Միջագետքի եւ բոլոր Արեւելեան մենաստանները (բացի Եգիպտոսէ) զուրկ էին համաձեւութենէ սաղմոսերգութեան մէջ, եւ կը տարբերէին գաւառէ գաւառ, ըստ իւրաքանչիւր սովորութեան, ըսելով գիշերը տասնետութ, քսան, երեսուն եւ երբեմն աւելի սաղմոսներ, զորս չի ճշտեր: Բնականապէս քաղուածով, ինչպէս կհետեւի այդ անհաւասարութենէն. եւ անոնց վրայ աւելացնելով փոխեր (շտ...fwsoj) պէս պէս եղանակներով»¹²:

Անմիջապես ընդգծենք, որ Հացունու վկայակոչած հեղինակն ինքը մի քանի կամ մի շարք սահմանքների հեղինակ էր, որ ստեղծում էր «արևելյան կարգով». որքան ավելի կարող էին լինել նրա սահմանքների համար նախօրինակ հանդիսացող արևելյան ծիսական հուշարձանները՝ կարելի է միայն ենթադրել:

Ավելին, Ռենուն, ով ընդունում է Եգերիայի ուղեգրությունների իսկությունը, կարծեք շրջանցել է դրանց և Երուսաղեմի հայկական ճաշոցի միջև առկա

¹⁰ Նույն տեղում, էջ 102 - 103:

¹¹ **Ռոբերտ Ֆ.** Թաֆթ, նույն աշխ., Նախաբան, էջ XVI:

¹² **Հացունի Հ. Վարդան**, Պատմություն հայոց Աղթամատոյցին, Վենետիկ – Ս. Ղազար, 1965, էջ 145: Ի դեպ, հ. Վ. Հացունին գիտի Ա. Բաումշտարկի աշխատությունները և Հայ ծեսի առնչությամբ երբեմն անհամաձայն է: Հմմտ. նույն աշխ., էջ 152:

ծիսական մի շարք տարածայնությունները: Մինչդեռ նման տարբերություններ նկատել են հիշյալ ուղեգրությունների անգլերեն թարգմանիչները՝ Մ. Մք-Քլարն ու Բ. Ֆելտոն: Իհարկե, նրանք դեռ չէին կարող համեմատել Ճաշոցի՝ իրենց թարգմանության ժամանակ գոյություն չունեցող վերականգնությունը, սակայն կիրառել են հայկական Ճաշոցի Օքսֆորդի Բողեյան և Փարիզի ձեռագրերը: Հղել ու համեմատել են նաև Ֆ. Քոնիքերի աշխատությունն ու դրա հավելվածը¹³, Գրիգոր Արշարունու մեկնությունները¹⁴:

Այսինքն՝ բացի Ճաշոցի՝ Օքսֆորդի ձեռագրից, մյուս երկուսը նաև այն երեք ձեռագրերի շարքում են, որոնց հիման վրա Շ. Ռենուի կատարել է «Երուսաղեմի սահմանքի» իր վերականգնությունը¹⁵: Գրիգոր Արշարունու մեկնություններին վերջինս նույնպես անդրադառնում է:

Փաստորեն գրեթե նույն ձեռագրական բազայով Եգերիա ուխտավորուհու հուշագրությունների անգլերեն թարգմանիչները երուսաղեմյան ծեսի վերաբերյալ մի շարք անհամապատասխանություններ են տեսել Եգերիայի և Ճաշոցների ծանուցումների միջև¹⁶: Ավելին, նման անհամապատասխանություններ կարելի է գտնել նաև Շ. Ռենուի կողմից վերականգնված «Երուսաղեմի սահմանքի» և Եգերիայի հուշագրությունների միջև¹⁷:

Ուրեմն, եթե Երուսաղեմի հայկական Ճաշոցը Երուսաղեմի ենթադրյալ Սահմանքն է, ապա նրա և ուխտավորուհու հուշերի միջև առկա տարբերությունները կարող են վկայել մեկ բանի մասին, որ Երուսաղեմի ծիսական համակարգում այդ վաղ շրջանում միաձևություն չկար: Ուստի հարցը, թե ի՞նչ են

¹³ Նշվ. աշխ., էջ 62, ծանոթ. 2, էջ 69, ծանոթ.2 և այլն: **Conybeare F. C.**, *Rituale Armenorum being the Administration of the Sacraments and the Breviary Rites of the Armenian Church*. London. 1905.

¹⁴ The Pilgrimage of Etheria/Translations of Christian Literature Series III. Liturgical Texts. M.L.McClure and C.L.Feltoe, ed. and trans. London: Society for Promoting Christian Knowledge. 1919., p. 52, ref. 1, p. 59, ref. 1.

¹⁵ **Ռենու Շաղ.** «Ճաշոց» գրքի ծագումն ու զարգացումը, էջ 29:

¹⁶ Տե՛ս, օրինակ, Եգերիայի անգլերեն հուշագրությունների «Աստվածահայտության տոնակատարության» օրերի ծիսաշարի ծանոթագրությունները: Նշվ. աշխ., էջ 53, ծանոթ. 1, էջ 55, ծանոթ. 1, 2, 3 և այլն:

¹⁷ Օրինակ, N 20 ծանոթագրության մեջ նկատված տարբերությունները նույնն են նաև Եգերիայի հուշագրությունների և Շ. Ռենուի վերականգնության համեմատության դեպքում: Համեմատում ենք Երուսաղեմի հայկական Ճաշոցի՝ Ռենուի վերականգնության հետևյալ էլեկտրոնային տարբերակը. An Early Armenian Lectionary (Renoux)/ Bibliocalia.http://www.bombaxo.com/blog/?page_id=2063:

թարգմանել հայերը V դարի սկզբին որպես հայկական Ճաշոց, բաց է մնում որոշ հնարավոր ենթադրություններով հանդերձ:

Մեկ հավելյալ, բայց շատ կարևոր հարց ևս կա, եթե անգամ ինչ – որ բան թարգմանել են, այն կիրառե՞լ են: Չէ՞ որ եղել են թարգմանություններ նաև ծիսական հուշարձանների, որ հայկական իրականության մեջ պահպանվել են, բայց չեն կիրառվել: Այս դեպքում, օրինակ, Երուսաղեմի սուրբ տեղիներ մատնանշող ծիսական արարողություններն ինչպե՞ս պետք է կիրառվեին Հայաստանի որևէ վայրում՝ առանց «Սահմանքի» մի շարք ցուցումներ խախտելու՝ անհայտ է:

Վերջապես, ծիսական անհամաձևության մասին կա ևս մեկ կարևոր փաստարկ, որ հակասում է քննարկվող շրջանում Երուսաղեմի մեկ միասնական Սահմանքի գոյությանը: Լավոդիկեի ժողովը, որ կանոններ է սահմանել ծեսին, եկեղեցականներին և համայնականներին առնչվող տարբեր հարցերի վերաբերյալ, ծիսական ընթերցումների և սաղմոսների մասին 15-րդ կանոնով նախ սահմանել է սաղմոսասացությունը (սաղմոսերգությունը) եկեղեցում կատարել «կանոնյալ սաղմոսողների» կողմից և ոչ այլ անձանց¹⁸, 16-րդով՝ շաբաթ օրը Ավետարան կարդալ ի շարս այլ գրվածքների¹⁹, 17-րդով՝ անընդհատ չսաղմոսել, այլ ընդմիջարկել ընթերցվածներով²⁰, 55-րդ կանոնով արգելում է եկեղեցում երբեմն «իմաստությամբ» (գիտությամբ, հանճարով, ճարտարությամբ և այլն²¹) ստեղծված սաղմոսներ կիրառել. «Չէ մարթ յիմաստութենէ ուրութե²² եղեալ սաղմոս պաշտել յեկեղեցոջ, բայց եթէ ի գրոց սրբոց իցէ կամ որ կանոնեալք են յեկեղեցոյ, թե սաղմոսք, թե արհնութիւնք»²³: Այս կանոնով են սահմանել Աստվածաշնչի սոսկ կանոնական գրքերից ընթերցված, իսկ սաղմոսներից՝ սոսկ «վավերական» սաղմոսներ քաղելը: 60-րդ կանոնն էլ բերում է կանոնական գրքերի ցանկը²⁴:

Մի կողմ թողնելով այս ժողովի համար պատճառ հանդիսացած ժամանակի բուն հիմնախնդիրները՝ նախ, նշվածից իմացվում է, որ մինչև 363-

¹⁸ «Կանոնագիրք հայոց», հ. Ա, Երևան, 1964, էջ 232:

¹⁹ Նույն տեղում:

²⁰ Նույն տեղում:

²¹ «Նոր բառգիրք հայկազեան լեզուի», հ. Ա (Ա - Կ), Երևան, 1979, էջ 850:

²² Ենթադրաբար կարելի է «ուրեք» հասկանալ:

²³ Նշվ. աշխ., էջ 240: Համեմատելի է նաև 18-րդ կանոնի վերաբերյալ Ն. վրդ. Մելիք-Թանգյանի դիտարկումների հետ. վկայակոչված է այլ աղբյուր ևս: **Մելիք - Թանգյան Ներսես վրդ.**, Հայոց եկեղեցական իրավունքը, Ս. Էջմիածին, 2011, էջ 185:

²⁴ «Կանոնագիրք հայոց», էջ 240 – 241:

364 կամ 365 թվականները՝ մինչև այս ժողովը, եկեղեցում ընթերցվածների ի՛նչ և ինչպիսի՛ն լինելն ընդհանրապես հստակեցված չէր, իսկ, ի թիվս սաղմոսների, կարող էին երգվել այլևայլ երգեր, որ դուրս էին «Դավթյան սաղմոսներից»²⁵: Եվ ավելին, այս կանոններն էլ այդ հարցերի վերաբերյալ սոսկ ընդհանուր սկզբունք են սահմանում, այլ ոչ մանրամասն կանոնակարգ: Ուստի և պետք է ենթադրենք, որ այդ մանրամասն կանոնակարգերը կա՛մ չկային, կա՛մ թողնված էին տեղական համայնքների առաջնորդների վճռին:

Այսինքն, նույնիսկ այս կանոնական որոշումներով հանդերձ, համապատասխան ծիսական իրողությունների վերաբերյալ տարընթերցումներն ու տարբեր կիրառությունները դեռևս չէին կարող բացառված լինել:

Ի դեպ, հենց հայկական իրականության մեջ, մինչև Ս. Սահակի գործունեությունը, նման ծիսական ազատությունների մասին անուղղակի վկայություն է «Կարգաւորութիւն օրինութիւնաբեր ցուցակի» հուշարձանը, որում վկայված են բազմաթիվ ծեսեր, որ բերվել են քրիստոնեական տարբեր կենտրոններից²⁶: Սա ցույց է տալիս, որ՝

ա. մինչ այդ տվյալ ծիսական ոլորտները մեզանում կանոնակարգված կամ գոնե համաձև չեն եղել,

բ. հիշատակված տասնյակ ծիսական կարգերից սոսկ երկուսը կարող են երուսաղեմյան համարվել: Մինչդեռ այլ կենտրոններից բերված ծեսերի կողքին մեծամասնությունը հայ եկեղեցու հայրերի սահմանաձև է:

գ. Հայ եկեղեցու ծիսական համակարգի ձևավորման սկզբնական փուլում հիշատակվող հուշարձանների՝ Պատարագամատույցի և Ժամագրքի կողքին հատկապես հիմնեցողական իմաստով կարևոր է եղել Մաշտոց ծիսարանը²⁷ կամ դրա նախատիպը, այլ ոչ ճաշոցը: Մանավանդ որ Մաշտոց ծիսարանին առնչվող կանոնական կարգավորություններ մեզանում վկայվում են արդեն IV դարի երկրորդ կեսին, և դրանց վերաբերող հիմնեցողական միավորներն էլ հայ հեղինակի անունով հիշատակելի են նույն շրջանից: Խոսքը Ս.

²⁵ **Մելիք – Թանգեան Ներսէս վրդ.**, Հայոց եկեղեցական իրաւունքը, էջ 190: Հեղինակը մեզ հետաքրքրող 55-րդ կանոնը բերում է 59-րդ, 60-րդ կանոնների թվագրումով՝ նախապես նշելով, որ հայկական ձեռագրերում դրանք 55-րդ կանոնն են ներկայացնում:

²⁶ Օգտագործում ենք Ա. Արևշատյանի հրատարակած տարբերակը: **Արևշատյան Ա. Ս.**, «Մաշտոց» ժողովածուն որպես հայ միջնադարյան երաժշտական մշակույթի հուշարձան, Երևան, 1991, էջ 19-21:

²⁷ «Մաշտոց» ծիսարանի երաժշտական հարցերին նվիրված ուսումնասիրություն է Ա. Արևշատյանի նշված աշխատությունը:

Ներսես Ա Պարթևի անունով հիշատակվող «Հանգստյան» երգային միավորների մասին է²⁸:

Ավելին, հայկական ճաշոցի հիմներգական նյութի նվազ լինելը հիմք է արդի ուսումնասիրողների համար, հարակից մշակույթներում՝ որպես հիմներգական «ծննդաբանական» միջավայր, տվյալ ավանդույթի ժամագիրքը դիտելու, այլ ոչ ճաշոցը: Ավելին, Ս. Ֆրոյշովը հատուկ նշում է, որ այս ժողովածուն որպես հիմներգական զարգացումների հիմք դիտելուն կարելի է առարկել: Առարկությունն այն է, «որ անհավանական է, թե ճաշոցը երբևէ, քիչ թե շատ նշանակալի չափով հիմներգություն է պարունակել»²⁹:

Եթե դա այդպես է երուսաղեմյան ավանդույթի համար (որի «Սահմանքն» է համարվում ճաշոցը) կամ վրացական իրականության մեջ (որի համար որպես երուսաղեմյան «Սահմանք»՝ փաստարկային հիմք է առաջարկվում ճաշոցը), ապա դա այդպես է առաջին հերթին և հատկապես հայկական հիմներգության համար, որի ակունքներն էական չափով հայտնի են (գոնե վկայված են): Այստեղից կարող ենք հետևեցնել, որ ճաշոցը հայ հիմներգական մշակույթի ակունքները որոշարկելիս հիմք չէ: Ս. Ֆրոյշովը, որ ընդհանրապես կարող է համարվել «երուսաղեմյան» տեսակետի հետևորդ, այստեղ հակադրվում է Շ. Ռենուին՝ փաստորեն շարքից հանելով վերջինիս առաջարկած տեսակետի աղբյուրագիտական հենքը:

²⁸ **Անասյան Հ. Ս.**, Հայկական մատենագիտություն, Շարականագիր հեղինակներ, հ. Ա, Երևան, 1959, էջ LXVI:

²⁹ Հատկանշական է, որ հիմներգության ձևավորման վաղ փուլում ժամագրքի ունեցած դերի մասին մեզանում խոսվել է դեռևս անցյալ դարի վերջից: Ն. Թահմիզյանը, թեև վերապահություն ունի հայ հոգևոր երգի վաղ փուլում կանոնացված լինելու վերաբերյալ, սակայն, միևնույն է, այդ երգերի ձևավորման հարցը դիտարկում է Աղդթամատույցին լծորդված: **Թահմիզյան Ն. Կ.**, Գրիգոր Նարեկացին և հայ երաժշտությունը V – XV դարերում, Երևան, 1985, էջ 128: Նաև՝ **Նավոյան Մ.**, Անանիա Շիրակացու Հարության հարցնակարգերը հայ հիմներգության զարգացման համատեքստում, «Գիտական աշխատություններ», համար IX, Գյումրի, 2006, էջ 86:

Վրացական աղբյուրները քննելիս մոտավորապես նման մոտեցում է դրսևորում նաև Ս. Ֆրոյշովը՝ ճաշոցի համեմատ նախապատվությունը տալով տվյալ ավանդույթի ժամագրքին (Horologion), և հատկանշական է այն, որ իբրև օրինակ փաստարկը հենում է հայկական ճաշոցի խիստ սակավ հիմներգական նյութի վրա: Տե՛ս Stig Simeon R. Froyshov, The Georgian Witness to the Jerusalem Liturgy: New Sources And Studies, Introduction: The Liturgy of Jerusalem // Eastern Christian Studies 12, Inquiries Into Eastern Christian Worship (Selected Papers of the Second International Congress of the Society of Oriental Liturgy, Rome, 17 – 21 September 2008), Peeters, Leuven – Paris – Walpole, MA 2012, p 248.

Ուստի, նկատի ունենալով թե՛ վերջին տեսակետը, թե՛ վերը հիշատակված ծիսակազմական բնույթի աղբյուրը, կարելի է ասել, որ Երուսաղեմի՝ որոշ առումներով նախամեծար դերը մեզ համար կամ միջնորդավորված է եղել կամ, առհասարակ, որպես սուրբ քաղաք այն ունեցել է քրիստոնեական սրբազործված խորհրդանիշի հարգ, ինչն այսօր շփոթվում է իրական գործառության նշանակության հետ³⁰:

Հատկանշական է, որ թե՛ հ. Վարդան Հացունու աղբյուրը, թե՛ Լավոդիկեի ժողովի կանոնները ծիսական կամայական կատարման շրջանակի մեջ գտնվող միավորների շարքում շեշտում, վերջին դեպքում կանոնավորում են նաև երգային հատվածները:

Դա նշանակում է, որ ծիսական այն հնարավոր տարբերությունները, որ կարող էին լինել Երուսաղեմի ավանդույթի ներսում գործող համայնքներում, կարող էին արտահայտված լինել նաև և հատկապես երգային միավորներով: Հատկապես ենք ասում՝ շեշտելու համար, որ հիմնեցական միավորների ձևավորման ժամանակահատվածը, ըստ արդի գիտական տեսակետի, հենց այս շրջանն է³¹: Ուստի հիմնեցությունն այս փուլում չէր կարող և՛ ձևավորվել, և՛ լինել արդեն համաձև: Հետևապես, դարձյալ հարց է, թե Երուսաղեմի ճաշոցում հիշատակված երգային միավորներն ամբողջ երուսաղեմյան ավան-

³⁰ Սման մոտեցումները հենվում են Ա. Բաումշտարկի առաջարկված այն տեսակետի վրա, թե ծիսական նախնական բազմապիսիությունն ապահովված ավանդույթների մեջ մեծ ազդեցությամբ են օժտված եղել երեք կենտրոն՝ Երուսաղեմը, Կոստանդնուպոլիսն ու Հռոմը: **Բաումշտարկ Ա.**, նշվ. աշխ., էջ 104: Սակայն, եթե հետևենք հեղինակի շարադրանքին, ապա կնկատենք, որ մեր քննարկած շրջանն իր խնդիրներով ու նրա պնդումները տարբեր են և որոշակիորեն տարբեր բաներ նկատի ունեն:

Բացի այդ, հենց Բաումշտարկի մոտ նույն Երուսաղեմի ազդեցությունը ներկայացվում է ճիշտ համաքրիստոնեական սրբավայրի համատեքստում և այլ որոշակիություն չի ստանում: Նույն տեղում, էջ 104 -105:

Հետագա հեղինակներից ոմանք էլ երաժշտական հարցեր քննելիս հետևում են գրեթե նույն շեշտադրումներին, որ կան նրա հիշյալ նկարագրության մեջ՝ շրջանցելով իրենց պնդած ազդեցության առարկայական երեսակները: Հմմտ. Peter Jeffery, *The Earliest Oktōēchoi: The Role of Jerusalem and Palestine in the Beginnings of Modal Ordering* // *The Study of Medieval Chant: Paths and Bridges, East and West* (in honor of Kenneth Levy), edited by Peter Jeffery, Editors and Contributors, first published 2001 D.S. Brewer, Cambridge, էջ 208:

³¹ **McKinnon J. W.**, *Desert Monasticism and the Later Fourth – Century Psalmodic Movement* // *Music and Letters*, 75 (1994), p. 505 – 519. Նաև՝ R. F. Taft, S. J., *Christian Liturgical Psalmody: Development, Decomposition, Collapse* // *Psalm in Community: Jewish and Christian Textual, Liturgical, and Artistic Traditions*, Leiden, 2003, p. 17.

դույթի՞ն էին հատուկ, թե՞ տարբեր համայնքներ տարբեր կերպ էին պաշտոնեղծում: Գրեթե վստահ կարելի է ասել, որ տարբեր էին երգում:

Ավելին, մեզանում հիմներգական ոչ համաձև իրողությունները, որ հաճախ շփոթվել են կանոնացումից «ազատ» մնալու հետ, տևում են մինչև Բարսեղ Շոնի ժամանակները, այսինքն՝ մինչև VII դար:

Շ. Ռենուի մյուս կարևոր փաստարկը հայ, վրաց և բյուզանդական հիմներգական կտորներում առկա ընդհանուր բանաձևումներն ու տարբեր բանաստեղծական կաղապարներն են:

Այստեղ մասնավոր կերպով հարցն առնչվում է վրացական «Իադգարի» (Յադգարի) ժողովածուին, որ պատմական զարգացման երկու փուլով է ներկայանում կամ դիտվում որպես «հին» և «նոր Իադգարի»: Այս երկուսի բովանդակության պատմական զարգացման և իրենց հունական նախօրինակի հետ ունեցած փոխառնչությունները գիտական բանավեճի առարկա են տակավին³²: Ուստի, Շ. Ռենուի առաջարկած տեսակետը, որ մեծ չափով հենվում է այս աղբյուրի վրա, նշված առումներով արդեն իսկ միանշանակ չէ:

Այդուհանդերձ քննարկվող ընդհանրությունն ավելի քան օրինաչափ է և պայմանավորված է, նախ, սուրբգրային ժառանգությամբ, ապա համաքրիստոնեական նշանակություն ունեցող կրոնական տարաբնույթ գրականության առկայությամբ: Հատուկ նշելի է, որ հիմներգական ավանդույթների ձևավորման վաղ փուլում եթե նույնիսկ հնարավոր էր առանձին կրոնական – բանաստեղծական բանաձևումների ներթափանցումը մեկ միջավայրից կամ մեկ համայնքից մյուսը, ապա այդ դեպքում անգամ հնարավոր չէ ճշտել դրանց պատկանելության հարցը և ավելին, պնդել, թե դրանք, այսինչ մշակույթի ծնունդը լինելով, հիմք են հանդիսացել այնինչ մշակույթի մի ամբողջ ճյուղի ձևավորման համար:

Վերջապես, նման պնդումների համար, որքան մեզ հայտնի է, այս բանաստեղծական արտահայտությունները նույնիսկ ինքնուրույն ուսումնասիրության նյութ չեն դարձել:

Առհասարակ, սաղմոսների տեքստերն անգամ, որ ընդհանուր են բոլոր եկեղեցիների համար և հիմք են քրիստոնեական բոլոր սաղմոսերգական, ապա նաև հիմներգական մշակույթների համար, դարձյալ սաղմոսերգական կամ հիմներգական ազդեցությունների, դրանց միջոցով ձևավորված ճյուղային մշակույթների մասին վկայել չեն կարող, այն պարզ պատճառով, որ ամեն

³² Ֆրոյշով Ա., նշվ. աշխ., էջ 237:

ավանդույթ այդ տեքստերը երգել է իր ձևով³³։ Այսինքն՝ հիմներգական ավանդույթի ձևավորման գործում երաժշտական տեղային ավանդույթների դերն այդօրինակ անտեսելը մեծ վրիպումի կարող է բերել։

Իսկ այն փաստարկը, թե հայ և հիշյալ մշակույթների հիմներգական շերտերում առկա է Կյուրեղ Երուսաղեմցու ոճական ազդեցությունը, առհասարակ ոչինչ չի ապացուցում։ Նախ՝ այդ ոճական ազդեցությունները փաստացի ապացուցելը խիստ դժվար է, և հետո դրա կարիքն էլ չկա, քանի որ հայ եկեղեցական մշակույթում երբևէ չի մերժվել ընդհանրական եկեղեցու կանոնական ժառանգությունը, այն էլ այս հեղինակի։ Սակայն արդյո՞ք դա հիմք է ենթադրելու, թե Կյուրեղ Երուսաղեմցին, հավանաբար, ունեցել է հիմներգական ժառանգություն³⁴, որ չի պահպանվել, սակայն այդ հավանական հիմներգական ժառանգությունն ազդել է մի շարք քրիստոնեական հիմներգական մշակույթների վրա, և այդ պատճառով նաև հայ հիմներգության ծագումը երուսաղեմյան է։

Նման մոտեցումներն, իհարկե, չեն կարող փաստարկային հիմք դառնալ որևէ գիտական տեսակետի համար։ Նույնիսկ ենթադրության մակարդակում, կարծում ենք, դրանք խիստ խախտու են։

Ինչ վերաբերում է հայ և վրաց հիմներգական ժառանգության ընդհանուր կետերին, վերևում խոսեցինք քննարկվող վրացական հուշարձանի շուրջ դեռևս ծավալվող գիտական բանավեճի մասին։ Ավելի մանրամասնելով նկատենք, որ «Հին Իադգարիի» թարգմանության վերաբերյալ արտահայտվել

³³ Հմմտ. **Герцман Евгений**. Две исторические ипостаси церковной музыки (из прошлого Греческой Православной Церкви) // «Մանրուում» միջազգային երաժշտագիտական տարեգիրք, հ. Ա, Երևան, 2002, էջ 34։

³⁴ Ս. Ֆրոյշովը ոչ միայն հղում է Շ. Ռենուի այս կարգի դատողությունները, այլև բերում որպես փաստարկ՝ երուսաղեմյան Ութձայնի ձևավորման ժամանակաշրջանը IV - V դարեր տանելու համար։ Մինչդեռ հակառակն էր պետք անել՝ նախ ապացուցել, որ Երուսաղեմի Ութձայնը այդ շրջանում կար, ուներ որոշակի նկարագիր և փաստելի կիրառական դրսևորումներ, որոնց հիման վրա էլ հետո ապացուցել, թե այդ կոնկրետ Ութձայնով որոշարկված երուսաղեմյան հիմներգական ավանդույթն ինչպես է ազդել այս կամ այն մշակույթի վրա։

Այս դեպքում տեսակետ է առաջարկվում, որի հիմքը, ենթադրական երուսաղեմյան Սահմանքի կողքին, ահա նաև Կյուրեղ Երուսաղեմցու ենթադրական հիմներգական ժառանգությունն է։

Տե՛ս **Froyshov S.**. The Early Development..., p. 166. Ինչպես նաև՝ **Charles (Athanas) Renoux**, Les hymnes de la résurrection. 1. Hymnographie liturgique géorgienne. Introduction, traduction et annotation des textes du Sinaï 18. Paris. 2000. p. 44 – 45.

են տարբեր տեսակետներ, որ ի մի է բերել դարձյալ Ս. Ֆրոյշովը³⁵: Երեք տեսակետներից մեկը, որին հղում է հեղինակը, Գ. Վինկլերինն է, ով այս ժողովածուի հին եզրաբանական շերտում շատ դեպքերում հունականից շեղում է տեսնում: Հեղինակն այդ դեպքերն առավել համապատասխան է համարում հայկական և ասորական համապատասխան արտահայտություններին՝ ենթադրելով, որ այդ թարգմանությունների ակունքներն ասորական միջավայրում են: Սրան հակադարձում է Հանս-Միխայել Շնայդերը՝ նկատելով, որ առանձնացվող եզրաբանական ձևակերպումները եզակի չեն լատինական և հունական տեքստերում, որոնք մասամբ ավելի հին են, քան ասորականները: Իր տեսակետը հեղինակն ամրացրել է այլ տերմինաբանական փաստարկով ևս: Վերջապես, Շ. Ռենուն ուղղակի պաշտպանում է մի տեսակետ (Ֆրոյշովն այն չակերտներում անվանում է «ստացված», “received” view”)՝ հավանաբար նկատի ունենալով տեսակետի ուղղակի պնդված, ավելի ճիշտ՝ առանց փաստարկի «տրված» լինելը, որի համաձայն Իադգարին երուսաղեմյան ծեսի վկայություն է և արտացոլում է սոսկ հունական ավանդույթը³⁶:

Ինչու հայագետ Շ. Ռենուն չի հիշում, որ մինչև VII դարի սկիզբը վրաց եկեղեցին որոշակի ենթակայական դիրք ուներ հայ եկեղեցու հանդեպ, որ ծիսական առումով Վիրքում որոշ վանական կենտրոններում նույնիսկ ծեսը կարող էր երկլեզվյա լինել: Եվ մի՞թե սա բավարար հիմք չէ նման ընդհանրությունների համար, այն էլ վկայված Գիրք թղթոցի մի քանի վավերական փաստաթղթերով³⁷: Երուսաղեմյան հիմքն այս դեպքում կապ չունի, և դրա դերն ապացուցող վավերական փաստաթղթեր գոյություն չունեն:

Այս փաստարկը, թերևս, առավել կուժեղացնեք Գ. Վինկլերի տեսակետը, միայն թե հոգուտ Իադգարիի հայկական թարգմանական ակունքի: Խիստ հատկանշական է այն հանգամանքը, որ վերը քննարկված եզրույթներն ու եզրաբանական նշանակության ձևակերպումները վերաբերում են Քրիստոսաբանությանը և հատկապես «Մարմնացումը» մատնանշող արտահայտություններին: Իհարկե, հնարավոր է, որ լատինական և հունական տեքստերում համանման ձևակերպումներ գտնվեն, սակայն դրանց ակունքն առաջին հերթին պետք է փնտրել հակաքաղկեդոնիկ միջավայրում, եթե հակված ենք Հին Իադգարին դիտարկել որպես վաղմիջնադարյան հուշարձան. այդ

³⁵ Stig Simeon R. Froyshov, *The Georgian Witness...*, էջ 263 – 264:

³⁶ Նույն տեղում:

³⁷ Տե՛ս մասնավորապես նամակագրությունը հայոց Աբրահամ և վրաց Կյուրիոն կաթողիկոսների: Գիրք թղթոց, Թիֆլիս, 1901, էջ 164-65, 166-67, 176-77, 178-79, 180-84, 185-88:

շրջանում վրաց եկեղեցին հայ եկեղեցու հետ միասին հակաքաղկեդոնիկ արևելյան ուղղափառ եկեղեցիների ընտանիքում էր: Ուստի, բնական և պատմականորեն թելադրված է նման ընդհանրությունների ակունքն այստեղ փնտրելը, այլ ոչ լատինական կամ հունական միջավայրում:

Այս պատմական կարևորագույն հանգամանքը և մեր կողմից նշված աղբյուրը Շ. Ռենուի կողմից իսպառ անտեսված են մեզ հետաքրքրող հիմներգական հարցերը քննելիս:

Մենք միտումնավոր շրջանցեցինք այս տեսակետի համար այնքան կարևոր Ութձայն համակարգին առնչակից հարցերը, քանի որ դրանք առանձին ծավալուն դիտարկման նյութ են:

Այսպիսով, քննելով Շ. Ռենուի բերած սոսկ մեկ – երկու փաստարկ, ակնհայտ է դառնում, որ հարկ չկա ծիսագիտական որոշ համընկնումներին համամշակութային համապարփակություն վերագրել: Հասկանալի է, որ դեռևս անցյալ դարի սկզբին ձևավորված լինելով, համեմատական ծիսագիտության համար ծիսական որևէ կենտրոնի ազդեցությունը համաձևության ձևավորման ճանապարհին ինքնին ենթադրվող կամ պնդվող հանգամանք է: Բայց առանձին հիմներգական մշակույթների, օրինակ՝ հայկականի, զարգացման առանձնահատկությունները ցույց են տալիս, որ նման ազդեցությունների ուռճացումը կամ բացարձակացումը, այն էլ Արևելքում, խիստ կասկածելի գիտական արդյունքների կարող է հանգեցնել: Արևելքում և Արևմուտքում ծիսական համաձևության առաջացման տարբերությունը նկատել է դեռևս Ա. Բաումշտարկը՝ Արևելքի ծիսական բազմապիսիությունը հակադրելով Արևմուտքում կաթոլիկ եկեղեցու ավանդույթի գրեթե համատարած սփռմանը³⁸: Դրան որպես հետևանք համահունչ է թե՛ լատիներենով, թե՛ Գրիգորյանական խորալով համաեվրոպական եկեղեցական մշակույթի «ստանդարտացումը»³⁹: Մինչդեռ արևելյան ազգային մշակույթների ձևավորումն անհամեմատ ավելի վաղ իրողություն է՝ գուցե և հենց դավանաբանական, ծիսական, ինչու ոչ՝ նաև հիմներգական բազմապիսիության շնորհիվ⁴⁰:

³⁸ **Բաումշտարկ Ա.**, նշվ. աշխ., էջ 46: Ի դեպ, Արևելքի ծիսական բազմապիսիության համապատկերում այլոց շարքում դարձյալ հիշատակվում է «Հայ ազգային եկեղեցին»:

³⁹ **Грыбер Р. И.** Всеобщая история музыки, М., 1960, с. 174.

⁴⁰ Ծիսական լեզվի առումով հետաքրքիր դիտարկումներ ունի Ա. Բաումշտարկի նշված աշխատության թարգմանիչ Ֆրից Ուեթթը: Նա նկատում է, որ Քաղկեդոնի ժողովի առաջացրած խզվածքն ընդգրկեց ոչ միայն դավանաբանական, այլև լեզվական շերտերը: Այս դիտարկման համաձայն՝ լատինախոս և հունախոս եկեղեցիները հիմ-

Այս համատեքստում Արևելք – Արևմուտք տարբերությունը շրջանցելը ևս, մեկը մյուսի օրինաչափություններով դասակարգելը հավաստի գիտական արդյունք չի կարող տալ:

ԱՄՓՈՓՈՒՄ

Հայ հիմներգության ձևավորման վերաբերյալ վերջին շրջանում առաջ քաշված մի տեսակետի համաձայն՝ այն երուսաղեմյան ավանդույթի վրա է հենվում:

Ինչպես տեսակետն ինքը, այնպես էլ նրա փաստարկային հիմք հանդիսացող Երուսաղեմի հայկական Ճաշոցի վերաբերյալ առաջարկված մոտեցումները հակասության մեջ են մտնում թե՛ քրիստոնեական ծեսի, թե՛ հիմներգական ավանդույթի զարգացման տրամաբանության վերաբերյալ արդի հայեցակետերի հետ: Շրջանառության մեջ են դնում սոսկ ենթադրությունների վրա կառուցվող դրույթներ, առաջացնում գիտական եզրահանգումների մոտավորության բարձր աստիճան և տարատեսակ մեկնաբանումների հնարավորություն:

Բանալի բաներ – Երուսաղեմի հայկական Ճաշոց, Երուսաղեմի Սահմանք, ծես, համաձև ծես, հիմներգություն, հիմներգական ավանդույթ:

ВОКРУГ ОДНОЙ ТОЧКИ ЗРЕНИЯ О ФОРМИРОВАНИИ АРМЯНСКОЙ ГИМНОГРАФИИ

МГЕР НАВОЯН

Согласно недавно выдвинутой точке зрения о формировании армянской гимнографии, последняя основывается на иерусалимской традиции.

Как сама точка зрения, так и предлагаемый ею подход к базе ее аргументации, т. е. армянскому иерусалимскому Лекционарию, входят в противоречие с современными научными установками относительно логики развития и

նականում ընդունեցին Քաղկեդոնի բանաձևումները, մինչդեռ այլախոս՝ ասորերեն, դպտերեն, հայերեն խոսող եկեղեցիները հարեցին «մոնոֆիզիտ» քրիստոսաբանությանը: Բացառություն է համարվում Մարոնիտ եկեղեցին, որ ասորախոս էր, սակայն հարեց քաղկեդոնիկ դավանաբանությանը, թեև այս դեպքում էլ առկա են մոնոֆիզիտության ուժեղ տարրեր: Նշվ. աշխ., տողատակ, էջ 48 – 49:

Լեզվական բազմազանությունը, որն ըստ էության համընկնում է արևելյան ուղղափառ եկեղեցիների ընտանիքի ձևաչափին, կարևոր հիմք է ծիսական, ուրեմն և հիմներգական բազմաափսիության:

христианского обряда, и гимнографической традиции. Тем самым, в научный обиход вводятся положения, основывающиеся лишь на предположениях, что приводит к высокой степени приблизительности научных выводов и, вместе с тем, открывает возможность для разнообразных интерпретаций.

Ключевые слова – армянский иерусалимский Лекционарий, иерусалимский устав, обряд, унифицированный обряд, гимнография, гимнографическая традиция.

A POINT OF VIEW ON THE ORIGIN OF ARMENIAN HYMNOGRAPHY

MHER NAVOYAN

According to a recently put forward view the formation of the Armenian hymnography is based on traditions of Jerusalem.

This point of view by itself as well as the proposed approaches to the Armenian Lectionary of Jerusalem, which serves as a factual basis for the point of view in question are in contradiction with both the Christian rite and the modern scientific perception of the logic of development of the tradition of hymnography.

Concepts founded on pure assumptions are consequently put forward. This results in having a high degree of approximation in making scientific conclusions and creating the possibility for various interpretations.

Key words – Armenian Lectionary of Jerusalem, Jerusalem Typicon, rite, unified rite, hymnography, tradition of hymnography.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ Դիանա – Պոստմոդեռնիզմի մասնակի դրսևորումները Լեւոն Խեչոյանի պատմվածքներում	3
---	---

ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ԱՆԴԻԵԱՍՅԱՆ Արուսյակ – Արաբերենում բայի ներկա ժամանակի հիմնախնդիրն ըստ Ալ-Ֆարաբիի	12
ԳՐԻԳՈՐՅԱՆ Գարիկ – Անվանական քերականական կարգերը՝ որպես զուգադրական լեզվաբանության ուսումնասիրության առարկա	20
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Լուսինե – Գործողություն կատարողի առանձնահատկությունները տնտեսական իրադարձություններում	29
ՄԱԿԱՐՅԱՆ Անահիտ – «Ազատություն» հասկացության առկայացման լեզվաոճական առանձնահատկությունները (Ջ. Ափդայքի «Ճագար, վագի՛ր» վեպի հիման վրա)	35
ՔԱՋԵՐՈՒՆԻ Հասմիկ, ՀԱԿՈԲՅԱՆ Թամարա – Ներիականիշության խնդրի շուրջ	43

ՊԱՏՄԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԱՎԱՆԵՍՅԱՆ Իսկուհի – Կանանց մասնակցությունն Արցախյան շարժման ընդհատակյա փուլին (1986-1988թթ.)	52
ԱՎՈՅԱՆ Սաթենիկ – Առաջին բուրժուադեմոկրատական հեղափոխության ազդեցությունը վրաց հոգևորականության վրա	65
ԹՈՐՈՍՅԱՆ Մելինե – Մշակույթ-առօրեականություն փոխառնչությունները հայաստանյան արդի հանրային ընկալումներում	73
ՀԱԿՈԲՅԱՆ Վաղարշակ – Բուլղարիայի թուրքալեզու փոքրամասնության մեծ արտագաղթը 1989 թ.	87
ՄԵՇԷԱՆԲԱՐՅԱՆՍ Ժիրբերթ – Սեֆյան Իրանի տնտեսության հիմնահարցերը և դրանց արտացոլումը «Թագքիրաթ ալ-մուլուք» գրքում	95
ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ Ռուբեն – Գեղարվեստական գրականությունը Խորհրդային Հայաստանում (1920-1925թթ.)	107
ՈՍԿԱՆՅԱՆ Սերգեյ – Սառուգ-իրանական հարաբերություններն Իրանում 2005թ. նախագահական ընտրություններից հետո	122

ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԳՐԻԳՈՐՅԱՆ Աննա – Խորհրդարանական դիվանագիտության դերը Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման գործընթացում	130
ԽԱՉԱՏՐՅԱՆ Գագիկ – Հոգևոր-մշակութային անվտանգության խնդիրները Հայաստանի Հանրապետության ռազմավարական ծրագրերի և մշակութային քաղաքականության համատեքստում	143

ՍԱՐԴԱՐՅԱՆ Ստալ – Հայրենիք-Սփյուռք հարաբերությունների էվոլյուցիան Հայաստանի Առաջին և Երկրորդ հանրապետությունների շրջանում.....	156
ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ	
ԱՅՎԱԶՅԱՆ Արամ – Կոռուպցիոն հանցագործությունների օրենսդրական բարեփոխման հարցի շուրջ	168
ԳՐԻԳՈՐՅԱՆ Թամարա – Հարկային իրավունքի սուբյեկտների ընդհանուր բնութագիրը և իրավասուբյեկտությունը	174
ՇՈՒՔՈՒՐՅԱՆ Արմեն – Իրավունքը և ազատությունը	184
ԱՐՎԵՍՏԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ	
ԱՂԼԱՄԱԶՅԱՆ Արտակ – Գրաֆիկական դիզայնի ստեղծման մեթոդաբա- նությունը	190
ԱՂԼԱՄԱԶՅԱՆ Արտակ – «Backbone. BRANDING» գրաֆիկական դիզայն ըն- կերության ստեղծագործություններն ու նրանց գեղարվեստական առանձ- նահատկությունները	199
ԱՅՎԱԶՅԱՆ Շուշան – Իրանահայ կոմպոզիտորական արվեստ. Լյուդվիգ Բազիլ (1931-1990)	210
ԿՈՍՏԱՆԴՅԱՆ Նիկոլայ – Մարգարիտ Բաբայանը և Կոմիտասի երկերի ժո- ղովածուի ակադեմիական հրատարակությունը	219
ՅԱԶԴԱՆՓԱՆԱՀ Մաջիդ – Իրանի ժայռաքանդակները Սելևկյանների և պարթևների ժամանակ	234
ՅԱԶԴԱՆՓԱՆԱՀ Մաջիդ – Հին Պարսկաստանը Սասանյանների ժամանակ- ներում (պատմամշակութային համառոտ ակնարկ)	245
ՆԱՎՈՅԱՆ Միհր – Հայ հիմներգության ծագման վերաբերյալ մեկ տեսա- կետի շուրջ	256

СОДЕРЖАНИЕ

ЛИТЕРАТУРОВЕДЕНИЕ

МНАЦАКАНЯН Диана – Частичное проявление постмодернизма в рассказах Левона Хечояна	3
--	---

ЯЗЫКОЗНАНИЕ

АНДРЕАСЯН Арусяк – Проблема настоящего времени глагола в арабском языке по Аль-Фараби	12
ГРИГОРЯН Гарик – Именные грамматические категории как объект контр-растивной лингвистики	20
АРУТЮНЯН Лусине – Собенности субъекта действия в экономических событиях	29
МАКАРЯН Анаит – Лингвостилистические особенности вербализации концепта “свобода” в романе Джона Апдайка “Кролик, беги”	35
КАДЖБЕРУНИ Асмик, АКОПЯН Тамара – К вопросу об энантиосемии	43

ИСТОРИОГРАФИЯ

АВАНЕСЯН Искуи – Участие женщин в подпольной деятельности в период арцахского движения (1986-1988гг.)	52
АВОЯН Сатеник – Влияние первой буржуазно-демократической революции на грузинское духовенство	65
ТОРОСЯН Мелине – Взаимоотношения культура-повседневность в современном общественном восприятии Армении	76
АКОПЯН Вагаршак – “Великий исход” туркоязычного меньшинства Болгарии в 1989 г.	87
МЕШКАНБАРЯНС Жильберт – Основные проблемы экономики сефевидского Ирана и их отражение в книге «Tadkerat al-moluk»	95
МИРЗАХАНИЯН Рубен – Художественная литература Советской Армении: 1920-1925 гг.	107
ВОСКАНИЯН Сергей – Саудовско-иранские отношения после президентских выборов в Иране в 2005 году	122

ПОЛИТОЛОГИЯ

ГРИГОРЯН Анна – Роль парламентской дипломатии в процессе урегулирования Нагорно-Карабахского конфликта	130
ХАЧАТРЯН Гагик – Задачи духовно-культурной безопасности в контексте стратегических программ и политики в сфере культуры Республики Армения	143
САРДАРЯН Стал – Эволюция отношений Родина-Диаспора в период первой и второй Республик Армении	156

ЮРИСПРУДЕНЦИЯ

АЙВАЗЯН Арам – К вопросу о законодательной реформе коррупционных преступлений	168
ГРИГОРЯН Тамара – Общее описание и правосубъектность субъектов налогового права	174
ШУКУРЯН Армен – Право и свобода	184

ИСКУССТВОВЕДЕНИЕ

АГЛАМАЗЯН Артак – “Методология создания графического дизайна”	190
АГЛАМАЗЯН Артак – Произведения графической дизайнерской компании «Backbone. BRANDING» и их художественные особенности	199
АЙВАЗЯН Шушан – Композиторское искусство иранских армян: Людвиг Базиль (1931 – 1990)	210
КОСТАНДЯН Николай – Маргарит Бабян и академическое издание Собрания сочинений Комитаса	219
ЯЗДАНПАНАХ Маджид – Скальные рельефы Ирана времен правления селевкидов и парфян	234
ЯЗДАПАНАХ Маджид – Древняя Персия во времена правления Сасанидов (краткий историко-культурный очерк)	245
НАВОЯН Мгер – Вокруг одной точки зрения о формировании армянской гимнографии	256

ԿԱՆԹԵՂ
Գիտական հոդվածներ
КАНТЕХ
Научные труды
KANTEGH
Articles

Խմբագիր՝ Ազատուհի Սահակյան
Անգլերեն տեքստերի խմբագիր՝ Սիրարփի Կույումջյան
Շապիկի ձևավորումը՝ Վարդան Գաբրիելյանի
Համակարգչային էջադրումը՝ Վերա Պապյանի

Խմբագրության հասցեն՝ Երևան 0019, Մարշալ Բաղրամյան պող. 24/4,
հեռ. 58-18-51, հեռապատճեն՝ 58-11-09

Адрес редакции: Ереван 0019, пр. Маршала Баграмяна 24/4,
тел. 58-18-51, факс 58-11-09

Address: 24/4 Marshal Baghramian av., Yerevan 0019, Armenia,
tel. 58-18-51, fax 58-11-09

Էլ. փոստ՝ instart@sci.am
Эл. почта: instart@sci.am
E-mail: instart@sci.am

Պաշտոնական կայքէջը՝ <http://Kantegh.am>
Официальный сайт: <http://Kantegh.am>
<http://Kantegh.am>



Տպագրված է «ԱՍՈՂԻԿ» հրատարակչության տպարանում
Ֆորմատ՝ 60x84 1/16, թուղթ՝ օֆսեթ, տպաքանակ՝ 130:
Երևան, Սայաթ-Նովա 24 (գրասենյակ)
Ավան, Դավիթ Մալյան 45 (տպարան)
Հեռ. (374 1) 54.49.82, (374 10) 54 62 60, 54 49 82, 62.38.63 (տպարան)
Էլ. Փոստ՝ info@asoghik.am